ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռաֆիկ Նահապետյան

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XVIII դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(XVIII դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը)

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 39(=19)(091))(07)
ԳՄԴ 63.501(5Հ)g7
Ն 251

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:

Խմբագիր՝ **ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գրախոսներ՝ **ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՄԽԻԹԱՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Ռ. Ա.
Ն 251 Հայ ազգագրության պատմություն (XVIII դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը), ուսումնական ձեռնարկ: ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար: -Եր., ԵՊՀ հրատ., 2023, 368 էջ:

Ձեռնարկում ներկայացված են հայ ազգագրության՝ որպես գիտության ուրույն ճյուղի ձևավորման, կայացման ու զարգացման պատմաշրջանները: 1. XVIII դարի երկրորդ կեսից մինչև 1850-1860-ական թթ.՝ ազգագրական նյութերի առավել արդյունավետ գրանցման, հայ ազգագրական գիտության սկզբնավորման շրջան (Մ. Թաղիադյան, Խ. Աբովյան, Մխիթարյան միաբանության անդամներ Ղ. Ինճիճյան, Մ. Բժշկյան), 2. 1870-1880-ական թթ.՝ մասնագիտական հարցարանների հանդես գալու շրջան (Գ. Սրվանձտյանց, Գր. Խալաթյանց), 3. 1890-ական թվականներից մինչև XX դ. սկզբները՝ ազգագրության՝ որպես գիտության ուրույն ոլորտի կայացման փուլ (Ե. Լալայան և ուրիշներ), 4. հայ ազգագրական գիտության զարգացման խորհրդային շրջան՝ 1920-1940-ական թթ. (Ե. Լալայան, Ստ. Լիսիցյան. Խ. Սամուելյան և ուրիշներ), 1950-1980-ական թթ. (Դ. Վարդումյան, Վ. Բդոյան, Է. Կարապետյան և ուրիշներ): Անդրադարձ է արվել նաև հետխորհրդային շրջանների նշանավոր ազգագրագետների գործունեությանը, կարևորվել են գիտահետազոտական, գիտակազմակերպչական, թանգարանային, ուսումնագիտական հաստատությունների դերն ու նշանակությունը:

Ձեռնարկը նախատեսված է ազգաբան, մշակութաբան և պատմաբան ուսանողների, ասպիրանտների, հայցորդների համար: Օգտակար կլինի նաև հումանիտար այլ մասնագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 39(=19)(091))(07)
ԳՄԴ 63.501(5Հ)g7

ISBN 978-5-8084-2648-1
https://doi.org/10.46991/YSUPH/9785808426481

© ԵՊՀ հրատ., 2023
© Նահապետյան Ռ. Ա., 2023

Հեղինակի կողմից

Սույն ձեռնարկում ձգտել ենք ըստ կարելվույն համակողմանիորեն անդրադառնալ հայ ազգագրության նոր և նորագույն շրջանի աղբյուրներին և պատմությանը: Այստեղ ներառված են հայ ազգագրության՝ իբրև գիտության կայացման հաջորդական փուլերը՝ XVIII դ. երկրորդ կեսից մինչև մեր օրերը: Փորձ է արված հայ ազգագրական գիտության կայացումը բնութագրել ըստ պարբերաշրջանների.

Առաջին պարբերաշրջանը ներառում է XVIII դ. երկրորդ կեսից մինչև 1850-1860-ական թթ., երբ սկիզբ է դրվում ազգագրական նյութերն ավելի արդյունավետ գրանցելուն: Այս համատեքստում ներկայացվում է Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամներ Ղ. Ինճիճյանի, Մ. Բժշկյանի ազգաբանական, բանահավաքչական գործունեությունը[1]:

Հայ ազգագրական գիտության կայացման երկրորդ պարբերաշրջանը՝ 1870-80-ական թթ., բնութագրվում է մասնագիտական հարցարանների երևան գալուն ուղղված Գ. Սրվանձտյան-

---

[1] Տե՛ս **Նահապետյան Ռաֆիկ**, Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը, **նույնի՝** Հայ ազգագրական գիտության ձևավորման առաջին պարբերաշրջանը (XVIII դ. երկրորդ կես – 1850-1860-ական թթ.), **նույնի՝** Խաչատուր Աբովյանը՝ ազգագրագետ, **նույնի՝** Խաչատուր Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ, **նույնի՝** Հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի բնութագրությունը Խ. Աբովյանի երկերում, **նույնի՝** Խ. Աբովյանը հայ ազգաբանական գիտության սկզբնավորող, **նույնի՝** Խ. Աբովյանը՝ քրդերի ազգագրության հետազոտող, **նույնի՝** Վենետիկի Մխիթարյանների դերը հայ ազգագրության ձևավորման գործում ԺԹ դարի առաջին կեսին (Ղ. Ինճիճյան, Մ. Բժշկյան) // տե՛ս **Նահապետյան Ռաֆիկ,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, ԵՊՀ հրատ., Երևան, 2019, բաժին I, ա, էջ 6-136:

ցի, Գր. Խալաթյանցի և այլոց ազգաբանական գործունեությամբ[2]:

Երրորդ պարբերաշրջանը ընդգրկում է 1890-ականներից մինչև XX դ. սկզբները, երբ հայ ազգագրությունը հիմնավոր կերպով կազմավորվեց որպես հայագիտության ուրույն բնագավառ: Գնահատված են այդ ջանքերին ուղղված Ե. Լալայանի, նրա հիմնած «Ազգագրական հանդեսի» դերն ու նշանակությունը:

Որպես առանձին պատմաշրջան են ներկայացված 1920-1980-ական թթ.՝ խորհրդային շրջանի հայ ազգագրական գիտության զարգացման ընթացքը, ազգագրական, գիտահետազոտական, ուսումնական և գիտակազմակերպչական, թանգարանային հաստատությունների գործունեության ձեռքբերումները, նաև դրանցում տեղ գտած թերությունները[3]:

Բնութագրվում է խորհրդային շրջափուլի հայ անվանի ազգագրագետների, գիտակազմակերպչական, ուսումնական հաստատությունների և թանգարանների գործունեությունը: Այդ շրջափուլի վերաբերյալ մեր ուսումնասիրությունները ներկայացվում են ստորև[4]:

---

[2] Տե՛ս **Նահապետյան Ռաֆիկ,** Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը, **նույնի՝** Հայ ազգագրությունը XIX դ. 70-80-ական թվականներին // **Նահապետյան Ռաֆիկ**, Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, բաժին I, բ, էջ 136-192:

[3] Տե՛ս **Նահապետյան Ռաֆիկ**, Երվանդ Լալայանի և «Ազգագրական հանդեսի» դերը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում, **նույնի՝** Ե. Լալայանը՝ Հայ ազգագրության ուսումնասիրության պատմաազգագրական շրջանացման մեթոդի սկզբնավորող, տե՛ս **Նահապետյան Ռաֆիկ**, Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, բաժին I, գ, էջ 192-235:

[4] Տե՛ս **Նահապետյան Ռաֆիկ**, Հայ ազգագրական գիտությունը Խորհրդային շրջանում (1920-1940 թթ.), **նույնի՝** Հայաստանի ազգագրական գիտության զարգացման հիմնական ուղղությունները և գիտահետազոտական հաստատությունները (1950-1980-ական թթ.), **նույնի՝** Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի (Երախտավոր հայորդու ծննդյան 130-ամյակի առթիվ), **նույնի՝** Ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գիտական և գիտակազմակերպչական գործունեության էջե-

Ելնելով այն հանգամանքից, որ նշված բոլոր հոդվածներն էլ նվիրված են հայ ազգագրության աղբյուրներին[5], ականավոր երախտավորներին ու հայ ազգագրության առանձին կարևոր թեմաների[6], և որ ցարդ մեզանում ամբողջական տեսքի չեն բերվել հայ ազգագրության աղբյուրներն ու պատմությունը, նշված բացը մասամբ լրացնելու նպատակով որոշեցինք հիշյալ հոդվածների հիմնական հատվածները ներառել սույն գրքում:

Ձեռնարկում փորձ է արվում նաև առաջին անգամ հակիրճ ներկայացնել 1990-ական թվականներից մինչև մեր օրերը ազգագրական գիտության ձեռքբերումները:

րից, **նույնի՝** Անխոնջ ազգագրագետն ու բանահավաքը (Վ. Բդոյանի ծննդյան 70-ամյակի առթիվ), **նույնի՝** Հայ ազգագրության և բանագիտության մեծ երախտավորը (Վ. Բդոյանի ծննդյան 100-ամյակի առթիվ) // տե՛ս **Նահապետյան Ռաֆիկ**, Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, բաժին II, էջ 236-360:

[5] Տե՛ս **Նահապետյան Ռաֆիկ**, Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1 (Հայ ազգագրության սկզբնաղբյուրներ. հնագույն շրջանից մինչև XVIII դ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2019:

[6] Տե՛ս **Նահապետյան Ռաֆիկ**, Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, 402 էջ, **նույնի՝** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, «Տիր» հրատ., 2020, 393 էջ:

Դասընթացի առարկան, խնդիրները

Ձեռնարկում ներկայացվում է հայ ազգագրության՝ իբրև գիտության կայացման պարբերաշրջանների բովանդակությունը.

1. Հայ ազգագրության՝ որպես գիտության ուրույն ճյուղի ձևավորման և կայացման ժամանակաշրջան (XVIII դարի երկրորդ կես – XX դարասկիզբ): Այս պարբերաշրջանի շրջափուլերն են.

ա) XVIII դարի երկրորդ կեսից մինչև 1850-60-ական թթ.՝ ազգագրական նյութերի առավել արդյունավետ, բայց ոչ համակարգված և բավարար չափով գրանցման ժամանակաշրջան. Ղ. Ինճիճյանի, Մ. Բժշկյանի, Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի և այլոց դերը հայ ազգագրության՝ հայագիտության ուրույն ոլորտի վերաճման գործում: Եվրոպական և ռուսական միջավայրի բարերար ազդեցությունը նրանց ազգագրական գործունեության վրա:

բ) 1870-80-ական թթ.՝ մասնագիտական հարցարանների հանդես գալու ժամանակաշրջան. Գ. Սրվանձտյանցի ազգագրական հետազոտությունները: Նրա «Գրոց ու բրոց» աշխատությունը որպես նախնական, պարզ ու չհամակարգված ազգագրական հարցարան-ծրագիր, դրա դերն ու նշանակությունը:

Գր. Խալաթյանցի «Ծրագիրը» և «Էմինյան ազգագրական ժողովածուն»: Նրանց դերը հայ ազգագրական գիտության ձևավորման և կայացման գործում: Մ. Խրիմյանի, Ղ. Ալիշանի, Վ. Հացունու ուսումնասիրությունները, Պ. Պռոշյանի, Ռաֆֆու, Թումանյանի և այլոց երկերը որպես հայ ազգագրական նյութերի շտեմարան:

գ) 1890-ական թվականներից մինչև XX դ. սկզբները՝ ազգագրության՝ որպես հայագիտության ուրույն բնագավառ վերջնականորեն կազմավորվելու և զարգանալու ժամանակաշրջան.

Ե. Լալայանի ազգագրական գործունեությունը, «Ազգագրական հանդեսի» հիմնումը: «Ազգագրական հանդեսը»՝ հայ ազգագրական գիտության կարևոր նվաճում: Ե. Լալայանը որպես տարածքային (ռեգիոնալ) ազգագրական ուսումնասիրության մեթոդի հիմնադիր:

2. Ազգագրական գիտությունը խորհրդային և հետխորհրդային՝ անցման ժամանակաշրջանում.

ա) Ազգագրական գիտության զարգացումը Հայաստանում խորհրդային շրջանում՝ 1920-40-ական թթ., Ե. Լալայանի ազգագրական, թանգարանային, բանագիտական, թարգմանական, հնագիտական գործունեության համառոտ գործունեությունը:

1920-1940 թթ. խորհրդահայ ազգագրության նշանավոր երախտավորներ Ստ. Լիսիցյանի, Խ. Սամուելյանի և այլոց ազգագրական գիտական, գիտակազմակերպչական անխոնջ գործունեությունը: Նրանք իրենց հարուստ գիտելիքների շնորհիվ կարողացան վերաիմաստավորված ներկայացնել իրենց հետազոտական գործունեությունը՝ դառնալով Խորհրդային Հայաստանի ազգագրական գիտության հիմնադիրներ: 1920-1940-ական թթ. ազգագրական գործունեությունը ամբողջությամբ կենտրոնացվեց Հայաստանի պատմության պետական թանգարանում:

բ) Ազգագրական գիտության զարգացման հիմնական ուղղությունները և ազգագրական գիտահետազոտական հաստատությունները ՀՀ-ում (1950-1980-ական թթ.). ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմում պատմության ինստիտուտում ազգագրության խմբի և ապա՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ստեղծումը և ազգագրության բաժնի ու ապա նաև՝ էթնոսոցիոլոգիայի բաժնի դերը հայ ազգագրական գիտության զարգացման գործում: Թեմատիկ ուսումնասիրությունների ծավալման, ազգագրական արշավախմբերի կազմակերպման ակ-

տիվ գործունեության բնութագրությունը:

Հայաստանի պատմության պետական թանգարանի և Ազգագրության (Սարդարապատի) պետական թանգարանի դերը թանգարանային հավաքածուների ձեռքբերման ու ցուցադրությունների կազմակերպման գործում: Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնը՝ որպես հանրապետությունում ազգագրագետ կադրերի պատրաստման կրթօջախ:

գ) Ազգագրական գիտությունը Հայաստանի Հանրապետությունում՝ 1990 թ. մինչև մեր օրերը.

Խորհրդային Միության փլուզումը, Հայաստանի անկախացումը և տնտեսական ու սոցիալական նոր հարաբերությունների հաստատումը, ապա նաև՝ 1988 թ. երկրաշարժի հետևանքների հաղթահարման, Արցախյան գոյամարտի (ներառյալ նաև 44-օրյա պատերազմից մինչև մեր օրերը), Հայաստանի Հանրապետության շրջափակման պայմաններում հայ ազգագրական գիտական հաստատությունների, նրանց գիտական ներուժի վերաբերյալ անդրադարձները:

Թեմա 1. Մխիթարյան միաբանության խաղացած դերը հայ ազգագրական գիտության ձևավորման գործում

1.1. Հայ ազգագրության պատմագրության սկզբնավորման նախադրյալները

XVIII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի 50-60-ական թթ. ժամանակաշրջանի բնութագրությունը

Հայ ազգագրությունը՝ որպես գիտության ուրույն ճյուղ, ձևավորվեց XVIII դ. երկրորդ կեսից ընդհուպ XX դարասկիզբը: Այս պարբերաշրջանը կարելի է բաժանել երեք շրջափուլի. 1) XVIII դ. երկրորդ կեսից մինչև 1850-60-ական թթ.՝ ազգագրական նյութերի առավել արդյունավետ գրանցման, ազգագրական երևույթների վերաբերյալ անդրադարձներով հայագիտական հրատարակությունների հանդես գալու, 2) 1870-80–ական թթ.՝ հավաքված նյութերի վերլուծության և մասնագիտական հարցարանների հանդես գալու, 3) 1890-ական թվականներից մինչև XX դ. սկզբները՝ որպես հայագիտության ուրույն բնագավառ կազմավորվելու և զարգանալու ժամանակահատվածներ:

Հայ մտավորականության ազգագրական գործունեության վրա եվրոպական և ռուսական միջավայրի բարերար ազդեցությամբ պայմանավորված՝ XVIII դարի երկրորդ կեսից XIX դ. 50-60-ական թթ. ժամանակաշրջանը բնութագրվում է իբրև ազգագրական նյութերի նպատակային գրանցման ժամանակաշրջանի սկիզբ, իբրև ազգագրական գիտության ձևավորման առաջին պարբերաշրջան՝ հայագիտական հրատարակությունների առատությամբ:

XVIII դ. վերջին և XIX դ. առաջին կեսին Եվրոպայում ու Ռուսաստանում նշանակալից տեղաշարժերը՝ կապված բուրժուա-

կան հարաբերությունների առաջացման և ազգային ինքնագիտակցության աշխուժացման հետ, խոշոր ազդակ հանդիսացան հայ ազգագրական ու բանահյուսական նյութերի նորովի արժևորման համար։ Հատկապես XIX դ. երկրորդ քառորդին, երբ Արևելյան Հայաստանը միավորվեց Ռուսաստանի հետ, ազգագրական գիտության կայացման հնարավորություններ առաջացան։ Ազգագրական նյութը այս շրջանում հիմնովին ծառայեցվում էր տնտեսական ու ազգային զարթոնքին, իդեալականացվում էր «հայ հայրենյաց տունը», «Թորգոմյան տոհմը», նկարագրվում էին ազգային սովորույթները, փառաբանվում նահապետական «գեղեցիկ» ու «քաղցրիկ» օրենքները՝ հայ ժողովրդի սովորույթներին, վարք ու բարքին, ընտանեկան-հասարակական կենցաղին, հոգևոր մշակույթին վերաբերող անդրադարձներով։ Այս շրջափուլում ազգագրական նյութեր օգտագործում էին հայ գրողները, օտար ճանապարհորդները և ուրիշներ, իսկ ազգային սովորությունները արտացոլվում էին հայ մամուլում։ Ժամանակի հայ անդրանիկ պարբերականները՝ «Արշալույս Արարատյան» (Զմյուռնիա, 1840-1887), «Հայրենասեր» (Զմյուռնիա, 1843-1846), «Հայաստան» (Կ. Պոլիս, 1846-1852), «Բազմավեպ» (Վենետիկ, 1843 – առ այսօր), «Եվրոպա» (Վիեննա, 1847-1863), «Մասիս» (Կ.Պոլիս, 1852-1908) և այլն, իրենց էջերում այս կամ այն չափով զետեղում էին ազգագրական և բանահյուսական նյութեր։ Այս շրջանի գրականությանը շատ բնորոշ էր ազգային գեղեցիկ սովորությունների, անխառն բարքերի, տնտեսական զբաղմունքների, նյութական և հոգևոր մշակույթների, ժամանցի ձևերի, սպորտի ու խաղերի տեսակների, ուխտագնացությունների, ամուսնաընտանեկան սովորույթների ու ծիսակատարությունների նկարագրությունների օգտագործումը։

XVIII դ. սկզբներին գրական-բանասիրական ասպարեզ

իջած Մ. Թաղիադյանը, հայ ազգագրությունից ու բանահյուսությունից նյութեր քաղելով, ուղի հարթեց հետագայում իրեն հաջորդող գրողների համար: Նրա հետ մի շարք մտավորականներ իրենց գործունեությամբ նպաստեցին XIX դ. առաջին կեսին երկու նշանավոր ազգագրագետների՝ Խ. Աբովյանի և Մ. Բժշկյանի հրապարակ իջնելուն՝ առաջինը Արևելահայաստանում, վերջինը՝ Արևմտահայաստանում: Ազգագրական այդ երկու նշանավոր դեմքերը XVIII դ. վերջերի և XIX դ. սկզբների գրական-հասարակական մտքի բնական ծնունդ էին: Հայ ազգագրության պատմության մեջ նրանք դարագլուխ են կազմում այդ գիտությունը հունի մեջ դնելու, նրան տարերքից դեպի գիտության ուղին մղելու տեսակետից:

Այս պարբերաշրջանում ազգային ինքնաճանաչման գործում նշանակալից էր հատկապես Մխիթարյան միաբանության գործիչներ Ղ. Ինճիճյանի, Մ. Բժշկյանի, արևելահայ իրականության մեջ՝ Մ. Թաղիադյանի, Հ. Ալամդարյանի, Խ. Աբովյանի և այլոց դերը: Վերջիններս հետազոտությունների հիմքում դրեցին իրենց իսկ գրառած դաշտային ազգագրական նյութեր, որոնք հիմք ծառայեցին ազգագրական բնույթի ուշագրավ աշխատություններ գրելու համար: Սակայն մինչև 19-րդ դարի 70-80-ական թթ., մինչև Գ. Սրվանձտյանցի և Գր. Խալաթյանցի գործունեությունը, հայ ազգագրության՝ որպես հայագիտության ուրույն ուղղության վերածվելու բավարար հիմքեր դեռևս չէին ստեղծվել:

Մխիթարյան միաբանության գիտակրթական գործունեության հակիրճ բնութագիրը

Բուն Հայաստանի քաղաքական անբարենպաստ պայմանները, նրա արևելյան և արևմտյան հատվածների ծանր կյանքը պարսկական ու թուրքական բռնապետությունների տիրապե-

տության տակ պատճառ դարձան, որ ազգային զարթոնքի առաջին արտահայտություններն ի հայտ գան հայկական գաղթօջախներում: Մեծ է եղել Եվրոպայում կրթություն ստացած գիտնականների, մասնավորապես Մխիթարյան միաբանության անդամների դերը հայ ազգագրության՝ իբրև գիտության կայացման գործում:

Մխիթարյան միաբանությունը հիմնվել է 1701 թ. Կ.Պոլսում, 1706 թ. տեղափոխվել է Մեթոն (Հունաստան), ապա՝ 1717 թ. Վենետիկին մերձ Ադրիատիկ ծովի Ս. Ղազար կղզի: Այն հիմնվել է որպես կրոնական (կաթոլիկ) և մշակութային կազմակերպություն՝ Մխիթար Մեբաստացու (1676-1749) կողմից: 1717 թ. Ս. Ղազարում վերջնականապես հաստատվելուց հետո իրենց կրոնական, գիտակրթական, մշակութային գործունեությունն ավելի ընդլայնելու նպատակով 1773 թ. Մխիթարյանների մի խումբ՝ Աստվածատուր Բաբիկյանի գլխավորությամբ, Ավստրիային անցած Հյուսիսային Իտալիայի Տրիեստ քաղաքում զումարում են ժողով և որոշում ստեղծել հոգևոր մի նոր կառույց՝ միաբանություն: Ստանալով Ավստրիայի կայսրուհի Մարիա Թերեզայի (1717-1780) արտոնագիրը՝ 1780 թ. հիմնվում է դարձյալ Մխիթար Մեբաստացու անունը կրող միաբանությունը, որը 1811 թ. տեղափոխվում է Վիեննա:

1811 թ. հիմնվում է Վիեննայի մասնաճյուղը: Երկուսն էլ դառնում են խոշոր գիտակրթական կենտրոն: Մխիթարյան միաբանության՝ Եվրոպայում կրթություն ստացած գիտնական հայրերի ավանդը այս բնագավառում չափազանց պատկառելի է: Նրանք ծավալել են կրոնական-կաթոլիկական և հայագիտական-բանասիրական եռանդուն գործունեություն: Մխիթարյան միաբանները, բացի զուտ հոգևոր կրոնական գործունեությունից, ծավալել են պատմաբանասիրական, թարգմանական, ձեռագրա-

գիտական, կրթական, ինչպես նաև բնագիտական երկերի տպագրության բեղմնավոր գործունեություն: 2000 թթ. համատեղ որոշմամբ երկու միաբանությունները կրկին միավորվեցին, որի կենտրոնատեղին Վենետիկի Ս. Ղազար կղզու Մայրավանքն է, իսկ Վիեննայինը՝ առաջին գլխավոր մենաստանը:

Նրանք գործադրել են մեծ ջանքեր հայագիտության տարբեր բնագավառների առաջընթացի համար. կատարել են հայ մատենագրության հարուստ ժառանգության հետազոտություններ, միաժամանակ հայ մատենագրությունը օտարներին են ներկայացրել թարգմանաբար: Հայ մատենագրության կարևորագույն երկերի հրատարակությանը զուգընթաց՝ Մխիթարյանները լույս են ընծայել նաև հին թարգմանությունների լավագույն նմուշները, այդ թվում՝ Աստվածաշունչը:

Մեծ էր Մխիթարյանների դերը անտիկ գրականության թարգմանության գործում: Նրանք ծավալեցին նաև հայ քերականագիտական բեղուն աշխատանք բառարանագրության ոլորտում. թվարկենք՝ Մխիթար Սեբաստացու երկհատոր «Բառգիրք Հայկազեան լեզուի» (հ. Ա, Վենետիկ, 1749, հ. Բ, Վենետիկ, 1769), Գաբրիել Ավետիքյանի, Խաչատուր Սյուրմելյանի և Մկրտիչ Ավգերյանի երկհատոր «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1836-1837), «Բառգիրք արուեստից և գիտութեանց», «Բառգիրք յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց», «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի», «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», «Բառգիրք գործնական գիտութեանց», «Հայ հանրագիտակ»:

Հայագիտական նշանակալից նվաճումների շարքին են դասվում նաև Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց» (1784-1786 թթ.), Ստեփանոս Ագոնցի և Ղուկաս Ինճիճյանի 11 հատորով «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» (1802-1806 թթ.),

Ստեփանոս Ագոնցի «Պատմութիւն կենաց և վարուց տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ (1810 թ.), Մկրտիչ Ավգերյանի 12 հատորով «Լիակատար վարք և վկայաբանութիւն Սրբոց, որք կան ի հին տօնացոյցի եկեղեցւոյ Հայաստանեայց» (1810-1815 թթ.), Հարություն Ավգերյանի Անգլերեն-հայերեն բառարանները, Ղևոնդ Հովնանյանի քառահատոր «Պատմութիւն քաղաքականութեան եվրոպական տերութեանց ընդհանրապէս» (1856-1860 թթ.), Գարեգին Զարպհանալյանի երկհատոր «Պատմութիւն հայկական հին դպրութեանց» (1865-1878 թթ.), Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի» (1866 թ.), Սերովբե Տերվիշյանի «Հնդեվրոպական նախալեզու» (1885 թ.) և այլ հիմնարար աշխատություններ:

Հոգևոր կրոնական և հայագիտական արդյունավետ գործունեությանը զուգահեռ՝ Ս. Ղազարի միաբանները կարևոր տեղ են հատկացրել նաև կրթական-լուսավորական աշխատանքին:

Նշանակալի է Մխիթարյանների կրթական-մանկավարժական մեղվաջան գործունեությունը (Մուրադ-Ռափայելյան վարժարանը Վենետիկում (1732 թ.) նաև Արևմտյան Հայաստանում, Կ. Պոլսում, Սիրիայում, Եգիպտոսում և այլուր), նրա առաջադիմական հայացքներով օժտված սաների գործունեությունը (Մ. Պեշիկթաշլյան, Թ. Թերզյան, Մ. Մամուրյան, Ս. Հեքիմյան, Ծերենց, Դ. Վարուժան, Ա. Արփիարյան, Վ. Փափազյան և ուրիշներ):

Անուրանալի է նրանց վաստակը հատկապես գիտության ամենատարբեր ոլորտների ուսումնասիրության ասպարեզում: XIX դ. վերջերից իրենց գիտամշակութային գործունեությամբ հայտնի են Գ. Գալեմքյարյանը, Հ. Տաշյանը, Ա. Ղազիկյանը, Վ. Հացունին, Ս. Էփրիկյանը, Մ. Պուտուրյանը, Ն. Ակինյանը, Հ. Ոսկյանը և ուրիշներ:

Հայ պարբերական մամուլի ասպարեզում նշանակալի էր

«Եղանակ Բյուզանդյան» (1803-1820 թթ.), «Բազմավեպ» (1843 թվականից), «Դիտակ Բյուզանդյան» և այլ պարբերականների հրատարակությունը: Մխիթարյան միաբանության Վիեննայի մասնաճյուղն էլ հրատարակում է առ այսօր «Հանդէս ամսօրեայ» (1887 թվականից) հայագիտական ամսագիրը (հիմնադիր խմբագիրն է Արսեն Այտընյանը):

Հայ ազգագրական գիտության ձևավորմանը նպաստեցին նաև եվրոպական համանման գրականության նմուշների՝ Միաբանության գիտնականների կատարած թարգմանությունները: Բացի մամուլից, ազգագրական նյութերը թափանցում էին հայ նոր գրականության ոլորտը: Այս նոր գրականությանը շատ բնորոշ էին ազգային գեղեցիկ սովորույթների, անխառն բարքերի, տնտեսական զբաղմունքի, նյութական ու հոգևոր մշակույթի, ժամանցի ձևերի, սպորտի և խաղերի տեսակների, ուխտագնացությունների, ամուսնաընտանեկան սովորույթների ու ծիսակատարությունների նկարագրությունները: Այսպիով, միաբանությունը շատ շուտով վերածվեց հայագիտության, կրթության և գիտության ամենատարբեր ճյուղերի զարգացման կենտրոնի՝ ունենալով հարուստ գրադարան, ձեռագրատուն, տպարան և այլն: Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի ներկայիս ձեռագիր ֆոնդն ավելի քան 5 հազար միավոր է, տպագիր ֆոնդը՝ շուրջ 100 հազար: Հայտնի է նաև Վիեննայի Մխիթարյանների մատենադարանը, որտեղ պահվում են շուրջ 2600 գրչագիր մատյաններ:

1.2. Մխիթարյան միաբանության ազգագրական գործունեությունը

1.2.1.Ղուկաս Ինճիճյան (1758-1833)

Վենետիկի Մխիթարյան միաբանության գիտնականները, հայ մշակույթի ու լեզվի ուսումնասիրությանը զուգընթաց, առաջին հերթին ուշադրություն դարձրին հայ ազգագրության հարցերին, հայ ժողովրդի տարբեր հատվածների ազգային կյանքի ու կենցաղի, նրա հոգևոր ու նյութական մշակույթի երևույթներին: Այս տեսակետից ուշադրության արժանի են հատկապես Մխիթարյան միաբանության անխոնջ գիտնականներ Ղ. Ինճիճյանի և Մ. Բժշկյանի հնախոսական, տեղագրական-աշխարհագրական, ճամփորդական-ուղեգրական աշխատությունները, որոնք պարունակում են հարուստ, արժեքավոր և կարևոր ազգագրական նյութեր:

Ականավոր հայագետ, աշխարհագրագետ, ծնունդով պոլսեցի Ղուկաս Ինճիճյանը (1758-1833) քաջածանոթ էր Եվրոպայում ձևավորված ազգագրության սկզբունքներին, տիրապետում էր մի քանի լեզվի, ուստի հանձն առավ այդ սկզբունքները հայ ազգագրությանը ծառայեցնելու գործին: Նա ձեռնարկեց Հայաստանի և հայերի վերաբերյալ հայ և օտար մատենագրության մեջ եղած տեղեկությունները ի մի բերելու, դասդասման ենթարկելու, և ըստ թեմաների առանձնացնելու հիման վրա հայ ժողովրդի հազարամյակների ազգագրական նկարագիրը ներկայացնելու գործընթացը: Ղուկաս Ինճիճյանը թողել է գրական, պատմաաշխարհագրական, աղբյուրագիտական և ազգագրական հարուստ ժառանգություն:

Ղ. Ինճիճյանը մասնակցում է Ստեփանոս Ագոնցի «Աշխար-

հագրութիւն չորից մասանց աշխարհի» 12-հատորյա աշխատության ստեղծմանը և հեղինակում Օսմանյան կայսրության պատմական աշխարհագրությանը նվիրված 5-րդ և 6-րդ հատորները: Առավել արժեքավոր է նույն շարքի Ասիա աշխարհամասին նվիրված «Նոր Հայաստան» հատորը (Վենետիկ, 1806), որտեղ աշխարհագրական հարուստ տեղեկություններ են տրվում Մեծ ու Փոքր Հայքերի, Կիլիկիայի, Աղվանքի, Ատրպատականի, Հյուսիսային Միջագետքի և հարակից այլ վայրերի մասին:

«Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի», հ. Ա, Վենետիկ, 1802 և «Ստորագրութիւն Հայաստանեայց», Վենետիկ, 1922, «Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» աշխատությունները Հայաստանի վերաբերյալ փաստական նյութի հարուստ շտեմարան էին, պատմաաշխարհագրական կարևոր ուսումնասիրություններ: Կարևոր են նաև պատմաքաղաքական անցքերի, Հայաստանի վարչաձևերի, նախարարական տների, նրանց իրավական դրության, հայ ժողովրդի բարքերի ու սովորույթների, զբաղմունքի, հավատալիքների և այլնի ուսումնասիրության առումներով:

Մատենագրական հարուստ նյութերի հիման վրա «Ստորագրութիւն Հայաստանեայց» գրքում շարադրում է հին Հայաստանի պատմաաշխարհագրական նկարագրին նվիրված ծրագրային մի աշխատություն, որում հարուստ տեղեկություններ են տրվում Մեծ Հայքի 15 աշխարհների և 191 գավառների վերաբերյալ: Հեղինակը կատարել է տեղանունների ստուգաբանություն և փորձել տեղադրել իրեն հայտնի բոլոր բնակավայրերը:

«Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» եռահատոր մեծածավալ աշխատության մեջ Ղ. Ինճիճյանը առաջինն էր հայագետներից, որ ներառել է մատենագրության մեջ հաստատագրված ազգագրական տվյալներ՝ դրանք

խմբավորելով ըստ թեմաների՝ «Զինուորութիւն Հայաստանեայց», «Սովորութիւն Հայաստանեայց»: Երկասիրության մեջ մատենագրությամբ հավաստված պատմաազգագրական տեղեկությունների հիմամբ ներկայացված են հայոց միջնադարյան ռազմական մարտավարության պատկերը, զինվորների զգեստները, ժողովրդական տարազի ձևերը, զարդերն ու գործածության եղանակները, օծանելիքները, ռազմական հանդերձանքը, պաշտպանական զենքերի տեսակները, ամրոցները, պարսպաքանդ սարքերը, վրանները, ազդարարիչ եղջերափողերը, նաև արքունական կենցաղի որոշ կողմեր՝ թագավորների պաշտոնական տարազն ու դրա օգտագործման ձևերը, թագն ու խույրը, թագադրության հանդերձանքը, թագադրության արարողակարգը, օծումը, պալատականների սովորույթները, միջնադարյան հայոց ամուսնական սովորույթները, բարքերը, պետական-նախարարական իրավական նորմերը, հուղարկավորման ծեսերը: Հուղարկավորման, հոգեհանգստի և հետթաղման ծեսերը ներկայացնելիս առանձնացրել է հատկապես սգավորության, մահարձաններ կանգնեցնելու սովորույթները:

Ղ. Ինճիճյանը մանրամասնորեն քննության է առել միջին դարերում ազգային առաքինության և բարոյականության վերաբերյալ տեղեկությունները: Ըստ արժանվույն գնահատելով ազգային հերոսներին, որոնք իրենց առաքինազարդ վարքով ծառայել են ազգին ու հայրենիքին, գիտնականը խստորեն քննադատել է ախտերը՝ չարությունն ու նախանձը, բանսարկությունը, հայրենիքի նկատմամբ դավաճանությունը և այլն: Գիտնականը հրամայական է համարում հայկական կենցաղն առողջ հիմքերի վրա դնելը, արատներն արմատախիլ անելը:

Երկրորդ հատորում «Դրօշք, նշանք» խորագրի ներքո ներկայացրել է միջնադարի հայկական պետական-զինվորական դրոշները, դրանց նշանները: Նա գրում է, որ հայոց դրոշի նշանը

նախ արծիվն է եղել, ապա դրան ավելացել է առյուծը։ Նշել է, որ Արշակ II թագավորի օրոք արծիվն ու նետը զինանշան են համարվել, որովհետև զինվորները դրանք կրում էին իրենց ճակատներին ու պարանոցին։

Ուշագրավ են III հատորում Ղ. Ինճիճյանի անդրադարձները հայոց միջնադարյան զբաղմունքներին, ճարտարապետությանն ու երաժշտությանը, հեթանոսության ու քրիստոնեության հետ կապված հարցերին, հոգևորականների նիստուկացին, հագուկապին, ծիսական արարողակարգին։

Ի դեպ, առաջին հատորում առանձին գլուխներում տրված են «Հայաստան» անվան զուգահեռներն ու դրանց ստուգաբանությունները, Հայաստանի դիրքը, տարածքը, կլիման, լեռները, գետերը, լճերը, բուսական և կենդանական աշխարհը, բնակչության հիմնական զբաղմունքները, ժողովրդագրությունը, գաղթականության վիճակը, գաղթի պատճառներն ու ուղիները։ Ամբողջությամբ վերցրած «Հնախօսութիւն» երկը մի ամբողջ հանրագիտարան է, որ երկար ժամանակ անսպառ ու ստույգ տեղեկություններ է հաղորդել ու շարունակում է օգտակար լինել հետազոտողներին։

Հայոց հին հավատալիքները նա համեմատության մեջ դրեց հին ժողովուրդների նմանատիպ հավատալիքների հետ՝ փորձելով գտնել այդ համակարգում համամարդկային մտածողության արժեքները։ Ըստ Ղ. Ինճիճյանի՝ հայոց սիրո և գեղեցկության աստվածուհի Աստղիկը նույն եգիպտական Իսիսն է, հռոմեական Դիանան և հունական Արտեմիսը։ Այս համեմատության միջոցով նա փորձեց ի մի բերել հին դարաշրջանի հեթանոսական հավատալիքների հիմքը կազմող տոտեմիզմի և անիմիզմի դրսևորումները՝ մատնացույց անելով վերապրուկային երևույթների առկայությունը իր ապրած ժամանակահատվածում։

Հայ կենցաղավարության մեջ առաջավոր ձևեր մտցնելը Ղ. Ինճիճյանի վաղեմի նպատակներից էր։ Դեռևս 1815 թ. «Ազգասեր» աշխատության մեջ հանգամանորեն անդրադարձել է այդ խնդիրներին։ Եվ որպեսզի կենցաղագիտական նոր երևույթները դյուրըմբռնելի լինեն, հեղինակն այդ աշխատությունը շարադրել է բարբառախառն գրական լեզվով։ Այստեղ նա բազմաթիվ օրինակներ է բերել հռոմեացի, հույն, ռուս և այլ ժողովուրդների վարք ու բարքից, չմոռանալով բերել նաև հայկական միջնադարյան կենցաղավարության գեղեցիկ օրինակներ։ Այս համապատկերում նա խնդիր է առաջադրել ըմբռնելու ազգային ինքնաճանաչողության ոգին և սուր պայքար մղելու նախանձի, քինախնդրության, բամբասասիրության, չարախոսության, կեղծավորության և նմանատիպ այլ երևույթների դեմ։

Ղ. Ինճիճյանը անդրադարձել է նաև ժողովրդական բժշկությանը, որը հենված է մարդկային փորձի և ճանաչողության վրա։ Հանգամանորեն անդրադարձել է «Ազգասեր» աշխատության մեջ։

Գիտնականի հրատարակած ծավալուն գործերից է «Ընդհանուր պատմութիւն» կամ «Դարապատում» վերնագրով յոթ հատորից բաղկացած աշխատությունը։ Վերջին՝ Է հատորը ներկայացված է երկու գրքով (տե՛ս Վենետիկ-Ս. Ղազար, 1824-1827)։ Այն թարգմանվել է ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, առավել ճանաչված է Եվրոպայում, քան մեզանում։ Ղ. Ինճիճյանը անդրադարձել է տարբեր ժողովուրդների ազգագրական նկարագրերին՝ հիմնականում հենվելով իր թարգմանած աղբյուրագիտական նյութերի վրա։ Վերջին երկու հատորները նվիրված են գիտության և արվեստով զարգացման պատմությանը, մեծ մտածողների, արվեստագետների, եկեղեցական գործիչների կյանքին ու գործունեությանը։ Ղ. Ինճիճյանը հրատարակել է նաև «Ամա-

ռանոց Բիւզանդեան» (Վենետիկ, 1803-1820 թթ.) տարեգրքերը, որոնք ազգագրական նյութերի անսպառ աղբյուրներ են (տե՛ս **Նահապետյան Ռ.,** Վենետիկի Մխիթարյանների դերը հայ ազգագրության ձևավորման գործում ԺԹ դարի առաջին կեսին // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 113-134):

1.2.2.Մինաս Բժշկյանը (1777-1851) որպես բանահավաք և ազգագրագետ, հիմնական աշխատությունները

Մինաս Բժշկյանը հայտնի է արևմտահայոց մեջ որպես առաջին բանահավաք, նպատակադրմամբ հայ և այլ ժողովուրդների կենցաղի ու մշակույթի վերաբերյալ ճամփորդություններով անձամբ արժեքավոր ազգագրական նյութեր գրառող: Նա հայ իրականության մեջ առաջինն էր, որ գիտակցեց, թե ազգագրության բուն աղբյուրը ժողովրդի բանավոր ժառանգությունն է, այսինքն՝ հույժ անհրաժեշտ է հավաքել և խմբավորել դաշտային ազգագրական նյութերը: Ըստ այդմ՝ իր նշանավոր երկու աշխատությունները («Պատմութիւն Պոնտոսի» և «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան») գրել է հիմնականում տարբեր ժողովուրդներից իր գրառած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա: Այդ գործին հատկապես նպաստել են երկու անգամ երկարատև ճանապարհորդելու պատեհ առիթները, ինչպես նաև Ղրիմի հայկական գաղութում եկեղեցական թեմի առաջնորդի պաշտոն վարելը: Մ. Բժշկյանն իր անցած վայրերի վերաբերյալ հնարավորին չափ գրի է առել աշխարհագրական, պատմական, հնախոսական, ճարտարապետական, ազգագրական և այլ կարգի տեղեկություններ:

«Պատմութիւն Պոնտոսի որ է Սեավ ծով» (Վենետիկ, 1819) գրքում նա բավականին ուշագրավ նյութեր ունի ծովափնյա մի

շարք էթնիկ հանրությունների ու ժողովուրդների ինչպես քաղաքական կացության, նմանապես կենցաղի ու սովորույթների վերաբերյալ, որոնց մեծ մասի հետ, իբրև բնիկ տրապիզոնցի, նա անձամբ ծանոթ է եղել: Գիտնականը անդրադարձել է տեղական ժողովուրդների՝ քրիստոնյաների բռնի մահմեդականացմանը և այլ հարցերի:

Ըստ նրա վկայությունների՝ Պոնտոսի հայերի հիմնական զբաղմունքը եղել է դաշտամշակությունը, պարտիզամշակությունը, ծխախոտամշակությունը, քաթանագործությունը, ընտիր կաթնամթերքների պատրաստումը: Որոշ վայրերում համշենցի հայերը թեև դավանափոխ են եղել, բայց պահպանել են իրենց լեզուն, մականունը, իսկ ծերերը շարունակում էին խաչապաշտ մնալ: Ճանապարհորդի օրոք Աբխազիայի հայերը պահպանել էին ազգային եկեղեցին ու ծիսակատարությունները: Ըստ հեղինակի գրառած նյութերի՝ այդ տարածքում ապրող բազմաթիվ էթնիկ հանրություններ, ինպես, օրինակ, աբխազները, դեռևս ապրում էին տոհմական կարգերով: Նա ականատես է եղել նախնադարից եկող բազմաթիվ ծեսերի ու սովորույթների: Նրա «Պատմութիւն Պոնտոսի» գիրքը այսօր էլ չի կորցրել իր աղբյուրագիտական արժեքը բազմաթիվ էթնիկ հանրությունների ազգագրության ուսումնասիրության համար: Նրա անդրադարձները ուշագրավ են ոչ միայն հայոց, այլև նրանց միջավայրում ապրող թուրքերի, հույների, աբխազների, աբազների, չերքեզների, ինգուշների, թաթարների, օսերի, վրացիների, մեգրելների, աջարների, Դոնի կազակների, բուլղարների, լեհերի, հունգարների ազգագրական պատկերի վերաբերյալ: Իբրև Տրապիզոնցի, իբրև անձամբ նրանց ծանոթ, հարևանությամբ ապրող՝ նրա վկայությունները բացառիկ արժանահավատ են և այդ ժողովուրդների պատմության ու մշակույթի ուսումնասիրության հա-

մար հույժ կարևոր սկզբնաղբյուր, նամանավանդ, գիտնականի գրքում պահպանված այն բազմաթիվ էթնիկ հանրությունների մասին, որոնց զգալի մասը ձուլվել են թուրքերի հետ։ Ճանապարհորդել դեպի Պոնտոս՝ Սև ծովի ափերով, սկսել է 1817 թ. և ուղիղ երկու տարի անց վերադարձել նույն տեղը։

Մինաս Բժշկյանին՝ իբրև հայրենասեր մտավորական եկեղեցականի, հուզել է հայկական գաղութների, մասնավորապես լեհահայ գաղութի ճակատագիրը։

Լեհաստան կատարած ուղևորության ընթացքում այդ երկրում, Բեսարաբիայում, Հունգարիայում, Բուլղարիայում, Ղրիմում և հայաբնակ այլ բնակավայրերում նրա կողմից գրառված հնագիտական, ազգագրական նյութերը բացառիկ արժեք են ներկայացնում, որոնք վերաբերում են հայերի ամուսնության ձևերին, ժառանգության կտակման կարգին, կրոնական համոզմունքներին, արհեստներին ու արհեստավորական միություններին, ժողովրդական տոներին, զբաղմունքներին, նաև նյութական մշակույթին, տների ձևերին։ Լեհահայերի արհեստավորական կազմակերպությունների մասին Մ. Բժշկյանի տեղեկությունները բացառիկ արժեքավոր են. ըստ նրա՝ կային դերձակների, կոշկակարների, մազմանների, սուրուկչիների (հովիվների), մսավաճառների և այլ համքարություններ, որ կոչվում էին ցեխմիստր, իսկ լեհերեն՝ պրասդավայ։ Գրքում ներկայացված են հասարակական այս կազմակերպությունների ներքին օրենքներն ու կանոնները։ Գիտնականը ցավով է գրում, որ երբեմնի հզոր լեհահայ գաղութը կանգնած է ձուլման, կործանման եզրին։ Նրանք մոռացել են մայրենի լեզուն, սովորությունները, ծեսերը, ընդունել կաթոլիկություն, և եթե չարվեն լուրջ քայլեր, մի քանի տասնամյակ անց լեհահայ գաղութը ամբողջովին կձուլվի։ Ցավոք, նրա այս կանխատեսումները իրականացան։ Նա հիմնովին ապացուցեց,

որ լեհահայերը երբեմնի Բագրատունյաց մայրաքաղաք Անիի բնակիչներն են եղել, որոնք սելջուկ թուրքերի արշավանքներից և հայկական թագավորության կործանումից հետո զանգվածաբար գաղթել են Լեհաստան՝ հիմնելով լեհահայ զաղութը։

«Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» աշխատությունը ազգագրական մի ամբողջական ուսումնասիրություն է։ Նա անդրադառնում է հայոց նյութական մշակույթին՝ Եվրոպայում իրենց ստեղծածի, այնպես էլ Անիից բերված եկեղեցական սպասքների, զգեստների, Աստվածածնի տախտականկարի և այլնի մասին։ Գիտնականը ներկայացրել է Լեհաստանի, Հունգարիայի հայկական ավանների, արվարձանների ու գյուղերի, եկեղեցիների, վանքերի, դպրոցների, աղբյուրների, ժողովրդական կառույցների ստեղծման պատմությունը, մոմի գործարանի կառուցումը, թատրոնի շենքի նախագծումը և այլն։ Հունգարիայում 1703 թ. կառուցված Հայաքաղաքը 1820-ական թթ. ուներ 6000 հայ բնակիչ։

Մ. Բժշկյանը ընդարձակ նկարագրություն է թողել հայոց ամուսնական սովորույթների, ազգանվան ձևերի, կտակագրության կարգի, խնամակալության, դպրոցներում երեխաների ուսուցման, ազգային երգարվեստի, երաժշտության և այլ ոլորտների վերաբերյալ։

Մ. Բժշկյանի ուղեգրական հարուստ նոթերը հայկական մեծ և փոքր գաղթավայրերի պատմական ու ազգագրական հավաստի տեղեկություններ են տեղական բնակչության կենցաղի, սովորույթների, լեզվի, գրականության, մշակույթի, հուշարձանների, եկեղեցու, զբաղմունքների մասին, իրավամբ համարվում են արժանահավատ մի հանրագիտարան։ Ռուսաստանի և Եվրոպայի հայկական գաղթավայրերում Մ. Բժշկյանը հիշատակել է մի շարք արհեստներ, որոնցից են կաշեգործությունը, մոմագործությունը, օճառագործությունը, դերձակությունը, ասեղնագործու-

թյունը, կոշկակարությունը և այլն: Հանգամանորեն խոսել է Լեհաստանում XIV դարից սկսած հայկական հասարակություններում գործող իրավահարաբերությունների կարգի մասին: Նկարագրել է դատավարական կազմ ընտրելու, վերընտրելու, պաշտոնների կոչումների, ընտրության ժամանակ դրան նվիրված ծիսակատարությունների, ընտրվածներին հրացանաձգության ծեսով այցելելու, կերուխում կազմակերպելու տեսարանները: Դատավորի գլխավորությամբ 40 խորհրդական-տանուտերը դեռևս 1492 թ. հաստատել էին մի կանոնադրություն, որը «Գրօրենք» անվանումն ուներ: Դա հայերի այլևայլ հարաբերությունների, նաև ամուսնական կարգը պահպանելու մասին օրենքն էր: «Գրօրենքի» մեջ արծածված հարցերը հետևյալն էին՝ 1. հարսնացուի օժիտի և փեսացուին տրվելիք ընծաների սահմանումը, 2. քահանայի կողմից պսակվողների ազգակցական աստիճանի որոշումը (թույլատրվում էր ամուսնանալ հինգերորդ աստիճանում), 3. փեսացուի կողմից հարսնացուին տրվելիք «երեսջրի» (գլխագնի) չափի որոշումը, 4. փոխադարձորեն տրված նշանների օրինումը պատարագի ժամանակ և այդ նշանադրության մասին հասարակությանը հայտարարելը, 5. հարսանիքի օրը որոշելը, 6. հարսանեկան հանդեսի տևողությունը պահպանելու հարցը (3 օր), 7. պսակող քահանայի հասանելիքի որոշումը, 8. կտրիճների մասնակցությունը հարսանիքին և նրանց պարտականությունները այդ հանդեսում, 9. պատարագի ժամանակ զույգին հաղորդելն ու պսակելը և այլն:

Նշված աշխատության մեջ ներկայացված են նաև հայկական միջնադարյան ազգանունները, որոնցից են՝ Բաղդասարենց, Վարդերեսիչ, Նիկոլայանց, Աստվածատուրյանց և այլն:

Այս աշխատության մեջ ևս ազգագրական նյութեր ունի օտար ժողովուրդների՝ Ղրիմի կազակների ու թաթարների վե-

բաբերյալ և այլն:

Մ. Բժշկյանի գիտական հետաքրքրությունների շրջանակներում են եղել նաև ազգային երգարվեստի, միջնադարյան խազագրերի և հայկական ձայնագրության նոր համակարգի խնդիրները: Ունի երաժշտագիտական անտիպ մի աշխատություն՝ «Երաժշտութիւն, որ է համառոտ տեղեկութիւն...»:

Բացի այդ աշխատություններից՝ Մ. Բժշկյանին են պատկանում այն բոլոր տեղեկությունների գրանցումն ու մասսայականացումը, որոնք տեղ են գտել նրա մյուս աշխատություններում: Նրա «Ճեմարան գիտելեաց» (Վենետիկ, 1815) աշխատությունը, որ շարադրվել է չափածո, հարց ու պատասխանի ձևով, ներկայացվում է որպես դասագիրք պատանիների համար: Դասագրքում բացատրված են կյանքի բազմաթիվ բնագավառներում հանդիպող երևույթները: Ազգագրական տեսանկյունից ուշագրավը դիցաբանությունն է, հատկապես հունական և հռոմեական առասպելները: Կարևոր են դասագրքի այն հատվածները, որոնք ներկայացնում են աշխարհամասերի բնակչության մարդաբանական կազմը, դրանց վիճակագրությունը և քաղաքակրթական առանձնահատկությունները:

«Հմտութիւն մանկանց» (Վենետիկ, 1818) քառահատոր աշխատությունը՝ որպես ընդհանուր ազգագրության համառոտ ժողովածու, չինացիների, Հնդկաստանի ժողովուրդների, հարավամերիկյան բնիկների, ճապոնացիների, նորզելանդացիների, Աֆրիկյան ժողովուրդների, արաբների, թուրքերի, պարսիկների, վրացիների և այլոց կենցաղամշակութային սովորությունների և կրոնական համոզմունքների մասին է: Նա իր հավաքած ազգագրական տվյալները, ինչպես նաև այլ գիտնականներից մեջբերածները ցրել է դասագրքերում և ուսուցանել հայ աշակերտությանը, որով ընդհանուր տեղեկություններ էին հաղորդվում աշ-

խարհի ժողովուրդների մասին՝ ազգագրական տեսանկյունից։ Դասագիրքը գրված է աշխարհաբար մատչելի լեզվով։ Վերոհիշյալ երկու աշխատություններն էլ շարադրված են գրավոր աղբյուրներից քաղված նյութերի հիման վրա, որոնցում հեղինակը համեմատության մեջ է դնում տասնյակ ժողովուրդների կենցաղին ու մշակույթին առնչվող ազգագրական ծեսերն ու սովորույթները՝ փորձելով այդ համեմատության միջոցով հասնել որոշակի ընդհանրացումների։

Սակայն Բժշկյան գիտնականի ու մանկավարժի առաջադիմական գաղափարները դեռևս լիովին չէին կարող բավարարել հասարակական պահանջը։ Այն կարող էր բավարարել ժամանակի նոր, ավելի զանգվածային գրական միտքը։ Այսպիսով, հայրենիքից դուրս Մխիթարյան միաբանության գիտնականներ Ղ. Ինճիճյանը և Մ. Բժշկյանը XIX դ. առաջին կեսին զգալի ներդրում ունեցան իրենց աշխատություններով հայ ազգագրությունը գիտական հիմքերի վրա դնելու, ազգագրական նյութերն առավել արդյունավետ գրանցելու, համակարգելու գործում։

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

Հետադարձ կապ

- **Առաջադրանքներ**

Գրել ռեֆերատ «Մխիթարյան միաբանության գործունեությունը և խաղացած դերը հայ հումանիտար մշակույթի զարգացման գործում» թեմայով

Բանավոր ներկայացնել թեմայի հիմնական դրույթները։

- **Թեմայի գնահատում /անդրադարձ/ Գնահատման թերթիկ**

Գրիր դասախոսության ամենակարևոր գաղափարը

Մեկ բան, որ դու կարող ես կիրառել

- **Ինքնաստուգման հարցեր**

1. XVIII դարի երկրորդ կեսից մինչև XIX դ. 60-ական թթ. բնութագրությունը։ Բնութագրեք նախորդ շրջափուլերի համեմատ այս շրջափուլի էական տարբերությունները։

2. Համառոտ թվարկե՛ք Մխիթարյան միաբանության XVIII-XIX դդ. ազգագրական ակնառու նվաճումները։

3. Ո՞վ էր Ղուկաս Ինճիճյանը, նրա ո՞ր աշխատությունն էր հատկապես վերաբերում ազգագրական նյութերի ներկայացմանը։

4. Ինչո՞վ էր տարբերվում Մինաս Բժշկյանի զործունեությունը նախորդներից։

5. Ի՞նչ աշխատություններ է գրել Մինաս Բժշկյանը, դրանցից որո՞նք էին ծառայում իբրև պատանիների համար դասագիրք, որո՞նք էին հատուկ նպատակադրված ազգագրական ուսումնասիրություններ։

Հիմնական և լրացուցիչ գրականություն

Հիմնական

1. Անթաբյան Փ., Վենետիկի Մխիթարյանների հայագիտական գործունեությունը (միաբանության հիմնադրման 250-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», 1968, թիվ 4, էջ 25-38։

2. Բդոյան Վ., Հայ ազգագրություն. Համառոտ ուրվագիծ, Երևան, 1974։

Լրացուցիչ

1. «Գրացուցակ Մխիթարեան տպարանին» (1717-1960), Վենետիկ, 1960։

2. Բժշկեան Մ., Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սիրելոց ի նախնեաց Անի քաղաքին, ի Վենետիկ, 1830։

3. Բժշկյան Մ., «Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով, ստորագրեալ տեառն Հ. Մինաս վարդապետի Բժշկեան Տրապիզոնցւոյն ի Մխիթարեան միաբանութեն է», ի Վենետիկ, 1819:

4. Ինճիճեան Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Ա, Բ, Գ, Վենետիկ, 1835:

5. Հայ ազգագրության պատմություն (XVIII դ. երկրորդ կես – 1980-ական թթ.), Երևան, 2019, էջ 113-136:

6. Հովակիմյան Հ. (Արշակունի), Պատմություն հայկական Պոնտոսի, Պեյրութ, 1967:

7. Նահապետյան Ռ., Վենետիկի Մխիթարյանների դերը հայ ազգագրության ձևավորման գործում ԺԹ դարի առաջին կեսին (Ղուկաս Ինճիճյան, Մինաս Բժշկյան) // Նահապետյան Ռ., Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2:

Թեմա 2. Մեսրոպ Թաղիադյանի, Խաչատուր Աբովյանի և Պերճ Պռոշյանի ազգագրական, բանահավաքչական գործունեությունը

2.1.Մեսրոպ Թաղիադյանի ազգագրական գործունեությունը

XVIII դարի վերջերից և հատկապես XIX դ. առաջին կեսին արևելահայ իրականության մեջ նույնպես բուռն հետաքրքրություն է առաջանում ժողովրդի ընդերքում դարերով կուտակված մշակութային գանձերի նկատմամբ: Մի շարք հեղինակներ հանդես են գալիս ազգագրական և բանահյուսական նյութերի համակարգված շարադրմամբ: Այդ շարքում բացառիկ տեղ են գրավում Մ. Թաղիադյանն ու Խ. Աբովյանը:

Մեսրոպ Թաղիադյան (1803-1858): XIX դարի առաջին կեսի հայ նշանավոր լուսավորիչ, գրող, մանկավարժ, հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, որի մի մասն է հրատարակված: Դեռես պատանեկության տարիներից գրի է առել իր տեսած ու լսած պատմական իրադարձությունները, ինչպես և ազգագրական ու հնագիտական նյութեր, ժողովրդական զրույցներ ու երգեր, առակներ ու ասացվածքներ, հարսանեկան երգեր, ծեսերի ու սովորույթների նկարագրություններ, որոնք ամփոփել է «Պսակ», «Ծիսարան» և «Մաշտոց» խորագրերով ժողովածուներում:

«Ճանապարհորդութիւն ի Հայս», «Դիցաբանութիւն» աշխատությունների բնույթը, նշանակությունը, ավանդը հայագիտության, առանձնապես հայ ազգագրական գիտության մեջ:

Մ. Թաղիադյանի պատմագիտական, ուղեգրական-ազգագրական, բանասիրական հետազոտությունները՝ «Ճանապարհորդութիւն ի Հայս», «Ճանապարհորդութիւն ի Պարս», «Դիցաբանութիւն», «Հնդկաստանի պատմութիւն» և այլն, վկայում են

հեղինակի լայն իմացությունների մասին և հարուստ նյութ են պարունակում Հայաստանի և Արևելքի պատմության ու մշակույթի, ազգային բարքերի ու սովորույթների վերաբերյալ: «Ճանապարհորդութիւն ի հայս» գիրքը նշանակալից երևույթ էր հայ իրականության մեջ ոչ միայն իբրև գրական գործ, այլև իբրև ուշագրավ աղբյուր ազգագրական տեսակետից:

«Ճանապարհորդություն ի Հայս» աշխատության մեջ հիմնականում անդրադարձել է Արարատյան դաշտի գյուղացիների տնտեսական զբաղմունքներին. տեղեկություններ կան Քանաքեռի, Օշականի, Կարբիի, Մեղրիի և այլ վայրերի այգեգործության, դաշտերը ոռոգելու համակարգերի մասին, նկարագրվում են Էջմիածնի վանքի կալվածքները և տնտեսությունը, անդրադառնում է վարուցանքի, բերքահավաքի, կալսելու գործիքներին, Ջրվեժում ընտիր ձեթ ստանալու միջոցներին ու եղանակներին, Նորքում կավե անոթների արտադրությանը, Արարատյան հովտում բամբակամշակությանը, Սյունիքում երկաթամշակությանը և հայ բնակչության տնտեսության այլ զբաղմունքներին: Նա ուշագրավ տեղեկություններ է հաղորդում գետնափոր խրճիթներում և վրանաբնակ վաչկատուն կյանք վարող Սեղլու և Ղարափափախ անվանումներով ցեղերի կենցաղի, զբաղմուքների ու տարազի, տղամարդկանց՝ ավազակությամբ զբաղվելու մասին: Մանրամասն նշում է Արևելյան Հայաստանի գետերը նավարկելի դարձնելու և առևտրական նպատակներին ծառայեցնելու, երկրի հարուստ ընդերքը օգտագործելու, խոպանացած դաշտերը բերքատու դարձնելու, արհեստների զարգացման բազմապիսի հնարավորությունների և այլ միջոցառումների մասին: Դա մի ընդարձակ ծրագիր էր, որով նա գիտնականի խորիմացությամբ փորձում էր կռահել երկրի արտադրողական ուժերի կազմակերպման իրական հնարավորությունները, ճանապարհ բացել

կապիտալիզմի զարգացման համար։ Ըստ այդմ, նա առաջարկում էր կազմակերպել ընկերությունների լայն ցանց Արևելյան Հայաստանում, ամրապնդել կապը արևմտյան հատվածի և գաղութահայության հետ, նպաստել հայրենադարձության, հայ առևտրականների կապիտալները սեփական հողի վրա օգտագործելու և խոպանացած երկիրը շենացնելու համար[7]։

Ուղեգրական, հուշագրական այս նոթերը 1816-1823 թթ. ընթացքում նրա կատարած ճանապարհորդությունների նկարագրությունն է։ Նա առաջ է քաշում հայոց ազգային վերածննդի գաղափարը՝ ուսման, դպրոցի, գիտության ու մշակույթի զարգացման ճանապարհով։

Մ. Թաղիադյանի 1830-ին հրատարակած «Դիցաբանութիւն» աշխատությունում, որի նյութերը քաղված են հունական առասպելաբանությունից, զուգահեռ նյութեր են բերում հայկական, հռոմեական, պարսկական իրականությունից՝ հարց ու պատասխանի ձևով։

Մ. Թաղիադյանը դիցաբանությունը համարելով «լսարան պատմութեանց»՝ շեշտում է դրա դերն ու նշանակությունը ամեն մի ժողովրդի պատմական անցյալն ուսումնասիրելու գործում։ Այն մի անսպառ աղբյուր է, որտեղից անհատնում նյութեր կարող են քաղել և՛ գրողը, և՛ պատմաբանը, և՛ արվեստագետը։ Մ. Թաղիադյանը սկսում է հետաքրքրվել նաև Հնդկաստանի հայկական գաղթավայրերի պատմությամբ, և նրա մեջ միտք է հղանում ուսումնասիրելու այն երկրի պատմությունը, որտեղ հայերն արձանագրել են տնտեսական ակնառու նվաճումներ։ Նա հեղինակում է Հնդկաստանի պատմության եռահատորյակը,

---

[7] Տե՛ս **Թաղիադյան Մ.,** Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, գրական ժառանգություն, 9, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1975, էջ 23-93։

որի առաջին հատորն է միայն լույս տեսնում:

Արժեքավոր է Մ. Թաղիադյանի՝ Պարսկաստանի պատմությանը նվիրված աշխատությունը (տե՛ս Պատմութիւն Պարսից, հ. Ա, Կալկաթա, 1846): Աշխատությունը գրվել է գլխավորապես պարսկական սկզբնաղբյուրների հիման վրա՝ առանձին դեպքերում օգտագործելով նաև հայ մատենագիրների (Եղիշե, Մովսես Խորենացի և ուրիշներ) երկասիրությունները: Այստեղ հեղինակն անդրադարձել է նաև Հայաստանի համապատասխան ժամանակաշրջանի իրադարձություններին՝ ցույց տալով երկու ժողովուրդների պատմական ու մշակութային ընդհանրությունները: Արժեքավոր են աշխատության այն հատվածները, որոնք վերաբերում են Պարսկաստանի հայկական գաղթավայրերի և հատկապես Նոր Ջուղայի պատմությանը:

Մ. Թաղիադյանի աշխատությունները ոչ միայն գրական գործեր են, այլև կարևոր աղբյուր են ազգագրական տեսակետից: Այս առումով ուշագրավ է 1828 թ. Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակը, որտեղ Թաղիադյանը վերջինիս առաջադրում է հայության ազգային լուսավորության և կուլտուրական շինարարության մի ընդարձակ ծրագիր, ուր բացահայտվում են երիտասարդ լուսավորչի խորհրդածությունները ազատագրված հայրենիքի հոգևոր զարթոնքի և վերածնության համար բացված նոր ուղիների մասին[8]: Նրա գործունեությունը կարևոր նշանակություն ունեցավ անվանի երկու ազգագրագետների՝ Խ. Աբովյանի և Մինաս Բժշկյանի համար, որոնք կարևոր դեր խաղացին ազգագրական գիտությունը հունի մեջ դնելու, տարերայնությունից դեպի գիտության ուղին մղելու տեսակետից:

[8] Տե՛ս նույն տեղը, էջ 390-413:

2.2. Խաչատուր Աբովյանը որպես հայ ազգագրական գիտության սկզբնավորող

Ծնվել է 1809 թ. Քանաքեռում: Ծննդյան տարեթվի վերաբերյալ՝ գրականության մեջ կարծիքները կիսվում են՝ 1805-1809 թթ.: 1822 թ. պատանի Խաչատուր Աբովյանը դառնում է Էջմիածնի վանքի ազդեցիկ ու ուղղամիտ հոգևորականներից մեկի՝ Անտոն եպիսկոպոս Մուղնեցու սպասավոր աշակերտը և Էջմիածնից փոխադրվում է Հաղբատի վանք, իսկ այնտեղից էլ՝ Տփղիսի նորաբաց դպրոցը, որտեղ ուսանում է չորս տարի: Այստեղ աչքի է ընկնում իր ընդունակություններով: 1929 թվականը շրջադարձային դարձավ Աբովյանի համար՝ հանդիպեց Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտին: Դա առիթ է դարձել, որպեսզի Աբովյանը, որ մինչ այդ՝ 1819-1822 թթ. սովորել էր Էջմիածնի վանական, 1824-1826 թթ.՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցներում, մեկներ Դորպատ ուսումնառության:

1830 թ. սեպտեմբերից մինչև 1836 թ. հունվար, Աբովյանը կրթվեց Մերձբալթյան Դորպատ քաղաքում, հաղորդակից դառնալով համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին, և վերադարձավ հայրենիք որպես գրող, մանկավարժ ու լուսավորիչ: Համալսարանում սովորել է մի շարք լեզուներ՝ գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, լատիներեն, ուսումնասիրել բնական և հասարակական գիտություններ, երաժշտություն: 1837-1843 թթ. որպես տեսուչ աշխատել է Թիֆլիսի, 1843-1848 թթ.՝ Երևանի գավառական դպրոցներում:

Նա ստեղծագործել է երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն և գերմաներեն: Գրել է չափածո («Զգացմունք ցավալի սրտիս», «Գարուն», «Սեր առ հայրենիս») և արձակ («Պարապ վախտի խաղալիք», «Թուրքի աղջիկը», «Առաջին սեր») գործեր, հեղինակ է

նաև ուսումնասիրությունների, դպրոցական ձեռնարկների («Նախաշավիղ կրթության»): 1841 թ. Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպում սկզբնավորել է աշխարհաբար լեզվի գործածությունը:

1848 թ. մարտին Աբովյանը նշանակվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ, սակայն դեռ պաշտոնական պարտականությունները չստանձնած, ապրիլի 2-ի վաղ առավոտյան դուրս է եկել տանից և այլևս չի վերադարձել: Նրա առեղծվածային վախճանի հանգամանքները դեռևս չեն պարզվել՝ աքսորվե՞լ է արդյոք, թե՞ սպանվել: Աբովյանը սկզբնավորել է հայ ազգագրությունը, քրդագիտության հիմքն է դրել Հայաստանում: Նրա ստեղծագործությունները խոր հետք են թողել հայ գրականության և հասարակական մտքի պատմության մեջ:

Խ. Աբովյանը հայագիտության մեջ գնահատված է որպես հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ ու մանկավարժ, հրապարակախոս, հասարակական գործիչ, սակայն, ցավոք, նրա ազգագրական ժառանգությունը առ այսօր ոչ ամբողջովին է ուսումնասիրված ու պատշաճ գնահատված, մինչդեռ նա մեծ դեր է խաղացել հայ գիտական ազգագրության հիմնադրման գործում: Արևելահայ իրականության մեջ Աբովյանը նպատակամիտված ազգագրական և բանահյուսական նյութերի գրառման նախաձեռնող է: Խ. Աբովյանը իրավամբ համարվում է հայ իրականության մեջ առաջինը որպես Արևելյան Հայաստանի ազգագրության գիտական նկարագրող, որպես հայ նոր գրականության ու հայ ազգաբանական գիտության սկզբնավորող: Ինչպես Եվրոպայում ու Ռուսաստանում XVIII դարում, Հայաստանում ևս XIX դ. առաջին կեսին գեղարվեստական գրականությունն սկսեց փոխել ուղղությունը՝ ստեղծագործության նյութ դարձնելով ազգային սովորություններն ու բարքերը: Աշխարհիկ գրականու-

թյան խմորման այս շրջանում հանդես եկող հայ գրողների ու բանաստեղծների երկերում արդեն նկատելի էին ազգագրական երևույթների դրսևորումները, բայց տակավին հաղթահարված չէր գրաբարյան լեզուն (Մ. Թաղիադյան և ուրիշներ)։ Այդ նոր գրական ուղղությանն անհրաժեշտաբար պետք էր աշխարհիկ լեզու, որով միայն կարելի էր ազգային ոգին արտացոլել գեղարվեստական գործերի մեջ։ Ազատվել գրաբարից, մտնել հարազատ ժողովրդի մեջ, խոսել նրա հետ հարազատ, պարզ լեզվով, գրի առնել նրա կենցաղը, իրեն իսկ՝ ժողովրդին վերադարձնելու նպատակով, ահա այս էր Մեծ լուսավորչի ու ազգագրագետի ազգագրական ուղղությունը։ Այդ դարագլուխ կազմող գործը վիճակված էր մեծ գրողին ու լուսավորչին՝ Խ. Աբովյանին։

Հեղաշրջելով գրականության թե՛ ձևը և թե՛ բովանդակությունը՝ Աբովյանը քաղաքացիական իրավունք տվեց աշխարհաբարին, գրականություն բերեց ժողովրդական մտածողությունը, ճանաչեց ժողովրդական բանահյուսությունն ու ազգագրությունը իբրև գրականության կենսատու աղբյուրներ։ Նա արմատապես հեղաշրջեց գրականության թեմատիկան՝ պատմությունից դիմորոշելով այն դեպի ժամանակակից կյանքը՝ ազգային քաղաքական, տնտեսական, սոցիալական խնդիրների գործնական նշանակությամբ։

Ազգագրության հախուռն մուտքը հայ գրականության մեջ և Աբովյանի ստեղծագործությունների միջոցով մեզ հավաստվելը պատահական չէր, այլ հասարակական զարգացման, քայքայվող ավատական-նահապետական կյանքի և բուրժուական հարաբերությունների ներթափանցման արդյունք։ Ազգագրությունը՝ որպես ժողովրդի կենցաղի բուն արտահայտությունը, XIX դարի առաջին կեսին դարձել էր ազգային հպարտության առարկա. վերադարձ դեպի ազգային հնավանդ սովորություններն ու կենցա-

ղի «գեղեցկությունները», նահապետական «երանավետ» կյանքի գովաբանմանը, ազգային «ոգու» ոգեկոչմանը, դրանց իդեալականացմանը: Խ. Աբովյանի համար ազգագրության գրառումն ու դրա հիման վրա վեպեր ու զրույցներ կազմելը ունեին հայրենասիրական, ազատասիրական, զգացմունքներ արթնացնելու, երկրի տնտեսական, մշակութային կյանքը առաջ մղելու նպատակ[9]:

Աբովյանը հայկական կենցաղը մոտիկից էր ճանաչում: Նրա գործերում ժողովրդասիրության շնորհիվ ազգագրական ուղղությունը դեմոկրատական բնույթ ստացավ: Դրան մեծապես նպաստեց ռուսական և եվրոպական առաջավոր միտքը: Նրա՝ ազգագրությամբ զբաղվելը պայմանավորված էր նախ Դորպատի համալսարանում ուսումնառությամբ, երբ շփվեց ռուսական և եվրոպական ազգագրական գիտության հետ, իսկ մյուս խթանը Պարրոտի[10] և նրա խմբում ընդգրկված եվրոպական այլ գիտնականների այցն էր Արևելյան Հայաստան՝ Արարատի գագաթը բարձրանալու նպատակով: Պարրոտի հորդորով և խնդրանքով Աբովյանը սկսեց զբաղվել ազգագրությամբ, ընդ որում՝ նրա բոլոր ազգագրական գործերը գրվել են գերմաներեն և շուրջ մեկ դար մնացել չհրատարակված: Այս պատճառով Խ. Աբովյանի ազգագրական ժառանգությունը մնացել էր անհայտ: Միայն

---

[9] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Հայ ազգաբանական գիտության սկզբնավորումը/Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Երևան, 2019, էջ 6-28:

[10] Ֆրիդրիխ Պարրոտ (1791-1841), ծագումով ֆրանսիացի, հայտնի բնախույզ, ֆիզիկոս, բժիշկ, Դորպատի համալսարանի դասախոս, ռեկտոր, ուսումնասիրություններ է կատարել Կովկասում, Հայաստանում և այլուր: Գրեթե մեկ տարի (1829) շրջագայել է Հայաստանում, որի ընթացքում բարձրացել է Արարատ լեռը: Իբրև թարգմանիչ նրան ուղեկցել է Էջմիածնի դպիր Խաչատուր Աբովյանը: Ուսումնասիրություններն ամփոփել է «Ուղևորություն դեպի Արարատ» (1834) գերմաներեն երկհատոր գրքում: Այստեղ անդրադարձել է Հայոց պատմության հարցերին, նկարագրել է հուշարձանները, ժողովրդի կյանքն ու կենցաղը և այլն:

1940-50-ական թթ. երբ ձեռնարկվեց Աբովյանի երկերի 10-հատորյակի հրատարակումը, ազգագրական աշխատություններն առաջին անգամ թարգմանվեցին հայերեն և հրատարակվեցին:

Ռուսական առաջավոր մտքի և եվրոպացի ճանապարհորդների ազդեցությունը խիստ մեծ էր Աբովյանի ազգագրական գործունեության վրա: Աբովյանը դարձավ եվրոպացի ճանապարհորդների ուղեկից և բացատրող:

Նրանք Աբովյանի առաջնորդությամբ շրջել են Հայաստանի մի շարք գավառներում (խոսքը Պարրոտի, Հաքստհաուզենի, Վագների, Բոդենշտեդտի և այլոց մասին է – Ռ. Ն.), որոնց հրատարակած ազգագրական նյութերը հայերի մասին մեծ մասամբ ներկայացրել է ինքը՝ Աբովյանը: Յուրացնելով ժամանակաշրջանի առաջադիմական գաղափարները, ծանոթանալով եվրոպական քաղաքակիրթ կենսակերպին՝ Աբովյանը վերադարձավ հայրենիք լուսավորական և քաղաքակրթական մեծ առաքելությամբ ու ծրագրով: Նա եղավ իր դարաշրջանի առաջին բանագետն ու բանահավաքը, իր երկերում քննարկեց այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հայոց քաղաքային և գյուղական կյանքը, ազգային փոքրամասնությունները, ազգային ծեսերի ու սովորույթների ազգագրական բնութագրությունը[11]:

Աբովյանի հաղորդած ազգագրական նյութերը մեզ են հասել երկու ճանապարհով՝ նյութեր, որ ցրված են գրական ստեղծագործությունների մեջ, և նյութեր, որոնք հատուկ նպատակադրումով ուսումնասիրված են:

Խ. Աբովյանն էլ Մ. Բժշկյանի նման նպատակամիտված գրի է առել հայ և այլոց ազգագրական նյութերը: Ազգագրության մեջ

---

[11] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Մ. Թաղիադյանի և Խ. Աբովյանի ազգագրական գործունեությունը//Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Երևան, 2019, էջ 38-48:

շատ քիչ բնագավառներ կարելի է մատնանշել, որոնց վերաբերյալ շատ թե քիչ, դիտավորյալ թե հարևանցիորեն Աբովյանը նյութեր չգրանցեր։

Խ. Աբովյանի ազգագրական ուսումնասիրությունները՝ «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին», «Գյուղական տների կառուցվածքը», «Քրդեր և եզդիներ», «Թիֆլիզու հայոց հանգստարանը», «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին», «Համառոտ ակնարկ հայերի մասին», «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը», «Ռուսական իջևանատների մասին» և այլն, մեծ մասը գրվել է եվրոպացի ճանապարհորդներ Հաքստհաուզենի, Պարրոտի, Վագների և այլոց խնդրանքով ու խորհրդով։ Նրանք Աբովյանի ազգագրական, բանահավաքչական աշխատանքների մասին մեծ գովեստով են արտահայտվել։ Այսպես, Հաքստհաուզենը «Закавказский край», путевые впечатления и воспоминания барона Августа Гакстгаузена (часть 2, СПб., 1857, էջ 48-49) գրքում գրում է. «Առանձնապես հրավիրում եմ պ. Աբովյանին գործադրել իր հիանալի տաղանդը և հասարակական դիրքի ընձեռած հնարավորությունները՝ հավաքելու և հրատարակելու այն ամենը, ինչ պահպանվել է ժողովրդական երգերից, հեքիաթներից ու ավանդություններից, որպեսզի դրանով խրախուսվեն և ուրիշները՝ կատարելու այդ կարևոր հետազոտությունը»։ «Հին հայկական վիպական երգերի իսկությունը կարող է հետազոտել միայն Աբովյանը»։ Աբովյանի ազգագրական-բանագիտական ուսումնասիրությունները բարձր գնահատած Մորից Վագները[12], իրեն տրամադրած նյութերի կարևորությունը նկա-

[12] Մորից Վագները (1813-1887), գերմանացի հայտնի աշխարհագրագետ, երկ-

տի ունենալով, գրում է. «...շնորհիվ Երևանի գավառական դպրոցի տեսուչ, իմ բարեկամ Աբովյանի սիրալիրության, որը հանդիսանում է Արևելքի լավագույն հետազոտող ու գիտակ և հիմնավորապես տիրապետում է ասիական շատ լեզուների, ես ստացա մի շատ հետաքրքրական ազգագրական աշխատություն Արևմտյան Ասիայում ապրող մի քանի ազգությունների և, հատկապես, քրդերի մասին, որոնց նա առիթ էր ունեցել երկար ժամանակ ուսումնասիրել ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Պարսկաստանում և Բայազետի փաշայությունում...»[13]: Բացի վերոհիշյալ գիտնականներից, Աբովյանի գրական, գիտական գործունեության վրա զգալի է եղել նաև Հերման Վիլհելմ Աբիխի ազդեցությունը: Նա ևս շրջել է Հայաստանում (1844-1845), ուսումնասիրել է Ակոռիի երկրաշարժի պատճառները, բարձրացել Արարատ լեռը (1845), եղել է Անիում, կազմել մայրաքաղաքի գլխավոր շինությունների գծագիրը: Հրատարակել է «Геологические исследования в Кавказских странах» (1878-1887) եռահատորը և այլն:

1840 թ. գերմաներեն գրված «Ակնարկ»-ում աղբյուրագիտական կարևորությամբ ներկայացված են Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին (Երկեր, Երևան, 1984): Աշխատության ուշագրավ հատվածն է Թիֆլիսահայոց հարսանեկան սովորույթների ու ծեսերի նկարագրությունը: Նա ի սկզբանե գրում է, թե «հայրենա-

---

բաբան, բնագետ և ճանապարհորդ, 1843-1844 թթ. շրջագայել է Հայաստանում, եղել է Երևանում, Սևանի ավազանում, բարձրացել է Արարատ լեռը: Նրան որպես թարգմանիչ ուղեկցել է Խաչատուր Աբովյանը: Հրատարակել է «Ճանապարհորդություն դեպի Արարատ և Հայկական բարձրավանդակ» գիրքը (1848), որը հայերեն լույս է տեսել «Ճանապարհորդութիւն ի Հայաստան» (1851) խորագրով:

[13] «Ճանապարհորդութիւն ի Հայաստան», էջ 13:

կիցներից ամուսնա-հարսանեկան սովորույթները որպես ազգային երևույթ, միանգամայն ինքնատիպ են» (էջ 609): Ըստ այդ բնութագրման՝ հայ աղջիկը պետք է ամուսնանար 14 տարեկանից, փեսացուի ով լինելը կարևոր չէր, միայն թե օժիտի հոգսից ազատվեին: «Ակնարկ»–ում ցույց են տրված ամուսնությունը իրականացնելու մի քանի սովորություններ: Դրանք էին՝ օրորոցախազը, միայն հոր կամքով տղա և աղջիկ ամուսնացնելը, ընտրության համար առավելությունը ոչ այնքան գեղեցկությանը, որքան աշխատունակությանը տալը, միջնորդների օգնությամբ ամուսնությունը կայացնելը, միջնորդների և աղջկա ծնողների միջև երկար ու բարակ երկխոսությունները, որոնք Աբովյանը բնորոշել է իբրև հայկական ճարտասանության ձևեր: Գրողը անդրադարձել է «օժիտ», «գլխագին» եզրույթներին՝ ընդունելով գլխագնի գոյությունը հայ իրականության մեջ և չկարողանալով էական տարբերություն գտնել այս երկուսի միջև: Ամբողջովին ներկայացված է Թիֆլիսի հայկական հարսանեկան ծիսաշարը՝ հայկական ինքնատիպ սովորություններով հանդերձ: Կարևոր տեղ է հատկացրել նաև ընտանեկան հարաբերություններին, կանանց իրավազուրկ վիճակին: Նաև նշվում է Թիֆլիսի վերակառուցման, շենքերի, շինարարության մեջ եվրոպական ոճի կիրառման, իջևանատների, հյուրանոցների, քաղաքային տարազի եվրոպականացման գործընթացների, կահույքի, երաժշտության, արհեստագործության, հյուրասիրության կանոնների, խնջույքի ձևերի և այլնի մասին[14]: Այդ ծավալուն հոդվածում ներկայացվում է նաև քաղաքի եվրոպականացման գործընթացը և հայոց դերն այդ ասպարեզում:

---

[14] Մանրամասն տե՛ս **Նահապետյան Ռ.,** Հայոց ընտանեամուսնական սովորությունների ու ծեսերի բնութագրությունները Խ. Աբովյանի երկերում//Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 71-83:

«Գյուղական տների կառուցվածքը» հոդվածում անդրադարձել է գյուղական կյանքին, Քանաքեռի ժողովրդական շենքերի տեսակներին ու կահկարասուն։

Ելնելով իր հայրական տան օրինակից՝ Խ. Աբովյանը հետազոտման նյութ դարձրեց հայոց ժողովրդական բնակարանի և նրա օժանդակ կառույցների ուսումնասիրությունը։ Հետագայում ժողովրդական բնակարանի և նրա համալիրի հետազոտությունը դարձավ հայ ազգագրության կարևոր խնդիրներից մեկը[15]։

Խ. Աբովյանը տվել է XIX դարի առաջին կեսի ժողովրդական ճարտարապետության նկարագիրը, որն այսօր ևս օգտակար է ժողովրդական ճարտարապետությամբ զբաղվողների համար։ Խ. Աբովյանի նկարագրությունը վերաբերում է բազմաբաժին շենքին, որի մեջ մտնում էին թոնրատուն-խոհանոցը, նրան կից բակից առանձին բացվող մուտքով հյուրասենյակը, մառանը, ննջարանները, գոմը, մարագը և այլն։ Մեկ բաժնով շենքեր ունեցել են, սովորաբար, գյուղի չքավոր ընտանիքները։ Նա անդրադարձել է նաև գյուղական ներքին կյանքին, շինականների ընտանեկան հարաբերություններին և ամուսնության հարցերին, ուր առանձնակի ուշադրության են արժանացել չխոսկանության հետ կապված սովորությունները, սեփականության ժառանգմանն առնչվող իրավահարաբերությունները, ավագության կարգի պահպանվածությունը։ Հոդվածում ներկայացված են կենցաղավարության ձևերը թոնրատանը, այգիներում, հյուրեր ընդունելու կարգը, կանանց և տղամարդկանց ժամանցները կազմակերպելու եղանակները, սեռահասակային խմբեր կազմելու սովորությունները։ Խ. Աբովյանը նկարագրում է նաև ժողովրդա-

[15] Տե՛ս **Նահապետյան Ռ.**, Հայկական ժողովրդական ավանդական բնակարանն ըստ գրավոր սկզբնաղբյուրների//Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք3, էջ 155-157:

կան ու կրոնական տոները և ուխտագնացությունները, հարսանեկան ու ամուսնական արարողությունները, դրանցում երիտասարդների լռակյաց ընտրությունների ձևերը և այլն:

«Քրդեր և եզդիներ» ուսումնասիրության մեջ Աբովյանը ներկայացնում է երկու ժողովուրդների սովորությունները, նրանց դավանանքները, զբաղմունքները, ամուսնական կարգը և բարքերը: Նա իրավամբ համարվում է քրդագիտության առաջին լուրջ հետազոտողը[16]: Ցավով արձանագրենք, որ քրդագիտության մեջ դարագլուխ կազմելու համար ծնված այս աշխատությունը լույս տեսավ մեկ դար ու մեկ տասնամյակ հետո:

1836 թ. Մոսկվայում գրած «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին» ցարական կառավարությանը ուղղված դիմում-գրության մեջ ներկայացված է Արևելահայաստանի տնտեսական ու մշակութային բարեփոխումների մի ծրագիր, որը բարձրացնում է նաև հայ ժողովրդի ապրելակերպի եվրոպականացման, քաղաքակրթելու, դպրոցաշինության, մասնագետ կադրեր պատրաստելու, հին, իր դարը ապրած գյուղատնտեսությունը վերափոխելու, տեխնիկական նորամուծություններ կատարելու, հացահատիկային, այգեգործական, տեխնիկական բույսերի նորովի հիմունքներով մշակելու, բարձր արդյունավետության, տնտեսական, մշակութային դրության բարելավմանը հասնելուն ուղղված առաջարկներ և հարցեր: Դա ինքնին մի ծրագիր էր Արևելյան Հայաստանը տնտեսական ու կուլտուրական տեսակետից ոտքի հանելու, արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը առաջադիմական հիմքերի վրա դնելու, նոր մասնագետներ պատ-

[16] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Աբովյանը քրդերի ազգագրության հետազոտող//Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 92-113:

բաստելու համար։ Նա իր ծրագրում առաջարկում էր ուսումնասիրել հողերի հատկությունները, դրանք մշակել համատեղ ուժերով, ցանել այնպիսի կուլտուրաներ, որոնք ավելի շահութաբեր կլինեն վաճառքի համար։ Նա գտնում էր, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հայ ժողովրդի կրթությանը և այլն[17]։ «Ակնարկ հայերի մասին» ուսումնասիրության նպատակն էր ցույց տալ Հայաստանն ու հայերին այնպես, ինչպես կան՝ իրենց մտածողությամբ, վարքով, բարքով, կենցաղով, առանց կանխակալ այն միտումի, որոնցով աչքի էին ընկնում եվրոպացի բողոքական և կաթոլիկ քարոզիչների՝ տարբեր լեզուներով հրատարակած ճանապարհորդական նոթերը[18]։

Ազգագրական կարևոր գործերից է նաև Խ. Աբովյանի «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը» հոդվածը, որտեղ ընդգծված է հայոց հոգևոր և աշխարհիկ երաժշտության խորապես ազգային բնույթն ու ինքնատիպությունը։ Ըստ Աբովյանի՝ եկեղեցական երաժշտության ակունքները պետք է փնտրել ժողովրդական երաժշտության մեջ[19]։

Առանձին ուշադրության արժանի է «Թիֆլիզու հայոց հանգստարանը» պատմվածքը։ Այստեղ մանրամասնորեն ներկայացված են հուղարկավորությունը, սգալու ձևերը, սգո հագուստները, ինքնախարազանման, կոծելու, երեսին հող քսելու, ճանկռելու, գլխի մազերը պոկելու, բացականչություններ անելու սովորությունները և այլն։ Կարելի է ասել, որ պատմվածքն ամ-

---

[17] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Խ. Աբովյանը՝ հայ ազգաբանական գիտության սկզբնավորող // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 83-92, **նույնի՝** Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 93-94։

[18] Տե՛ս **Աբովյան Խ.,** Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Եր., 1958, էջ 32-42։

[19] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Խ. Աբովյանը ազգագրագետ // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 50-60։

բողջությամբ ազգագրական գործ է: Սույն ակնարկում հստակորեն շարադրված են Աբովյանի ծրագրերն ու ըմբռնումները հայ ժողովրդի լուսավորության ուղիների, կրթական մակարդակը բարձրացնելու մասին:

Ազգագրական ուշագրավ տեղեկություններ են պարունակում նրա օրագրերը: Այստեղ արծարծված հարցերն են՝ գերմանացիների և այլ ժողովուրդների կենցաղավարությունը, հյուրասիրության կարգը, Աբովյան գերդաստանի ավանդական ուխտագնացություններն Էջմիածին և այլն[20]:

Խ. Աբովյանը նկարագրել է նաև տարբեր ժողովուրդների՝ հռոմեացիների, հույների, անգլիացիների, ավստրիացիների, ռուսների, հնդիկների սովորույթները՝ քաղելով իր ժամանակի գրականությունից: Նա հայ և օտար ժողովուրդների ազգագրությամբ զբաղվել է գիտնականի բարեխղճությամբ:

«Վերք Հայաստանի» վեպը, «Առաջին սերը», «Թուրքի աղջիկը» և այլ գործեր, դրանց բնույթը և ուղղվածությունը:

«Վերք Հայաստանի» վեպը Այրարատ նահանգը ներկայացնող, ազգագրությամբ հագեցած գործ է: Հեղինակի գեղարվեստական արձակում առհասարակ տեղ են գտել հայ ժողովրդի զբաղմունքների՝ երկրագործության, այգեգործության, բերքահավաքի ու կալսելու, անասնապահության, որսորդության վերաբերյալ նկարագրություններ: Նյութական մշակույթից ներկայացված են բնակարանը, զգեստը, զարդերը, ասեղնագործությունն ու կահույքը, փոխադրամիջոցների տեսակները, զենքերը, երաժշտական գործիքները, ուտեստները: «Վերքում» և այլուր առանձին ուշադրություն է դարձվել ժողովրդական մարտական խաղերին,

[20] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Խ. Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 60-71:

ձիով մականախաղերին, գնդակախաղերին։ Ժողովրդական տոներից հատկապես Ծաղկավանքում պատկերված է Վարդավառի տոնակատարությունը։ Հոգևոր մշակույթի առումով նյութեր ունի՝ կենդանիների, ջրի, արևի, չար ու բարի ոգիների, վիշապների, քաջքերի պաշտամունքի վերաբերյալ[21]։

«… Մեր վարժապետը, պատմում է Աբովյանի սաներից Աքիմյանը, առանձնապես սիրում էր ներկա լինել ժողովրդական տոներին – դիտել, ուսումնասիրել երևույթները, բաներ քաղել դրանցից։ Թիֆլիսում այն ժամանակ ոչ թատրոն կար, ոչ օպերա և ոչ անգամ կրկես։ Դրանց փոխարեն կային ջիրինդ, մուշտակռիվ, կոխ՝ ըմբշամարտ։ Բայց նա այդ հանդիսավայրերը լոկ զվարճանալու համար չէր գնում, այլ ուսումնասիրելու համար, երկար կանգնած ականջ էր դնում, թե ժողովուրդը – մարդ թե կնիկ ինչպես են խոսում, ինչի՞ց են հաճույք զգում կամ ինչպե՞ս են պահում իրենց»[22]։ Ազգագրական նյութերը գրի առնելը և դրանց գրական մշակումը և՛ գիտական, և՛ հայրենասիրական զգացմունքներ արթնացնող նշանակություն ունեին։ Նա փաստորեն ազգագրագետ-բանահավաք էր։ Քամալյանի այս հուշերում պատմվում է նաև, թե ինչպես Աբովյանը երկար ճանապարհ է անցնում և իր աշակերտների հետ դիտում ժողովրդական տոնախմբությունները լեռներում՝ արոտավայրերի մոտ, թե ինչպես հարցումներ էր անում և գրանցում դրանք։ Ազգագրության մեջ շատ քիչ բնագավառներ կարելի է մատնանշել, որոնց վերաբերյալ շատ թե քիչ դիտավորյալ թե հարևանցիորեն Աբովյանը նյութեր չգրանցեր։

«Առաջին սերը» պատմվածքն ունի երկրորդ վերնագիր ևս՝

---

[21] Տե՛ս **Աբովյան Խ.,** Վերք Հայաստանի, էջ 3-253։

[22] **Քամալյան Ա.,** Նեմեց և հայ ծերերը Աբովյանց անմահ Խաչատուրի մասին //«Սովետական գրականություն», 1940, № 8-9։

«Ծաղկեվանք»: Նկարագրելով գեղջուկների ամենամյա ուխտագնացությունները դեպի Արայի լեռան լանջերին թառած հնօրյա վանք և այդտեղի ծիսակատարությունը՝ Աբովյանը զուգահեռաբար ներկայացրել է մեր ժողովրդի կենցաղն ու բարոյագիտական ըմբռնումները[23]:

«Թուրքի աղջիկը» ունի նաև ենթավերնագիր՝ «Զորություն կրոնի», որից հետևում է, որ տվյալ երկում հեղինակին զբաղեցնողը մարդկության պատմության մեջ կրոնների խաղացած բացասական դերի քննադատությունն է և մարդուն վերացնող, նրա հոգում վառված դժոխքը դրախտի վերափոխող նոր կրոնի՝ սիրո կրոնի բնութագիրը ու փառաբանումը: Ներկայացված ակնարկները Խ. Աբովյանի ազգաբանական գործունեության չափազանց հակիրճ բնութագրությունն են միայն[24]:

Այսպիսով, Աբովյանի երկերը ընդգրկում են XIX դարի առաջին քառորդի հայ սոցիալական, տնտեսական, քաղաքական, կենցաղային ու մշակութային կյանքի բոլոր ոլորտները, նրա ազգագրական պատկերը:

Խ. Աբովյանի գործերն անտիպ կամ որոշ գործեր էլ գրաբար լինելու հետևանքով հետևորդներ չունեցան: Տողերիս հեղինակը վերջին տասնամյակում իր ուսումնասիրություններում կարևորել է նրանց խաղացած դերը հայ ազգաբանության՝ իբրև ուրույն գիտության կայացման գործում:

---

[23] Տե՛ս **Աբովյան Խ.,** Երկեր, Երևան, 1984, էջ 254-273:
[24] Տե՛ս նույն տեղում, էջ 273-289:

2.3.Ազգագրական տեղեկությունները Պերճ Պռոշյանի երկերում[25]

XIX դ. 50-ական թվականներից սկսած մինչև դարի 70-ական թթ. չեղավ այնպիսի մեկը, որն անմիջապես շարունակեր Աբովյանի գործը ազգագրության գծով: Բայց հայկական մամուլը հետևողականորեն շարունակում էր իր ավանդները՝ ներկայացնելով զանազան գավառներ ու առանձին թեմաներ: Այդ իմաստով նշանակալից աշխատանք է կատարել «Բազմավեպ» ամսագիրը:

XIX դ. 60-70-ական թվականներին Արևելյան Հայաստանում աբովյանական տարերքը որոշ չափով շարունակեց միայն գրող Պ. Պռոշյանը՝ իր «Սոս և Վարդիթեր», «Կռվածաղիկ», «Ցեցեր» և մյուս վեպերով: Սակայն, ի տարբերություն Աբովյանի, Պռոշյանի գործերում տակավին բացակայում էր ազգագրագետ-բանահավաքի ինքնագիտակցումը, ազգագրական նյութերը ծառայում էին գեղագիտական նպատակներին:

Պերճ Պռոշյանի գրական անդրադարձն աչքի է ընկնում ազգագրական, ժողովրդական բանահյուսության բազմաժանր հարուստ նյութերով: Դրանում հայերի ավանդական կենցաղի ու մշակույթի ուշագրավ դրվագները առանձնանում են շեշտված տարածքային ինքնատիպությամբ ու առանձնահատկությամբ: Ցավոք, նրա ազգագրական գործունեությունը դեռևս լուրջ արձագանքի չի արժանացել, թեև նրա գործերի ազգաբանական դի-

---

[25] Պերճ Պռոշյան (Հովհաննես Ստեփանի Տեր-Առաքելյան), արձակագիր, վիպագիր, բանաստեղծ, ծնվել է 1837 թ. հունիսի 3-ին Աշտարակում, վախճանվել է 1907 թ. նոյեմբերի 23-ին, թաղված է Թբիլիսիի Խոջիվանքի գերեզմանատանը: Կրթություն է ստացել Աշտարակի քառամյա ծխական, ապա՝ Մուղնու վանական դպրոցներում՝ ուսման պակասն ամբողջացնելով Թիֆլիսի հոգևոր ճեմարանում(1852), Ներսիսյան դպրոցում (1856) և Թիֆլիսի գիմնազիայում:

տարկումը լուրջ մեկնաբանման անհրաժեշտություն ունի: Նրա անդրանիկ վեպը «Սոս և Վարդիթերն» է՝ երկրորդը Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից հետո: Այն ազգագրական գյուղավեպ է և հրատարակվել է 1860 թ.: «Սոս և Վարդիթեր» վեպում նկարագրվում է իրական կյանքի հարուստ և բազմաբովանդակ պատկերը: Մյուս արժեքավոր գործերն են՝ «Հացի խնդիրը», «Ցեցերը», «Բղդեն», «Հունոն»: Սրանք գեղարվեստական համոզչականությամբ հայկական գյուղաշխարհին բնորոշ բարքերի ու սովորությունների նկարագրման բացառիկ գործեր են, որոնցից յուրաքանչյուրը արժանի է մասնագիտական, ազգաբանական դիտարկման: Զեռնարկի սույն հատվածում մասնակի ներկայացվում են «Ցեցեր» վեպում արտացոլված հայ գյուղական կյանքի ավանդական կենցաղի, ընտանեկան ծեսերի ու արարողությունների հակիրճ ազգաբանական դիտարկումներ:

«Ցեցեր» վեպում եղած ազգագրական ու բանահյուսական նյութերի արժևորմանը առանձին հոդվածով անդրադարձել է ազգագրագետ Ա. Պետրոսյանը[26]: Պռոշյանի գործերում առանձնակի տեղ է գրավում ընտանեկան կյանքի բնութագրությունը: Նա նկարագրում է XIX դ. հայկական ավանդական ընտանիքն իր բնակարանային համալիրով, գլխատունը իր ներսույթով. հողե հատակի վրա փռված էր եղեգե խսիր, վրան ծածկված հասարակ կարպետով կամ բրդե թաղիքով: Հայ ընտանիքում շատ ամոթ բան է. «Տղամարդին ի՞նչ կսազի իր կնոջ հետ ատամները բաց անել, հանաքներ անել, ջան ասել. տղամարդն ո՛վ, կանանց գործի մեջ խառնվելն ո՛վ, նրանց հետ վեր ու նիստ անելն ո՛վ, մարդը

[26] Տե՛ս **Պետրոսյան Ա.**, ժողովրդագիտական տվյալների արտացոլումը Պերճ Պռոշյանի երկերում// ՊԲՀ, 2009, թիվ 1:

պետք է մարդ լինի...»[27]: Տղամարդը կնոջը ոչ թե անունով, այլ հոր անունով էր կանչում:

Գրողը «Ցեցեր» վեպում անդրադարձել է նաև ամուսնական ավանդական արարողակարգին: Թեև տան տղամարդու անսահմանափակ իշխանությունը տարածվում էր և ամուսնությունների վրա, այդուհանդերձ դրանցում նկատելի էր տան մեծ կնոջ դերակատարությունը: Իհարկե, վճռական խոսքը պատկանում էր նահապետին, սակայն տան մեծ կինը կարող էր որոշ շտկումներ անել, համոզել և էական դեր խաղալ ամուսնությունների կազմակերպման հարցում: Սիրող տղան դիմելով Սոնային ասում է. «... թե որ էգուց հերդ եզան նման ականջիցդ բռնի, տա մի գլավնու ... տղի, դու ինչ կանես, կարա՞ս ծպտուն հանիլ, կարա՞ս հակառակվիլ»[28]: Ահա և հուսահատ Սոնայի արձագանքը, որը որոշել է «... հենց այսօր ամեն բան մորս ասել, ոտներն ընկնել, աղաչել, պաղատել, որ մի հնարքով հորս բան հասկացնի, մեր նշանը շուտ վրա բերի ու գեղի շուն ու գիլանոցից ինձ ազատի»[29]: Գեղարվեստական արձակի միջոցով Պռոշյանն արձանագրել է գյուղական ընտանիքներում պահպանված բռնի ամուսնությունների կարգը: Ակնհայտ է կնոջ դերը ամուսնությունների կայացման գործում:

Վիպասանը ակնարկներ ունի նաև դասային ամուսնությունների ու մերձավորների միջև եղած ամուսնական արգելքների վերաբերյալ: Սոցիալական տարբեր խավերի միջև ամուսնության գրեթե անհնարինության, հաճախ ամուսնացողների կարծիքը շրջանցելու մասին է խոսում գրողի հետևյալ ակնարկը. դի-

---

[27] **Պերճ Պռոշյան,** «Ցեցեր»//Պատմվածքներ, Երկեր, կազմեց ու առաջաբանը գրեց Ս. Սարինյանը, Երևան, 1987, էջ 29-31:

[28] Նույն տեղում, էջ 56:

[29] Նույն տեղում, էջ 61-62:

մելով ընտրած աղջկան՝ տղան ասում է, որ «...էգուց հերդ իր մուլքն էրվելուց ու կտրատվելուց ազատվելու համար աչքերը հուպ ա տալու, քեզ գիլանոց ռեխը գցելու»: Եթե դու «... գլավնու հարս դառնաս, հորդ ոչ ոք չի կարող ասել, թե աչքիդ վերևն ունք կա, ձնից ու անձրևից ավել ձեր բակն ոչ ոք չի ոտ դնիլ. գզիր-յասավուլի ձեն ձեր քուչումն էլ չի լսվիլ»[30]: Ամուսնությունների ժամանակ խիստ ընդգծվել է զույգի և նրանց հարազատների սոցիալական վիճակը, հասարակության մեջ ունեցած դիրքը. «Հազար հետ եմ քեզ հասկացրել, ասում է տղան, որ իմ հերը ձեր դռնովն անց չի կենալ. նա գիտի, որ դու մեր ատամի ծամը չես, նա իր ոտն իր կարպետից դուրս չի մեկնի»[31]:

Մերձավորների միջև ամուսնական «յոթ պորտը» չլրանալու դեպքում կայացվող ամուսնությունները արժանանում էին հասարակության արհամարանքին, թուքումուրին: Գրողը բերում է մի օրինակ, երբ գյուղացիներից մեկը ցանկանում է իր քեռու թոռանն ուզել իր տղային, նրան խիստ հանդիմանում են. «Տո, գետինը մտնես, ես էդ լսել եմ, դու էդ ի՞նչ գլուխդ քարովն ես տալիս, ուզում ես քեռուդ թոռան ուզիլ տղիդ. բա դու աստվածանից չես վախենում, գլխիդ կրակ կթափվի երկնքից ... մի տես ինչքան չհաս է, մեջն արյուն է խաղում»[32]: Հայոց եկեղեցու սահմանած կանոնակարգը, հասարակական կարծիքը, ավանդական ներփակ կենցաղը նպաստում էին հին բարքերի պահպանմանը:

Գրողի երկում շոշափվում են նաև ամուսնական տարիքի ու հարսանյաց արարողակարգի մանրամասները: «... երեք տարի ա, իմ աղջկա ուզողները դուռ են ջարդում՝ չեմ տալիս, դռնով եմ դուս անում, երթկովն են մտնում. ես էլ չեմ տալիս թե դեռ ջահել

[30] Նույն տեղում, էջ 66-67:
[31] Նույն տեղում, էջ 67:
[32] Նույն տեղում, էջ 77:

(փոքր) ա»: Տղայի հայրը առարկում է, թե «ո՞րտեղի ջահելն ա, դու հիմիկվա ծեսերը գիտես ո՞չ, որ 13 տարեկան աղջիկ չեն թողնում տանը մնա...»[33]: Ասույթ էր դարձել, որ «... ոտդ 13 տարին դրիր, թե ոչ, օրը մին ա, խնամախոսներդ՝ տանում ին»: «... Մեզանում 15-16 տարեկան հայրերն ու 13-14 տարեկան մայրերը սովորական երևույթ են»[34]: Արբունքին չհասած տարիքի ամուսնությունները աշխատուժի պակասի, սոցիալ-տնտեսական պայմանների, գյուղական կենցաղի հետամնացության, ավանդական բարքերի պահպանվածության հետևանք էին[35]:

«Ցեցեր» վեպում ամենայն մանրամասնությամբ տրված է հարսանեկան արարողակարգը, որը ավանդական հարսանիքի մի լավագույն տարբերակն է, ավանդական հարսանյաց ծեսի հակիրճ, բայց եզակի նկարագրություն է: Գրողը հատուկ նկարագրում է մատուցվող ճաշատեսակները, ըմպելիքները, կենացների հերթականությունը, փեսայի՝ մակարներով շրջապատված լինելը, զույգի պարանոցին նարոտի առկայությունը և ուշագրավ այլ մանրամասներ:

Գրողը անդրադառնում է նաև ընտանեկան կենցաղում պահպանված չխոսկանությանը, մասնավորաբար հարսի՝ քավորի և ավագ սերնդի նկատմամբ:

---

[33] Նույն տեղում, էջ 48-49:

[34] Տե՛ս Հունոն, Երկեր, էջ 521:

[35] Ահա թե ինչպես է հիմնավորում աշխատուժի, ընտանիքի նոր անդամի ձեռք բերման անհրաժեշտությունը գյուղատնտեսական աշխատանքները ավարտվելուց հետո. «Ամբարն ալյուրով լիքը, կարասները գինվով փորերը տկզած, մառանը հազարավոր բարիքներով փքված, յուղն ու պանիրը կճուճ-բժութից դուրս են թափվում. էլ ծակ փորով ման չի մնացել. վերի այվանումը մինչև առաստաղը բամբակի կորիզովն է կիտվել, չանաքավոր է կանչում, կտավատը ձիթհանքում է ճմլում, ձեթ դառնում, քնջիթը բովվում է դայինխանումը, և մի քանի օրից... ձեթը պետք է տկերը լցվեն ու Թիֆլիս ղրկվեն, ուրեմն էլ ջահելներին բախտավորելու ինչ արգելք կա» («Ցեցեր», էջ 45):

Ըստ երևույթին, գրողն առաջիններից էր, որ անդրադարձել է երիտասարդական միությունների գործունեությանը: Գրողն այն անվանել է «ընկերական խմբեր», օգտագործում է նաև «պատանեկան անմեղ զվարճությունների ժողով» արտահայտությունը: Հայ ազգագրության մեջ հասակակիցների միությունների խնդիրների գիտական վերլուծությանը հակիրճ անդրադարձել է Ստ. Լիսիցյանն իր Շատախի ազգագրական հետազոտությանը նվիրված ուշագրավ հոդվածում[36]: Այն հետագայում դարձավ առանձին հետազոտության առարկա Լ. Վարդանյանի կողմից[37]: «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին» ուշագրավ հոդվածում Ա. Մնացականյանը երիտասարդական միությունների խնդիրների վերաբերյալ ուշագրավ հետևությունների է հանգել. «... ինչպես յուրաքանչյուր ժողովուրդ, այնպես էլ հայ ժողովուրդը պատմական անհրաժեշտությամբ անցյալ ժամանակներում ունեցել է հասակային դասեր, երիտասարդական կազմավորումներ, կտրիճվորաց եղբայրություններ, որոնք անցյալում նպատակ են ունեցել հասարակությանը տալ լիարժեք, առողջ, խիզախ ու խելոք սերունդ: Եվ ահա, իր ժամանակի կրոնասոցիալական իրադրությունների համաձայն, այդ երիտասարդությունը դաստիարակվել է երևակայական հերոս-նախնիների և համապատասխան աստվածությունների օրինակով: Վերջիններս, անշուշտ, սկզբնապես տարբեր անուններով են կոչվել... իսկ հետագայում աստիճանաբար համախմբվել Թուխ Մանուկ անվան ներքո»[38]:

---

[36] Տե՛ս **Лисициан С. Д.,** Историко-этнографические очерки Шатаха: «Мелики» («Сообщества сверстников»)//ИКИАИ, Т-V, Тифлис, 1927, էջ 71-82:

[37] **Варданян Л. М.,** Традиции мужских возрастных групп у армян (конец XIX начало XX вв.)//«Հայ ազգագրություն և բանահյուսություն (Նյութեր և ուսումնասիրություններ), գ. 12, Երևան, 1981:

[38] Տե՛ս **Մնացականյան Ա. Շ.,** «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին // ՊԲՀ, 1976, № 2:

«Թուխ» նշանակում է սև, իսկ «Մանուկ»՝ մանուկ կամ երիտասարդ, կտրիճ, քաջ, արի, ճարտար: Հենց այս իմաստով է այն ընկալված: Ասենք, որ Թուխմանուկները, ըստ Ա. Մնացականյանի, նախաքրիստոնեական սրբավայրեր են եղել և հալածվել ու ավերվել են քրիստոնեության կողմից: «Նման կարծիքի է հանգել նաև Գ. Սրվանձտյանցը[39]:

Հավելենք, որ Պ. Պռոշյանի ժողովրդագիտական ողջ ժառանգությունը գեղարվեստական խոսքի, ժողովրդական բանահյուսության ու ազգագրական նյութերի համադրման փայլուն օրինակ է: Ա. Ղանալանյանը, անդրադառնալով Պ. Պռոշյանի ժողովրդական բանահյուսության հարուստ նյութերին, այն տիպաբանել է չորս խմբի՝ ժողովրդական առակներ, ժողովրդական երգեր, աշուղական երգեր և ժողովրդական ավանդություններ՝ առանձին-առանձին տալով դրանց համառոտ բնութագրությունը[40]:

Պ. Պռոշյանը 1905 թ. Հ. Թումանյանի հետ լինելով «Ազգագրական հրատարակչական ընկերության» անդամ՝ ընդգրկվել էր 7-հոգանոց խմբագրական հանձնաժողովի կազմում և իր կյանքի վերջին տարիներին որոշ մասնակցություն ունեցավ «Ազգագրական հանդեսի հրատարակման գործում»:

Այդուհանդերձ, չնայած այլևայլ նյութերի առատությանը, XVIII դ. երկրորդ կեսից մինչև XIX դ. 60-70-ական թթ. հայ ազգագրությունը բնութագրվում է ազգագրական երևույթների սահմանափակ նկարագրություններով, ազգագրական բազմաթիվ երևույթներ շոշափված չէին, թյուր և անորոշ էին ազգագրության վերաբերյալ ըմբռնումները: Այդ զբաղմունքը կարծես միայն

---

[39] Տե՛ս Գրոց ու բրոց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 79:

[40] Տե՛ս **Ղանալանյան Ա.,** Պերճ Պռոշյանը և ժողովրդական բանահյուսությանը, Երևան, 1932:

«հնասիրական» կամ «ազգասիրական»[41] նպատակ ուներ, իսկ ժողովրդի բազմաձավալ և բազմապարունակ կյանքը նույնիսկ ժողովրդի մեջ մտնելով ուսումնասիրելը դեռ զգալի պահանջ չէր դարձել: Հայ ազգագրությունը և բանահյուսությունը իբրև գիտության ուրույն ոլորտներ նոր-նոր էին սաղմնավորվում: Ըստ այդմ՝ ժողովուրդների սովորույթների, վարք ու բարքի, մասնավորապես կենցաղի և հոգևոր մշակույթի վերաբերյալ եղած ուղղակի կամ անուղղակի անդրադարձները հատկապես սկզբնական շրջանում մեծ չափով արված են մատենագիտական սկզբնաղբյուրների հիմամբ:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

Հետադարձ կապ

- **Առաջադրանքներ**

Հանձնարարել կարդալ «Վերք Հայաստանի» վեպը և այնտեղից դուրս գրել ազգագրական նյութերը ըստ առանձին թեմաների:

Բանավոր ներկայացնել թեմայի հիմնական դրույթները:

- **Թեմայի գնահատում /անդրադարձ/ Գնահատման թերթիկ**

Գրիր դասախոսության ամենակարևոր գաղափարը

Մեկ բան, որ դու կարող ես կիրառել

- **Ինքնաստուգման հարցեր**

1. XVIII դարի երկրորդ կեսից մինչև XIX դ. 60-ական թթ. բնութագրությունը, ինչո՞վ էր այն տարբերվում նախորդ շրջափուլերից:
2. Թվարկե՛ք Աբովյանի հատուկ նպատակադրված ազգագրական ուսումնասիրությունները:

---

[41] Տե՛ս **Խալաթեանց Գր.,** Նիւթեր հայ ազգագրութեան պատմութեան // ԷԱԺ, հ. Է, Մոսկուա, 1908, էջ 37-58:

3. Ո՞ւմ պատվերով ու խորհրդով է Աբովյանը գրել ուսումնասիրություններ։

4. Աբովյանի ո՞ր աշխատություններն էին, որ Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքի բարեփոխումներ էին առաջարկում։

5. Բացի հայերից, Աբովյանը Հայաստանում ապրող ուրիշ ի՞նչ էթնիկ տարրերի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարեց: Ինչո՞ւ։

6. Ի՞նչ նշանակություն ունեցավ Խ. Աբովյանի ազգագրական գործունեությունը։

7. Ո՞վ էր Մեսրոպ Թաղիադյանը, ի՞նչ աշխատությունների հեղինակ է։

8. Արևելյան Հայաստանի ո՞ր շրջաններին են վերաբերում Մեսրոպ Թաղիադյանի ազգագրական նկարագրությունները։

9. Մ. Թաղիադյանը տնտեսական բարեփոխումների ի՞նչպիսի ծրագիր էր նախատեսել և ի՞նչ նպատակով։

10. Նշել Պերճ Պռոշյանի խաղացած դերը հայ գիտական ազգաբանության կայացման գործում։

Հիմնական և լրացուցիչ գրականություն

Հիմնական

1. Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հ.8, Երևան, 1958, էջ 32-42, 243-278, հ.10, Երևան, 1961, էջ 105-113։

2. Աբովյան Խ., Վերք Հայաստանի, Երկեր, կազմեց Հ. Ֆելեքյան, Առաջաբանը՝ Պ. Հակոբյանի, Եր., 1984։

3. Թաղիադյան Մ., Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, գրական ժառանգություն 9, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 23-93։

4. Նահապետյան Ռ., Աբովյանը որպես ազգագրագետ, «Աբովյանագիտական հոդվածների ժողովածու», Եր., 2007, էջ 123-130։

5. Նահապետյան Ռ., Աբովյանը որպես հայ ազգաբանական գիտության սկզբնավորող, «Աբովյանագիտական հոդվածների ժողովածու», Երեան, 2012, էջ 111-119:

6. Նահապետյան Ռ., Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011 N3 (188), էջ 132-148:

7. Նահապետյան Ռ., Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Երևան, 2019, էջ 6-113:

8. Նահապետյան Ռ., Հայ ազգագրական գիտության ձևավորման առաջին պարբերաշրջանը (XVIII դ. երկրորդ կես – 1850-60-ական թթ.), Պատմություն և հասարակագիտություն, Տարեգիրք, № 1, Երևան, 2015, էջ 123-143:

9. Պետրոսյան Ա., Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, Երևան, 2012:

Լրացուցիչ

1. Հակոբյան Պ., Խաչատուր Աբովյան, Կյանքը, գործը, ժամանակը (1809-1848), Երևան, 1967:

2. Հակոբյան Պ., Աբովյանի «Պարապ վախտի խաղալիքի» ստեղծագործական պատմությունից // ԲԵՀ, 1972, № 1, էջ 69-88:

3. Հակոբյան Պ., Աբովյանի «Բայաթիները» // ԲԵՀ, 1979, № 2, էջ 56-70:

4. Մուրադյան Ն., Աբովյանի «Ուղեգրությունները» // ԲԵՀ, 1976, № 3, էջ 69-78:

5. Նահապետյան Ռ., Աբովյանը քրդերի ազգագրության հետազոտող, «Էջմիածին», 2011, Ա, էջ 76-90:

6. Նահապետյան Ռ., Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ, «Էջմիածին», 2007, Ա, էջ 88-94:

7. Նահապետյան Ռ., Հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի բնութագրությունը Խ. Աբովյանի երկերում, Գիտական աշխատություններ, VIII, 2005, ՀՀ ԳԱՍ «Գիտություն», Գյումրի, 2005, էջ 53-59:

Թեմա 3. Հայ ազգագրությունը XIX դ. 70-80-ական թթ. (Հայ ազգագրական գիտության ձևավորման երկրորդ պարբերաշրջան)

3.1. Մ. Միանսարյանցի, Ալ. և Սրբ. Երիցյանների ուսումնասիրությունները հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարան դիտարկելու վերաբերյալ տեսակետները

XIX դ. 70-80–ական թվականները հայ ազգագրության պատմության մեջ բնութագրվում են որպես տարերային բանահավաքչության հաղթահարման, ազգագրական հարցարանների ստեղծման, հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում հավաքչական բուռն գործունեության ծավալման պարբերաշրջան՝ ընդգրկելով ազգագրության և բանահյուսության բոլոր ճյուղերը, պատմական Հայաստանի ազգագրական հիմնական շրջանները, ինչպես նաև հայկական գաղթօջախները: Նորանոր հետազոտություններն են սկսում կատարվել հայոց պատմության, լեզվի, գրականության, ազգագրության բնագավառներում, ժողովրդական բառ ու բանի նկատմամբ տասնամյակներ առաջ ծայր առած տարերային հետաքրքրությունը XIX դ. 70-80-ական թվականներին դառնում է գիտակցված անհրաժեշտություն: Ասպարեզ են գալիս նաև հատուկ բանահավաքներ: Այս շրջափուլում է, որ ստեղծվեցին հայ ազգագրության և բանագիտության առաջին ծրագիր-հարցարանները:

Հայագիտության մեջ կան շրջանառվող կարծիքներ, որոնց համաձայն՝ Մ. Միանսարյանցի և Ալ. և Սրբ. Երիցյանների ուսումնասիրությունները համարվում են որպես հայ ազգագրու-

թյան առաջին ծրագիր-հարցարաններ[42]: Մ. Միանսարյանցի (1830-1880) ազգային, մշակութային, լուսավորական գաղափարները ամփոփված են նրա «Մտածութիւնք ազգային լուսավորութեան մասին» հրապարակախոսական հոդվածում, նա մի ծրագիր-հարցարան է ներկայացնում հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի բազմաբնույթ կողմերից միայն մտավոր, մշակութային, բարոյահոգեբանական առանձնահատկությունների համալիր հետազոտության մասին: Հարցերի պատասխանները, ըստ Մ. Միանսարյանցի, հնարավորություն կընձեռեն հետազոտողներին ազգային վերածննդի, լուսավորության, քաղաքակրթության, հայ ժողովրդի համախումբ կեցության առաջնահերթ խնդիրները քննելու և վերլուծելու մշակութաբանական առավել լայն տեսադաշտում: Այն չի կարելի «Ազգագրական հարցարան» դիտարկել ազգագրական երևույթների սահմանափակ թվով հարցերի ընդգրկման պատճառով: Մ. Միանսարյանցի «Քնար հայկական» (1868) ժողովածուն իր բնագրագիտական որոշակի սկզբունքներով թերևս առաջին լուրջ փորձերից մեկն է, որի ուղենշած բազմաթիվ դրույթներ նպաստել են XIX դ. երկրորդ կեսին նոր սկզբնավորվող հայ բանագիտության ձևավորմանն ու զարգացմանը: 1868 թ. Միանսարյանցի խմբագրությամբ Պետերբուրգում լույս է տեսնում «Քնար հայկական» վերնագրով, հետագայում այնքան տարածված, հարուստ ու ստվար «ազգային երգարանը»: Նպատակ ունենալով տալ մի այնպիսի ժողովածու՝ «... ուր հավաքված լինին մեկտեղ արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային հայերի երգերը, թե՛ տեղական բարբառով և

---

[42] Տե՛ս **Վարդանյան Ս.,** Միքայել Միանսարյանց: Կյանքն ու գործը, Երևան, 2002, էջ 21, **Варданян Л.,** Степан Лисициан и истоки армянской этнографии, Ереван, 2005, էջ 307, **Վարդումյան Դ.,** Ազգագրություն //Հայ ժողովրդի պատմություն, հ.6, Երևան, 1981, էջ 926:

թե՛ ամենեցուն հասկանալի հայերեն լեզվով», ժողովածուն կազմողը, առաջին անգամ մեր իրականության մեջ, գրական, աշուղական և այլ երգերի կողքին, լայն տեղ է տալիս նաև ժողովրդական երգերին (էջ 130-185):

Չբավարարվելով միայն «ռամկական երգերով, Միանսարյանցն իր երգարանի վերջում իբրև հավելված տալիս է նաև 500-ի չափ ժողովրդական առակներ ու ասացվածքներ, նպատակ ունենալով՝

«ա) ընթերցասիրաց մտավոր զբոսանք պատճառել,

բ) առավել հարցախնդիր ուսումնականաց ազգիս այսօրինակ կենդանի աղբյուրներից նյութ հաղորդելով, ազգային բարուց և հանճարո վերա բանադատություններ հառաջ բերել տալ, և

գ) առիթ տալ հայ ուսումնասիրաց այս փոքր հավաքածուն ավելացնել այն հայախոս առածներով, որոնց գործ է ածում մեր ցրված ազգը զանազան տեղ և որ ժամանակով կարելի լինի ի լույս հանել կանոնավար և առանձին տպագրությամբ»[43]:

Ալ. Երիցյանը հրատարակել է «Ընդհանուր հարցեր հայոց բանանց և սովորութաց (Թիֆլիս, 1874), իսկ Սրբ. Երիցյանը՝ «Տոմար ընտանեկան» (Թիֆլիս, 1884) հոդվածները, սակայն այս աշխատանքներն ընդգրկում են ազգագրության սոսկ սահմանափակ բնագավառներ՝ ընտանիք, իրավական սովորույթներ, վիճակագրական տվյալներ և այլն, որոնք չունեցան գործնական կիրառություն: Դրանք չդարձան դաշտային ազգագրական նյութերի գրառման ծրագիր-հարցարաններ:

---

[43] **Միանսարյանց Միք.,** Քնար Հայկական, Պետերբուրգ, 1868, Հավելված:

3.2. Գարեգին Սրվանձտյանցի (1840-1892) ազգագրական և բանահավաքչական գործունեությունը

Հայ ազգագրության և բանագիտության մեջ XIX դարի երկրորդ կեսը նշանավորվում է Գարեգին Սրվանձտյանցի բեղմնավոր գործունեությամբ[44]: Հայ ազգագրության՝ որպես ուրույն գիտության վերածվելը, շատ չափով կապված է նշանավոր ազգագրագետ և բանահավաքի անվան հետ: Նախքան Գ. Սրվանձտյանցը հայ իրականության մեջ չեն եղել ազգագրությամբ զբաղվող մարդիկ, որոնք շրջեին գավառները, լսեին ժողովրդին, գրի առնեին նրա կենցաղը, սովորույթները, ժողովրդական բանավոր ստեղծագործությունները և այլն:

---

[44] Ծնվել է 1840 թ. դեկտեմբերի 12-ին Վանում, վախճանվել է 1892 թ. նոյեմբերի 17-ին Կ.Պոլսում: Նախնական կրթությունը ստացել է Վանում, ապա ավարտել է Վարագա վանքի ժառանգավորաց դպրոցը, եղել է տեղի ուսուցիչ, «Արծուի Վասպուրական» թերթի փոխխմբագիր, 1862-ին Մշո Ս. Կարապետ վանքին կից ժառանգավորաց վարժարանի տնօրեն-ուսուցիչ, 1863-1865-ին՝ «Լրատար Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթի խմբագիր, 1866-ին Կ.Պոլսում հրատարակել է «Նոր ընթերցարան» դասագիրքը, նրա նախաձեռնությամբ բացվել են դպրոցներ: 1867թ. Կարինում ձեռնադրվել է վարդապետ, 1867-1869 թթ. ստանձնել է Կարինի վարժարանների լիազոր տեսչի պաշտոնը, 1869 թ.՝ Մշո Ս. Կարապետ վանքի վանահոր փոխանորդ, 1872թ. մասնակցել է Վանի «Միություն ի փրկություն» ազգային-ազատագրական խմբակի ստեղծմանը: Կ.Պոլսի պատրիարքի կոնդակով եղել է Արևմտյան Հայաստանի՝ Տիգրանակերտ, Սեբաստիա, Մարզվան, Թոքատ, Կամախ, Երզնկա, Դերջան, Կարին, Արաբկիր, Բաղեշ, Վան, Մուշ և այլ հայաբնակ վայրերում: 1879-1881-ին եղել է Վանի հոգևոր առաջնորդի փոխանորդ, մասնակցել է «Սև խաչ» հայրենասիրական գաղտնի կազմակերպության աշխատանքներին, ապա վիճակավոր առաջնորդի պաշտոն է վարել Բաղեշում, Խարբերդում, 1886 թ. Էջմիածնում օծվել է եպիսկոպոս, նշանակվել է Տրապիզոնի, ապա Ս. Կարապետի վանքի վանահայր, հետո պաշտոնադրվել և առնվել է իշխանությունների հսկողության տակ: Ազգագրության ու հնագիտության բնագավառում կատարած բեղմնավոր գործունեության համար ընտրվել է Պետերբուրգի Կայսերական հնագիտական ակադեմիայի պատվավոր անդամ:

Սրվանձտյանցը, անձնուրացությամբ ձեռնամուխ լինելով բանահավաքչական գործին, տասնամյակներ անընդմեջ անձանձիր շրջագայեց գրեթե ամբողջ Հայաստանը և իրար հետևից հրատարակեց ժողովրդի հոգևոր գանձերը ներկայացնող իր երկերը: Դրանցում արևմտահայ իրականության մեջ առաջին անգամ գրականության նյութ են դառնում ժողովրդի կյանքը, զբաղմունքը, տառապանքները, սովորույթները, հոգևոր արժեքները և ապրած բնատարածքի՝ պատմական հայրենիքի մանրամասն նկարագիրը:

Գ. Սրվանձտյանցի հանդես գալը պայմանավորված էր XIX դ. 50-60-ական թթ. գրական-հասարակական մի նոր ուղղությամբ, որն ավելի խորացավ 70-80-ական թթ.: Դա գավառական գրականության, այլ խոսքով՝ գյուղագրության առաջացումն էր կամ «Գավառի մուտքը գրականության մեջ»[45]: Եթե մինչ Գ. Սրվանձտյանցը, գրողները հայ ազգագրական նյութը ծառայեցրել էին գեղարվեստին, ապա Սրվանձտյանցը, ընդհակառակը, գեղարվեստը ծառայեցրեց ազգագրությանը՝ հարազատ մնալով ժողովրդական բառ ու բանին, ոճին՝ ազգագրական տվյալները չաղավաղելով: Նա հայտնագործեց ազգագրությունն ու բանահյուսությունը որպես հոգևոր զենքեր և դրանցով ազգային զարթոնքի քարոզչության գործը բարձրացրեց մի նոր մակարդակի վրա:

Մկրտիչ Խրիմյանի (Հայոց Հայրիկ) հետ համագործակցությամբ և հոգևորականի կոչման բերումով նա տասնամյակներ ի վեր շրջեց հատկապես Արևմտյան Հայաստանում ու ստեղծեց արժեքավոր մենագրություններ առաջնորդվելով ժամանակի գործիչներին հատուկ՝ «Ծանի՛ր զքեզ» խորիմաստ նշանաբանով:

---

[45] Տե՛ս **Կոստանյան Է.,** Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Երևան, 1979, էջ 7-8:

1860–1861թթ. «Արծուի Վասպուրական» ամսաթերթի փոխխմբագիր եղած ժամանակ, որպես նվիրակ և քարոզիչ, Մ. Խրիմյանի հետ ճանապարհորդում է Արևելյան Հայաստանի գավառներում, որի ընթացքում գրում է մի շարք ազգագրական և հրապարակախոսական հոդվածներ. «Երևան քաղաք», «Տփղիս քաղաք», «Սյունյաց աշխարհ և Շուշի քաղաք» վերտառություններով: Վերջիններս հագեցած էին ազգագրական ուշագրավ տվյալներով: Արժանահիշատակ են հատկապես կրոնական ծեսերի, Թիֆլիսի հայ համքարությունների օրենքների, պատանեկան խաղերի, արհեստների ու առևտրի, տների կառուցվածքի, հայ, ռուս, պարսիկ և այլ ժողովուրդների կյանքից վերցված դրվագները: Ազգագրական բնույթի հոդվածներ է տպագրում նաև իր հրատարակած «Լրատար Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթում (1863-1865): Գ. Սրվանձտյանցը իր նախորդներից տարբերվում էր արդեն որպես ազգագրական-բանահյուսական նյութերի հավաքման բուռն վերելքի նախաձեռնող ու կազմակերպիչ, որպես ազգագրական հարցարանի ստեղծման նախաձեռնող: Իր հայտնաբերած հայոց ազգային էպոսն էլ հենց գաղափար ծնեց ազգագրական և բանահյուսական նյութերի գրանցման սկզբնապես տարերային, ապա համակարգված նախնական հարցարան հիմնելու, որպիսին հանդիսացավ նրա «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գիրքը (Կ. Պոլիս, 1874): Վերջինս երկու կարևորագույն հայտնագործությունների ժողովածու է. առաջինը «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վեպն է, երկրորդը՝ հայ ազգագրական բանահավաքչության համար գրված առաջին ծրագիրը:

«Գրոց ու բրոց»-ը գիտական հանրությանը ներկայացվեց որպես նախադեպը չունեցող ծրագիր-հարցարան: Կ.Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ Գ. Սրվանձտյանցը ճանապարհորդել ու շրջագայել է Արևմտյան Հայաստանի մեծ մասում

և նկարագրել հայ ժողովրդի նյութական, կենցաղային, մտավոր–լուսավորական, սոցիալական ու քաղաքական վիճակը: 1870-ական թվականներից նա ծավալեց բանահավաքչական բուռն գործունեություն՝ ընդգրկելով պատմական Հայաստանի ազգագրական հիմնական շրջանները: Այս ճանապարհորդության արդյունքը եղան Գ. Սրվանձտյանցի ժողովածուները՝ «Հնոց-նորոց» (1874), «Մանանա» (1876), «Թորոս Աղբար» երկու հատորով (1879, 1884), «Համով-հոտով» (1884): Մեծ էր դրանց դերը ազգագրությունը և բանագիտությունը գիտության վերածելու, բանահավաք կադրեր պատրաստելու գործում: Այդ աշխատությունները ծառայեցին որպես նպատակային բանահավաքչության առաջին օրինակ, որին հետևելու էր գավառաբնակ մտավորականության մի ամբողջ սերունդ:

«Գրոց ու բրոց» յուրօրինակ ծրագիրն իր կառուցվածքով ու հարցերի առաջադրումով, իհարկե, միանգամայն տարբերվում էր Եվրոպայում և այլուր կազմվող ծրագրերից, որովհետև հեղինակն անծանոթ էր դրանց: Նա իր ծրագիրը, դարի քաղաքական ու մշակութային պահանջներին համաձայն, առաջադրել է բնատուր խելքի ու տաղանդի շնորհիվ: Այդ ծրագիրը՝ որպես հայ իրականության մեջ առաջին փորձ, ինչ խոսք, պարզ էր ու հասարակ, նախնական: Հարցերը համակարգված, թեմատիկ խմբավորման ենթարկված ու համարակալված չէին, դրանք շաղկապված էին պատասխան նկարագրերի հետ: Այդ նյութերը վերաբերում էին ոչ միայն ազգագրությանն ու բանահյուսությանը, այլև բարբառագիտությանը, հնախոսությանը, բնագիտությունը և այլն: «...Եվ որովհետև այս իմ գրական գործս իբրև հուշարար և ծրագիր կուզեմ ներկայացնել, բավականին ավելին չեմ ուզեր երկարել»: «Ո՞ւր տարավ և ո՞ւր բերավ զիս այս նկարագիրը, զոր միայն իբր ծրագիր կգրեմ: Դառնում պիտի, դադրիմ պիտի, քան-

զի անսահման են այսպիսի վայրերը և անսպառ՝ անոնց վրա խոսվածներն ու երևցածները» (էջ 114): «Իմ փափագս եղած է, որ բանասերք ուշադրություն դարձունեն Հայաստանի մեջ բնակած հայոց ժողովրդական լեզվուց, և այն լեզուներով հրատարակեն վեպեր, տրամախոսություններ և այլն. և այսպիսով սիրելի և ծանոթ կացուցանեն զանոնք գրագիտաց…» (էջ 192): Ծրագիր լինելու հանգամանքը շեշտել է ինքը՝ գրքի հեղինակը (էջ 101): Հեղինակը «Գրոց ու բրոց»-ի տիտղոսաթերթի վրա դրոշմել է «Ծրագրյաց Գ. Վ. Սրվանձտյանց»: Վերոհիշյալ ուղերձի տակ նա ստորագրել է «Ծրագրող Սրվանձտյանց Գ. Վ.»: Իսկ 9-16-րդ էջերում ներկայացրած նախաբանի տակ գրել է «Ծրագրողն»: Մակագրության այս ձևը չի կրկնվել հեղինակի մյուս գրքերից ոչ մեկի վրա: Ուշագրավ է նաև «Գրոց ու բրոց» արտահայտությունը, որը «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» գրքի միայն առաջին կեսին է վերաբերում: «Գրոց»-ը այն է, ինչ հեղինակը գրի է առել իբրև ազգագրական և բանահյուսական հում նյութեր, իսկ «բրոց» նշանակում է «բրել, պեղել պատմել տալ և գրի առնել»: Գրքի անունն այլ կերպ կարելի է կարդալ «գրառումներ և հարցեր և Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ»[46]:

«Գրոց ու բրոց»-ը ընդգրկում էր հայ ազգագրության գրեթե բոլոր հիմնական խնդիրները՝ տեղագրություն, բնության նկարագրություն, ծաղիկների աշխարհ, տնտեսական կենցաղ (գյուղատնտեսական գործիքներ, պտղաբուծություն, բանջարաբուծություն, կենդանիների տեսակներ ու խնամք, փոխադրամիջոցներ, աշխատանքային պրոցեսներ), զբաղմունքներ (կաթնամշա-

---

[46] Տե՛ս մանրամասն **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, էջ 16-20, **նույնի՝** Գարեգին Սրվանձտյանցը որպես ազգագրագետ // «Էջմիածին», 1946, № 1, **Նահապետյան Ռ.**, Գ. Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը//«Էջմիածին», 2007, Ժ, էջ 110-123:

կություն, այգեգործություն, մեղվապահություն, արհեստներ՝ դարբնություն, հյուսնություն, դերձակություն, ոսկերչություն, շինարարական տեխնիկա, ժողովրդական բժշկություն), նյութական մշակույթ (բնակավայրի տեղագրություն, շենքերի ձևեր, տան կահ-կարասի՝ կահույք, ամաններ, ամբարներ ու փեթակներ, հաց թխելու պարագաներ, կաթնատեսակներ, ուտեստ՝ հացի տեսակներ, հացաբույսեր, ըմպելիքներ, տարազ, տարազի հետ կապված զարդեր ու հուռութներ և այլն), ընտանեկան և հասարակական կենցաղ (ընտանիք, ամուսնություն, մանկան ծնունդ, հուղարկավորություն), ազգատոհմային և դրացիական հարաբերություններ, հոգևոր մշակույթ (ժողովրդական հավատք, տոներ, խաղեր, պաշտամունք և այլն)։ Քննության առարկա ժողովածուի մեջ տեղ գտած մյուս նյութերից անրաժեշտ է հիշատակել նաև Տարոնի ու Վասպուրականի ժողովրդական բժշկության, հարսանիքի, Համբարձման վիճակախաղի, Վարդավառի տոնախմբության հետաքրքիր նկարագրությունները, բուժիչ աղբյուրների, սրբազան համարվող ծառերի, հրաշագործ քարերի, թուխ-մանուկների, Ցասման խաչերի, օձի պաշտամունքի վերաբերյալ ուշագրավ տեղեկությունները և այլն։ Առաջ էր քաշում կազմել բարբառային ցուցակներ, գրառել ավանդազրույցներ, առասպելներ և այլն (էջ 30-40)։ Այն հորդոր էր՝ ուղղված գավառական մտավորականությանը զբաղվելու ազգագրությամբ և բանահավաքչությամբ։ Հեղինակը մի առանձին խրախուսանքով հորդորում է ուսումնասիրել Սասունն ու Խութը, սրանց հայ և քուրդ բնակիչների կյանքը։ Թուրքական հարստահարությունների և քաղաքական հալածանքների դեմ մաքառելու տարիներին Սրվանձտյանցը պարզապես հայտնագործեց ազգագրությունն ու բանահյուսությունը նաև որպես հոգևոր զենք և դրանով ազգային զարթոնքի մի նոր խթան գտավ։ «Ծանիր զքեզ»-ի գաղափարը

նստած էր նշանավոր գործչի յուրաքանչյուր տողում: Այն լեցուն էր հայրենաբաղձ Սրվանձտյանցի մեղրանուշ խոսքերով, որոնք օգտագործվեցին հետևորդների կողմից: Այդ են վկայում ժամանակակից գրական ու գիտական նշանավոր գործիչները, որոնք խոստովանել են «Գրոց ու բրոցի» թողած ազդեցությունն իրենց վրա:

Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցը» ժամանակակիցների կողմից դիտարկվում էր իբրև ազգային գրականության իսկական նմուշ և այս իմաստով ու նշանակությամբ դրվում «Վերքի» ու «Սոս և Վարդիթերի» կողքին: Սրվանձտյանցի՝ ազգագրական և բանահյուսական հարուստ գանձեր պարունակող գրքերը «գավառական գրական» շարքի հիմնաքար և ուղենշող երևույթ դարձան:

«Գրոց ու բրոց»-ի թե՛ առաջաբանում և թե՛ վերջաբանում, խոսելով իր նկատառումների և դրդումների մասին, Սրվանձտյանցը գրում է. «Այս գործիս հրատարակությունը հասկացողին համար արժեք կունենա. բայց կարծեմ արհամարհողներ ավելի պիտի լինին և այպանողներ, ոչ միայն այս գրվածին կտորը (խոսքը՝ «Սասունցի Դավթի» մասին է), այլ ամբողջ սույն գրքույկը, այդ թվում և իմ անձը: Ասոնք չհասկացողներն են: Բայց մեր փույթը չէ: Քաջալերված կը համարիմ զիս, եթե համրանքով քսան հոգի և եթե լինին հավանող այս գործույն, և կը շարունակեմ, խրախույս տալով այլոց որ՝ հետևին, աշխատասիրեն ձեռք բերել, ի լույս ածել այսպիսի գրվածքները»[47]:

«Գրոց ու բրոց» ինքնատիպ վերնագրով ազգագրական, ոչ ստվար ժողովածուի մեջ ի շարս ազգագրական, տեղագրական, հնագրական նյութերի՝ զետեղված էր նաև ժողովրդական ավան-

---

[47] **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հ. 1, էջ 86:

դությունների մի գեղեցիկ փունջ (Բելի ուղտերն ու ուղտապան-ները, Հարսն ու փեսան, Սուրբ թոնիրը, Սիփանը ու Մասիսը և այլն): Սակայն «Գրոց ու բրոց»-ի մեծագույն նշանակությունը հայ ազգագրության և բանագիտության պատմության համար հիշյալ ավանդությունները չեն, այլ նրա «Հավելվածը», ուր տրված է հայ ժողովրդի ազգային մեծ էպոսի առաջին պատումը՝ Մշո բարբառով, «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով, ուշագրավ առաջաբանով, որով Գ. Սրվանձտյանցը հանդես է գալիս ոչ միայն իբրև վեպի հայտնաբերող ու առաջին գրառող, այլ նաև նրա առաջին ուշիմ ու հմուտ ուսումնասիրող:

Գ. Սրվանձտյանցի երկրորդ մեծագույն ծառայությունը «Սասնա Ծռեր» դյուցազնավեպի հայտնագործումը, գրառումը և հրապարակումն էր: Գ. Սրվանձտյանցին լուրեր են հասնում հայ ժողովրդական վեպի գոյության մասին. «... երեք տարի հետամուտ եղա ձեռք բերելու, և ոչ ոք գտա, որ ամբողջապես գիտենար. մինչև 1873 հունիս ամսում Մշո դաշտի Առնիստ գեղի երեսփոխան պ. Կրպոն ներկայացավ ինձ արժ. Օհան վարդապետի միջոցով: Սա կը պատմեր, թե իր վարպետը շատ ընդարձակն գիտեր այս պատմությունը, և թե մեջ ընդ մեջ շատ տեղեր ոտանավոր խաղեր կային, որ ձայնով կ՛երգեր: Թե՝ այդ վարպետը երկու վըռշիկ աշակերտ ուներ, որոնք շատ կատարյալ սորված էին, և թե ինքն՝ բավական ժամանակ պատմուած չլինելով՝ շատ կտորները մոռացած էր: Այնուամենայնիվ... պատմեց բերանացի, զոր իրեն բարբառով 'ի գիր անցուցի»[48]: Սրվանձտյանցը գրի է առնում Կրպոյի պատմածը կատարյալ հարազատությամբ: «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» դյուցազնավեպը, իրավամբ ճանաչվեց մեր ազգային հերոսական էպոսը: Այն աչքի է ընկնում

[48] **Սրվանձտյանց Գ.,** Երկեր, հ. 1, էջ 85:

նաև իր ամբողջականությամբ, բովանդակության ու ձևի արժանիքներով, գրառման հարազատությամբ: Այն մինչ օրս գրառված ավելի քան 160 տարբերակներից ամենակատարյալն էր ու անփոխարինելին: Դա հրաշք հայտնագործություն էր:

«Հնոց և նորոց»-ում նշելով Հայաստանի հինավուրց վայրերում ցրված մագաղաթյա մատյանների և վերջիններիս պատմագրական արժեքի մասին, Սրվանձտյանցը խստորեն քննադատում է այն վանականներին, որոնք անտարբեր են մշակութային այդ գանձերի նկատմամբ, և «որոց խուցք և դարանք կահավորեալ են կթխայովք և շիշովք և ըմպանակօք, ուր չերևին ոչ գիրք ընթեռնելոյ և ոչ սեղան գրելոյ...»[49]:

«Մանանան» Վասպուրականի վերաբերյալ բանահյուսական-ազգագրական ուշագրավ հետազոտությունն է, որը «Գրոց ու բրոցի» նման մեծ հետաքրքրություն առաջացրեց հայ իրականության մեջ: Սա ազգագրական տեսանկյունից մի նոր երևույթ էր և՛ քանակի, և՛ որակի առումով: Այս գրքով բազում ազգագրական և բանահյուսական նյութեր փրկվում են անդարձ կորուստից: Գիրքը բաղկացած է մի քանի մասից. ա) «Հայրենաց համն ու հոտը», որտեղ զետեղվել է ազգագրական նյութերի մեծ մասը, բ) «Հայրենեաց վեպք և զրոյցք», որտեղ ընդգրկված են հեքիաթներն ու առակները, գ) «Երգք և նվագք հայրենեաց», որտեղ տեղ են գտել ձեռագրերից քաղված միջնադարյան բանաստեղծների մի շարք բանաստեղծություններ, ապա՝ աշխարհիկ ժողովրդական երգեր, դյութանք, բժշկարան և այլն: Այս և մյուս աշխատություններում նկատելի է, որ Արևմտյան Հայաստանում մինչև XIX դարի երկրորդ կեսը պահպանվել են տնայնագործությունը, բնատուր տնտեսությանը ներհատուկ արտադրամիջոցներն ու ար-

[49] Տե՛ս **Սրվանձտյանց Գ.,** Հնոց և նորոց Կ. Պոլիս, 1874, էջ 192:

տաղրաեղանակները: Սրվանձտյանցը բազմիցս է անդրադարձել նյութական մշակույթին, ընտանիքին, ամուսնությանը, առտնին կենցաղին, պաշտամունքներին և այլ հարցերի[50]: «Մանանա» աշխատության մեջ նա նկարագրում է Վան քաղաքի փողոցները, բնակարանները, վանեցիների ուտեստը, հատկապես «տառեխ» ձկան պատրաստումը, Վանում կատարվող առևտուրը, վանեցիների ընտանեկան սովորությունները, մանկական խաղերը, ժողովրդական նախապաշարումները, ծածկագրերի, խաղերի բարբառային անունները, սրբավայրերն ու ուխտագնացությունները, ժողովրդական հավատալիքները, ավանդույթները, առասպելները, որով վերակենդանացրեց Վասպուրական աշխարհի բարքերը: Սրվանձտյանցը քաղել է նյութը ժողովրդի բանավոր լեզվից՝ հարազատ մնալով տվյալ բարբառին, մշակել է այն ու դրել գիտական շրջանառության մեջ: Այս երկում նա հատկապես անդրադարձավ Վասպուրականի ժողովրդական երգերին, վիպական զրույցներին, հեքիաթներին: Նրա համոզմամբ՝ բոլոր հեքիաթներն ունեն որոշակի ուղղվածություն և հաջող ավարտ:

Ըստ Գ. Սրվանձտյանցի՝ հայ ժողովրդական երգերը նույնքան հին են, որքան ժողովուրդն ինքը: Թե երկրագործական աշխատանքների պահին, թե բուրդ ու բամբակ զզելիս, վիշտն ու թախիծը, ծիծաղն ու ուրախությունը ժողովուրդը արտահայտել է երգերով: Նա բացահայտում է այն բարերար ազդեցությունը, որ ունի ժողովրդական երգը ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների վրա: Հետաքրքրություն են ներկայացնում հարսանյաց երգերը, կենցաղային կատակերգերը և այլն: Վերոհիշյալ երգերի մեջ արտահայտված են ժողովրդի ուրախությունն ու վիշտը,

[50] Մանրամասն տե՛ս **Նահապետյան Ռ.**, Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական բանահավաքչական գործունեությունը, էջ 136-157:

լացն ու ծիծաղը, աշխատանքն ու հանգիստը: Բանագետ Ա. Ղանալանյանի մեկնաբանությամբ՝ Գ. Սրվանձտյանցի գրառած երգերը միջնադարյան հռչակավոր «հայրենների» հեռավոր արձագանքներն են[51]: «Մանանա» աշխատության մեջ առանձին բաժին են կազմում առակներն ու հանելուկները, որոնց հորինելը ըստ Գ. Սրվանձտյանցի՝ եղել է ժողովրդական զվարճության ու պատմության միջոցներից մեկը[52]:

Հարուստ նյութերից առանձնապես արժեքավոր են նաև ժողովրդական վեպերն ու հեքիաթները («Հազարան բլբուլ», «Գառնիկ ախպեր», «Անխելք մարդ», «Բյուրապատիկ», «Սիրտս նման էր...», «Լուսնակն անուշ», «Կոտ ու կես կորեկ» և այլն): Սրվանձտյանցը ոչ միայն դրանց հայտնաբերողն ու հրատարակիչն էր, այլև դրանց առաջին գնահատողն ու բնութագրողը: Սրվանձտյանցը գրի է առել դրանք, քաջ գիտակցելով դրանց ճանաչողական արժեքն ու նշանակությունը իբրև «պատմություն լուսավորող ճառագայթների»:

Անչափ ուշագրավ է նաև Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերի վերաբերյալ Գ. Սրվանձտյանցի կազմած վիճակագրությունները: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Կ. Պոլսի հայոց պատրիարքի հանձնարարությամբ Գ. Սրվանձտյանցը խնդիր ուներ մանրամասն կազմելու հայ բնակչության, եկեղեցիների, դպրոցների, հողային կալվածքների վիճակագրությունը, նկարագրելու ժողովրդի կացությունը: Սրվանձտյանցը Կ. Պոլիս՝ պատրիարքարան է ուղարկում իր կազմած վիճակագրությունները: Այդ հաշվետվությունները, ստացած տպավորությունները, հայկական գյուղերի, ավանների

---

[51] **Ղանալանյան Ա.,** Հայ նոր գրականության պատմություն, հ. 3, Երևան, 1964, էջ 584:

[52] Տե՛ս Երկեր, հ. 1, էջ 274:

և քաղաքների մանրամասն նկարագիրը, բնակիչների ապրուստը, նյութական միջոցները, գյուղական տնայնագործությունը, քաղաքային արհեստների վիճակն ու մանր ձեռնարկություններին արտադրանքը, հայկական դպրոցների, եկեղեցիների ու վանքերի մանրամասն նկարագիրը, նրանցում պահվող ձեռագրերի ու հիշատակարանների թվարկումը, հայ ժողովրդի XIX դ. երկրորդ կեսի պատմության, ժողովրդագրության և բազմաթիվ այլ հարցերի ուսումնասիրության համար ունեն անառարկելի նշանակություն և անպայմանորեն հավաստի են: Դրանք կազմված են հետևյալ սկզբունքով. նախ նշվում է գավառի անվանումը, թվարկվում է տվյալ գավառի կազմի մեջ մտնող բնակավայրերի անվանումները, բնակչության կազմը, թիվը և այլ մանրամասներ: Վիճակագրությունները վերաբերում են Բասենի, Դերջանի, Քեմախի, Բայազեդի, Ալաշկերտի, Սպերի, Կիսկիմի և Էրզրումի գավառներին: Ամեն մի գավառի վիճակագրությանը կից ներկայացված են համապատասխան ծանոթագրություններ:

1879 թ. լույս տեսավ «Թորոս Աղբար» երկը: Թորոս Աղբարը այն երևակայական թռչունն էր, որին հեղինակը հանդիպել էր Նարեկացու ծննդավայրում գտնվող Ծովք լճում, ինչպես թռչունը ողբում էր Նարեկացու մահը, այնպես էլ Սրվանձտյանցը ողբում էր արևմտահայության շուրջ ստեղծված մթնոլորտը արյունարբու սուլթան Համիդի կողմից: Նա զգուշացնում էր մոտեցող վտանգի մասին: Ցավոք, Սրվանձտյանցի կանխատեսումը հայերին սպառնացող կոտորածների մասին իրականացավ 1894-1896 թթ.: «Թորոս Աղբար»–ում հեղինակը վեր հանեց սերնդեսերունդ փոխանցված և ժողովրդի բանավոր լեզվում պահպանված հսկայական քանակությամբ ազգագրական նյութեր:

«Թորոս Աղբարի» ազգագրական-աշխարհագրական արժեքը բարձր է գնահատվել Ռուսաստանի Աշխարհագրական ընկե-

ության կողմից և համառոտված թարգմանվել ու տպագրվել «Торос Ахпар. Путеводитель по Армении» խորագրով[53]:

1884 թ. լույս է տեսել Գ. Սրվանձտյանցի «Համով-հոտով» վերնագրով ժողովածուն, որ պարունակում է բազմաթիվ ժողովրդական հեքիաթներ՝ «Իմաստուն ջուլհակը», «Դրժիկոն», «Անտես-Աննման», «Օձամանուկ – Արևամանուկ» …, գեղջկական երգեր՝ «Սարե-Սիփանե», «Ծածուկ սիրողի երգ», «Մոկացի հայոց հարսանյաց պար» և այլն: Ողջ ժողովածուի առաջին և երկրորդ «Ճաշակների» մեջ տրված է՝ Վան-Վասպուրականի, Մանազկերտի, Բաղեշի և Մուշ-Բուլանըխի գավառների, քաղաքների ու գյուղերի բնության ու բնակչության տեղագրական ազգագրական փաստացի ու սեղմ նկարագրությունը՝ համեմված հեղինակի անձնական հույզերով ու մտորումներով:

Հեղինակը մեծ հակում է ունեցել առասպելների հադեպ: Աստղիկ և Անահիտ դիցուհիների և Հայկի ու Բելի աստվածությունների վերաբերյալ գրի առած տվյալները ճշգրիտ կերպով հաստատում են Ագաթանգեղոսի, Խորենացու և մյուս պատմիչների հաղորդումները: 1870-ական թվականներից սկսված բանահավաքչական այդ գործունեությունը ծավալվում է լայնորեն՝ ընդգրկելով պատմական Հայաստանի ազգագրական հիմնական շատ շրջաններ: Ազգագրական-բանահյուսական նյութերի հավաքման այս բուռն վերելքի նախաձեռնողն ու կազմակերպիչը հայ մշակույթի անխոնջ մշակ Գարեգին Սրվանձտյանցն էր: Ունենալով մեծ երևակայություն, ճոխ լեզու և մոտիկից ծանոթ լինելով արևմտահայության բարքերին ու սովորություններին՝ Սրվանձտյանցը ամբողջացրեց Արևմտյան Հայաստանի տարբեր

[53] «Известия Кавказского отдела императорского Русского географического общества». Т. IX, Тифлис, 1887.

գավառներից գրառած ազգագրական նյութը: Նրա գրառած նյութերը մեզանում անփոխարինելի ատաղձ են հանդիսացել բազմաթիվ բանագիտական-ազգագրական հետազոտությունների և գրական ստեղծագործությունների համար: Նրա յուրաքանչյուր գիրքը մեծ աշխուժություն էր առաջացնում մտավորականների շրջանում, և պատահական չէ, որ Սրվանձտյանցի երկերի ազդեցությամբ սկսվեց մտավորականների շարժը դեպի գավառներ ազգագրական, բանահյուսական նյութեր գրառելու համար:

Գ. Սրվանձտյանցը ազգագրական և բանահյուսական նյութերի գրառումներ շատ է կատարել, բայց, ցավոք, մեզ է հասել դրանց փոքր մասը: Նա քանիցս նշել է, թե իր գրական վաստակի զգալի մասը ուղևորությունների, պաշտոնափոխությունների և զանազան դիպվածների ժամանակ կորստի են մատնվել: Վ. Բդոյանը գրում է, որ Գ. Սրվանձտյանցի մեծ եղբոր դուստր Անթառամը 1943 թ. պատմում էր, որ հայ թուրքական լարված միջադեպերից մեկի ժամանակ թուրքերը խուզարկություններ են կատարում Վանի գրասերների տներում և շատերին բանտարկում: Սրվանձտյանցի կրտսեր եղբայրը՝ Սիմոնը, երկյուղ կրելով, թե ընտանիքի անդամները բանտ կնետվեն, թոնրի կրակին է հանձնում մեծ հայրենասերի ունեցած ողջ արխիվն ու գրադարանը[54]:

Այնուամենայնիվ Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց»-ը չկարողացավ կատարել այն դերը, ինչ հետագայում վիճակվեց կատարել Գր. Խալաթյանցի հարցարանին: Սակայն Գ. Սրվանձտյանցի երկերում ազգագրությունը և բանահյուսությունը խիստ միաձույլ էին հանդես գալիս: Հարկավոր էր առանձնացնել դրանք և դնել հստակ գիտական հիմունքների վրա: Այդ բանն արեց Գր. Խալաթյանցը 1887 թ.: Գ. Սրվանձտյանցի երկերի ար-

[54] Տե՛ս **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, էջ 19:

ժանիքն այն է, որ նա, ամենայն հմտությամբ պահպանելով նյութերի անաղարտությունը, դրանք ներկայացրեց գեղարվեստական շնչով, միաժամանակ անելով ազգաբանական ու բանագիտական նուրբ դիտողություններ։ Ուստի նրա ժողովածուները, ճանաչողականից բացի, ունեն գիտական որոշակի արժեք։

Գ. Սրվանձտյանցի երկերի դերը և նրա «Ծրագրի» հետևորդները։ Սրվանձտյանցի կատարած գործը հասարակական մեծ արձագանք գտավ և ջերմ ընդունելության արժանացավ։ Ինքը՝ Սրվանձտյանցն էլ իր կատարած գործը ներկայացնում էր որպես ուրիշներին խրախուսելու և ազգօգուտ գործունեության մղելու օրինակ։ Նա գրում է. «Մեր մտադրությունն է ժողովրդական կյանքե ծանոթություններ հիշել, որոնք լույս կարող են տալ մեր ազգային պատմության և լեզվին կամ գրականության, ուշադրության առնելու է, ուրեմն, անոնց մեջ եղած տնական, գեղջկական, քաղաքական ու կրոնական արարողությունները, առածները, երդումները, անեծքները, օրհնանքները, երգերը, պարերը, տղայոց խաղերը, որոնք առհասարակ կյանքի և լեզվի պատմությունը կը կազմեն»[55]։

Թեև նրա «Գրոց ու բոցը» որպես բանահավաքչական նյութեր գրառելու առումով անթերի չէր, որովհետև նախորդող նման փորձ չկար, իսկ եվրոպական փորձը դեռևս տակավին անծանոթ էր արևմտահայ ազգագրագետներին, այնուամենայնիվ, հեղինակն իր նպատակին հասավ այն տեսակետից, որ նրան հետևեցին տասնյակ բանահավաքներ և մեկը մյուսի հետևից լույս ընծայեցին ուշագրավ ժողովածուներ։

Եվրոպական և ռուսական ազգագրական գիտության սկզբունքներին քաջատեղյակ Գր. Խալաթյանցը, հիմնվելով

---

[55] **Սրվանձտյանց Գ.,** Գրոց ու բրոց, Երկեր, հ. 1, մ. Ա, էջ 81։

հատկապես Գ. Սրվանձտյանցի երկերի վրա, կազմեց գիտական հիմունքներով շարադրված համակողմանի ազգագրական հարցարան՝ «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» (Մոսկվա, 1887) վերտառությամբ: Դեռևս 1881 թ. անվանի հայագետ Գրիգոր Խալաթյանցը հատուկ նամակով դիմելով Սրվանձտյանցին, գրել է. «Մեծ է այն ծառայությունը, որ դուք մատուցիք և շարունակում եք մատուցանել հայ ժողովրդական գրականության Ձեր թանկագին ժողովածուներով: … Շնորհիվ Ձեր հարուստ ժողովածուներին՝ ակներև է, որ հայք ևս ունին ժողովրդական գրականություն, ոչինչ պակաս վսեմ, գեղեցիկ ու բանաստեղծական, քան շատ եվրոպական ազգերի գրականությունից»[56]: Գ. Սրվանձտյանցին ուղղված նամակներից մեկում Գր. Խալաթյանցը չէր թաքցնում, որ ապագա ծրագրի շարժառիթը նրա գործերն էին հանդիսանում: 1883 թ. Ռաֆֆին հետևյալ կերպ է արտահայտվել. «Մեր գրականության մեջ ոչ ոք Սրվանձտյանցի չափ չէ ուսումնասիրել և չէ հավաքել մեր ժողովրդական ավանդությունները, սովորությունները, մեր նախապաշարմունքները … նրա չորս ամենահետաքրքիր գրքերը խիստ հարուստ գանձ են մեր հնագետների հետազոտությունների համար[57]: 1915 թ. Հ. Թումանյանը նրան համարել է «Մեր անուշ, հայրենախոս բանաստեղծը», իսկ նրա գրքերն էլ համեմատել է բուրումնալի ծաղկեփնջերի հետ: «Մի Աբովյան կամ մի Սրվանձտյանց,- գրել է նա,- կենդանի ծաղիկներից են կազմում իրենց փնջերը, որոնք ինչպես էլ կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ»[58]:

---

[56] **Սրվանձտյանց Գ.,** Համով-հոտով, էջ ԺԹ-Ի:
[57] Տե՛ս «Մշակ», 1883, N 143:
[58] **Թումանյան Հ.**, Հայոց գետերը, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 377-378:

1870-1890 թթ. ասպարեզ իջավ բանահավաքների մի ամբողջ սերունդ, որը, ոգևորված Գ. Սրվանձտյանցի օրինակով, առավել արդյունավետ ազգագրական–բանահյուսական հավաքչական գործունեություն ծավալեց: Հրատարակվեցին մեծ թվով ազգագրական ու բանահյուսական ժողովածուներ, որոնք ավելի լայնորեն ընդգրկեցին պատմական Հայաստանի ազգագրական շրջանները՝ մեծապես հարստացնելով հայ ազգագրության գանձարանը նորանոր նյութերով[59]:

Մեկը մյուսի հետևից լույս տեսան արևմտահայ գավառներից Զեյթունի, Դերսիմի, Ակնի և այլնի մասին ուսումնասիրություններ: Նրա հետևորդներ Արիստակես վարդապետ Տեր-Սարգսենցը հրատարակեց «Պանդուխտ Վանեցին» (Կ. Պոլիս, 1874), Վ. Տեր-Մինասյանը՝ «Խոսք հայրենյաց» (Կ. Պոլիս, 1879), Արիստակես վարդապետ Սեդրակյանը՝ «Քնար մշեցվոց և վանեցվոց» (Վաղարշապատ, 1874), Պետրոս վարդապետ Կալհոկեցին՝ «Ասիական ճանապարհորդություն ի հայրենիս» (Կ. Պոլիս, 1881), Տ. Նավասարդյանը՝ «Հայ ժողովրդական հեքիաթներ», 1-10 գիրք (Թիֆլիս, 1882-1903), Գ. Շերենցը՝ «Վանա սազ», 1-2 (Թիֆլիս, 1885), Հ. Նազարյանցը՝ «Նախապաշարմունք», հ. 1 (Տփղիս, 1878), «Անեկդոտներ», հ. 1 (1876), հ. 2 (1877), Մ. Միրախորյանը՝ «Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառի Արևելյան Տաճկաստանի», Ա-Գ (Կ. Պոլիս, 1884-1886), Հ. Ալլահվերդյանը՝ «Ուլնիա կամ Զեյթուն» (Կ. Պոլիս, 1885), Երեմիա եպիսկոպոս Տեր-Սարգսյանցը (Տևկանց)՝ «Տոհմային հիշատակարան», գիրք Ա և Բ (Վարագ, 1881), Սիմոն վարդապետ Ճուլարտյանը՝ «Առածք ազգայինք» (Վենետիկ, 1880), Հ. Հ. Ճանիկյանը՝ «Հնությունք Ակնա» (Թիֆլիս, 1895), Գևորգ տեր-Ալեքսանդրյանը՝ «Թիֆլիսեցոց

[59] Տե՛ս **Սրվանձտյաեց Գ.**, «Գրոց ու բրոց», հ. 1, մ.Ա, էջ 81:

մտավոր կյանքը», մասն Ա (Թիֆլիս, 1886) և այլն:

Սփյուռքի հայության համար ազգային ոգին պահպանելուն ուղղված ազգագրական նյութերի սրվանձտյանական գրանցման հայրենաբաղձ ոճը ներկայումս էլ իշխող ձև է մնում: Հավաքված ու հրատարակված ազգագրական և բանահյուսական նյութերը, սակայն, վերը հիշատակված ժողովածուներում չունեցան ազգագրության ու բանահյուսության գիտական պահանջներին համապատասխան մակարդակ: Դրանք ազգազրական-բանահյուսական համալիր հետազոտություններ չէին և չէին էլ կարող լինել առանց դրանց գործունեությունը ուղղորդող գիտական ազգագրական ծրագրերի առկայության, ժամանակի հասարակական-քաղաքական պայմանների:

3.3. Գրիգոր Խալաթյանցը (1858-1912) որպես հայ գիտական ազգագրության հիմնադիր

Հայ ազգագրության հետագա զարգացման գործում մեծ էր Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, նշանավոր հայագետ, պատմաբան, բանասեր Գրիգոր Խալաթյանցի՝ պատմագիտության, ազգաբանական գիտության, լեզվի ու գրականության բնագավառներում ունեցած դերն ու նշանակությունը[60]: Նրա գր-

[60] Գրիգոր Խալաթյանցը ծնվել է 1858 թ. սեպտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) քաղաքում, վախճանվել է 1912 թ. փետրվարի 8-ին Թիֆլիսում: Գիտության դոկտոր, պրոֆեսոր էր: 1868-1877-ին սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, 1877–1880 թթ.՝ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, ապա՝ տեղափոխվել պատմալեզվաբանական ֆակուլտետ և ավարտել 1884-ին: Այնուհետև կատարելագործվել է Գերմանիայում: 1886-ից մինչև կյանքի վերջն աշխատել է Լազարյան ճեմարանում՝ դասավանդելով հայագիտական տարբեր առարկաներ: 1890-ից գլխավորել է հայագիտության ամբիոնը, իսկ 1897-1903-ին եղել է Լազարյան ճեմարանի տեսուչը: Գրել է ավելի

չին են պատկանում ավելի քան 20 տպագիր աշխատություն, հայ և օտար մամուլում սփռված բազմաթիվ հոդվածներ, ինչպես և անտիպ ուսումնասիրություններ:

Ազգագրության և բանահյուսության զարգացումն ու նվաճումները Եվրոպայում և Ռուսաստանում ազդակ հանդիսացան 1880-ական թթ. վերջին և հատկապես 1890-ական թվականների սկզբին հայ ազգագրության և բանահյուսության գծով կատարվող աշխատանքներն էլ գիտության նոր պահանջների համեմատ իրականացնելու համար: Այդ էր պահանջում նաև հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում կուտակված նյութերի ու հարուստ փորձի ուսումնասիրությունը: Այդ գործը վիճակված էր Գր. Խալաթյանցին և Երվանդ Լալայանին: Գր. Խալաթյանցի՝ որպես եվրոպական ազգագրության քաջածանոթ տեսաբանի, ազգագրական գործի կազմակերպչի գործուն մասնակցությամբ 1880-ական թթ. սկզբներին հրատարակվում է ռուսերեն ազգագրական ծրագիր: Այն կազմվել էր Մոսկվայի «Բնագիտական-մարդաբանական-ազգագրական» ընկերության հանձնաժողովի կողմից: Դրա օրինակով Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսուցչապետ Գրիգոր Խալաթյանցը 1887 թ. հրատարակեց «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սո-

---

քան 30 գիտական աշխատություն և հոդված: Նրա անդրանիկ գործն է «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսի ռուսերեն թարգմանությունը (1881), դրան հաջորդել են՝ «Հայ ժողովրդական հեքիաթների ընդհանուր ուրվագիծ» (1885, ռուսերեն), «Հայոց վեպը Մովսես Խորենացու Պատմության մեջ» (1896, ռուսերեն), «Գիրք մնացորդացը» ըստ հնագույն հայ թարգմանության» (1899), «Մովսես Խորենացին և յուր աղբյուրները» (1898), «Մովսես Խորենացու նորագույն աղբյուրների մասին» (1898), «Հայ Արշակունիները Մովսես Խորենացու «Հայոց պատմության մեջ» (1903), «Ակնարկ Հայաստանի պատմության...» (1910, ռուսերեն): Թեև որոշ երկերում առկա են թյուր կարծիքներ, դրույթներ ու տեսակետներ, որոնք հետագայում մերժել է հայագիտությունը, սակայն այսօր էլ Խալաթյանցի բազմաթիվ երկեր պահպանել են իրենց գիտական արժեքը:

վորությունների» (Մոսկվա, 1887) ուղեցույց ծրագիր-հարցարանը, որն անգնահատելի դեր ունեցավ հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում: Այն համակարգված, կուռ կառուցվածք ուներ և նորույթ էր: Խալաթյանցի ծրագիր-հարցարանը բացառիկ դրական դեր խաղաց ազգագրագետ կադրերի պատրաստման, նպատակադրված դաշտային ազգագրական հետազոտությունների իրականացման, բանահավաքչական նյութերի համակարգված գրառման, գիտական արշավախմբերի կազմակերպման գործում: Այն մեծապես խթանեց հայ ազգագրական գիտության ձևավորումն ու հետագա զարգացումը: Նրա «Ծրագրով» առաջնորդելով՝ բազմաթիվ մտավորականներ դարձան ազգագրության անխոնջ մշակներ, գրի առան և հավիտենական կորստից փրկեցին մեր ժողովրդի մահացման ենթակա հին սովորությունների ու կենցաղի վերաբերյալ վիթխարի նյութերը:

Գր. Խալաթյանցը, նախաբանում բացատրելով ազգագրական նյութերի նշանակությունը և տեսնելով, որ այդ ուղղությամբ դեռ ոչինչ արված չէ, ցավով է արձանագրում, որ «ժողովրդի խոսքն ու բարբառը, հին ծեսն ու սնապաշտությունը, առասպելական վեպն ու ավանդությունը, հին երգն ու խաղը, հեքիաթն ու առակը, որպես և շատ ազգային իրավաբանական սովորությունները՝ մեր աչքի առաջ պակասում, նվազում, մաշվում, արհամարհանքի կամ մոռացության են տրվում և հետզհետև անհետանալու վիճակին մոտենում՝ շփվելով և ընդհարվելով նորաձևությունների, կյանքի նոր գաղափարների ու պայմանների գրավոր օրենքների հետ, նոցա հոսանքին չդիմանալով և նոցա տեղի տալով[61]»: «Կանցնի շատ-շատ մի կես դար և այդ՝ մեր պապերից

[61] Տե՛ս **Խալաթյանց Գ.,** Նյութեր հայ ազգագրության պատմության // «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Է, Մոսկվա, 1908, էջ 48:

ավանդված, հազարավոր տարիների՝ շատ կողմից թանկագին կտակը, կկորչի անդարձ, եթե օր առաջ հոգ չտանենք խնամքով արձանագրելու նորան և պահպանելու ապագայի համար և մեր այսպիսի անփութության փոխարեն անվերջ պետք է պարսավեն ու նախատեն մեզ գալոց սերունդները»։

«Ծրագրով» սահմանվում էր առարկան, ուղղություն տրվում բանահավաքներին՝ բազմապատկելով նրանց թիվը։ Ծրագիրը ընծայված էր Գ. Սրվանձտյանցին։ Ծրագրից հետո մեծ հետաքրքրություն է առաջանում դեպի ազգաբանությունը («Ծրագրիդ ճառագայթներով, ուր կլուսավորեր, կառաջնորդեր և կցուցաներ ամեն բան պարզ ու կատարյալ, մեծ գործի պիտանի է Ծրագիրդ»,– գրում է Գ. Սրվանձտյանցը)։

Ծրագրի բովանդակությունը, կառուցվածքը։ Ծրագիրն ընդգրկում էր 500 հարց և 10 բաժին, որ վերաբերում են կենցաղի և մշակույթի ամենատարբեր բնագավառներին. 1) աշխարհագրական և պատմական տեղեկություններ, 2) մարդաբանական, ժողովրդագրական տեղեկություններ, 3) բնակարանը և իր պարագաները, 4) զգեստ և զարդ, 5) կերակուր և խմիչք, 6) կենցաղ և զբաղմունք, 7) ընտանեկան բարք ու սովորույթ, 8) հավատք, 9) լեզու և գիր, արվեստ, ձեռագիր, 10) ժողովրդական բանավոր գրականության տեսակները։

Ծրագրի երկրորդ բաժինը վերաբերում է իրավունքին և կազմված է երեք գլխից՝ 1) հասարակական կացություն և վարչություն, դատ ու պատիժ, 2) քաղաքացիական իրավունք, 3) քրեական իրավունք[62]։

Գր. Խալաթյանցի «Ծրագիրը» արդյունք էր խորը ու բազմա-

---

[62] Տե՛ս **Խալաթյանց Գ.,** Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887, էջ 44։

կողմանի հետազոտության։ Այն ժամանակի գիտության համատեքստում ընդհանրացնում և ամփոփում է ազգագրության բնագավառը, նրա կոչումն ու նպատակը, սահմաններն ու ընդգրկումը, նաև վեր հանում մշակույթի այլ բնագավառների հետ ունեցած առնչություններն ու կապերը՝ ելնելով հայ իրականության և հայկական նյութի պահանջներից։ Յուրաքանչյուր բաժնի և ենթաբաժնի մեջ նա հարցադրումների հետ տվել է մի շարք ծանոթագրություններ, օրինակներ և նմուշներ՝ նպաստելու բանահավաքի աշխատանքին։ «Ծրագիրն» իր ներքին կառուցվածքով և հարցադրումներն իրենց բնույթով նպատակ ունեին ազգագրական երևույթների և մշակութային տարբեր մարզերի փաստերը ներկայացնել ոչ թե մեկուսացված, այլ համակցված և փոխադարձ ներթափանցումներով։ Միաժամանակ ուշագրավ խորհուրդներ ու ցուցումներ էր տալիս բանահավաքներին, թե ինչպես պետք է զրուցել բանասացների հետ, ինչ կերպ գրի առնել և դասավորել համապատասխան բաժինների հարցադրման արդյունքները։ Գիտնականը հատուկ ուշադրություն է հրավիրում նյութերի հարազատ և անաղարտ գրանցման հանգամանքին։ Նա գրում է. **«Բանահավաքը մեծ ուշադրությամբ և հարգանքով պետք է վերաբերվի այն բոլոր տեղեկություններին, որ իրան կհաղորդեն, կամ ինքը կժողովե անմիջապես... Հարկավոր է դիտել ու գրել այն, ինչ որ կա, և ոչ թե այն, ինչ որ պետք է լիներ՝ բանահավաքի կարծիքով»**[63]:

Այնուհետև Գր. Խալաթյանցը իր «Ծրագրում» մատնանշում է, որ ազգագրական-բանահյուսական նյութերի հավաքման աշխատանքներին պետք է հաջորդի առանձին հավաքածուների հրատարկությունը, ուր ներկայացված լինեն և ազգագրական նկարագրություններ ու բանահյուսական ստեղծագործություն-

[63] Նույն տեղում, էջ ԺԸ:

ներ և հետազոտություններ: Գր. Խալաթյանցը համարում էր, որ «նյութեր հավաքելը, շատ անհրաժեշտ է, բայց պետք չէ դրանով բավարարվել, քանի որ այն միջոց է միայն և ոչ վերջնական նպատակ: Դա ատաղձն է, ոչ գեղարվեստական շենքը: Պետք են մեզ ուսումնասիրություն, հետազոտություն, վերլուծում, որ շատ քիչ բան է արված…»:

Գր. Խալաթյանցը «Նյութեր հայ ազգագրության պատմության համար» հոդվածում մատնանշում էր հայ ազգագրագետների անելիքները. 1) պետք է շտապեցնել դաշտային ազգագրական նյութեր հավաքելու խնդիրը, 2) պետք է հոգ տանել կազմելու ազգագրական մատենախոսական լիակատար նկարագրություններ, 3) նյութեր հավաքելուն զուգընթաց՝ պետք են մեզ դրանց հիման վրա կատարել ուսումնասիրություն, հետազոտություն, վերլուծություն, 4) պետք է աշխուժացնել հայոց ազգագրական գործունեությունը, 5) ձեռնարկել անհապաղ գիտական արշավախմբեր, գիտական համաժողովներ, 6) պետք է հիմնել ազգագրական թանգարաններ, բուհերում դասավանդել կովկասյան և հայ ազգագրության վերաբերյալ առարկաներ, 7) մեծ կարևորություն ունի հայ ազգագրության համար և դրացի ազգերի ընկերական և հասարակական կենցաղի համեմատական ուսումնասիրությունը[64]: Գր. Խալաթյանցի կարծիքով, ազգագրությունը օգնում էր պարզելու շատ կարևոր խնդիրներ: Ժողովրդի բուն պատմությունը վերականգնելու անսպառ նյութը պարուրված է հեքիաթների, առասպելների, հանելուկների, առակների, գեղջկական երգերի և բանահյուսական այլ ստեղծագործությունների մեջ, որոնք, «դարերի ընթացքում փոփոխվելով, բարդվելով, ձևակերպվելով», իրենց մեջ պարփակել են կյանքի իսկական պատկերը, «ժողովրդի ձգտումներն ու իդեալները»: Ժողովրդագիտու-

[64] Տե՛ս **Խալաթյանց Գ.,** Նյութեր հայ ազգագրության պատմության, էջ 57-58:

թյունը, ըստ գիտնականի, ինքնաճանաչման մի հզոր միջոց է, բացի այդ, այն նպաստում է լեզվի, գրականության, բարոյագիտության, իրավագիտության զարգացմանը: Նա հրամայական պահանջ է համարում ազգագրական բաժիններ հիմնել Պոլսում, Էջմիածնում, ընդլայնել բանահավաքման միջոցները, Թիֆլիսում կովկասագիտական համալսարան բացել: Գր. Խալաթյանցին մտահոգում է, որ շատ ավանդություններ, իրավական սովորություններ, շփվելով նորամուծություններին, գրավոր կանոններին՝ «նվազում, մաշվում, արհամարհանքի կամ մոռացության են տրվում»: Նա նշում ու կարևորում է, որ երբ կարողանանք մեզանում էլ գիտության վերածել ազգագրությունը, այնժամ հիմք կգոյանա գրելու մեր մշակույթի ու երկրի պատմությունը՝ «ճշմարտացի ու պատշաճավոր»: «Ծրագիրը» էական դեր խաղաց ազգագրական գործը հայ իրականության մեջ գիտական սկզբունքներով իրականացնելու հարցում:

Գր. Խալաթյանցի հորդորով են հիմնվել «Հայոց ազգագրական ընկերությունը» և «Ազգագրական հանդեսը»:

1906 թ. Խալաթյանցը հրավիրվում է Մոսկվայի Կայսերական համալսարան և վարում «Հայ ազգագրություն» դասընթացը:

3.4. «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի (1901–1913 թթ.) դերն ու նշանակությունը հայ ազգագրական գիտության պատմության մեջ

Համաձայն Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Էմինի (1815-1890) կտակի՝ որոշվում է նրա դրամագլխի եկամուտներն ուղղել հայ ազգագրության և հայ ժողովրդական գրականության վերաբերյալ ուշադրության արժանի նյութերի և հետազոտությունների ժողովածուներ հիմնելուն: «Դրամագլխի հաշվով տպագրվելիք թե՛ ժողովածուները և թե՛ առանձին գրվածքները պետք է գիտական նշանակություն ունենան և վերաբերեն հայ ազգագրությանը, հայոց հավատքին, հնություններին, պատմությանը, որպես և լեզվին, բանավոր ու գրավոր գրականությանը, արվեստներին: Ժողովածուները պետք է նվիրվեն Էմինի հիշատակին»[65]: Ահա Էմինյան ազգագրական այդ դրամագլխի միջոցներով, ի թիվս այլ գործերի, տպագրվում են նաև «Էմինյան ազգագրական ժողովածուի» 9 հատորները: Ժողովածուի խնդիրն էր՝ հայ ազգագրության և ժողովրդական գրականության վերաբերյալ ուշադրության արժանի հավաքածուներ, նյութեր և գիտական հետազոտություններ հրատարակելը: Գր. Խալաթյանցը մեծ աշխատանք է կատարել «Էմինյան ազգագրա-

[65] Մեծ է եղել Էմինի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա հսկայական աշխատանք է կատարել միջնադարյան հայ պատմիչների՝ Վարդան Բարձրբերդցի, Ասողիկ, Փավստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի և այլոց գործերը և մասնավորապես Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» ռուսերեն ու ֆրանսերեն թարգմանելու և դրանց նկատմամբ գիտական հետաքրքրություն առաջացնելու ուղղությամբ: Նշանակալի տեղ են գրավել հեթանոս հայերի հավատքին նվիրված նրա ուսումնասիրությունները («Очерк религии и верований языческих армян, 1864), որոնց մեջ նա այդ հարցի ուշագրավ պարզաբանումներ է կատարել և ցույց տվել հայկական պանթեոնի աստվածությունների կապը հարևան ժողովուրդների կրոնական պատկերացումների հետ:

կան ժողովածուն» գիտական պատշաճ մակարդակով հրատարակելու համար։ Ժողովածուի 1-8-րդ հատորների անփոփոխ խմբագիրը Գր. Խալաթյանցն էր, իսկ 9-րդ հատորը (նրա մահից հետո) խմբագրել է հայագետ Կ. Կոստանյանը։ Այն համառ ջանքերը, եռանդուն ստեղծագործական աշխատանքը, որ կատարել է Խալաթյանցը հանդեսի 8 հատորների խմբագրման, ծանոթագրության ու տպագրության ուղղությամբ, վեր է ամեն տեսակի գնահատությունից։ ԷԱԺ-ի առաջին գիրքը (1901) նվիրված է պատմական Հայաստանի ազգագրական ինքնատիպ շրջաններից մեկին՝ Շիրակի ազգագրությանն ու բանահյուսությանը, որի նյութերը ամբողջությամբ հավաքել է ճանաչված ազգագրագետ Ալեքսանդր Մխիթարյանցը (1846-1916)՝ «Փշրանք Շիրակի ամբարներից» վերնագրով։ Առաջին մասում ներառված են ժողովրդական բանավոր գրականության տեսակները՝ հեքիաթ, առակ, առած, հանելուկ, օրհնանք, անեծք, երդում և այլն։ Երկրորդ մասը վերաբերում է ազգագրությանը, որտեղ ներկայացված են տեղացիների ընտանեկան բարքն ու սովորույթը, կենցաղն ու զբաղմունքը և հատկապես հավատքը (սնոտիապաշտություն, նախապաշարմունքներ, երազներ, բժշկություն, կախարդություն, թովչություն, բժժանք)։ Խոսելով հավաքածուի նշանակության ու արժեքի մասին՝ հատորի առաջաբանում Գր. Խալաթյանցը նշում է, որ շատ երևույթներ ու նյութեր նման կլինեն ու կհիշեցնեն այլ գավառների ազգագրական նկարագրությունները, և գիտնականը միաժամանակ իրավացի դիտողություն է անում. «Բայց նաև այս կրկնությունը՝ որոշ սիստեմի հետ միասին յուր անհերքելի արժեքն ունի՝ վերստուգելով ու հաստատելով նախընթաց հաղորդումները և հայ ազգագրության համեմատական ուսումնա-

սիրության համար ավելի առատ և ապահով նյութ պատրաստել»[66]:

Քննության առարկա նյութերից բացի, Ա. Մխիթարյանը հրատարակել է նաև «Տաղեր և խաղեր» (Ալեքսանդրապոլ, 1900) ուշագրավ ժողովածուն:

Ժողովածուի 4 գիրք նվիրված է վաստակաշատ բանահավաք Սարգիս Հայկունու (1838-1908) բանահյուսական նյութերի հավաքածուներին՝ Հայ ժողովրդական վեպեր (6 հատ, որոնց թվում՝ «Դավիթ և Միհր» վեպի Մոկաց ճյուղը) և հեքիաթներ (42 հատ), (հատոր Բ, Մոսկվա-Վաղարշապատ, 1901), «Հայ ժողովրդական հեքիաթ» (հատոր Դ, 1902), «Դավիթ և Միհր» դյուցազնավեպի Շատախի և Արարատյան ճյուղերը, «Հայ-քրդական վեպ» (հատոր Ե, 1904), «Հայ ժողովրդական երգ» և բանահյուսական այլ ժանրի ստեղծագործություններ (հատոր Զ, 1906): Գրի է առնվել «Սասնա ծռեր» էպոսի 4 պատում, ժողովրդական վեպերի ու սիրավեպերի 32 պատում, 117 հեքիաթ ու առակ, 276 երգ, մոտ 800-ի հասնող առած, ասացվածք, հանելուկ և այլն[67]: Անհրաժեշտ է ընդգծել չորս հատորներում տեղ գտած Ս. Հայկու-

---

[66] «ԷԱԺ», հ. Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 8:

[67] Բանագիտության ականավոր դեմքերից մեկը՝ նշանավոր մանկավարժ, ազգագրագետ ու բանահավաք Սարգիս Հայկունին, ծնվել է Տրապիզոնի վիլայեթի Զեֆանոս գյուղում, եղել է ուսուցիչ Տրապիզոնում, Վանում, Արդվինում, Ալաշկերտում, աշխատակցել է բազմաթիվ պարբերականների: 1893 թվականից ապրել է Վաղարշապատում: Ուսումնասիրել է հայ և այլազգի բնակչության կենցաղն ու սովորույթները: Հայկունին հայտնաբերել և գրառել է «Սասնա ծռերի» Արարատյան, Մոկաց, Շատախի, Խլաթի պատումները, ինչպես նաև «Մոքոս» վեպերը: ԷԱԺ-ի Բ, Դ, Ե, Զ հատորներում (1901-1906) հրատարակել է իր գրառած շուրջ 50 բարբառով բանահյուսական գործերը: Զբաղվել է նաև ժողովրդական իրավագիտության հարցերով: Ազգագրական առումով ուշագրավ են նրա «Ազգագրական բառարանը», «Բագրևանդ, Զրաբաշխ գավառ» (1894), «Տրապիզոնի հայ գյուղերի մեջ» գործերը (տե՛ս ԷԱԺ, հ. Զ, Մոսկվա-Վաղարշապատ, 1906, էջ 14):

նու բանահյուսական նյութի ժանրային բազմազանությունը՝ էպոսի չորս պատում, հեքիաթներ, երգեր, առածներ ու հանելուկներ, որոնք հարուստ են ոչ միայն քանակով, այլև իրենց գրառման վայրերով: Գր. Խալաթյանցը շատ բարձր է գնահատել Ս. Հայկունու բանահավաքչական գործունեությունը՝ ազգագրական տարբեր շրջաններից գրառած մեծաքանակ և բազմազան նյութեր և հարևան ժողովուրդներից բարեխղճորեն գրառելու համար: Ի դեպ, Սարգիս Հայկունու գործունեությունը ըստ արժանվույն գնահատել է Վերժինե Սվազլյանը[68]:

ԷԱԺ-ի ընդգրկած մյուս բնագավառը ազգագրական լեզվաբանությունն է՝ էթնոլինգվիստիկան: Երեք հատորներում լույս է տեսել Հ. Աճառյանի (1876-1953)՝ «Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա և թուրքերեն փոխառյալ բառերը» (հ. Գ, 1902), «Հայ բարբառագիտություն», (հ. Ը, 1911), «Հայերեն գավառական բառարան», (հ. Թ, 1913) աշխատությունները: Սրանով ԷԱԺ-ը բարձրացրեց էթնոլեզվաբանության հիմնախնդիրը:

ԷԱԺ-ի Է հատորը (1908) Գր. Խալաթյանցը ներկայացրել է որպես ազգագրության և բանահյուսության տեսության ու պատմության ընդհանուր հոդվածների ժողովածու: Հայերեն թարգմանությամբ ներկայացված են Լ. Շտերնբերգի «Ազգագրություն», «Համեմատական կրոնախոսություն», Ե. Անիչկովի «Ֆոլկլոր», Հ. Լիպպերտի «Կուլտուրի պատմություն» և մի քանի այլ հոդված: Այստեղ է հրատարակված Գր. Խալաթյանցի «Նյութեր հայ ազգագրության պատմության» ուշագրավ հոդվածը, որում առաջ քաշված անելիքները առ այսօր էլ մնում են առաջնահերթ պահանջ:

---

[68] Տե՛ս **Սվազլյան Վ.,** Սարգիս Հայկունի. Կյանքը և գործունեությունը // ՀԱԲ, հ. 4,Երևան, 1973:

3.5. Ազգագրական գիտությունը XIX դ. վերջին տասնամյակներին և XX դ. սկզբներին

XIX դ. վերջին տասնամյակները և XX դ. սկիզբը նշանավորվեցին ազգագրական գիտելիքների աննախադեպ կուտակմամբ: Այդ ժամանակաշրջանի հայ գրականությունը, դրա ամենալայն ըմբռնմամբ, ողողված է ժողովրդի առօրյան, կենցաղն ու սովորույթները համակողմանիորեն արտացոլող առատ նյութերով: Այդ երևույթն իր արտահայտությունը գտավ թե՛ պարբերական մամուլում, հատկապես «Հանդես ամսօրյա», «Բազմավեպ», «Արծուի Վասպուրականի», «Մշակ», «Բյուրակն», «Տարազ», «Փորձ», «Արարատ», «Արևելյան մամուլ», «Նոր դար», «Արաքս», «Մեղու Հայաստանի», «Մուրճ», «Արձագանք» ամսագրերում և այլն, թե՛ գեղարվեստական գրականության մեջ՝ Ռաֆֆի, Պ. Պռոշյան, Ռ. Պատկանյան, Մուրացան, Հ. Թումանյան, Ղ. Աղայան, Մ. Նալբանդյան, ինչպես նաև արվեստի այլ բնագավառներում՝ Վ. Սուրենյանցի, Լանսերեի, Ֆեթվաճյանի, Գ. Բաշինջաղյանի, Կոմիտասի, Կարա-Մուրզայի, Ռ. Մելիքյանի, Թ. Թորամանյանի և ուրիշների ստեղծագործություններում:

Առհասարակ հայերի ներքին կյանքի ու սովորույթների, մասնավորապես տնտեսական զբաղմունքների ու կենցաղի վերաբերյալ առատ նյութեր են պարունակում՝ տակավին լրիվ չօգտագործված, նաև XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին հրատարակված ռուսական մի շարք մատենաշարերում ու պարբերականներում[69]: Հայ ազգագրական նյութեր բավականաչափ

[69] Տե՛ս «Кавказский календарь», Тифлис, 1845-1917; «Материалы для описания местностей и племен Кавказа», Тифлис, 1833-1903. «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», Тифлис, 1887-1889 (в 5 томах); «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, Тифлис, 1885-1887 (в 7 томах); «Из-

ցրված են նաև ռուսական մամուլում[70]:

3.5.1.Մկրտիչ Խրիմյանի ազգագրական բանահավաքչական գործունեությունը (1820-1907)

Մկրտիչ Խրիմյանը հայտնի է ոչ միայն իբրև հայ ժողովրդի մեծ երախտավոր, հասարակական-քաղաքական և կրոնական խոշոր գործիչ, գրող, այլև նշանավոր բանահավաք-ազգագրագետ[71]: 1992 թ. Ա. Մադոյանը և Հ. Պետրոսյանը կազմեցին և հրատարակեցին Մ. Խրիմյանի երկերը մեկ հատորով[72]: Այն առաջին

вестия Кавказского отдела Русского географического общества», Тифлис, 1872-1917:

[70] Դրանցից նշանավորներն էին՝ «Кавказ»-ը, «Новое обозрение»-ն, «Кавказская старина»-ն, «Кавказский вестник»-ը և այլն:

[71] Խրիմյան Հայրիկը (Մկրտիչ Ա. Վանեցի) ծնվել է Վանում 1820 թ. ապրիլի 4-ին, վախճանվել է 1907 թ. հոկտեմբերի 29-ին Վաղարշապատում: Հայոց կաթողիկոս էր 1893 թվականից: 1854 թ. ձեռնադրվել է վարդապետ: 1855 թ. Կ.Պոլսում հիմնադրել է «Արծուի Վասպուրական» պաբերականը: 1856 թ. Վարագա վանքի վանահայրն էր, 1857-ին հիմնադրել է տեղի ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը: 1860-ին այցելել է Արևելյան Հայաստան, ծանոթացել տեղի հայ կյանքին: 1862 թ. ստացել է Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնն ու Ս.Կարապետ վանքի վանահայրությունը՝ ձեռնարկել է նոր ժառանգավորաց վարժարանի հիմնադրումը: Ժողովրդի մեջ նա մեծարվել է «Հայրիկ» պատվանվամբ: 1868 թ. Էջմիածնում օծվել է եպիսկոպոս, 1869 թ. ընտրվել է Կ.Պոլսի Հայոց պատրիարք (մինչև 1873-ը): 1878 թ. եղել է Բեռլինի կոնգրեսի հայկական պատվիրակության ղեկավարը: 1879 թ. ընտրվել է Վանի հոգևոր առաջնորդ, 1880 թ. Վանում բացել է երկրագործական ուսումնարան: Աջակցել է Վանի «Սև խաչ» և Կարինի «Պաշտպան հայրենյաց» ազգային ազատագրական գաղտնի կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությանը, 1892 թ. մայիսին ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս, 1893 թ. սեպտեմբերի 26-ին օծվել է Էջմիածնում: 1895թ. մեկնել է Պետերբուրգ և Նիկոլայ II ցարից հայցել նրա պաշտպանությունը Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումների իրականացման համար: Եռանդուն պայքար է մղել հայ եկեղեցապատկան ունեցվածքը բռնագրավելու մասին 1903-ի հունիսի 12-ի ցարական օրենքի դեմ և այլն:

[72] Տե՛ս **Մադոյան Ա., Պետրոսյան Հ.,** Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992:

փորձն է հայ ընթերցողին ներկայացնելու մեծ հայրենասերի գրական ժառանգությունը: Մ. Խրիմյանն իրավամբ արևմտահայ մտավորականության առաջնորդն էր, «գավառական գրականության» սկզբնավորողը: Իսկ «գավառական գրականությունը»՝ իբրև գաղափարական հոսանք, առաջացավ և ծավալվեց արևմտահայ իրականության մեջ և արևմտահայ սոցիալ-քաղաքական հարաբերությունների արդյունք, թեև նրա հասարակական-պատմական արմատները համընդհանուր էին ամբողջ հայության ճակատագրի, նրա մշակույթի համար: Գավառահայ մտավորականությունը արտահայտում էր հոծ գյուղացիության և արհեստավորների շահերը, նրանց հասարակական ակնկալությունները:

Մ. Խրիմյանի «Պապիկ և թոռնիկ», «Դրախտի ընտանիք», «Սիրաք և Սամուել», «Վանգոյժ», «Հայգոյժ» աշխատությունները կարևոր աղբյուրագիտական արժեք ունեն: Նրանցում (հատկապես «Պապիկ և թոռնիկ») Մ. Խրիմյանը ուշագրավ և եզակի նկարագրություններ ունի տնտեսական կենցաղի՝ երկրագործության շարացան ու շաղացան համակարգերի, վար ու ցանքի, երկրագործական աշխատանքային գործիքների, հատկապես վարի ու հնձի, ոռոգման ու պարարտացման, բերքահավաքի և կալսոցի, շտեմարանելու, երկրագործական պաշտամունքի, ժողովրդական հմտությունների ու կիրառված դարավոր փորձի, աշխատանքի համագործակցության ձևերի (հարակաշ) և այլնի վերաբերյալ: Դրանք ներկայացված են բացառապես իր դաշտային ազգագրական նյութերի հիման վրա: Նույն կերպ արժեքավոր են անասնապահության, հատկապես լծկանի, օժանդակ զբաղմունքների, շերամապահության, մետաքսի ստացման, արհեստագործության, փոխադրամիջոցների տեսակների վերաբերյալ տեղեկություններ: Այն պարունակում է կենդանի ու վառ պատկերներ

գյուղական իրականությունից, կենցաղի ու սովորությունների արտահայտիչ նկարագրություններ, բնության տեսարաններ, ժողովրդական խոսք ու զրույցներ, փիլիսոփայական իմաստություններ՝ ժամանակի, կյանքի ու աշխարհի մասին: Գրքում մեծ հայրենասերը հորդորում է շինական ժողովրդին սիրել հայրենատուր հողն ու դաշտը, երբեք չբաժանվել նրանից: Եվ Պապիկը թոռանը պսակում է «հողին ու մահճին, գութանին և հողագործության հետ»:

«Պապիկ և թոռնիկ» վիպակում Մ. Խրիմյանն առաջ է քաշում «Ծանիր զքեզ» սրվանձտյանական գաղափարը՝ մատնացույց անելով այն աղբյուրները, որոնցից քաղել է դաշտային ազգագրական նյութերը. «Ես հիսուն տարի է, որ լսելով, տեսնելով ու փորձառությամբ կը սորվիմ», «աշխարհի մարդիկներ ինձ համար դպրոց են և ես դեռ կը սորվիմ այս ծերության ժամանակ», «ինչպես լսած եմ գիւղի հին ծերունեաց պատմութենէն», «դեռ մանուկ էի, աստի իբր 50 տարի յառաջ կը պատմեր հայրս», «պատմեմ իբրև վկայ և ապացոյց ասածիս մարդիկ կպատմեն ու կը վկայեն...»:

Վիպակում Մ. Խրիմյանը տալիս է Վասպուրականին բնորոշ շարացան համակարգի համառոտ նկարագրությունը [73], որը հայտնի էր **տիր** կամ **դիր դնել** անունով: Այն շաղացան համակարգից տարբերվում էր ոչ միայն վարելու և ցանելու աշխատաեղանակներով, այլև տեխնիկայի կառուցվածքաբանությամբ, առավելություններով բարձր բերքատվությամբ և սերմացուի անկորուստ օգտագործմամբ: Վիպակը երկրագործական վարուցանքի, մշակության, բերքահավաքի, կալսոցի, նյութերի վերամ-

[73] Հանգամանորեն այն ներկայացված է մեր «Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները» ուսումնական ձեռնարկում (Երևան, 2022 թ.):

շակման և շտեմարանելու մի յուրատեսակ դասագիրք էր՝ օգտակար խորհուրդներով: Վարուցանքը տևում էր 20-30 օր, «...մինչև որ կը ծլեին ցանուորի ծոցի հատիկներ»: Հայրենասեր Հայրիկը անդրադառնում է հողամշակման արդյունավետ եղանակների ու միջոցների, արհեստական ոռոգման, պարարտացման, ծերացած հողի երիտասարդացման, «հունձքի», «կալ ու կալատեղի», պահեստավորման և բազում այլ հարցերի: Մ. Խրիմյանի խորհուրդները վերաբերում են նաև անասունների խնամքին, ստացված եկամուտներին, շների միջոցով հոտերը հսկելուն, այգիների մշակմանը, փայտի տարբեր տեսակներն արհեստագործության մեջ օգտագործելուն, շերամապահությանը, մետաքսի ստացման արդյունավետ եղանակների ու միջոցների կիրառությանը:

Կարևոր տեղ են գրավում ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուրի արժեք ունեցող՝ ընտանիքին և ընտանեկան կենցաղին վերաբերող նյութերը («Դրախտի ընտանիք»): Շատ ուշագրավ է **գլխատան՝ թոնրատան** նկարագրությունը, անդրադառնում է գլխատան բազմագործառույթ դերին: Ընտանեկան կյանքի բարեկեցության պայմանները, ըստ Խրիմյանի, ուսումը, դաստիարակությունը և տնտեսության արդյունավետ կազմակերպումն են. «... լուսով հաց գտեք, դաստիարակությամբ բարի ընտանիք կազմէք, իսկ իմաստուն տնտեսությամբ հոգացէք… ձեր ներկան և ապագան»[74]: Ընտանեկան դաստիարակության անկյունաքարային սկզբունքը «ծնողանց հարգանքն է ու որդւոց պատկառանքը»: Երջանիկ է այն ընտանիքը, որն ապրում է նահապետական գերդաստանական համերաշխ ու աշխատասեր կյանքով: Նա Մշո Հացեկաց գավառ կատարած այցի իր ուղևորության ընթացքում զարմացած էր մնացել, երբ «քանի չափ նո-

[74] Տե՛ս **Խրիմյան Մ.**, Նախաբան առ ընթերցողս//Դրախտի ընտանիք, էջ 185:

բածին տղոց օրորոցները համրած է...»[75] : Ամուսնությունը ընտանիքի և ազգի վերարտադրության բանալին է. «...ամուսնական օրէնքը աշխարհի մարդկութեան հիմն է... մեր կյանքը շարունակող ստեղծագործ ձեռքն է...»: Վերոնշյալ աշխատություններում Խրիմյանը շատ է կարևորում անաղարտ բարքերի, ամուսնական սիրո և հավատարմության գաղափարները, տղամարդը «արտաքին վաստակավորն է», իսկ կինը «տան տիկինն է», որի խնդիրն է «տան կառավարությունը» և «մայրական դաստիարակությունը»[76]:

Խրիմյանը անդրադարձել է նաև հուղարկավորման սովորույթներին: Նրա բնորոշմամբ՝ «կային այնպիսի մեռելներ, որ գերեզմանի քարերով կը խոսին»: Արդի ազգագրական գիտության մեջ գերեզմանաքարերը համարվում են ուսումնասիրության կարևոր և վստահելի աղբյուր: Մեծ մասամբ հանգուցյալի մասնագիտությունը պատկերվում է գերեզմանաքարի վրա». օրինակ՝ մեկի վրա «մեղվի փեթակի նշան կա», հովվի գերեզմանաքարի վրա «գինւոյն տեղ կաթն էր»: Այսպիսով, Մ. Խրիմյանի գրական ժառանգությունն ընդհանրապես, ազգագրական պատգամները մասնավորապես, խարսխված են հայ էթնիկ հանրության դարավոր փորձի, սերնդից-սերունդ փոխանցված ժողովրդական հմտությունների վրա: Սույն աշխատության մեջ գլխատանը, գերդաստանին, նրանում գործող սովորութային իրավունքի չափանիշներին, աշխատանքի սեռատարիքային բաժանումներին, կնոջ և տղամարդու կարգավիճակին, ամուսնական, հարսանյաց արարողություններին, ամուսնացող զույգի իրավունքներին ու պարտականություններին, ծնողների ու զավակների փոխհարա-

[75] Նույն տեղում, էջ 209:
[76] Նույն տեղում, էջ 250:

բերություններին, ընտանեկան դաստիարակության հարցերին, հուղարկավորության սովորույթներին և այլ խնդիրների վերաբերող հարցեր են արտացոլված:

3.5.2.Ղևոնդ Ալիշան (1820-1901)

Բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, բանաստեղծ, թարգմանիչ: Ղևոնդ Ալիշանը իր առաջնային ու հիմնավոր տեղն ունի Մխիթարյան միաբանության 300-ամյա ստեղծագործ, արգասավոր ու մնայուն հայագիտական գործունեության մեջ: Ծնվել է Կ.Պոլսում, դրամագետ-հնագետի ընտանիքում: Նրա երկու տասնյակից ավելի հիմնարար գիտական աշխատությունները լուրջ ներդրում են հայրենի երկրի պատմության, նյութական և հոգևոր մշակույթի, աշխարհագրության, բանասիրության, արվեստի ուսումնասիրության բնագավառներում և շատ առումներով, այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքն ու կարևորությունը: Ղ. Ալիշանի հայագիտական ժառանգությունը շուրջ մեկ հարյուրամյակ ուսումնասիրությունների, արժևորումների և մեկնաբանությունների անսպառ աղբյուր է[77]: Հատկապես առանձնանում է

---

[77] Տե՛ս **Երեմյան Ս.,** Կենսագրութիւն Հ. Ալիշանի, Վենետիկ Սբ. Ղազար, 1902: **Շտիկյան Ս.,** Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան 1967: **Շտիկյան Ս.,** Ղ. Ալիշյան (Ծննդյան 150-ամյակի առթիվ)//ՊԲՀ, 1970, № 2, էջ 13-26: **Շտիկյան Ս.,** Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1974: **Շտիկյան Ս.,** Ղևոնդ Ալիշանի նորահայտ նամակները, «Լրաբեր», 1977, № 7, էջ 95-106: **Շտիկյան Ս.,** Ալիշանի անստորագիր գործերը «Բազմավեպի» էջերում//ՊԲՀ, 1978, № 2, էջ 81-92: **Շտիկյան Ս.,** Ալիշանը հայ մտավորականների հուշերում// «Լրաբեր», 1987, № 6, էջ 37-46: **Ղազիկեան Ա.,** Հայկական մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի, Պրակ Ի, Ա-Թ, Վենետիկ, Սբ. Ղազար, 1909, էջ 34-68: **Փիլիպոսյան Աշոտ, Մկրտչյան Ռուզան,** Նոր դիտարկումներ Ղևոնդ Ալիշանի «Հաշտից տեղերը» և «Հաշտ և զոհ» կոչված պատմակրոնաբանական մեկնությունների շուրջ//«Կղզյակ որ մեզ ետուր արև...», Մխիթա-

նրա «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» ուսումնասիրությունը, որը երկու տարվա ընթացքում մաս առ մաս տպագրվել է «Բազմավէպ» ամսագրում, ապա առանձին գրքով լույս է տեսել 1895 թվականին: 2002 թ. այն արևելահայերենի է վերածել և վերահրատարակել Վ. Գ. Բարսեղյանը[78]: Աշխատությունը կազմված է ներածությունից (որն անվանված է «Գիտելիք»), 13 գլուխներից և վերջաբանից, որոնցում մանրամասն քննության են առնված հայոց հեթանոսական հին հավատքին, բնապաշտությանը, կենդանիների պաշտամունքին, հրեշներին, ոգիներին, մոգությանը, հանդերձյալ կյանքին, ծիսական սպասքին առնչվող բազմաթիվ հիմնահարցեր, մի խոսքով այն հայոց հեթանոսական պատկերացումների մի շտեմարան է:

Այս ինքնատիպ մենագրությունն արդյունք է հեղինակի՝ հայ միջնադարյան ձեռագիր ու տպագիր աղբյուրների, վիմագրության, տեղագրության, հնագիտական հուշարձանների, ժողովրդական հավատալիքների երկարատև պրպտումների, որոնց հիման վրա նա քաղել էր մեծաքանակ արժեքավոր նյութեր, ենթարկել գիտական կուռ համակարգման: Աշխատության մեջ ուսումնասիրվել է հայ հեթանոսական հավատալիքների, պաշտամունքի, դիցաբանության գրեթե ամբողջական համակարգը, որն աննախադեպ երևույթ էր հայագիտության պատմության մեջ:

Ալիշանը եղել է հայ ժողովրդական բանարվեստի առաջին գնահատողներից և բանահավաք ուսումնասիրողներից:

«Հայոց երգք ռամկականք» (1852) ժողովածուն մեր գիտական բանագիտության առաջին աշխատություններից է: Գիտական

ոյանների միաբանության հիմնադրման 300-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի նյութեր, Երևան, 2017, էջ 113-139:

[78] **Ղ. Ալիշան,** Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002:

հոդվածներով Ալիշանը հանդես է եկել 1843-ից՝ «Բազմավեպ»-ի էջերում։ «Տեղագիր Հայոց մեծաց» (1855) աշխատության մեջ տեղագրել է պատմական Հայաստանի գավառները, տվել նրանց համապատասխան գիտաաշխարհագրական բնութագրությունը։ Ալիշանը նախատեսել էր գրել պատմական Հայաստանի բոլոր 15 նահանգների մասին պատմաաշխարհագրական և ժողովրդական բնույթի աշխատություններ, որոնք պետք է զետեղվեին 20-22 մեծադիր հատորներում։ Շարքի առաջին գործն է «Շիրակ, տեղագրություն պատկերացույց»–ը (1881), որտեղ Ալիշանը, բնավ Հայաստան այցելած չլինելով, հանգամանալից քննության է ենթարկել այդ գավառի պատմությունն ու աշխարհագրությունը՝ ազգագրական պատկերներով հանդերձ։ Այնուհետև իրար են հաջորդել «Սիսուան, համագրություն հայկական Կիլիկիո և Լևոն Մեծագործ» (1885), «Այրարատ, բնաշխարհ Հայաստանյաց» (1890) և «Սիսական, տեղագրություն Սյունյաց աշխարհի» (1893), «Հայ-Վենետ» (1896), «Հայապատում» (1901) և այլ աշխատություններ, որոնք կոթողային ուսումնասիրություններ են և պատկառելի ներդրում հայ պատմագրության, ըստ այդմ՝ նաև ազգագրության բնագավառում։ Այդ գործերում Ալիշանը մասնագիտական մանրակրկիտությամբ տեղագրել է Հայաստանի պատմական նահանգների լեռները, գետերը, լճերը, ձորերը, բուսական ու կենդանական աշխարհը, արժեքավոր տեղեկություններ հաղորդել քաղաքներում, շեներում ու գյուղերում եղած մեծ ու փոքր պատմական հուշարձանների մասին։ Նրա տեղագրական երկերում հավաքված են բազմաթիվ մեծարժեք նյութեր հայկական վանքերի, զանազան հուշարձանների վրա եղած արձանագրություններից, ամփոփված են իր նկարագրած տեղավայրերից մինչ այդ հրատարակված բոլոր արձանագրությունները։ Ուշագրավ են Ալիշանի «Հայ բուսակ կամ հայկական բուսաբա-

նություն» (1895) աշխատությունը, որտեղ հեղինակը հավաքել, դասդասել և գիտականորեն բնութագրել է Հայկական լեռնաշխարհի ավելի քան 3400 բույսեր ու ծաղկատեսակներ՝ 150-ից ավելի նկարներով։ «Հայ-բուսակը» հսկայական ազգագրական նյութեր է պարունակում։

«Այրարատ», «Շիրակ», «Սիսական», «Սիսուան», «Նշմարք հայկականք» (պր. 13), «Հայաստան-Վենետիկ», «Բնախոսություն Հայաստանի», «Հայապատում» և ծավալուն այլ աշխատությունները անխոնջ հետազոտական աշխատանքի, տեղագրական, պատմաքաղաքական, մատենագիտական, հնագիտական, ազգագրական անհամար փաստերի համահավաք շտեմարաններ են։ Մեծ Հայքի մի քանի գավառներին և Կիլիկյան Հայաստանին նվիրված պատմամշակութային մենագրությունները ցայժմ մնում են չգերազանցված։

Դրանցում գիտնականի անդրադարձները, ազգային սովորությունների ու ծեսերի նկարագրություններն ու մեկնությունը բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում։

«Բազմավեպի» էջերում գիտնականի տպագրած ժողովրդական տոներին և հավատալիքներին վերաբերող հոդվածների ազգագրական, գիտական արժեքը առ այսօր ըստ արժանվույն գնահատված չէ։ Իր գիտական հսկայական ժառանգությամբ Ալիշանը մեծապես նպաստել է հայրենական գիտության զարգացմանը։ Նրա գործերի մեծ մասը նաև հայ ազգագրության համար այսօր էլ ունեն ճանաչողական արժեք և սկզբնաղբյուրի նշանակություն։ Ցավոք, Ղ. Ալիշանի թողած գրական գիտական ժառանգությունը ազգագրորեն դեռևս ուսումնասիրության առարկա չի դարձել։ Ղ. Ալիշանն իր գիտական հսկայական ժառանգությամբ (ավելի քան 45 հատոր, որոնցից շատերն ունեն սկզբնաղբյուրի նշանակություն), մեծապես նպաստել է հայրենական գիտության

զարգացմանը, և նրա գործերն այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական ճանաչողական արժեքը:

3.5.3.Ստեփան Զելինսկի (1847-1904)

Հայաստանի ազգագրական հետազոտությունների բնագավառում լուրջ ավանդ ունի նաև Ստ. Զելինսկին՝ ազգությամբ հայ Ստեփան Ամիրզադեի Մկրտչյանը, Նախիջևանի Յարմշա գյուղի հայ ընտանիքում ծնված, որ ուսուցիչ էր Երևանի գիմնազիայում, ապա հրավիրվեց Թիֆլիս՝ որպես պետական գյուղացիների ուսումնասիրող: Նրա նշանավոր աշխատությունները վերաբերում են Ալեքսանդրապոլի և Զանգեզուրի գավառներին: Պատմագիտական, տնտեսագիտական, ազգագրական բնույթի ուսումնասիրությունների համար կարևոր աղբյուր հանդիսացող այդ աշխատություններում հանրագումարի են բերվել մեծ բարեխղճությամբ հավաքված բազմատեսակ ու բազմապիսի նյութեր, որոնք ցուցաբերում են հեղինակի ընդարձակ իմացությունները, ազգագրական նյութը պատշաճին ներկայացնելու հմտությունն ու գիտական կարողությունները: Ս. Պ. Զելինսկին իր աշխատություններում համոզիչ կերպով ցույց է տվել ազգային սովորությունների, ավանդույթների դերը տվյալ շրջանի տնտեսական կյանքում: Զանգեզուրի, Շիրակի և Հայաստանի այլ գավառների հայ ազգաբնակչության կենցաղի ուսումնասիրության բնագավառում նշանակալի ավանդ ունի Ստեփան Զելենսկին[79]:

---

[79] Տե՛ս Исследования экономического быта государственных крестьян в Зангезурском уезда Елисаветпольской губернии, Тифлис, 1886, **նույնի՝** Экономический быт государственных крестьян в Шорагале Александрапольского уезде Эриванской губернии, Тифлис, 1893, **նույնի՝** Три магала Нахичеванский, Ордубадский и Даралагязский, Тифлис, 1896:

Կազմել է մի հատուկ բառարան այն կովկասյան բառերի, որոնք գործածվել են գյուղացիների կենցաղում: Այստեղ տեղ գտած կենցաղի իրողություններին տրված են ընդարձակ, հիմնավոր բացատրություններ[80]:

3.5.4.Նիկողայոս Ադոնց (1871-1942), Սողոմոն Եղիազարով (1852-1935) և Նիկողայոս Մառ (1864-1935)

Հայ ազգագական նյութի գիտական ուսումնասիրության առումով նախախորհրդային շրջանում առանձնահատուկ տեղ են գրավում նաև Ն. Ադոնցը (1871-1942) և Ս. Եղիազարովը (1852-1935): Առաջինն իր «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում» (ռուսերեն, Մ., 1908) աշխատությամբ, ուր պատմաազգագրական նյութերի քննությամբ բացահայտում է միջնադարյան Հայաստանի քաղաքական-բնատարածքային կազմավորումների աղերսը տոհմային-ազգակցական ու համայնքային կազմավորումների հետ, վերլուծեց Հուստինիանոս կայսեր ռեֆորմները Հայաստանում: Երկրորդն իր «Գյուղական համայնքը» և «Քաղաքային համքարությունները» աշխատություններում: XIX դարի հայ գյուղական համայնքի և արհեստավորական համքարությունների հետազոտությունները զուգորդում է ազգագրական նյութերի օգտագործման հետ՝ հանգելով կարեւոր հետևությունների[81]: «Քաղաքային համքարությունները» գրքում հեղի-

---

[80] Տե՛ս Приложение к своду материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края. Обьяснительный словарь татарских, грузинских и армянских слов, вошедших в материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, 1889:

[81] Տե՛ս **С. А. Егиазаров,** Исследования по истории учреждений в Закавказье, часть I, Сельская община, Казань, 1888, часть II, Городские цехи, Организация внутреннего управления Закавказских амкаров, Казань, 1891:

նակն անդրադարձել է արհեստավորական միությունների ծագման, կազմակերպման ու ներքին կառուցվածքի հարցերին: Ս. Եղիազարյանը առաջիններից է, որ լրջորեն զբաղվել է քրդերի ազգագրության հետազոտությամբ[82]:

Անչափ մեծ է եղել կովկասագետ, Պետերբուրգի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Նիկողայոս Մառի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա բազմաթիվ մեծարժեք ուսումնասիրություններ է կատարել Կովկասյան ժողովուրդների լեզվի, պատմության, գրականության, աղբյուրագիտության, բանահյուսության, արվեստի, հնագիտության, արձանագրագիտության, այդ թվում նաև՝ ազգագրության բնագավառներում: Գիտնականի դարակազմիկ աշխատություններից է «Ани» գիրքը (Москва, 1934): Նա պատրաստեց ու աճեցրեց հայագետ-կովկասագետների մի ամբողջ սերունդ՝ Հ. Օրբելի, Գ. Ղափանցյան, Ն. Ադոնց, Ի. Ջավախիշվիլի, Աշխ. Քալանթար, Լ. Մելիքսեթ-Բեկ և ուրիշներ:

3.5.5.Վարդան Հացունի (Սոմունճյան) (1870-1944)

Մխիթարյան հայրերից հայ ազգագրության ուսումնասիրության ոլորտում մեծ ավանդ է թողել Վ. Հացունին, որը թեև ստեղծագործել է XX դ. սկզբներին, այդուհանդերձ նրա աշխատությունները ոչ միայն ժամանակավրեպ չեն, այլև ներկայումս օգնում են լուսաբանելու հայ ազգագրության բազմաթիվ բնագավառների վերաբերող շատ հարցեր: Շուրջ 40 տարի աշխատել է Մխիթարյանների վարժարաններում (Վենետիկ, Միլան, Կ. Պո-

[82] Տե՛ս «Краткий этиографический очерк курдов Эреванской губернии, Тифлис, 1884:

լիս և այլուր)։ Նրա աշխատությունները շարադրվել են հայ և օտար մատենագիրների հիշատակությունների հիման վրա և բացառիկ արժեքավոր ազգագրական գործեր են, վերաբերում են հայ ժողովրդի հին կենցաղին, սովորույթներին ու մշակույթին։

Յուրաքանչյուր խնդիր գիտնականը ներկայացրել է նյութի խոր իմացությամբ բազմահարուստ աղբյուրների ու գրականության համակողմանի ուսումնասիրությամբ ու մեկնաբանությամբ։ Նրա առաջին՝ «Ճաշեր և խնճոյք հին Հայաստանի մեջ» (Վենետիկ, 1912) աշխատությունը նվիրված է հայոց ուտեստի համակարգին՝ մի թեմայի, որը ազգաբանական գիտության մեջ ցայսօր համակողմանի լուսաբանում չի ստացել։ Ազգագրագետի առաջնահերթ խնդիրներից են՝ բացահայտել ուտեստը որպես սոցիոմշակութային տարր, դրա տեղը կենսապահովման մշակույթի համակարգում, դրան առնչվող պատմահամեմատական, տիպաբանական, տարածքային, գոտիական, առտնին, տոնածիսական, նշանային հիմնախնդիրները հայ ազգագրական գիտության մեջ, միջէթնիկ կապերի արգասիքները ուտեստի համակարգում։ «Ճաշեր և խնճոյք հին Հայաստանի մեջ» աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեցող աշխատության մեջ գիտնականը լուսաբանում է դարերի խորքից եկող՝ հայկական ավանդական հացկերույթների կազմակերպման եղանակներն ու միջոցները։

Հետազոտելով ուտեստը՝ վերլուծել է Հայաստանի տարբեր դասերի օգտագործած ճաշատեսակները, այդ թվում և հոգևոր դասի ճաշերը։ Հանգամանորեն հետազոտված են միջնադարյան հայկական կերակուրներն ըստ պատմագրության հաղորդումների։ Միաժամանակ մանրամասնորեն քննարկել է ուտելիքի և ըմպելիքի պահպանման վայրերը (շտեմարան, մառան, խոհանոց)՝ նկարագրելով պահպանվող սննդամթերքն ու դրա համար ան-

հրաժեշտ կարասին, հանգամանորեն խոսել է ճաշելու ժամանակ գործածվող կահույքի ու սպասքի մասին՝ տալով նաև բառերի ստուգաբանությունը: Գրքի երկրորդ մասը վերաբերում է սնվելու գործընթացին, ժամերին՝ ճաշ, ընթրիք, սնունդ վաճառողներին և հասարակական ճաշարաններին, մանրամասն նկարագրելով հյուրասիրության ծեսն իր ողջ արարողակարգով, առիթները, հրավիրյալներին ու հրավերի ձևերը, հացկերույթի ժամը, տևողությունը, կահույքը, ու սպասքը, հյուրընկալող սպասավորներին, թվարկում է ճաշացուցակը, ուտելու ձևերը, սպասարկման աստիճանակարգը: Հետագա գլուխներում գիտնականը ներկայացնում է հոգևոր դասի ուտեստը, առանձնահատկությունները, տոնածիսական ուտեստը, բարեգործական՝ մատաղի, հոգեհացի, ինչպես նաև հարսանեկան, ծննդյան ու մկրտության ժամանակ կազմակերպվող հացկերույթները: Առանձին տեղ են գրավում տոնա-ծիսական, մասնավորաբար Բարեկենդանի, Մեծ պահքի, Զատիկի հացկերույթները՝ իրենց բոլոր դրսևորումներով, առանձին գլխով անդրադարձ կա պիղծ ուտելիքների, դրանց ծագման, տեսակների, սննդի պղծման, ապականման դեպքերի, դրանք մաքրազերծելու ձևերին: Ի վերջո, աշխատության մեջ գիտնականը անդրադարձել է նաև հարուստների, աղքատների հացկերույթներին, դրանց բարոյական կողմերին, կանանց մասնակցության հարցերին և այլն[83]:

Քննության է առել տարբեր դարաշրջաններում եղած հայկական դրոշները՝ քաղաքացիական և եկեղեցական, ճշգրտել Արշակունյաց, Բագրատունյաց, Ռուբինյանների, տարբեր իշխա-

---

[83] **Բազեյան Կարինե**, Վարդան Հացունու աշխատությունները որպես հայ ազգագրության սկզբնաղբյուր // Կոզյակ, որ մեզ ետուր արև...//Եր., 2017, էջ 60-76: Սույն ուսումնասիրությունը Հացունու ազգագրական գործունեության գնահատման թերևս միակ և ուշագրավ վերլուծությունն է:

նական տների, զինվորական դրոշների ձևերը, գույները, նշանները և այլն։

Ուսումնասիրել է նաև Հին Հայաստանում ազգային դաստիարակության, լուսաբանման, կրթությանը առնչվող հարցերը։ Ժողովրդի ժամանցի՝ խաղերի, սպորտի տեսակների, ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ ուշագրավ աշխատություններից է Վարդան Հացունու «Դաստիարակությունը հին հայոց քով» (Վենետիկ, 1923), որի ամբողջ նյութը քաղված է պատմագրությունից։ Հացունին, կարևորելով ազգային, ընտանեկան դաստիարակության խնդիրները, գրում է. «Դաստիարակութիւնը, որ կըտարածուի մարդոյս հոգւոյն ու մարմնոյն վրայ, կը կազմէ ու կը կանոնաւորէ անհատին կեանքը, և անով կը բարեկարգե ազգային կեանքն ալ։ Ժողովրդոց քաղաքակրթութեան ու բարգաւաճման անհրաժեշտ տարրն ու կշիռն է այն, անոնց կենցաղավարութեան հայելին»։ Էթնիկական մշակույթի այս ոլորտն ազգագրության մեջ հայտնի է սոցիալականացում անունով։ Հացունին իր ուսումնասիրությունը սկսել է երեխայի ծնունդից, որտեղ մոր ու մանկան սննդի և մանկան խնամքի հետ կապված սովորույթների նկարագրությունն էլ տրված է նրա գրքի առաջին գլխում։ Այստեղ նա անդրադառնում է ազնվականների շրջանում կիրառված դայակության երևույթին, երբ երեխաներին այլ ընտանիքներ էին ուղարկում սնուցման, դայակների ու սաների փոխհարաբերություններին և այլն։ Երկրորդ գլխում պատմական տարբեր դարաշրջաններում և հասարակական զարգացման տարբեր փուլերում անհատի սոցիալականացման ամենակարևոր և գլխավոր ինստիտուտներից մեկն է համարում ընտանեկան դաստիարակությունը։ Ընտանիքն է, որ մանկանը տալիս է անուն, ընդգրկում ազգակցական համակարգի մեջ, ծանոթացնում նրան հասարակական վարքի նորմերին, հաղորդակցման

կանոններին: Ընտանիքում է, որ երեխաները ձեռք են բերում փոխհարաբերությունների առաջին հմտությունները, յուրացնում առաջին սոցիալական դերերը[84]: Հացունին առաջնորդվում է Գրիգոր Տաթևացու ընտանիքին վերապահված երեք կարևոր սկզբունքներով, նախ՝ սնուցանել մանուկը, հետո՝ դաստիարակել զայն բարեպաշտության մեջ և ապա՝ արհեստ մատուցանել[85]:

Հանգամանորեն ուսումնասիրել և վերլուծել է աշխարհիկ և եկեղեցական հանդերձների ծագումը, զարգացումը, որը բաժանվում է 11 շրջանի՝ Ուրարտուից մինչև 17-րդ դար: Միջնադարյան տարազի ուսումնասիրությամբ՝ Հացունուն հաջողվել է ի մի բերել պատմագիրների երկերում տեղ գտած ակնարկային տեղեկություններն ու ստեղծել համալիր հետազոտություն: Հեղինակը միաժամանակ հետազոտել է բուն ազգային տարազը իր ողջ համալիրով՝ ներքնազգեստ, վերնազգեստ, գլխի հարդարանք, ագանելիք, զարդեր և փոխառված օտար տարազների տեսակներ: Ազգային տարազի վերաբերյալ տեղեկություններն ու նկարները ներկայացնում են աշխարհիկ զգեստները և եկեղեցական ծիսական տարազը, իսկ փոխառվածը՝ արքունի պալատական, նախարարական և զինվորական հագուստները: Ինչպես նախորդ աշխատություններում, այստեղ ևս «Պատմութիւն հին հայ տարազին» (Վենետիկ, 1923) Հացունին զգեստը ներկայացրել է ըստ դասային աստիճանակարգման և սեռատարիքային բաժանման: Աշխատության մեջ գիտնականը հագուստը ներկայացրել է նաև ըստ գործառույթների՝ ծիսական, տոնական և այլ դրսևորումներով: Այս աշխատությունը ոչ միայն գիտական լուրջ ուսումնասիրություն է, այլև աղբյուրագիտական կարևոր աղբյուր՝ տարազով

---

[84] Տե՛ս **Комарова Г. А.,** Этнография детства: междисциплинарные исследования,М., 2004, էջ 85:

[85] Տե՛ս **Հացունի Վ.,** Դաստիարակութիւն…, էջ 62-63:

զբաղվողների համար:

Հացունին անդրադարձել է պատմության մեջ կնոջ խաղացած դերին, լուսաբանել նրա գործունեությունը տարբեր ոլորտներում: «Հայուհին պատմության առջև» աշխատության տվյալները քաղված են հայ պատմագրությունից և կանոնական գրականությունից: Հայ կնոջ ամբողջական կերպարն ու գործունեությունը ներկայացված է 18 գլուխներով, սկսել է աղջկա ծնունդից՝ նրա սնվելու ու դաստիարակության նկարագրությունից, ապա անդրադարձել հասուն աղջիկների ու կանանց դերին ու գործառույթներին կյանքի տարբեր ոլորտներում՝ առօրյա կենցաղում, ամուսնության, մայրության, հասարակության, վայելչագիտության, եկեղեցու, բարեպաշտության, առաքինության, բարեգործության, շինարարության, կրթության, արվեստի, քաղաքական կյանքի, քաջության, տառապանքների, ոգու, օտար պալատներում և այլ ասպարեզներում: Պատմական բազմաթիվ հարցերի հետ հեղինակը հետազոտել է աղջկա ամուսնության հանգամանքները, ամուսնության մեջ դասակարգային խտրականությունների առկայությունը, օժիտի, ընտանեկան կյանքի, մանկան դաստիարակության, բազմազավակություն, անզավակության, ամուսնալուծության ու կնոջ բարոյականության հարցերը և այլն: Նա անդրադարձել է նաև աղջիկների անվանումներին, մանկածնության և մանկան դաստիարակության հարցերին և այլն:

Այսպիսով, Հացունին հիմնվելով հայ և օտար սկզբնաղբյուրների վրա, եկել է այն եզրակացության, որ հայ կինը միշտ էլ արժանավոր դիրք է գրավել հասարակության մեջ, հանգամանք, որ պայմանավորված է եղել, ըստ հեղինակի, նրանց ազատության աստիճանով, որը, անշուշտ, փոփոխվել է՝ կախված նրանց սոցիալական վիճակից ու տարիքից: Հացունին առանձնացրել է «աղջկութեան, հարսնութեան, տիկնութեան» տարիքային խմբերն ու

դրանց յուրաքանչյուրին համապատասխան ազատության չափը: Հնում հայ կնոջ բարձր դիրքն ու ազատությունները, ըստ նրա, պայմանավորված էին հնագույն քաղաքակրթության ազգային առանձնահատկություններով, ապա և քրիստոնեական ավանդույթների արմատավորմամբ, իսկ ուշ միջնադարում դրա նահաջն ու անկումը՝ հայոց պետականության վախճանով և այլակրոն ու այլաբարո տերերի՝ նվաճողների պարտադրված ազդեցությամբ:

Բարձր գնահատելով Վարդան Հացունու մեծ վաստակը հայ ազգագրության մեջ և փաստելով նրա աշխատությունների աղբյուրագիտական հսկայական արժեքն ու միաժամանակ տարբեր երևույթների վերաբերյալ հեղինակի մեկնաբանությունները՝ նկատենք, որ դրանք շատ դեպքերում վիճելի են, թեական, ինչը պայմանավորված էր նախ՝ հոգևորական կրթությամբ ու, ըստ այդմ, ամեն ինչ եկեղեցու դիտանկյունից ներկայացնելով և իր սուբյեկտիվ ընկալումներով:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

Հետադարձ կապ

- **Առաջադրանքներ**

Հանձնարարել ուսանողներին կարճ հաղորդումներ պատրաստել «Գ. Սրվանձտյանցի, Խ. Հայրիկի, Գր. Խալաթյանցի, Ղ. Ալիշանի, Վ. Հացունու դերերը հայ ազգագրության՝ իբրև գիտության կայացման և զարգացման գործում» թեմաներով:

- **Ինքնաստուգման հարցեր**

1. Ո՞րն էր Գարեգին Սրվանձտյանցի բանահավաքչության նպատակը, ոճը, մեթոդը:

2. Ներկայացրե՛ք Գարեգին Սրվանձտյանցի՝ հայ ազգագրության և բանահավաքչության մեջ այն ձեռքբերումները, որոնք դարակազմիկ դեր խաղացին։

3. Ներկայացրե՛ք Գր. Խալաթյանցի այն ներդրումները, որոնց շնորհիվ հայ ազգագրությունը վերածվեց ինքնուրույն գիտական ուղղության։

4. Ներկայացրեք «ԷԱԺ»-ի դերն ու նշանակությունը, Մկրտիչ Էմինի նպաստամատույց գործունեությունը։

5. Ո՞վ է եղել Խրիմյան Հայրիկը, ի՞նչ աշխատությունների հեղինակ է։

6. Բնութագրե՛ք Ղևոնդ Ալիշանի գիտական վաստակը։ Նրա որ աշխատությունն է, որ հայ ազգագրության շատ կարևոր ուսումնասիրություններից է։

7. Համառոտ բնութագրե՛ք Վարդան Հացունու ազգագրական գործերը։

Բանավոր ներկայացնել թեմայի հիմնական դրույթները։

- **Թեմայի գնահատում /անդրադարձ/ Գնահատման թերթիկ**

Գրիր դասախոսության ամենակարևոր գաղափարը

Մեկ բան, որ դու կարող ես կիրառել

Հիմնական և առաջարկվող գրականություն

Հիմնական

1. **Ալիշան Ղ.**, Երկեր, Երևան, 1981։

2. **Բազեյան Կ.**, Վարդան Հացունու աշխատությունները որպես հայ ազգագրության սկզբնաղբյուր//«Կղզյակ որ մեզ ետուր արև…». Մխիթարյանների միաբանության հիմնադրման 300-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2017, էջ 60-76։

3. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ),

Երևան, 1974:

4. **Բդոյան Վ.,** Գարեգին Սրվանձտյանցը որպես ազգագրագետ // «Էջմիածին», 1964, № 1:

5. **Խալաթյանց Գր.,** Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887:

6. **Խալաթյանց Գր.,** Նյութեր հայ ազգագրության պատմության//«Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Է, Մոսկվա, 1908:

7. **Խալաթյանց Գր.,** Նամակներ (Առաջաբանը, ծանոթագրությունները և հրապարակումը Ա. Ադամյանի) // ԲՀԱ, 1963, N 1, էջ 153-171:

8. **Հացունի Վ.,** Ճաշեր և խնճոյք հին Հայաստանի մեջ, Վենետիկ, 1912:

9. **Հացունի Վ.,** Դաստիարակութիւնը հին հայոց քով, Վենետիկ, 1923:

10. **Հացունի Վ.,** Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, 1924:

11. **Հացունի Վ.,** Հայ դրոշները պատմության մեջ, Վենետիկ, 1930:

12. **Հացունի Վ.,** Երդմունք հին հայոց մեջ, Վենետիկ, 1932:

13. **Հացունի Վ.,** Հայուհին պատմութեան առջև, Վենետիկ, 1936:

14. **Կոստանդյան Է.,** Մկրտիչ Ա Վանեցի, ՀՍՀ, հ.7, Եր., 1981, էջ 641-642:

15. **Նահապետյան Ռ.,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Երևան, 2019, էջ 113-192:

16. **Նահապետյան Ռ.,** Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը//«Էջմիածին», 2007, ժ, էջ 110-122:

17. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը //ՊԲՀ, 2011, թիվ 3, էջ 132-148:

18. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրությունը XIX դ. 70-80-ա-

կան թթ.//«Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(13), Երևան, ԵՊՀ, 2016, էջ 116-139:

19. **Շահնազարյան Ա.,** Պրոֆ. Գրիգոր Խալաթյանց//«Ազգագրական հանդես», գ. XII, Թիֆլիս, 1912, էջ 249-263:

20. **Շահնազարյան Ա.,** Գարեգին Սրվանձտյանցի մահվան 20-ամյակի առթիվ // ԱՀ, գ. XXIV, Թիֆլիս, 1913, էջ 112-116, գ. XXV, էջ 85-107:

21. **Պետրոսյան Ա.,** Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 139-171:

22. **Սրվանձտյանց Գ.,** Երկեր, հ. 1, 1978, հ.2, Երևան, 1983:

23. **Վարդանյան Վ.,** Գր. Խալաթյան//ՊԲՀ, 1968, թիվ 4, էջ 143-149:

Լրացուցիչ

1. **Երեմյան Հ.,** Գ. Սրվանձտյանցի կյանքն ու գրական գործունեությունը // «Բազմավեպ», 1912, N 1, էջ 4-12, N 2, էջ 50-53:

2. **Կոստանդյան Է.,** Գարեգին Սրվանձտյանց, կյանքը և գործունեությունը, Երևան, 1979:

3. **Ղանալանյան Ա.,** Դրվագներ հայ բանագիտության պատմության, Եր., 1985:

4. **Հայկունի Ս.,** Սրվանձտյանցի մահվան 10-ամյակի առթիվ // ԱՀ, գ. IX, Թիֆլիս, 1902, էջ 272-281:

5. **Յարութիւնեան Սարգիս,** Ղևոնդ Ալիշանը և հայոց երգերն ու հավատալիքները//«Բազմավէպ», 1-4, 2001, էջ 233-241:

6. **Շտիկյան Ս.,** Ղևոնդ Ալիշան (Ծննդյան 150-ամյակի առթիվ)//ՊԲՀ, 1970, N2:

7. **Պետրոսյան Ա.,** Հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարանի խնդրի շուրջ//ՊԲՀ 2008, թիվ 2:

Թեմա 4. Հայ ազգագրության՝ իբրև ուրույն գիտական ոլորտի վերջնական կայացման փուլ

4.1.Երվանդ Լալայանի և «Ազգագրական հանդեսի» դերը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում

Բացառիկ է ականավոր ազգագրագետ, բանագետ ու հնագետ, խմբագիր ու հրատարակիչ, մանկավարժ ու թանգարանաստեղծ Երվանդ Լալայանի դերը հայ ազգագրական գիտության կայացման և հետագա զարգացման գործում: Նա թողել է գիտական ու մշակութային հարուստ ու բազմազան ժառանգություն: Նրա գիտագործնական բազմաբեղուն ու բազմաբնույթ ժառանգությունն առ այսօր խորքային ուսումնասիրության չի արժանացել: Եղած ուսումնասիրությունները սահմանափակվում են գիտական հոդվածների և լրագրային հաղորդումների վերլուծության շրջանակներով[86]:

Ե. Լալայանը հիմնավոր մասնագիտական կրթություն էր ստացել ժնևի և Լոզանի համալսարաններում, աշխատել էր Վիեննայի Մխիթարյանների հետ և Փարիզի մարդաբանական

---

[86] Ծնվել է 1864 թ. մարտի 13-ին Ալեքսանդրապոլում: 1885 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և իբրև ուսուցիչ հինգ տարի աշխատել է Ախալցխայում, Ախալքալաքում, Ալեքսանդրապոլում: 1894 թ. ավարտելով Ժնևի համալսարանի հասարակագիտական բաժինը՝ ստացել է սոցիալական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Վեց ամիս աշխատելով Վիեննայի Մխիթարյանների հետ՝ ձեռք է բերել գիտական աշխատանքի փորձ: Փարիզի մարդաբանական դպրոցում ծանոթացել է մարդաբանության սկզբունքներին: Ավարտել է նաև Լոզան քաղաքի համալսարանին կից մանկավարժության դասընթացը և ստացել է մանկավարժի վկայական: 1895-1897 թթ. դասավանդել է Շուշիի թեմական դպրոցում (տե՛ս **Կ. Վ. Փաշայան, Ա. Մ. Նազինյան,** Երվանդ Լալայանի կյանքն ու գործունեությունը // Երվանդ Լալայան, Երկեր, հ. 1, էջ 7-31):

դպրոցում, քաջատեղյակ էր ժամանակի ազգագրական և մարդաբանական գիտությունների հիմունքներին։ Նրա բանահավաքչական, գիտական գործունեության ընդգրկման ժամանակաշրջանը եղել է 1880-ական թվականներից մինչև 1920-ական թվականների վերջը։ Ե. Լալայանի հրատարակած առաջին աչքի ընկնող գործը «Ջավախքի բուրմունք» բանահյուսական ժողովածուն էր։ Այնուհետև հրատարակում է «Սուրբ Սարգիս», «Տաճկախոս հռոմեական հայերը» հոդվածները, որոնք ընդգրկվում են «Ջավախք» պատմաազգագրական աշխատության մեջ (Ե. Լալայան, Ջավախք (նյութեր ապագա ուսումնասիրության համար)//ԱՀ, գիրք Ա, Շուշի, 1896)։ Դրանում տեղ է գտել նաև Ե. Լալայանի՝ 1895 թ. Փարիզի ժողովրդական ավանդույթների ընկերության պարբերականում տպագրված «Հայկական ավանդությունները և սնոտիապաշտությունները» հոդվածաշարը։

Երվանդ Լալայանը ազգագրական նյութերը գրի առավ գիտնական-հետազոտողի բարեխղճությամբ։ Եվ դա այն բանի շնորհիվ, որ հրապարակի վրա էր Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանցի՝ խնամքով ու մանրամասնորեն կազմած «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» ուղեցույցը, որը լույս տեսավ 1887 թվականին։ Այդ առթիվ նա գրել է. «Այս աշխատության մեջ (նկատի ունի «Ջավախքը» Ռ. Ն.) մենք առաջնորդվել ենք պրոֆ. Գր. Խալաթյանցի կազմած ծրագրով, որ առաջարկում ենք մեր բանահավաքներին, որպես մի անհրաժեշտ ուղեցույց»։ Ե. Լալայանը հիմնավորապես գործողության մեջ դրեց Գր. Խալաթյանցի «Ծրագիրը»։ Իր անդրանիկ բանահավաքչական գործունեությունը սկսում է Ջավախքում դեռևս 1889 թ.։ Նա գրի է առնում Կարնո հայ բնակչության նյութա-

կան և հոգևոր մշակույթի վերաբերյալ մեծ քանակությամբ նյութ։ Հայ գիտական ազգագրությունը մեծ կորուստներ կունենար, եթե Ե. Լալայանը համալիր կարգով գրի չառներ և չուսումնասիրեր, թանգարանի համար չհավաքեր կորստի մատնվող ազգագրական նմուշները։ Գրի առնելիս նա առաջնորդվում էր նյութերի ամբողջականությունը պահպանելու սկզբունքով։

«Ազգագրական հանդեսը» հիմնելու շարժառիթները և պատմական նշանակությունը հայ ազգագրական գիտության զարգացման գործում։

Ե. Լալայանը 1895 թ. Շուշիում հիմնում է հայ իրականության մեջ առաջին, ցարդ նմանը չունեցող ազգագրական մասնագիտական պարբերականը՝ «Ազգագրական հանդեսը», որը նշանակալից երևույթ էր հայ ժողովրդագիտության բնագավառում։ Անդրանիկ համարը լույս տեսավ Շուշիում 1895-1896 թթ.։ Երկրորդ համարը տպագրվեց Թիֆլիսում ու պարբերաբար հրատարակվեց շուրջ քսան տարի՝ մինչև 1916 թվականը։ Լալայանի անմիջական խմբագրությամբ ու ղեկավարությամբ լույս ընծայվեց 26 հատոր։ Հանդեսի առաջին հատորը բովանդակում էր Ջավախքի հայոց ազգագրությունը, ինչպես նաև իր հեղինակությամբ «Համառոտ տեսություն հայ ազգագրության» ակնարկը, ուր նա շարադրել է հայ ազգագրության անցած ուղին, որին ավելացնելու էր իր գիտական վաստակը։ «Հրատակչից» խորագրով համառոտ առաջաբանում Լալայանը շարադրում է հանդեսը ստեղծելու շարժառիթները, նպատակները. «Ռոպեական ազդեցության տակ չենք վճռել մի այդպիսի հանդեսի հրատարակության ձեռնամուխ լինել, ոչ էլ պատահմամբ ենք ընտրել այս. մեզ ճանաչողները գիտեն, թե որքան ժամանակից ի վեր փայփայել ենք այս միտքը և որքան ար-

գելքներ ենք հաղթահարել փոքրիշատե նախապատրաստվելու այս գործի համար։ Այսօր մենք հանդես ենք գալիս ոչ թե միայն մեր ուժի վրա վստահացած, այլ ազգի ինքնաճանաչության զգացման։ Թերթերի մեջ սփռված և առանձին լույս տեսնող ազգագրական հոդվածներն արդեն ապացուցանում են, որ հայոց ազգն էլ վերջապես զարթնել է խոր քնից և ցանկանում է կատարել գիտության ամենիմաստ խոսքը՝ «Ծանի՛ր զքեզ». նա կամենում է ճանաչել իրեն և յուր ազգային հատկությունների վրա հիմնել ազգային զարգացումը։ Մեր այս գործն այդ զգացման արդյունքն է և մեր կոչումը՝ այդ գործին գիտական ուղղություն տալ և աշխատողների մեջ միություն հաստատել»։ «Ազգագրական հանդեսի» խնդիրն է եղել նպաստել ամեն մի հայի ճանաչելու իր ազգի անցյալը, իր երկիրը, իրեն շրջապատող ազգերը։

«Մեր կոչումն այժմ միայն,- գրում է մեծ բանահավաքը և գիտության կազմակերպիչը,- նյութեր հավաքելն է, որովհետև դրանց պակասության պատճառով՝ գիտական ուսումնասիրություններն անհնարին են, և մեկ էլ՝ դրանց համար ժամանակ չի պակասիլ։ Մենք կը կրենք քարերը և երանի նրան, ով կըգա այդ քարերով ազգային ինքնուրույնության շենքը կառուցանելու և համամարդկային էվոլյուսիոնի օրենքները գծելու» (ԱՀ, գ. Ա, Շուշի, 1896, էջ 6)։

Լալայանը մեծ ուշադրություն է դարձրել այդ կարևոր գործում մտավորականության լայն խավերին ներգրավելուն։ Նա մամուլի էջերում հրատարակած հայտարարություններով, դասախոսություններով և բազմաթիվ այլ միջոցներով հորդորել է և խրախուսել՝ նվիրվել ազգային մշակույթի պահպանմանը, գիտական սերունդներին այն հանձնելու մեծ գործին։ «Եվ քանի դեռ քաղաքակրթության հուրը լափում է անցյալի

բոլոր հիշատակներն, և մենք պետք է շտապենք հավաքելու, ինչ-որ դեռ մնացել է, և դեռ քանի մենք մասնագետ ազգագրագետներ չունինք, հրավեր ենք կարդում հայոց գրականության Մշակներիդ և Ձեզ **Հայ Ուսուցչուհիներ և Ուսուցիչներ, որ սիրով հանձն եք առել Հայ ժողովրդի կրթության գործը, Ձեր իսկ գործի հաջողության և ազգային ինքնուրույնությունն ապահովելու փափագով՝ յուրաքանչյուրդ ձեր միջավայրը ներկայացնելու նեղությունն հանձն առեք...»:** Գիտնականի այդ կոչը ապարդյուն չանցավ: Հայաստանի երկու հատվածներից նրա շուրջը համախմբվեցին բազմաթիվ բանահավաքներ և գիտնականներ:

Ե. Լալայանի գիտական ջանքերի և քարոզչական աշխատանքի շնորհիվ պարբերականի շուրջը համախմբված ականավոր մտավորականների ու գավառական գրագետների (Մ. Աբեղյան, Թ. Թորամանյան, Հ. Աճառյան, Լեո, Մելիքսեթբեկ, Ե. Շահազիզ, Հ. Թումանյան, Խ. Սամվելյան, Ա. Ջելինսկի, Կարա-Մուրզա, Բենսե (Սահակ Մովսիսյան), Ստ. Լիսիցյան և ուրիշներ) բանահավաքչական համակարգված գործունեություն ծավալվեց: Հանդեսի համարներում տպագրվում են ինչպես ազգագրական ու բանահյուսական հարուստ նյութեր, այնպես էլ տեսական աշխատություններ, հնագիտական ուսումնասիրություններ, մարդաբանությանը վերաբերող հետազոտություններ և այլն: Հենց այս ընթացքում էլ հայ ազգագրությունը վերջնականապես ձևավորվեց որպես որոշակի առարկա ու մեթոդներ ունեցող գիտության բնագավառ:

«Ազգագրական հանդեսը» հրատարակվում էր որոշակի համակարգով, ամեն մի գիրքը հիմնականում բաղկացած էր Հայաստանի որևէ գավառ կամ Կովկասի հայաբնակ շրջանը ներկայացնող ստվարածավալ ու համակողմանի նկարագրությունից:

1896-1900 թթ. Ե. Լալայանը իր գրառած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա «Ազգագրական հանդես»-ում տպագրում է «Ջավախք», «Վարանդա», «Սիսիան», «Զանգեզուր», «Գանձակի գավառ», «Բորչալուի գավառ», «Նախիջևանի գավառ», «Վայոց ձոր», «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք», «Վասպուրական», «Մուշ-Տարոն» և այլ արժեքավոր աշխատությունները։

Հանդեսին ազգագրական նյութեր տրամադրող մտավորականներ: Շուրջ 50 բանահավաքներ «Ազգագրական հանդես»-ին նյութեր էին առաքում։ Օրինակ՝ Բենսեն գիտական հմտությամբ ներկայացրեց Հարք գավառի ազգագրական նյութերի մեծագույն մասը (ԱՀ, գ. Ե, էջ 8-184 և Զ, էջ 7-108)։ Բարձր Հայքի ազգագրական նյութերը փրկելու տեսակետից մեծ գործ է կատարել Հովհ. Մալխասյանը, որը բարեխղճորեն նկարագրել է Ջավախքի նյութերը («Հայ գեղջուկի ալբոմը», ԱՀ, գ. Գ, էջ 359-391, գ. Զ, էջ 193-203)։ Հովհ. Մուրադյանցը ներկայացրել է համշենահայերի յուրօրինակ կենցաղի մի շարք կողմեր (ԱՀ, գ. Դ, էջ 117-143, գ. Ե, էջ 361-406, գ. Զ, էջ 109-158)։ Արցախի տնտեսական, ընտանեկան կենցաղը, հիվանդությունն ու բժշկությունը, հուղարկավորության ծեսերը և այլն նկարագրել է Ղ. Տեր-Ղազարյանը, ինչպես նաև Լ.Վ. և Ա.Բ. բանահավաքները (ԱՀ, գ. Բ, էջ 77-101, 144-186)։ Հայ ժողովրդի արհեստագործության վերաբերյալ նյութեր և ուսումնասիրություններ է հրատարակել Ա. Թառայանցը (տե՛ս նույն տեղը, էջ 3-71)։ Վ. Փափազյանը մեծ աշխատություն է գրել հայ բոշաների կենցաղի վերաբերյալ, որի նյութը անձամբ ինքն է հավաքել (ԱՀ, գ. Բ, էջ 47-90, գ. Դ, էջ 203-275)։ Կովկասյան ժողովուրդների, այդ թվում հայերի կաթնամթերքների վերաբերյալ ուսումնասիրություն է տպագրել Ա. Քալանթարը (ԱՀ, գ. Դ, էջ 276-292)։ Ալաշ-

կերտի բանահյուսությունը մեծապես շահել է Գրիգորիս քահ. Նժդեհյանցի շնորհիվ (ԱՀ, գ. Ե, էջ 185-199, գ. VII-VIII, էջ 437-505, գ. IX, էջ 263-271, գ. XI, էջ 197-240, գ. XII, էջ 95-103, գ. XIII, էջ 63-86, գ. XVII, էջ 49-52, գ. XVIII, էջ 5-102, գ. XIX, էջ 95-98, գ. XX, էջ 108-111)։ Նոր Նախիջևանի հայոց ազգագրությունը նշանակալից հմտությամբ գրի առել ու մեծ ծավալով տպագրել է Ե. Շահազիզը (ԱՀ, գ. VII-VIII, էջ 5-102, գ. IX, էջ 5-82), Երևանի, Շարուր-Դարալագյազի, Հին Նախիջևանի, Ջուղայի, Ագուլիսի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Բասենի, Շիրակի և Ղազախի ու Շամախու հայերի սովորությունները ջանասիրաբար գրի է առել և տպագրել «Փորձ» ամսագրում ու «Ազգագրական հանդես»-ում նշանավոր բժիշկ, հայրենասեր Քաջբերունին (ԱՀ, գ. VII-XVII, էջ 113-204, գ. IX, էջ 83-116)։ Հրաչյա և Արմենուհի Աճառյանները գրի են առել Կ.Պոլսի ժողովրդական բանահյուսությունը (ԱՀ, գ. IX, էջ 160-196)։ Եվ այսպես, ուրիշ շատ բանահավաքներ Լալայանի խմբագրած «Ազգագրական հանդես»-ում տպագրում են իրենց գավառների ազգագրական նյութերի նշխարներն ու բանահյուսությունը, այս հանդեսում տեղ գտան «Սասնա ծռերի» մի շարք պատումները և այլն։

Նշված հեղինակներից XX դարասկզբից առանձնանում է Խ. Սամուելյանը, որը սկսած 1904 թ., պարբերաբար հանդես է գալիս հայ սովորութային և ընտանեկան իրավունքին նվիրված հոդվածաշարերով[87]: «Հանդեսի» էջերում ուշագրավ նյու-

[87] Տե՛ս **Սամուելյան Խ.,** Արյան վրեժ և փրկանք (ԱՀ, գ. X, էջ 269-303), Հին հայոց իրավունքը և նրա հետազոտության մեթոդը (ԱՀ, գ. XI, էջ 5-32), Առանգմամբ և գնմամբ ամուսնություն (ԱՀ, գ. XII, էջ 49-83), Հայ ընտանեկան պաշտամունքը (ԱՀ, գ. XII, էջ 202-234, գ. XIII, էջ 112-139, գ. XIV, էջ 156-174), Հայոց ժառանգական իրավունքը (ԱՀ, գ. XV, էջ 68-90, գ. XVI, էջ 117-129), Մայրական իրավունք (ԱՀ, գ. XVII, էջ 126-141, գ. XIX, էջ 33-58), Սիմբոլը հայ սովորույթներում (ԱՀ, գ. XXII, էջ 232-245) և այլն:

թեր են հրատարակվել նաև բոշաների (տե՛ս Վ. Փափազյան, Հայ բոշաներ, ԱՀ, գ. Գ, Թիֆլիս, 1898), քրդերի, ասորիների (Վասպուրականի ասրիները//ԱՀ, գ. XX), պարսիկների (Լ. Բաբայան, Պարսկաստանի կրակապաշտները, ԱՀ, գ. XVIII, 1908), տեղի ռուս և ուկրաինացի աղանդավորների (Ե. Լալայան, Մոլոկաններ, ԱՀ, գ. VII-VIII, Թիֆլիս, 1901), ուտիների («Տեղեկագիր», ՀԽՍՀ ԳԱ գիտության և արվեստի, 1926, № 1), վրացիների, հույների և այլոց ազգագրության վերաբերյալ: 1901 թ. լույս է տեսնում ԱՀ-ի VII-VIII միացյալ համարը՝ որտեղ գերազանցապես տեղավորված են հում նյութեր: Այստեղ տպագրվում է եվրոպացի լեզվաբան Ա. Դիրրի կազմած հարցարանը՝ «Ծրագիր սեփականության նշանների (տաղմայի) մասին նյութեր հավաքելու» խորագրով (ԱՀ, գ. XVI, հավելված, 2-26 էջ):

Բացի զուտ բանահավաքչական աշխատանքներից, «Ազգագրական հանդես»-ում տպագրվում էին ժամանակի նշանավոր մտավորականների իրավագիտական, ազգագրական, բանագիտական, հնագիտական և այլ ուսումնասիրությունները[88]: Այստեղ թարգմանաբար լույս են տեսնում նաև եվրոպացի մի շարք ազգագրագետների տեսական աշխատությունները և այլ գործեր, հիմնականում՝ Ե. Լալայանի թարգմանությամբ: Ե. Լալայանը ձգտում էր այդ թարգմանությունների միջոցով հայ ընթերցողներին իրազեկ դարձնել Եվրոպայում ազգագրական, բանահյուսական, մարդաբանական գիտությունների նորություններին, հատկապես այն նոր մեթոդներին,

---

[88] Տե՛ս **Կոստանյան Կ.,** Պռույգ և տուայր (ԱՀ, գ. XIII, էջ 131-138), **Բաբայան Լ.,** Պարսկաստանի կրակապաշտները (ԱՀ, գ. XVIII, էջ 37-58), **Ատրպետ,** Եզան պաշտամունքը (ԱՀ, գ. XXIII, էջ 114-124), **Իվիեկյան Գ.,** Քավոր (ԱՀ, գ. XXIV, էջ 90110), **Ղլթչյան Ա.,** Հայ հին իրավունքը (ԱՀ, գ. XXII, էջ 5-60, գ. XXIII, էջ 84-114, գ. XXIV, էջ 5-50) և ուրիշներ:

որոնք արմատավորվել էին Արևմտյան Եվրոպայում։

«Ազգագրական հանդեսի» Զ գրքով փակվում է XIX դարը։ 1896-1900 թվականները «Ազգագրական հանդեսի» հրատարակության առաջին շրջանն էին. խմբագրի սեփական միջոցներով հրատարակվեց 6 գիրք՝ յուրաքանչյուրը 500-600 էջով և բազմաթիվ իլյուստրացիաներով։ Այս շրջանում հանդեսն ուներ երկու բաժին՝ ազգագրական և մարդաբանական։

Հայոց ազգագրական-հրատարակչական ընկերության (1900 թ. հոկտեմբեր) և Հայոց ազգագրական ընկերության (1906) գործունեությունը։

Ե. Լալայանի շուրջը համախմբված մտավորականության ներզրավմամբ 1900 թ. հոկտեմբերի 21-ին կազմակերպվում է Հայոց ազգագրական հրատարակչական ընկերությունը։ Ընկերության նպատակն է եղել դյուրացնել «Ազգագրական հանդեսի» հրատարակությունը և Ե. Լալայանի աշխատանքը, տպագրել գրքեր, գրքույկներ, քարտեզներ, բացել տպարաններ ու գրավաճառանոցներ և այլն, ընդլայնել և աշխուժացնել լուսավորչական, հասարակական գործունեության շրջանակները։ Ընկերության նախագահնն էր Ա. Մելիք-Ազարյանը, անդամ-քարտուղար Ե. Լալայանը։ Ընկերության որոշմամբ Ե. Լալայանը ընտրվել է «ԱՀ»-ի մշտական խմբագիր։ Յոթ անձից կազմված խմբագրական հանձնաժողովում ընդգրկվել են նաև Պերճ Պռոշյանը և Հովհաննես Թումանյանը։ Հայոց ազգագրական-հրատարակչական ընկերությունը նոր թափ է հաղորդում բանահավաքչությանը։ Այդ ընկերության հիմնադրմամբ սկսվում է «Ազգագրական հանդեսի» հրատարակության երկրորդ շրջանը, պարբերականը դադարում է լինել Ե. Լալայանի հրատարակությունը՝ դառնալով ընկերության պաշտոնական օրգանը։ Այս շրջանում՝ մինչև 1906 թ., հրատարակվեց հանդե-

սի 7 գիրք, ընդ որում՝ մարդաբանական բաժինը վերացվեց։ Ազգագրական-հրատարակչական ընկերության շնորհիվ հրատարակվեցին ոչ միայն հանդեսի հետագա հատորները, այլև բազմաթիվ գրքեր, գրքույկներ ու քարտեզներ։ 1905 թ. ընկերության անդամների թիվը հասնում է 80-ի։ Ե. Լալայանը մտադիր էր ավելի ընդարձակել ընկերության գործունեությունը։ Նրա նպատակն էր հիմնել հայ ազգագրական ընկերություն իր թանգարանով, գրադարանով, գիտական օրգանով ու հրատարակչությամբ, նաև դասընթացներով։

Հինգ տարվա եռանդուն գործունեությունից հետո՝ 1906 թ., Հայոց ազգագրական հրատարակչական ընկերությունը վերանվանվում է «Հայոց ազգագրական ընկերություն» 174 մշտական անդամով։ Այս նորընտիր ընկերությունը կազմում է «Կանոնադրություն Հայոց ազգագրական ընկերության», որը հաստատվում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի կողմից (1906 թ., մայիսի 16)։ 1906 թ. սեպտեմբերի 24-ին կայացած նիստում հաստատվում է Երևանի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Նոր-Բայազետի մասնաճյուղերը։ Ազգագրական ընկերության նպատակն էր ավելի մեծ ծավալով գործել, մասնավորապես ազգագրական և ընդհանրապես մարդաբանական, հնագիտական գիտությունների տեսակետից ուսումնասիրել Կովկասը, հարակից երկրները և հայկական գաղթօջախները, հոգալ և միջնորդել տեղական իշխանությունների առաջ՝ պահպանելու Կովկասի հնությունները, կազմակերպելու գիտական արշավախմբեր, կատարելու պեղումներ, բացելու թանգարաններ, գրադարաններ Թիֆլիսում և Էջմիածնում, կազմակերպելու դասախոսություններ, ազգագրական-երաժշտական երեկույթներ և այլն։

Ընկերությունը հարատևեց շուրջ տասը տարի՝ մեծապես

խթանելով ազգագրական-մարդաբանական-հնագիտական աշխատանքների ծավալումը ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Կովկասում: Հիմնադրեց հայագիտական-կովկասագիտական հարուստ գրադարան ու թանգարան Թիֆլիսում, որտեղ կենտրոնացվեցին ստվարածավալ գրականություն և ազգագրական ու հնագիտական նորագյուտ բարձրարժեք նյութեր՝ հայթայթված ընկերության կազմակերպած դաշտային հետազոտական աշխատանքների միջոցով: Թիֆլիսում Ե. Լալայանի ջանքերով հիմնված ազգագրական-հնագիտական թանգարանի ստեղծման համար հիմք հանդիսացան հեղինակի կողմից պեղված հնագիտական նյութերը և տարբեր ճանապարհներով ձեռք բերված ազգագրական հավաքածուները:

Հայոց ազգագրական ընկերությունը, հույսը դնելով «Արամազդ» նավթարդյունաբերական ընկերության վրա, 1907 թ. որոշում է կայացնում մի թանգարան կազմակերպել Անիում, ուր կարելի կլինի ամփոփել հնագիտական, ազգագրական նշանակություն ունեցող պեղածո իրերը և մի կամուրջ կառուցել Ախուրյան գետի վրա՝ Անի անցնելը դյուրացնելու համար: Այդ նպատակով Լալայանը գործուղվում է Անի, Մառի ու Թորամանյանի հետ այդ առթիվ խորհրդակցելու: Սակայն այս գեղեցիկ նպատակը թողնվում է անկատար:

Ի դեպ, Ե. Լալայանի ազգանվեր այս ձեռնարկները պատշաճ գնահատական և օժանդակություն էին ստանում իր ժամանակակիցների կողմից: Ամենայն Հայոց Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը Սանկտ Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդին պատվիրում է 1907 թ. սեպտեմբերի մեկից հինգ տարով, ամիսը 100 ռ. նպաստ տալ Ե. Լալայանին՝ հնագիտական և ազգագրական հետազոտություններ կատարելու և Մայր Աթոռի թանգարանի համար նյութեր հավաքելու համար

(«Արարատ», 1913, Զ, 496-497)։ Գևորգ V կաթողիկոսը 1913 թ., հարգելով Հայոց ազգագրական ընկերության դիմումը, թույլ է տալիս Թիֆլիսի ավագ եկեղեցու մոտ հող հատկացնել ազգագրական-հնագիտական թանգարան հիմնելու համար, պարտավորեցնելով, որ շենքը լինի Մայր Աթոռի մշտնջենական սեփականություն («Արարատ», 1913, Դ, 310)։

1908 թ. հունվարի 4-ին ընկերության նիստում որոշվեց Թիֆլիսում բացել նաև գրադարան։ Հիմնականում Ե. Լալայանի ջանքերով Թիֆլիսում ստեղծվում է հարուստ մասնագիտական թանկարժեք գրականությամբ Կովկասագիտական-մարդաբանական գրադարանը, որի հիմքը կազմեց գիտնականի անձնական հավաքածուն՝ 10 հազար կտոր գրականությամբ ու նաև հայ պարբերական մամուլի նյութերով։ Գրադարանի գրքային ֆոնդը բաղկացած էր 40 հազար գրքից։ Գրադարանի վարիչն էր Ե. Լալայանի կինը՝ Հայկանուշ Լալայանը, որն աշխատում էր առանց վարձատրության։

Նորաստեղծ ընկերությունը կանոնադրությամբ, ինչպես ասվեց վերը, նախատեսում էր կազմակերպել Ազգագրական ընկերության գավառական մասնաճյուղեր։ Այդ ամենի հիման վրա հետագայում ստեղծվեցին թե՛ Վրաստանի թանգարանը և թե՛ Հայաստանի պատմության թանգարանը։ Ընկերության շնորհիվ առանձին գրքերով հրատարակվեց ազգագրական-բանահյուսական բնույթի բազմազան գրականություն։

Հայկական ազգագրական ընկերության հիմնադրմամբ սկսվում է «Ազգագրական հանդեսի» հրատարակության երրորդ և վերջին շրջանը (1906-1916)։ Ընկերությունը շարունակում է հրատարակել այն որպես եռամսյա պարբերական, սակայն կարողանում է հրատարակել միայն տարեկան երկու գիրք (այն էլ ոչ բոլոր տարիներին)։ «Ազգագրական հանդե-

սում» իրենց հոդվածներն ու նյութերն էին հրապարակում հայագիտության գրեթե բոլոր հայտնի դեմքերը: Թե՛ տեսական ու մեթոդաբանական հարցադրումների և թե՛ ներկայացվող նյութերի գիտական մակարդակով հանդեսը էր զիջում ժամանակի հայտնի ազգագրական հրատարակություններին: Եր. Լալայանն առաջիններից էր, որ հետազոտություններն իրականացնում էր ազգագրական շրջանացման սկզբունքով՝ ներկայացնելով հայոց առանձին պատմաազգագրական շրջանների գրեթե ամբողջական ազգագրական-մշակութային բնութագիրը[89]: Հայոց ազգագրական ընկերության գործունեությունը շատ ավելի արդյունավետ կլիներ, եթե ժամանակին լինեին պրոֆեսիոնալ ազգագրագետներ, մինչդեռ ընկերության անդամներն էին ոչ թե պրոֆեսիոնալները, այլ այդ ժամանակաշրջանի կրթվածները, ուսուցիչները, գրողները, հասարակական գործիչները:

Երվանդ Լալայանի հրատարակչական, բանահյուսական և թարգմանչական գործունեությունը: «Ազգագրական հանդեսի» գործունեության ընթացքում հավաքչական և հետազոտական աշխատանքները ցույց տվեցին, որ անհրաժեշտ էր Գ. Խալաթյանի «Ծրագիրը» որոշ չափով ընդարձակել, լրացնել՝ ելնելով մի շարք նոր պահանջներից: Լույս տեսան «Ծրագիր ամուսնության և հարսանիքի սովորույթների մասին նյութեր հավաքելու»[90], «Ծրագիր տղաբերքի և նորածին մանկան ֆիզիկական դաստիարակության մասին նյութեր հավաքելու», «Ծրագիր հիվանդության և բժշկության մասին նյութեր հավա-

---

[89] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Ե. Լալայանը՝ հայ ազգագրության ուսումնասիրության պատմաազգագրական շրջանացման մեթոդի սկզբնավորող//Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 214-235:

[90] Տե՛ս **Ե. Լալայան,** ԱՀ, գ. Ա, հավելված, էջ 3-52:

քելու»[91], «Ծրագիր տնայնագործության վերաբերյալ նյութեր հավաքելու»[92] ուղեցույցները:

Գր. Խալաթյանցի «Ծրագրի», մասամբ նաև Լալայանի՝ որոշ թեմաների վերաբերյալ կազմած լրացուցիչ հարցաշարերի շնորհիվ պատմական Հայաստանի առանձին գավառների ուսումնասիրությունը առաջին անգամ հայ ազգաբանական գիտության մեջ իրականացվում է համալիր, ամբողջական թեմատիկ ընդգրկումներով, ընդ որում՝ ազգագրական երևույթներին զուգահեռ՝ ներկայացվում են նաև բանահյուսությունը, մարդաբանությունը, պատմությունը, բնությունը (երկրի նկարագիր՝ լեռներ, ջրեր, կլիմա, հանքեր, բուսական և կենդանական աշխարհ, տեղագրական՝ գավառի վարչական բաժանում, գյուղեր, վանքեր, վիճակագրություն, քարտեզ և այլն)։ Հանգամանորեն ներկայացվում է հնագիտական մշակույթի առկա վիճակը։ Շարունակում են հրատարակվել պատմական Հայաստանի մեծ մասի վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ[93]: Վասպուրականի վերաբերյալ Ե. Լալայանը նախատեսել էր հրատարակել մի քանի հատոր, սակայն Առաջին աշխարհամարտը և նյութական միջոցների սղությունը թույլ չեն

---

[91] Տե՛ս **Ստ. Զելինսկի,** ԱՀ, գ. Գ, հավելված, էջ 73-79, ԱՀ գ. Դ, հավելված, էջ 93-106:

[92] Տե՛ս **Հ. Կարա-Մուրզա,** ԱՀ, գ. XII, հավելված, էջ 3-32:

[93] Տե՛ս «Նախիջևանի գավառ. Ա մասն՝ Գողթն կամ Օրդուբադի ոստիկանական շրջան (ԱՀ, գ. XI, էջ 241-334, գ. XII, էջ 109-174, գ. XIII, էջ 199-226, գ. XV, էջ 133-163), «Շարուր Դարալագյազի գավառ, Ա մասն՝ Վայոց ձոր» (ԱՀ, գ. XII, էջ 235-293, գ. XIII, էջ 139-166, գ. XIV, էջ 133-155, գ. XVI, էջ 5-84), «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք» (ԱՀ, գ. XIII, էջ 167-197, գ. XIV, էջ 5-37, գ. XV, էջ 165-206, գ. XVI, էջ 965, գ. XVII, էջ 86-125, գ. XVIII, էջ 109-156, գ. XIX, էջ 5-34, գ. XX, էջ 33-60), «Վասպուրական» (Ահ, գ. XX, էջ, 116-212, գ. XXI, էջ 37-100, գ. XXII, էջ 85-100, գ. XXV, էջ 21-60), «Մուշ-Տարոն» (ԱՀ, գ. XXVI, էջ 149-194) և այլն:

տալիս այն իրագործել։ Նա կարողանում է անդրադառնալ Վասպուրականի ազգագրությանը, բանահյուսությանը, Վասպուրականի ասորիներին, տնայնագործությանը, նշանավոր վանքերին, նրանց շրջակա տապանաքարերի արձանագրությունների վերլուծությանը։ Ե. Լալայանն այդ աշխատությունները համեստորեն կոչել է՝ «Նյութեր ապագա ուսումնասիրության համար», թեև դրանք լուրջ գիտահետազոտական ուսումնասիրություններ են։ Լալայանը այդ գործին մոտեցել է հայրենասեր գիտնականի խոր ինքնագիտակցությամբ։ Ազգագրական-բանահյուսական նյութեր գրի առնելու հույժ անհրաժեշտությունը նկատի ունենալով՝ Լալայանը գրում է. «Քանի որ ուսումնասիրություններ կատարելու համար երբեք ժամանակ չի պակասելու, մինչդեռ եթե հապաղենք ազգագրական երևույթները գրառել, շատ ու շատ նյութեր բոլորովին անհետանալու են, ուստի իմ անմիջական նպատակը ոչ թե ուսումնասիրություն տալն է, այլ եվրոպական ուսումնասիրության լույսով հայկական նյութերը որոնելը, գտնելը, կորստից ազատելը»։

Լալայանը իրավացիորեն գտնում էր, որ հայ ժողովրդի մշակութային արժեքների՝ ազգագրական, բանահյուսական և հոգևոր մշակույթի այլևայլ նյութերի հայտնաբերումն ու հավաքումը անհատական գործ չեն, այլ պետք է դառնան համազգային, համաժողովրդական խնդիր (տե՛ս Ծիսական կարգերը հայոց մեջ, Թիֆլիս, 1913, էջ 3)։

Ե. Լալայանի գիտական գործունեության հիմնական բնագավառներից է նաև ժողովրդական բանահյուսությունը։ Նա ժողովրդական բանահյուսությունը դիտում էր որպես ազգագրության մի անբաժանելի օղակ և աշխատությունների մեջ մեծ տեղ էր հատկացնում բանահյուսական նյութերին, որոնք ոչ

միայն լրացնում ու լուսաբանում են քննարկվող պատմաազգագրական շրջանի ընտանեկան բարքերն ու հավատալիքները, այլև դառնում են ուղեկցող ու ամբողջացնող նյութ։

Ե. Լալայանի բանահյուսական հավաքածուներում մեծ տեղ են գրավում տարբեր ազգագրական շրջաններից՝ Ջավախքից, Գանձակից, Զանգեզուրից, Լոռիից գրի առնված երգեր-խաղիկները։ Գրի առել և հրատարակել է «Սասնա ծռերի»՝ Նոր Բայազետի, Վանի, Ալաշկերտի պատումները, իրանական «Ռուստամ Զալ» վեպի հայկական տարբերակը։ Ե. Լալայանը հավաքել և հրատարակել է չափազանց արժեքավոր բանահյուսական նյութեր առանձին գրքերով՝ «Ջավախքի բուրմունք» (1892), «Հոբոս» (1903), «Մոլլա Նասր էդ-Դինը» (1904), «Պառավաշունչ» (1911), «Մարգարիտներ հայ բանահյուսության» (հատ. Ա-Գ, 1914-1915)։

Անհատական շրջագայություններից զատ «Հայոց ազգագրական ընկերության» միջոցով 1915 թ. սեպտեմբերին՝ Առաջին աշխարհամարտի այդ ծանր օրերին, Ե. Լալայանը կազմակերպեց արշավախումբ՝ թուրքական յաթաղանից մազապուրծ և Անդրկովկասի քաղաքներում ու գյուղերում ապաստանած արևմտահայ գաղթականներից ժողովրդական բանահյուսության և ազգագրական նյութեր գրի առնելու համար։ Արշավախմբի աշխատանքներին մասնակից դարձրեց նշանավոր մտավորականներ Արտաշես Բարսեղյանին, Սենեքերիմ Շալճյանին, Շահեն Կուժիկյանին, Նազարեթ Մարտիրոսյանին, Երվանդ Պեզազյանին և այլոց։ Գիտական արշավախմբի աշխատանքը տևում է չորս ամիս, այդ ընթացքում հավաքվում են 874 հեքիաթ, նաև առակներ, պատմվածքներ, կենդանական վեպեր, ավանդություններ, մոտ 240 հատ, նմանապես ժողովրդական երգեր, աղոթքներ, անեծքներ և այլն, շուրջ 62

տետրակ։ Դրանց հիման վրա Ե. Լալայանը լույս է ընծայում ժողովրդական հեքիաթների երեք ստվարածավալ գրքեր՝ «Մարգարիտներ հայ բանահյուսության» ընդհանուր խորագրով։ Զուգահեռաբար Լալայանը գրի է առնում Մշո հայերի ազգագրությունը, որը և տպագրում է հանդեսի վերջին՝ 26-րդ հատորում։

Պատմության թանգարանի դիվանում են գտնվում Լալայանի օրագրության ձեռագրերը, որոնք մեծ թվով նյութեր են պարունակում նրա կյանքի ու գիտական գործունեության վերաբերյալ։

«Ազգագրական հանդես»-ից բացի, նա աշխատակցել է «Տարազ», «Մշակ», «Մուրճ», «Նոր-դար» և այլ պարբերականներին։ Բազմաբեղուն գիտնականի գրչին են պատկանում ավելի քան 70 արժեքավոր աշխատություններ, գրեթե նույնքան էլ անտիպ գործեր։

Առաջին աշխարհամարտի, արևմտահայերի ցեղասպանության ու հայրենիքից ցիրուցան լինելու, նյութական կյանքի համատարած անկման հետևանքով «Հայոց ազգագրական ընկերությունը» սնանկանում է, դադարում է նաև բանահավաքչական գործունեությունը։ 1914-1915 թթ. «Ազգագրական հանդեսը» լույս չի տեսնում, 1916 թ. հրատարակվում է միայն հանդեսի վերջին՝ 26-րդ հատորը։ Ազգագրական հանդեսի փակումը հայ ազգագրության գիտական գործունեության փաստական մահն էր։ 1917 թվականից հետո ազգագրական նախաձեռնություններ չեն իրականացվում։ Լալայանը մնացել էր մեն-մենակ, որի հատուկենտ աշխատանքները մինչև Հայաստանի խորհրդայնացումը շոշափելի արդյունքի չեն հասցնում։ Հայաստանն ապրում էր արյան ու սովի ճիրաններում։

Փաստորեն, «Ազգագրական հանդեսը» դարձել էր հայ

կյանքի մի յուրօրինակ հանրագիտարան։ Այն հրատարակվում էր որոշակի համակարգով, ամեն մի գիրքը հիմնականում ընդգրկում էր Հայաստանի որևէ գավառի կամ Կովկասի հայաբնակ որևէ շրջանի ստվարածավալ ու համակողմանի նկարագրություն՝ մեծ մասամբ շարադրված հենց Ե. Լալայանի կողմից։ «Ազգագրական հանդեսի» շնորհիվ ազգագրությունը Հայաստանում լիովին ձևավորվեց որպես գիտության ուրույն բնագավառ՝ սահմանազատվելով մասնավորապես բանագիտությունից։ Համակողմանիորեն մշակված ծրագրով, ընդգրկելով թղթակցական-բանահավաքչական հեղինակների լայն ցանց, Եր. Լալայանը քսան տարում քսանվեց հատորով ընդգրկեց պատմական Հայաստանի գրեթե բոլոր գավառները։ Հանդեսի միջոցով կորստից փրկվեցին ու հետագա սերունդներին կտակվեցին հայ ժողովրդական ավանդութային մշակույթի շատ ու շատ նյութեր, որոնք նոր, կապիտալիստական սոցիալ-տնտեսական հարաբերությունների ներթափանցման հետևանքով ենթարկվեցին արմատական փոփոխությունների։ Միայն կարելի է ափսոսալ, որ չնայած Ե. Լալայանի ծավալած վիթխարի հավաքչական աշխատանքին՝ Հայաստանի ոչ բոլոր շրջանները հնարավոր եղավ ընդգրկելու, և ժողովրդական մշակույթի ոչ բոլոր կողմերին վերաբերող նյութերը փրկվեցին կորստից։ Այդուհանդերձ, Ե. Լալայանի բազմահարուստ ու բազմաբովանդակ գործունեությամբ, այդ թվում իր իսկ հիմնած և խմբագրած «Ազգագրական հանդեսի» 26 գրքերում և այլուր պատմական Հայաստանի մեծ մասի վերաբերյալ ազգագրական և բանահյուսական նյութերի հրատարակմամբ վերջնականապես կայացրեց գիտական ազգաբանությունը և հիմք դրեց դրա զարգացմանը։ Նա նաև հիմք դրեց պատմական Հայաստանի պատմաազգագրական շրջանների համալիր և բազ-

մակողմանի տարածքային հետազոտության մեթոդին, որի արդյունքը եղան գիտնականի աշխատությունները:

Ե. Լալայանը հանդեսի էջերում, ապա առանձին գրքերով ներկայացնում է նաև թարգմանաբար եվրոպական ժամանակից ազգագրության տեսական նվաճումներից Շ. Լետուրնոյի «Ամուսնության զարգացումը» (ԱՆ, գ. Ա, հավելված, էջ 53-120), Գ. Կանեստրինի «Մարդաբանություն»[94], Պոզադայի «Նորագույն տեսությունները գերդաստանի, հասարակության ու պետության ծագման մասին» (ԱՀ, գ. Գ, հավելված, էջ 3-50, գ. Դ, հավելված, էջ 3-26), Ռ. Վիրխովի «Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ» (ԱՀ, գ. Ա, էջ 50-116), պրոֆ. Պետրիի «Մարդաբանության պատմական զարգացումը» (ԱՀ, գ. Ա, հավելված, էջ 53-120) աշխատությունները: Ներկայումս «Ազգագրական հանդեսի» ավանդները շարունակում է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարը, որը 1970 թվականից սկսած՝ պարբերաբար հրատարակվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից:

2005 թ. Հայոց ազգագրության թանգարանը հրատարակեց «Նոր ազգագրական հանդես» պարբերականը՝ նպատակ ունենալով շարունակելի դարձնել «Ազգագրական հանդեսի» ավանդույթները: Իրավացի էր հայագետ Ն. Ակինյանը, երբ Ե. Լալայանի մահվան կապակցությամբ գրում էր. «Բայց և այնպես ինչ-որ համբարեց Լալայանը, հավաքեց ժամանակին, անոնք փրկված են կորուստեն և պիտի մնան ստացվածք գիտության: Եկող սերունդները պարտավոր են երախտագիտության, պիտի օրհնեն հիշատակը մեծ վաստակավորին»[95]: Ավե-

---

[94] Տե՛ս ԱՀ, գ. Բ, էջ 59-96, գ. Ե. հավելված, էջ 25-40, գ. Զ, հավելված, էջ 3-40:

[95] **Ակինյան Ն.**, Ե. Լալայան (մահախոսական) // ՀԱ, Վիեննա, 1931, թիվ 3-5,

լի ամբողջական է տրված Ե. Լալայանի գործունեության բնութագիրը Խ. Սամուելյանի կողմից. «Մարեց մի կյանք, որ ամբողջ 40 տարի անընդհատ ոգևորությամբ շնչում էր յուր սիրասուն ազգագրական և հնագիտական ասպարեզներում, որտեղ մերթ գրիչը ձեռքին արձանագրելով և ուսումնասիրելով, մերթ բրիչը ձեռքին պեղելով, ի հայտ էր բերում Հայաստանի կուլտուրայի պատմության վերաբերյալ անչափ հարուստ նյութեր, թաքնված դարավոր փոշիներում կամ ժողովրդական կենցաղի ամենատարբեր ոլորտներում: Հիրավի, Ե. Լալայանը ծավալել է մի այնպիսի էքսպանսիվ աշխատանք, գլուխ է բերել այնպիսի հսկա գործ, որի նմանը թե՛ արտասահմանի, թե՛ Ռուսաստանի գիտական հետազոտական ասպարեզներում կատարել են հատուկ ընկերություններ, ինստիտուտներ՝ կազմակերպված հավաքական ուժերով, կոլեկտիվ ջանքերով, խմբական էքսպեդիցիաներով: Այսօր Ե. Լալայանը մեզ թողել է սոսկ իր անհատական ջանքերով, իր միանձնյա գործունեությամբ կատարած աշխատանքի մի ահագին ժառանգություն, որը պատիվ կբերեր ամեն մի գիտական կազմակերպության, եթե այս կատարված լիներ վերջինիս նույնիսկ հավաքական ուժերով[96]:

էջ 294:

[96] **Սամուելյան Խ.**, Ե. Լալայան (մահախոսական) // «Խորհրդային Հայաստան», լրագիր, 1931, № 50:

4.2. Ե. Լալայանը հայ ազգագրության ուսումնասիրության պատմաազգագրական շրջանացման մեթոդի սկզբնավորող

«Պատմաազգագրական մարզ» հասկացության ներքո հասկացվում է այն բնատարածքը, որի վրա ապրող ժողովուրդների կապերի փոխադարձ ազդեցության և պատմական ճակատագրերի ընդհանրության արդյունքում ձևավորվել է որոշակի մշակութային ընդհանրություն[97]: Այդ ընդհանրությունը առավել դյուրին հետազոտվում է ըստ ազգագրական տվյալների, որոնք վերաբերում են նյութական մշակույթին (բնակավայր, բնակարան, բնակարանի ներսույթ, ուտեստ, սպասք, զգեստ և զարդարանք), նաև հոգևոր մշակույթի առանձին երևույթների (ծեսեր, հավատալիքներ, տոներ, ժողովրդական բանահյուսություն): Ազգագրական նյութի օգնությամբ հաճախ հստակորեն ուրվագծվում են տնտեսամշակութային տիպերի բնատարածքային ու էթնիկական տարածման սահմանները, դրանով իսկ բնորոշվում են նաև պատմաազգագրական մարզերը:

Տնտեսամշակութային տիպերի և պատմաազգագրական մարզերի առանձնացումը շատ կարևոր է ազգագրական դասակարգման համար: Աշխարհի ժողովուրդների գոյություն

---

[97] Տե՛ս **Андрианов Б.,** Хозяйственно-культурные типы и исторический процесс // “Советская этнография”, № 2, 1968, **Чеснов Я.,** О социально-этнографических и природных условиях возникновения хозяйственно-культурных типов // СЭ, 1970, № 6, Տե՛ս **Левин М. Г. и Чебоксаров Н. Н.,** Хозяйственно-культурные типы и историко-этнографические области // СЭ, № 4, 1955, էջ 4: **Вардумян Д.,** Характеристика основных этнографических районов Армении в XIX в., М, 1964, **նույնի՝** Հայաստանի հիմնական պատմաազգագրական մարզերի ընդհանուր բնութագրումը (XIX-XX դդ.) // ՊԲՀ, 2004, թիվ 2(166), էջ 48-64:

ունեցող դասակարգումները կառուցված են հիմնականում լեզվաբանական սկզբունքներով: Ուստի անհրաժեշտություն է ժողովուրդների բուն ազգագրական դասակարգումը՝ հիմնված պատմաազգագրական մարզերի և ենթամարզերի առանձնացման վրա: Սա ազգագրագետների կարևորագույն խնդիրներից է: Այս տեսանկյունից պետք է բարձր գնահատել «Ազգագրական հանդեսի» (1895/1896-1916) և անձամբ Երվանդ Լալայանի գիտակազմակերպչական նպատակասլաց ու բազմաբովանդակ գործունեությունը:

Նշենք, որ «Ազգագրական հանդեսում» բանահյուսական նյութը զգալի տեղ էր գրավում, այդուհանդերձ Հայաստանի տարբեր շրջաններին վերաբերող ազգագրական ուսումնասիրությունները ավելի ծավալուն ու մեծաքանակ էին, որոնց հեղինակը հիմնականում հենց Երվանդ Լալայանն էր: Նրանից առաջ ժողովրդական մշակույթի հիմնական աղբյուր հանդիսացող ազգագրական նյութը տակավին կարոտ էր մասնագիտական, հատկապես ըստ պատմաազգագրական մարզերի և ենթամարզերի դասդասման ու ընդհանրացման: Նա իր բանահավաքչական գործունեությունը սկսել է Ախալքալաքում դեռևս 1889 թվականին: Որպես բանահավաք՝ Լալայանը ոչ թե նյութի պարզ արձանագրող է, այլ հետազոտող գիտնական: Գրի առնելու ընթացքում նա առաջնորդվել է նյութի ամբողջականությունը պահպանելու սկզբունքով, կենցաղավարության, նյութական ու հոգևոր մշակույթի միջև բնական պատճառական կապերը վեր հանելով:

Իր գործունեության ընթացքում Ե. Լալայանը առաջնորդվում էր Գրիգոր Խալաթյանցի կազմած ծրագրով: Այդ ծրագրի հիման վրա պատմական Հայաստանի երկու հատվածներում շրջագայելիս նա գրի է առնում ու հրատարակում տվյալ վայրի

ազգագրական նյութը՝ ժողովրդական բանավոր գրականության նմուշներով, նշանավոր վանքերի, պատմական հուշարձանների, միջնադարյան ձեռագիր մատյանների և այլ հնությունների նկարագրություններով:

«Ազգագրական հանդեսը» հրատարակվում է որոշակի համակարգով. ամեն մի հատորը հիմնականում բաղկացած է Հայաստանի որևէ գավառը կամ Կովկասի որևէ հայաբնակ շրջանը ներկայացնող (Ջավախք, Գանձակի գավառ, Լոռի, Վարանդա, Սիսիան, Զանգեզուր, Վայոց ձոր, Գեղարքունիք, Նախիջևանի գավառ, (Գողթն) Վասպուրական, Մուշ-Տարոն, Նոր Նախիջևան, Համշեն, Հարք և այլն) ստվարածավալ ու համակողմանի նկարագրությունից:

Նրա՝ ազգագրական առանձին շրջաններին ուղղված աշխատությունները ընդգրկում են հետևյալ հիմնական բաժինները՝ պատմական համառոտ տեսություն, տեղագրություն, պատմական հուշարձաններ, ազգաբնակչությանը վերաբերող տեղեկություններ, տնտեսական դրություն, նյութական մշակույթ, բնակարան, զգեստ և զարդ, ընտանեկան բարք՝ ամուսնություն, տղաբերք և կնունք, ընտանեկան կյանք, հիվանդություն և բժշկություն, մահ, թաղում և մեռելոց, հոգու և հանդերձյալ կյանքի ժողովրդական ընկալումներ, հավատք՝ լեռների, քարի, կրակի, ջրի, ծառերի, կենդանիների, լուսատուների, ոգիների պաշտամունքային դրսևորումներ, կախարդություն, սնոտիապաշտություն, նշանավոր տոներ, ժողովրդական բանավոր գրականություն[98]: Ընդհանրապես որևէ պատմաազգագրական շրջանին վերաբերող նրա ուսումնասիրությունը

[98] Տե՛ս, օրինակ, **Լալայան Ե.,** Վարանդա, ԱՀ, երկրորդ տարի, Բ գիրք, 1897, Թիֆլիս (տե՛ս բովանդակությունը):

կարելի է բաժանել երկու մեծ բաժնի՝ պատմաաշխարհագրական և ազգագրական: Սակայն հարկ է նշել, որ այդ բաժինները ընդհանրապես և առանձին շրջաններ մասնավորապես, նույն չափով չեն արժանացել Լալայանի ուշադրությանը: Ազգագրագետի ուսումնասիրություններում առավել մեծ տեղ են գրավում ընտանեկան բարքերին ու հավատքին վերաբերող բաժինները: Դա պետք է բացատրել այն հանգամանքով, որ Լալայանը գտնվում էր էվոլյուցիոնիզմի՝ ժամանակի ազգագրության տիրապետող և առաջադիմական ուղղության ազդեցության ներքո:

Սովորաբար Ե. Լալայանը ուսումնասիրության համար ընտրում է Հայաստանի որևէ վարչական միավոր: Սակայն նա ազգագրական ուսումնասիրությունը կատարում է ոչ թե տարերայնորեն, այլ դիտում է այն որպես մի ազգագրական շրջան՝ իր յուրօրինակ համալիր նկարագրով: Լալայանը երբեմն որևէ մեծ շրջան բաժանում է ազգագրական տեսանկյունից ավելի փոքր ենթաշրջանների՝ որոշ նյութեր հավաքելով ողջ շրջանի, որոշ նյութեր էլ առանձին ենթաշրջանների վերաբերյալ: Միաժամանակ նա տվյալ շրջանի բնակչությանը առանձնացնում է գաղթականներից՝ ուսումնասիրության օբյեկտ դարձնելով միայն բնիկներին: Այդ առիթով նա «Զանգեզուրի գավառ» աշխատության մեջ գրում է. «Մեր ներկա հետազոտության մեջ մենք միայն նրանց (գաղթականների – Ռ. Ն.) գյուղերը նկարագրեցինք, որպեսզի տեղագրական բաժինները փոքր ի շատե լրիվ կարողանայինք ներկայացնել, այնինչ մյուս, զուտ ազգագրական կետերում, մենք նրանց բոլորովին անուշադիր թողինք, հետազոտելով միմիայն բնիկ ժողովրդին, որպեսզի ազգագրական տեսակետից սխալներ արած չլինենք

և տարբեր սովորույթներ իրար չխառնեինք»[99]:

Ե. Լալայանը առաջինն էր, որ հայ ազգագրությունը հանեց տնայնագործական շրջանակներից, ազատվեց իր նախորդների աշխատանքների միակողմանիությունից, ազգագրական ուսումնասիրությունների համար մշակեց որոշակի համակարգ, հայ ազգագրությունը դրեց գիտական հիմքերի վրա: Դա է նրա մեծագույն ծառայությունը:

«Ազգագրական հանդեսի» Ա, Բ և Գ գրքերում տեղ գտած Ե. Լալայանի «Ջավախք» աշխատությունը նվիրված է նախկին Գուգարք նահանգի Ջավախք գավառին (ներկայիս Ախալքալաքի շրջան, Վրաստանի Հանրապետություն): Աշխատությունը կազմված է հետևյալ մասերից՝ «Պատմական համառոտ տեսություն» (էջ 117-124), ուր տրվում է Ջավախքի պատմական անցյալը հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջը, «Ջավախքի տեղագրությունը» (125-152)՝ լեռներ, լճեր, գետեր, կլիմա, բուսական և կենդանական աշխարհը, նշանավոր գյուղերը, հնությունները՝ եկեղեցիներ, ամրոցներ (153-172): Մյուս գլուխները նվիրված են Ջավախքի բնակչությանը (173-185), հանգամանորեն տրված են վիճակագրական տվյալներ (186-192) գավառում բնակվող հայերի, հայ բոշաների, ռուսների, վրացիների, հույների, թուրքերի, քրդերի, ինչպես նաև ազգաբնակչության տեղաշարժի (193-199), ժողովրդական լուսավորության մասին (218-223):

«Տնտեսական դրություն» բաժնում (200-217) նկարագրված են ինչպես գյուղացիների, այնպես էլ քաղաքացիների զբաղմունքները: Նյութական մշակույթից ներկայացված են բնակարան, զգեստ և զարդարանք բաժինները (227-231): «Ընտանե-

---

[99] **Լալայան Ե.,** Սիսիան // ԱՀ, գ. Գ, Թիֆլիս, 1898, № 1, էջ 194:

կան բարք» (233-319) բաժնում նկարագրված են ամուսնությունը և հարսանեկան սովորույթները, տղաբերքը և կնունքը, ընտանեկան կյանքը, ժողովրդական բժշկությունը, հոգու և հանդերձյալ կյանքի մասին սնահավատ պատկերացումները և այլն: Աշխատության վերջին բաժինը նվիրված է հավատքին և նշանավոր տոներին (320-379): Վերջապես՝ «Նշանավոր տոներ» (245-278) և «Հայ գրչագիրներ» (279-294) վերտառությամբ բաժինները զետեղված են «Ազգագրական հանդեսի» Բ գրքում:

«Ազգագրական հանդեսի» Բ և Գ գրքերում զետեղված է Ե. Լալայանի խմբագրությամբ գրված կոլեկտիվ «Վարանդա» աշխատությունը, որը նվիրված է Շուշիի գավառի ազգագրությանը (ներկայիս Արցախի Հանրապետության Շուշիի և Մարտունու շրջանները, Հադրութի շրջանի մի մասը): Այս աշխատությունը Լալայանը գրել է համահեղինակությամբ. բանահավաք Լ. Աթաբեկյանը կազմել է Վարանդայի վիճակագրությունը, Ղ. Տեր-Ղազարյանը նկարագրել է տնտեսական կենցաղը, «Ընտանեկան բարք» բաժնի «Հիվանդություն և բժշկություն» հատվածի վերաբերյալ նյութեր է գրառել նաև Հ. Տեր-Հովհաննիսյանը, իսկ Հ. Վ.ն («Տղաբերք և կնունք») և Ա. Բ.-ն («Ընտանեկան կյանքը») (որոնց ով լինելը հայտնի չէ)[100] մասնակցել են ընտանեկան կենցաղի նկարագրությանը: Աշխատության մեծ մասը գրել է Ե. Լալայանը: Այս աշխատությունը

[100] **Լալայանը Ե.,** «Վարանդա» աշխատության վերջում՝ ծանոթագրության մեջ, գրում է. «Բացի իմ հավաքած նյութերից՝ ինձ համար տարբեր գյուղերից նյութեր հավաքեցին Պ. Պ. Ալլահվերդյանը, Վարդապետյանը, Հովհաննիսյանը և ուրիշներ, որոնց շնորհակալություն եմ հայտնում» (տե՛ս ԱՀ, գիրք Գ, էջ 349): Հավանաբար նրանք նշված սկզբնատառերով գրված հեղինակներն են, որոնց գրառած նյութերը Ե. Լալայանը խմբագրել և տեղադրել է իր աշխատության մեջ:

ևս կազմված է նախորդ աշխատության սխեմայով[101]:

Ե. Լալայանի հաջորդ գործը «Զանգեզուրի գավառ» աշխատությունն է: Ձեռնարկելով պատմաազգագրական այս շրջանի ուսումնասիրությունը՝ Ե. Լալայանը նպատակահարմար է գտել այն բաժանել «ազգագրական տեսանկյունից անհրաժեշտ շրջանների (Սիսիան, Կապան)», դրանք ուսումնասիրել առանձին-առանձին, իսկ այնուհետև հավաքել այն նյութերը, որոնք ընդհանուր են ողջ գավառի համար: Սակայն Լալայանին հաջողվեց նկարագրել միայն Զանգեզուրի ոստիկանական շրջանի[102] (ներկայիս Գորիսի շրջան) և Սիսիանի ոստիկանական շրջանի[103] (ներկայիս Սիսիանի շրջան) ազգագրությունը, իսկ Կապանի շրջանի[104] վերաբերյալ տվել է միայն պատմական համառոտ տեսություն: Այդ իսկ պատճառով վերոհիշյալ «Զանգեզուր» և «Սիսիան» աշխատություններում բացակայում են այնպիսի բաժիններ, ինչպիսիք են հավատքը, տնտեսական դրությունը, վիճակագրական տեղեկությունները, կերակուրը և խմիչքը, ազգային իրավաբանական սովորույթները:

Ե. Լալայանի գրչին է պատկանում նաև «Գանձակի գավառ»[105] մեծածավալ ուսումնասիրությունը:

Նրա նշանավոր գործերից է «Բորչալուի գավառ»[106] աշխատությունը, որը նվիրված է Լոռու (Գուգարք) ազգագրությանը: Այս գործը հեղինակը ձեռնարկել է նախ և առաջ նահապետա-

---

[101] Տե՛ս ԱՀ, գիրք Բ. 1897, էջ 4-244, գիրք Գ, 1898, էջ 339-349:
[102] Տե՛ս ԱՀ, գիրք Դ, 1898, № 2, էջ 7-116:
[103] Տե՛ս ԱՀ, գիրք Գ, 1898, № 1, էջ 105-272:
[104] Տե՛ս ԱՀ, գիրք XII, էջ 175-202:
[105] Տե՛ս ԱՀ, գիրք Ե, 1899, էջ 213-360: 1900, 232-282, գիրք VII VIII, 1901, 255-270:
[106] Տե՛ս ԱՀ, գիրք VII-VIII, 1901, էջ 271-437, գիրք IX, 1902, էջ 197-262, գիրք X,1903, էջ 112-268, գիրք XI, 1904, էջ 33-128:

կան կյանքով ապրող Լոռու ազգագրության վերաբերյալ հինավուրց թանկագին նյութերը սերունդներին պահ տալու մտահոգությամբ, քանզի այն արագ կարող էր ոչնչացվել քաղաքային կենցաղավարության անցնելու պատճառով՝ պայմանավորված Թիֆլիս-Կարս կառուցվող երկաթուղով: Իր դաշտային բանահավաքչական տևական հետազոտությանը զուգահեռ՝ Լալայանը աշխատությունը գրելիս օգտվել է նաև տպագրված ու անտիպ վիճակում եղած նյութերից ու տեղեկություններից, որոնք վերաբերում էին ուսումնասիրվող գավառին, թեև «մատենագիրներից քաղած տեղեկությունների ամենաչնչին մասն է վերաբերում ժողովրդի կուլտուրական զարգացմանը»[107]:

Ե. Լալայանի «Նախիջևանի գավառ»[108] ուսումնասիրությունը ընդգրկում է «Գողթն» կամ Օրդուբադի՝ Վերին Ագուլիսի ոստիկանական և «Նախիջևանի ոստիկանական շրջան» կամ Նախճավան տարածաշրջանները: Նույն սկզբունքներով հրատարակվել է նաև Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք»[109] մեծածավալ աշխատությունը, որտեղ ներկայացված է Սևանա լճի ավազանի ազգագրությունը:

Ե. Լալայանը գրել է նաև «Շարուր Դարալագյազի գավառ»[110] աշխատությունը, որը, սակայն, անավարտ է և լրիվու-

---

[107] **Լալայան Ե.,** Բորչալուի գավառ, Թիֆլիս /ա.թ./, էջ 4:

[108] Տե՛ս Նախիջևանի գավառ, Ա մասն, Գողթն կամ Օրդուբադի ոստիկանական շրջան // ԱՀ, գիրք, XI, 1904, էջ 240-336, գիրք XIII, 1906, էջ199-226, գիրք XV, 1907, էջ 133-163:

[109] Տե՛ս ԱՀ, գիրք XIII, 1906, էջ 167-198, գիրք XV, 1907, էջ 164-205, գիրք XVI, 1907, էջ 8-65, գիրք XVII, 1908, էջ 86-125, գիրք XVIII, 1908, էջ 109-156, գիրք XIX, 1910, էջ 115-150, գիրք XX, 1910, էջ 31-60, գիրք XXIII, 1912, էջ 123-148, գիրք XXIV, 1913, էջ 51-59:

[110] Տե՛ս ԱՀ, գիրք XII, 1904, էջ 235-293, գիրք XIII, 1906, էջ 139-166, գիրք XIV,

թյամբ չի ընդգրկում ամբողջ գավառին վերաբերող ազգագրական նյութը: Գավառը բաժանելով երկու մասի՝ Լալայանը ներկայացրել է միայն նրա մի մասի՝ Դարալագյազի կամ Վայոց ձորի ազգագրությունը:

Ազգագրական շրջանների վերաբերյալ «Ազգագրական հանդեսում» տեղ գտած բացառիկ արժեքավոր ուսումնասիրություն է Ե. Լալայանի «Վասպուրական»[111] աշխատությունը: Նյութերը Ե. Լալայանը հավաքել է 1910 թ. Վասպուրական կատարած ճանապարհորդության ժամանակ, ինչպես նաև Արևելյան Հայաստանի այն վայրերում, ուր հայտնվել էին այդ նահանգից մազապուրծ փախած գաղթականները: Վասպուրականի վերաբերյալ աշխատանքը Ե. Լալայանը նախատեսել էր հրատարակել 6 հատորով, որոնք առանձին-առանձին պետք է ընդգրկեին՝ ա) ամբողջ Վանի նահանգի տեղեկագրությունը՝ պատմական և հնագիտական տեղեկություններով, բ) նահանգի բոլոր վանքերի նկարագրությունը, գ) ազգագրական տեղեկություններ Վանի, Շատախի, Մոկսի վերաբերյալ, դ) ժողովրդական հավատքը) «Վասպուրականի ձեռագրերի ցուցակը, զ) Վասպուրականի բանավոր գրականությունը ըստ բարբառների՝ հատորների բաժանված: Սակայն այս բանը հեղինակին չի հաջողվում: Հրատարակված աշխատությունը ընդգրկում է հետևյալ մասերը՝ Վասպուրականի ազգագրությունը, որտեղ մարդաբանական տեղեկություններ են տրված Վանի, Տոսպի և Հայոց ձորի բնակչության վերաբերյալ, մանրամաս-

---

1906, էջ 133-155:

[111] Տե՛ս ԱՀ, գիրք XX, 1910, 116-196, 197-202, գիրք XXI, 1911, 101-104, գիրք XXII, 1912, էջ 85-100, 117-197, գիրք XXIII, 1912, 149-196, գիրք XXIV, 1913, էջ 117-180, 181-232, գիրք XXV, 1913, էջ 20-60, 109-164, 189-215, գիրք XXVI, 1916, էջ 196-212:

նորեն նկարագրված են նրանց բնակարանները և դրանց ներսույթը, զգեստը և զարդեղենը՝ իրենց նկարներով, ընտանեկան բարքերը, ամուսնահարսանեկան, տղաբերքի, կնունքի սովորությունները, ընտանեկան կյանքը, մահը, թաղումն ու մեռելոցը: Հաջորդ բաժիններն են Վասպուրականի նշանավոր վանքերը՝ դրանց մի զգալի մասի չափագրումներով, ամբողջական համալիրների նկարներով, արձանագրություններով, տապանագրերով, տնայնագործությունը, որի տակ ներկայացված է Շատախի շալագործությունը: «Հավատք» խորագիրը կրող բաժնում[112] Ե. Լալայանն անդրադարձել է լեռների, քարի, ջրի, ջրի բուժիչ հատկությունների, բույսերի, ծառերի, թփերի, կենդանիների՝ թռչունների, սողունների, շան, գայլի, ոգիների (չար ու բարի), սրբերի տեղական պաշտամունքային դրսևորումներին: Սրանց վերաբերյալ լրացումներ է կատարել 1915-1916 թթ. փախստականներից հայ բանահյուսության վերաբերյալ դաշտային ազգագրական նյութեր հավաքող արշավախումբը ղեկավարելիս: Մի առանձին բաժին է նվիրված Վասպուրականի ասորիների ազգագրությանը: «Վասպուրականը» հիմնարար և արժեքավոր աշխատություն է տվյալ պատմաազգագրական շրջանի վերաբերյալ և արդյունք է հեղինակի մի քանի տարիների համառ աշխատանքի:

«Մուշ-Տարոն» աշխատությունը սկսում է «Զգեստ և զարդ» բաժնով՝ նկարագրելով կանանց, ապա՝ տղամարդկանց տարազների բարդ և անկրկնելի համալիրները՝ մշեցի փախստականների լուսանկարներով: Անդրադարձել է առօրյա և տոնական համալիրներին, գլխի բարդ հարդարանքներին, զարդերին, ագանելիքներին՝ ոտնամանների, գուլպաների տեսակնե-

[112] ԱՀ, գ. XXVI, էջ 196-212:

ին: Այնուհետև անդրադարձել է ամուսնության և հարսանեկան սովորույթներին ու ծեսերին. եզակի նյութ է հաղորդվում ամուսնական երկսեռ տարիքի, խնամիության աստիճանների, ամուսնությունն ըստ ազգության, տեղի և սոցիալական համակարգի, ամուսնական զանազան դեպքերի, օրորոցախազով ամուսնության, հարսնացուի ընտրության, աղջիկտեսի, նշանադրության, մինչև հարսանիքն ու պսակը երկուստեք խնամիական կապերի, այցելությունների կարգի, տոներին միմյանց խոնչա-բոխչա ուղարկելու, հարսանիքի նախապատրաստական աշխատանքների, տաշտադրոնքի, ազպալվածքի, հինադրեքի, փեսային սափրելու, հարս ու փեսայի զգեստներն օրհնելու, դրանց ուղեկցող երգերի, քավորի դերակատարության, բուն հարսանեկան և պսակի, ապա հետհարսանեկան արարողությունների՝ կթղայի՝ նորահարսին նվերներ հանձնելու, օժիտի, հարսին առաջին անգամ դարձ տանելու, փեսապատիվ սովորույթի և այլնի վերաբերյալ:

Առանձին բաժնով ներկայացված են մանկան ծննդի և կնունքի, անվանակոչման կարգի, քառասունքի, նորածնի մարմնակրթական դաստիարակության սովորույթները: Առանձին գլուխ են կազմում մահվան, հուղարկավորման և մեռելոցների արարողությունների նկարագրությունները: Ցավոք, այս աշխատության մեջ ամբողջապես և համալիր ձևով չեն ներկայացված Գր. Խալաթյանցի ծրագիր-հարցարանի բոլոր պահանջները, ինչպես դա արված է նախորդ աշխատություններում:

Իհարկե, Ե. Լալայանին չհաջողվեց ամբողջությամբ սպառել հայոց պատմաազգագրական շրջանների ազգագրական բնութագրումը, ինչպես պատմական հայրենիքի տարածքում, այնպես էլ սփյուռքում: Դա մեկ մարդու կամ նույնիսկ մեկ

սերնդի ուժերից վեր գործ է: Այստեղ կարևորն այն է, որ նա սկիզբ դրեց ու լայն ծավալով ներկայացրեց Հայաստանի ազգագրական շրջանների մի զգալի մասը՝ ըստ ազգագրական և տնտեսամշակութային երևույթների համադրման սկզբունքների: «Ազգագրական հանդեսի» 1896-1916 թթ. բանահավաքներից առաջինը Ե. Լալայանն էր, որին հաջողվեց պատմական Հայաստանի մի շարք շրջաններում ուսումնասիրություններ կատարել:

Պատմաազգագրական շրջանների վերաբերյալ իր աշխատություններում գիտնականը հույժ կարևոր ուշադրություն է դարձրել նաև ժողովրդագրությանը, որը ներկայացված է բնակավայրերի, տների ու բնակչության բացարձակ թվերով, նրանց սեռատարիքային կազմով, ազգային, դավանաբանական ու դասակարգային պատկանելությամբ: Կարևոր տեղ է հատկացված բնակչության շարժերին (ամուսնություն, ծնունդ, մահ), որոնք ներկայացված են ըստ տարեթվերի՝ ազգային ու սեռատարիքային կազմով, իսկ արդյունքում բնակչության աճի տեմպերն արտահայտող տվյալներն են: Ուրույն տեղ է հատկացված բնակչության տեղաշարժերին, շարժընթացներին ու խտությանը, ինչպես նաև նրանց տնտեսական գործունեությանը վերաբերող ցուցանիշներին:

Ցավոք, գիտնականի գրի առած նյութերի մի զգալի մասը, ինչպես ասվեց, դեռևս հրատարակված չէ, շատ ծրագրեր մնացին անկատար: Գիտնականը ծրագրեր էր կազմել «հայկական տներ», «հայկական զգեստներ ու զարդարանքներ», «հայկական կերակուրներ ու խոհանոց», «հայկական ամուսնության ու հարսանիքի սովորություններ», «հայկական խաղեր ու պարեր», «հայկական ժողովրդական հավատք», «հայկական տոներ», մի խոսքով՝ հայ ազգագրության գրեթե բոլոր ոլորտների

վերաբերյալ, որոնք չհասցրեց կյանքի կոչել:

Նրա տեսադաշտից չվրիպեցին նաև Հայաստանի ազգային փոքրամասնությունների տեղաբաշխվածությունը և նրանց էթնոմշակութային փոխառնչակցությունը հայերի և միմյանց նկատմամբ: Հանդեսի էջերում ուշագրավ նյութեր են հրատարակվել բոշաների, քրդերի, ասորիների, պարսիկների, տեղի ռուս և ուկրաինացի աղանդավորների, ուտիների, վրացիների, հույների, թուրքերի և այլոց ազգագրական երևույթների վերաբերյալ:

«Ազգագրական հանդեսի» բոլոր հիմնական բաժինները ազգագրական հետազոտությունների հիմքում ունեցել են որևէ (մեծ կամ փոքր) բնատարածք՝ իր բնակչությամբ և մշակույթով՝ չափանիշ ընտրելով երբեմն ժամանակի վարչատարածքային բաժանումը, երբեմն էլ՝ ավանդութային կենցաղամշակութային համալիրը:

Հայաստանի պատմաազգագրական շրջաններին նվիրված Ե. Լալայանի համալիր նյութերն ու հրատարակությունները մինչև օրս պահպանել են իրենց արդիականությունն ու թարմությունը, թեպետ քիչ չեն նաև տպագիր պարբերականներում ու ժողովածուներում նրա մյուս գործերը, որոնք ևս արժանի են հանգամանալի քննության: Այսպիսով՝ իր կյանքի 46 տարիները Ե. Լալայանը անձնվիրաբար ծառայեցրեց հայ ազգագրությանն ու բանահյուսությանը, գերազանցապես նյութերի հավաքման ու հրատարակման գործին: Այն, ինչ արել է Ե. Լալայանը, իսկական գիտական սխրանք է: Ըստ էության, Ե. Լալայանի կատարածը մի այնպիսի գործ էր, որպիսին հենց այդ նույն ժամանակ եվրոպական երկրներում կատարում էին պետությունների հովանավորությունը վայելող ամբողջ գիտահետազոտական հաստատություններ և ընկերություններ:

Այսպիսով՝ Ե. Լալայանը պատմաազգագրական շրջանների ուսումնասիրության հարուստ ժառանգություն թողեց: Հիմնականում հետևյալներն են՝ 1. Ջավախքի բուրմունք (Թիֆլիս 1892): 2. Ջավախք կամ Ախալքալաքի գավառ. ազգագրություն (ԱՀ, գ. I և II): 3. Վարանդա. ազգագրություն (ԱՀ, գ. II): 4. Սիսիան. ազգագրություն (ԱՀ, գ. III): 5. Զանգեզուր. ազգագրություն (ԱՀ, գ. III): 6. Ղափան. ազգագրություն (ԱՀ, գ. XII): 7. Գանձակի գավառ. Ազգագրություն (ԱՀ, գ. V, VI և VII-VIII): 8. Բորչալուի գավառ. Ազգագրություն (ԱՀ, գ. VII-VIII, IX, X, XI): 9. Գողթան գավառ. Ազգագրություն (ԱՀ, գ. XI, XII): 10. Նախիջևանի ոստիկանական շրջան. ազգագրություն (ԱՀ, գ. XI, XIII և XIV): 11. Վայոց ձոր. ազգագրություն (ԱՀ, գ. XII, XIII, XIV), որը լույս է տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ: 12. Նոր Բայազետի գավառ. ազգագրություն (ԱՀ, գ. XIV, XVI, XVII, XVIII, XX, XXII, XXIV), լույս է տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ: 13. Պեղումներ Նոր Բայազետի գավառում (ԱՀ, գ. XV, XIX), լույս է տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ: 14. Գանձակի գավառ. Մալականներ. Ազգագրություն (ԱՀ, գ. XVII, XVIII): 15. Ապարանի բանահյուսությունից (ԱՀ, գ. XIX): 16. Ջավախքի բանահյուսությունից (ԱՀ, գ. XIX): 17. Սևանի վանքը (ԱՀ, գ. XVII), լույս է տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ: 18. Վայոց ձորի վանքերը (ԱՀ, գ. XXVI): 19. Վասպուրականի ազգագրությունը (ԱՀ, գ. XX): 20. Վասպուրականի ասորիները (ԱՀ, գ. XXIV), լույս է տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ: 21. Վասպուրականի բանահյուսությունը (ԱՀ, գ. XX, XXI, XXII, XXIII, XXIV, XXV): 22. Վասպուրականի հավատքը (ԱՀ, գ. XXII, XXVI): 23. Տնայնագործությունը Վասպուրականում (ԱՀ, գ. XXV): 24. Ծիսական կարգերը հայոց մեջ (ԱՀ, գ. XXI, XXIII, XXV): 25. Մուշ-Տարոն. ազգագրություն (ԱՀ, գ.

XXII): 26. Ցուցակ հայերեն ձեռագրերի Վասպուրականի (Թիֆլիս, 1915): 27. Ուտիների ազգագրությունից // «Տեղեկագիր Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի», թիվ 1, 1926: 28. Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում // «Տեղեկագիր Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի», թիվ 3, 1928: 29. Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ // «Տեղեկագիր Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի», թիվ 5, 1931: 30. Մարգարիտներ հայ բանահյուսության, հ. 1-3, Թիֆլիս, Վաղարշապատ, 1914-1915: 31. Դամբարանների պեղումները խորհրդային Հայաստանում (1931):

Բազմավաստակ գիտնականը չհասցրեց հրատարակել բազմաթիվ աշխատություններ, որոնցից են՝ 1. Հայկական տոներ, 2. Հայկական առածներ, 3. Հայկական հանելուկներ, 4. Էջմիածնի գավառը, 5. Սասունցիների ազգագրությունը, 6. Ուտիների ազգագրությունը, 7. Երևանի գավառը (ընդարձակ տեղագրական, հնագիտական ու պատմական, անավարտ), 8. Լոռու գավառի հեքիաթները, 9. Նոր Բայազետի գավառի հեքիաթները, 10. Լենինականի գավառի հեքիաթները, 11. Կոտայքի հեքիաթները, 12. Եղվարդի հեքիաթները, 13. Տնայնագործությունը Հայաստանում, Հայկական արձանագրությունների ժողովածու, 15. Ցուցակ հայ ձեռագրերի 3 ստվար հատոր, 16. Հայկական բնակարանը, 17. Հայկական կերակուրներ և խոհանոց, 18. Հայկական խաղեր ու պարեր, 19. Հայկական ամուսնության ու հարսանեկան սովորությունների էվոլյուցիան (անավարտ):

Ներկայումս նման կարգի հետազոտությունը մասնագետ ազգագրագետների կողմից գրեթե դադարել է: 2014 թ. տողերիս հեղինակի կողմից այս հրատապ հարցի վերաբերյալ հրա-

տարակված մի հոդվածում գրել ենք. «Ցավոք, ներկայումս ավանդական ազգագրությունը մոռացության է մատնվում ազգագրագետ բանահավաքներիս աչքի առաջ: Պատմական Հայաստանի 9/10 մասի և առանձնապես սփյուռքի ազգագրությունը կորստյան է մատնված: Մենք ցարդ պետական մոտեցում չունենք հատկապես Արևմտյան Հայաստանի ազգագրության ուսումնասիրության նկատմամբ: Այս աննպաստ վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է, որ կորստյան մատնվող ազգագրական նյութերը փրկվեն, առանձին շրջաններում և մարզերում դեռևս մնացած ազգագրական հետաքրքրություն ներկայացնող փաստերը գրի առնվեն: Մի՞թե հնարավոր չէ շարունակել Ե. Լալայանի, Ս. Լիսիցյանի, Վ. Բդոյանի, Դ. Վարդումյանի և մյուսների թողած ավանդները՝ ավարտին հասցնելով պատմական Հայաստանի բոլոր պատմաազգագրական շրջանների ուսումնասիրությունը՝ պատրաստելով նաև ազգագրագետ կադրեր: Նշված խնդիրը պետք է բարձրացնել պետական մակարդակի: Հայաստանի Հանրապետության պատմաազգագրական շրջանների ուսումնասիրության առումով մենք դեռևս չունենք համապարփակ հետազոտություններ, էլ ուր մնաց Արևմտյան Հայաստանը և ժամանակակից սփյուռքը»[113]: Նույն հոդվածում մենք կարևորել ենք նաև ավելի ընդլայնված և համապարփակ նոր հարցարան ունենալու անհրաժեշտությունը:

---

[113] **Նահապետյան Ռ.,** Հայաստանում ազգագրական նյութերի գրառման սկզբնավորման պատմությունից // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայ ժողովրդական մշակույթ, XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 31-40:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

Հետադարձ կապ

- **Առաջադրանքներ**

Գրել ռեֆերատ՝ Ե. Լալայանը որպես ազգագրագետ։

Գրել ռեֆերատ՝ «Ազգագրական հանդեսի» դերը հայ ազգագրության՝ իբրև գիտության կայացման և զարգացման գործում։

- **Ինքնաստուգման հարցեր**

1. Նշել, թե ի՞նչ է նշանակում ազգագրության ռեգիոնալ-տարածքային ամբողջական ուսումնասիրություն։
2. Այդ նպատակով պատմական Հայաստանի ո՞ր գավառներն ու շրջանները հասցրեց ուսումնասիրել Ե. Լալայանը։
3. Ե՞րբ հիմնադրեց «Ազգագրական հանդեսը» և ի՞նչ նպատակով։
4. Ե՞րբ և ի՞նչ նպատակներով Ե. Լալայանի ջանքերով հիմնադրվեց Հայոց ազգագրական հրատարակչական ընկերությունը և ե՞րբ այն վերափոխվեց Հայոց ազգագրական ընկերության։
5. Ովքե՞ր համախմբվեցին «Ազգագրական հանդեսի» շուրջը և ի՞նչ աշխատություններ հրատարակվեցին։
6. Ի՞նչ պատճառներով դադարեցին գործել Հայոց ազգագրական ընկերությունը և «Ազգագրական հանդեսը»։
7. Բացի ազգագրական գործերից՝ հանդեսում նաև ի՞նչ բնույթի ուսումնասիրություններ հրատարակվեցին։
8. Եվրոպացի ո՞ր գիտնականների գործերը թարգմանեց հայերեն և ի՞նչ նպատակով։
9. Երբ և ի՞նչ նպատակով Ե. Լալայանը կազմակերպեց

ազգագրական արշավախումբ և ի՞նչ արդյունքներ ձեռք բերվեցին:

Բանավոր ներկայացնել թեմայի հիմնական դրույթները:

- **Թեմայի գնահատում /անդրադարձ/ Գնահատման թերթիկ**
- **Գրիր դասախոսության ամենակարևոր գաղափարը**

Մեկ բան, որ դու կարող ես կիրառել

Հիմնական և լրացուցիչ գրականություն

Հիմնական

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 27-28:
2. **Լալայան Ե.,** Երկեր, Հինգ հատորով, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Երևան, 1983:
3. **Լալայան Ե.,** Երկեր, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., հ. 2, Երևան, 1988:
4. **Լալայան Ե.,** Երկեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., հ. 3, Երևան, 2004:
5. **Լալայան Ե.,** Երկեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., հ. 4, Երևան, 2021:
6. **Մելիք-Փաշայան Կ. Վ., Նազինյան Ա. Մ.,** Երվանդ Լալայանի կյանքն ու գիտական գործունեությունը//Երվանդ Լալայան, Երկեր, հ. 1, 732:
7. **Նահապետյան Ռ.,** Երվանդ Լալայանի և «Ազգագրական հանդեսի» դերը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Եր., ԵՊՀ հրատ., 2019, էջ 192-214:
8. **Նահապետյան Ռ.,** Ե. Լալայանը հայ ազգագրության

ուսումնասիրության պատմաազգագրական շրջանացման մեթոդի սկզբնավորող// Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2 (XVIII դ. երկրորդ կես – 1980-ական թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 214-235:

9. **Меликсет Беков Л. Н.,** Армянский этнограф-археолог Е. А. Лалаян // СЭ, 1936, N 4-5.

Լրացուցիչ

1. **Ադումյան Ա. Հ.,** Երվանդ Լալայանի անտիպ նամակներից//«Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ, 1915. Թիվ 8, էջ 71-80:

2. **Ակինյան Ն.,** Ե. Լալայան (մահախոսական) // ՀԱ, Վիեննա, 1931, թիվ 3-5:

3. **Լալայան Ե.,** Համառոտ տեսություն ազգագրական ընկերության նպատակների և ամբողջ գործունեության, Թիֆլիս, 1914:

4. **Մելիք-Փաշայան Կ. Վ.,** Երվանդ Լալայան (Ծննդյան 100-ամյակի առթիվ), ՊԲԸ, 1964, թիվ 3, էջ 29-41:

5. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011, թիվ 3, էջ 132-148:

6. **Նազինյան Ա. Մ.,** Երվանդ Լալայանը բանահավաք-բանագետ//«Տեղեկագիր», հաս. գիտ., ՀՍՍՀ ԳԱ, 1965, N8, էջ 63-70:

7. **Սարգսյան Ա.,** Ե. Լալայանի կյանքն ու գործունեությունը արտացոլող փաստաթղթեր // ԲՀԱ, Երևան, 1963, N1:

8. **Վարդանյան Ս.,** Զավախքի բանահյուսական մշակույթը Երվանդ Լալայանի գրառումներում (ծննդյան 150-ամյակի առթիվ)//ՊԲՀ, 2014, թիվ 2, էջ 45-64:

9. **Վարդումյան Դ.,** Ազգագրություն // Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 926-928:

Թեմա 5. Ազգագրական գիտությունը խորհրդային տարիներին (1920-1980-ական թթ.)

5.1. Խորհրդահայ ազգագրության հակիրճ բնութագրությունը 1920-1940-ական թթ.

Հայ ազգագրական գիտությունը խորհրդային շրջափուլ թևակոխեց իբրև պատմամշակութային գիտության լիովին կազմավորված ուրույն բնագավառ: Խորհրդային կարգերի հաստատումով բոլորովին նոր պայմաններ ստեղծվեցին հայ ազգագրության զարգացման համար. ավելի որոշակի ու հստակ դարձան նրա անելիքները՝ դրանք համապատասխանեցվեցին նոր կյանք կառուցող մարդկանց խնդիրներին, որով այն դարձավ ավելի նպատակային:

Երվանդ Լալայանի և մի շարք այլ գիտնականների հետազոտությունները հիմնավոր ատաղձ դարձան հետագայում, արդեն խորհրդային կարգերի օրոք հայ ազգագրության նորովի զարգացման, որպես պատմամշակութային գիտության լիովին կազմավորված ուրույն բնագավառ լինելու համար: Այն, որպես այդպիսին, ձևավորվել էր ժամանակի եվրոպական և ռուսական ժողովրդագիտության արդեն որոշակի կերպարանք ստացած ավանդույթների հիմամբ՝ խարսխված բուն հայ մատենագրական և դաշտային հարուստ ու բազմազան տվյալների վրա:

Խորհրդային շրջանում հայ ազգագրության ընթացքը նույնպես կարելի է բաժանել զարգացման երկու ժամանակաշրջանի.

ա) 1920-1940-ական թթ., երբ տակավին գործում էին դեռևս նախահեղափոխական շրջանից հայտնի բազմավաս-

տակ ազգագրագետներ և բանագետներ (Ե. Լալայան, Խ. Սամուելյան, Ստ. Լիսիցյան, Գ. Չուրսին, Ի. Պետրուշևսկի, Մ. Աբեղյան, Հ. Օրբելի և այլք), որոնք հավաքչական գործունեությանը զուգընթաց հրատարակեցին մի շարք ընդհանրացնող աշխատություններ:

բ) 1950-1980-ական թթ., երբ ասպարեզ եկավ ազգագրագետների նոր սերունդ, որը, հենվելով ավանդականի վրա, գիտության տվյալ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան, ծավալեց հավաքչական և հետազոտական լայն գործունեություն Հայաստանի պատմության թանգարանում, ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնում ու Հայաստանի ազգագրության թանգարանում[114]:

Նյութական հնարավորություններ ու հեռանկարներ բացվեցին ինչպես գիտահետազոտական, այնպես էլ դաշտային բանահավաքչական աշխատանքների ծավալման համար: Սակայն կար գլխավոր՝ գաղափարախոսական խոչընդոտը, որը կաշկանդում էր մի կողմից՝ անցյալի ժառանգության ամբողջական օգտագործումն ու արտասահմանյան գործընկերների հետ մասնագիտական փոխշփումները, մյուս կողմից՝ աշխարհասփյուռ հայերին որպես էթնիկ ամբողջություն դիտարկելն ու նրանց պատմաազգագրական ուսումնասիրությունը: Խորհրդային ազգագրության խնդիրների ու հեռանկարների, սոցիալիստական գյուղի վերափոխումների անդրադարձների վերաբերյալ պահանջներ էին առաջ քաշվում միութենական ազգագրության կողմից: Սոցիալիստական գաղա-

---

[114] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրական գիտությունը խորհրդային շրջանում (1920-1940 թթ.)//Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 136-175:

փարաբանության հիմնական պահանջներին համապատասխան քաղաքականացվում էր հասարակական գիտությունների ուսումնասիրությունը, գլխավոր խնդիր էր դառնում պետական իշխանության ու կոմունիստական կուսակցության վարած քաղաքականության քարոզչությունը, սոցիալիստական վերափոխումները ներկայացնելը: Գաղափարական այս պարտադրանքի պայմաններում հայագիտության, այդ թվում՝ նաև ազգագրական գիտության ապահով և անկաշկանդ զարգացումը, ըստ էության, դարձավ անհնարին: Այդուհանդերձ, հայ ազգագրական գիտության ձեռքբերումները խորհրդային տարիներին ակնառու էին:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին նոր կադրերի մեծ պակաս կար, բուհերի ուսումնական ծրագրերում բացակայում էր ազգագրագետ կադրեր պատրաստելու պահանջը, Մոսկվայի և Լենինգրադի բուհերում շատ թույլ էր կովկասագիտական առարկաների դասավանդման մակարդակը, հույս չէր ներշնչում դրանցում հայ ազգագրագետ կադրեր պատրաստելու գործընթացը: Մի կողմից երկրի տնտեսական ծանր վիճակը, մյուս կողմից կադրերի պակասը բացասաբար էին անդրադառնում հայ ազգագրության հավաքչական և գիտահետազոտական աշխատանքները արդյունավետ իրականացնելու վրա: Հարկավոր էր մի նյութական հիմք, որի վրա հենվելով՝ հնարավոր կլիներ ստեղծել ու աճեցնել նոր ազգագրական կադրեր: Խորհրդային ժամանակաշրջանում՝ 1920-1930-ական թթ. դժվարին նյութական պայմաններում, բայց պետության անմիջական իրավասությամբ, այդուհանդերձ, նախորդ սերնդի անբասիր աշխատանքով ստեղծվեցին ազգագրական գիտության զարգացման հնարավորություններ: Ազգագրական նյութերի հավաքումը կատարվում էր այլ պայ-

մաններում: Հայ ժողովրդի արևելահայ հատվածը ձեռնամուխ է եղել երկրի սոցիալիստական վերակառուցմանը: Հարկավոր էր հետևել արագորեն կատարվող տնտեսական, հասարակական և մշակութային վերափոխությունների ընթացքին և ճշգրտորեն լուսաբանել դրանց շնորհիվ ժողովրդի կենցաղի ու սովորությունների մեջ տեղի ունեցող փոփոխությունները: Միաժամանակ անհրաժեշտ էր լրացնել ժողովրդի այն բոլոր ազգագրական խմբերի հետազոտությունը, որոնք մինչ այդ բոլորովին դուրս էին մնացել ուսումնասիրողների տեսադաշտից կամ էլ թերի էին ուսումնասիրվել: Եթե սա դյուրին էր կատարել արևելահայերի նկատմամբ, քանի որ նրանք մտնում էին Սովետական Միության կազմի մեջ, ապա գործը բարդանում էր արևմտահայերի հարցում: Անմատչելի էր Արևմտյան Հայաստանը, ուր հայություն գրեթե չէր մնացել: Խորհրդային Հայաստանում էին ապաստանել թուրքական բարբարոսություններից ճողոպրած արևմտահայերի բեկորները, որոնք տեղավորվել էին զանազան բնակավայրերում: Սրանք մանրանկարային ձևով ներկայացնում էին գրեթե ամբողջ արևմտահայ մշակույթը, որը կարող էր կորչել, եթե չհաստատագրվեր:

5.2. Խորհրդային Հայաստանի գիտական և մշակութային առաջին հաստատությունները 1920-1940-ական թթ.

5.2.1. Հայաստանի պետական պատմական թանգարան

Ձեռագրական հավաքածուներ կազմելու և վանքերում, մենաստաններում ու եկեղեցիներում պահպանելու ավանդույթին հակառակ, պետականության բացակայության պայմաններում, բացառությամբ առանձին դրվագների, դարերի ընթացքում անհնարին է եղել նյութական մշակույթի արժեքները ժողովելը և թանգարանային հավաքածուներ կազմելն ու պահպանելը: Բայց նյութական մշակույթի արժեքներով հարուստ վայրերը բնական թանգարանների վերածելով՝ ամենայն հոգատարությամբ ու գուրգուրանքով պահպանել, փրկել է դրանք ոչնչացումից: Եվ եթե այսօր մեզ են հասել բազմաբովանդակ արձանագրություններ, ճարտարապետական և կիրառական արվեստի նմուշներ, դրամներ, զարդարանքի ու շատ այլ իրեր, ապա դա հնությունները սրբությամբ ու երկյուղածությամբ պահպանելու հայ ժողովրդի անգնահատելի սովորության շնորհիվ էր[115]:

XIX դ. 50-60-ական թվականներին խնդիր է առաջանում օտար քաղաքներից բուն երկիր տեղափոխելու հայ մշակույթի որոշ գանձեր: Մեծանուն հայրենասեր Խրիմյան հայրիկը Պոլսից Վան-Վարագում իր դպրոցում հիմնում է նաև տպարան և թանգարան: Իսկ Էջմիածնի իր ստեղծած թանգարանը նոր հավաքածուներով է հարստանում՝ Առաջին աշխարհամարտի

---

[115] Տե՛ս **Բդոյան Վ.**, Հայկական ՍՍՀ պետական պատմական թանգարանը // «Էջմիածին», 1947, N 7-8, էջ 47-52:

տարիներին Արևելյան Հայաստան ներգաղթած հայ ժողովրդի հատվածներից:

Թանգարան գոյություն ուներ նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանին կից: Արևելահայերի համար մշակութային օջախ էր Թիֆլիսը. XIX դ. 70-80-ական թթ. այստեղ կազմակերպված Կովկասյան թանգարանում էին կենտրոնացված նաև հայկական նյութական մշակույթի արժեքներ:

Թանգարան էր կազմակերպվել նաև Նոր Նախիջևանում՝ Հայկական համայնքի կողմից: Նշանակալից երևույթ էր Ն. Մառի հիմնած թանգարանը (1904), որտեղ հավաքված էին Անիի պեղումների ընթացքում հայտնաբերված իրերը: Թանգարանը կոչվում էր «Անվո հնադարան»: Սակայն նշված թանգարանները զարգացման ու ընդարձակման հեռանկարներ չունեին, իրերն էլ մեծ մասամբ տեղափոխվում էին եվրոպական մայրաքաղաքների թանգարանները:

Ի վերջո, Հայաստանի Առաջին հանրապետության պառլամենտի 09.09. 1919 թ. N439 ընդունած օրենքով հիմնադրվում է Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարանը, որի առաջին տնօրենը եղել է Վ. Ախիկյանը, իսկ երկու ամիս անց՝ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը:

Այցելուների համար թանգարանը բացվել է 1921 թ. օգոստոսի 20-ին «Գեղարվեստական թանգարան» անվանումով: Նույն թվականի ձմռանը Ե. Լալայանը Հայաստանի կառավարության միջնորդությամբ և օժանդակությամբ Թիֆլիսից Երևան է տեղափոխում Հայոց ազգագրական ընկերության՝ Ե. Լալայանի ջանքերով հիմնված թանգարանն՝ իր ամբողջ գույքով և կայքով, ու մասնագիտական գրադարանը՝ 20 հազար գրքով: Նրա անմիջական ղեկավարությամբ թանգարանում կազմակերպվում են հնագիտական և ազգագրական բա-

ժիները, և նա դառնում է դրանց առաջին վարիչը։ 1922 թ. Մոսկվայից Երևան են տեղափոխվում նաև Լազարյան ճեմարանի և Նոր Նախիջևանի հայկական համայնքի ազգագրական արժեքների հավաքածուները։ Նույն թվականի վերջերին թանգարանը վերանվանվում է Պետական կենտրոնական թանգարան։ Թանգարանը այնուհետև հարստացավ այլ տեղերից ձեռք բերված մի շարք արժեքներով, այդ թվում՝ նաև պատմագրական, արխիվային նյութերով։ Այդ ժամանակ պետական կենտրոնական թանգարանը ուներ բոլոր տվյալները՝ կազմակերպելու առանձին բաժիններ։

Գոյանում են՝ հնագիտական, ազգագրական, գեղարվեստական և պատմագրական բաժինները։ 1922 թ. վերջերին Մ. Սարյանի զբաղվածության պատճառով Ե. Լալայանը ժամանակավորապես դառնում է թանգարանի տնօրենը։ Նա 1926 թ. այստեղ է տեղափոխում «Անվո հնադարանի» բեկորները, որը Առաջին աշխարհամարտի ծանր օրերին մեծ դժվարությամբ հասցվել էր Սանահին։ 1929 թ. թանգարան է տեղափոխվում XIX դ. վերջերին Մ. Խրիմյանի կազմած Էջմիածնի վանքի ազգագրական թանգարանը։ Թանգարանի հավաքածուները (15.289 առարկա) համալրվեցին Հայաստանի և Անդրկովկասի հայաբնակ շրջաններից գիտարշավների միջոցով պարբերաբար հավաքված նյութերով։ Բացի այդ, գեղարվեստական բաժնի համար Մոսկվայի ու Լենինգրադի թանգարաններից ստացվում են ռուսական ու եվրոպական նշանավոր նկարիչների ու քանդակագործների մի շարք ստեղծագործություններ։ Հավաքված հնագիտական և ճարտարապետական նոր նյութերը հնարավորություն են տալիս ստեղծելու նաև ճարտարապետական բաժին (1930 թ.), որի առաջին վարիչը դառնում է Թ. Թորամանյանը։ Սրանով բոլորվում է Պե-

տական կենտրոնական թանգարանի կազմակերպման առաջին շրջանը։ 1931թ. այն վերանվանվում է «Կուլտուր-պատմական թանգարան»։

1935 թ. թանգարանը բաժանվում է երեք առանձին թանգարանների։ Հնագիտության, ազգագրության և ճարտարապետության բաժինների հիման վրա ստեղծվում է ներկայիս «Պատմության թանգարանը», իսկ թանգարանի երբեմնի համապատասխան նյութերով ստեղծվում են «Գրական թանգարանը» (այժմ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան), որին հանձնվեց 301 առարկա և 1298 ձեռագիր։ Գեղարվեստական բաժնի հիման վրա (ղեկավար՝ Ռ. Դրամբյան) կազմակերպվեց «Կերպարվեստի թանգարանը» (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ), հանձնվեց 1660 առարկա։

Պատմության թանգարանի ազգագրության բաժնի վարիչը ի սկզբանե մինչև 1928թ. Ե. Լալայանն էր, իսկ 1928-1946 թթ.՝ Ստ. Լիսիցյանը։ Բաժինը համալրվեց մասնագետներով, կազմվեցին հայ ազգագրության գիտական ուսումնասիրությունների ծրագրեր։ 1931-1938 թթ. Ստ. Լիսիցյանի ղեկավարությամբ կազմակերպվեցին գիտահետազոտական և հավաքչական արշավախմբեր Հայաստանում և նրա հարակից շրջաններում՝ Զանգեզուր-Սյունիք-Գորիս (1931), Մեղրի-Կապան (1932), Լոռի-Ղազախ (1934-1935), Ջավախք (1936), Սևանի ավազան (1938)։ Ներկայումս բաժինը կրում է Ստ. Լիսիցյանի անունը։

Թանգարանը այդ տարիներին ներկայացնում էր Հայաստանի մշակույթի և պատմության ամբողջական պատկերը նախապատմական ժամանակներից մինչև մեր օրերը։ Պատմության թանգարանն էլ հենց այս շրջափուլում դարձավ այն օջախը, որտեղ ծավալվեցին գիտահետազոտական աշխատանքները նաև ազգագրության ոլորտում։

5.2.2. Գիտական մյուս հաստատությունները Խորհրդային Հայաստանում 1920-1940-ական թթ.

Խորհրդային Հայաստանի գիտական առաջին հիմնարկը հիմնվում է 1921 թ. փետրվարին Էջմիածնում՝ «Կուլտուրպատմական ինստիտուտը»՝ գիտական հիմունքներով Հայաստանի ժողովրդական մշակույթի ուսումնասիրության նպատակով: 1921-1922 թթ. լույս է ընծայվում «Բանբեր Հայաստանի գիտության ինստիտուտի» վերնագրով տարեգիրքը, որտեղ ի շարս հայագիտական այլ արժեքավոր գործերի լույս են տեսնում Խ. Սամուելյանի «Տոտեմիզմը հայոց մեջ» և Լ. Մելիքսեթ-Բեկի «Արտավազդի և Միհերի հետքերը Վրաստանում» ազգագրական և բանագիտական արմատներ ու միտվածք ունեցող հետազոտությունները (տե՛ս «Բանբեր Հայաստանի գիտության ինստիտուտի», գիրք Ա և Բ, էջ 15-34, 93-104):

1922 թ. մայիսից ինստիտուտը վերանվանվում է «Հայաստանի գիտական ինստիտուտ»՝ հետևյալ բաժանմունքներով. ա) հնագիտական, ազգագրական, գեղարվեստական, պատմության, բ) լեզվագիտական և ցեղաբանական, գ) բանասիրական, դ) պատմական-հասարակագիտական:

1925 թ. հունվարին Երևանում այն ակադեմիական կառուցվածքով վերածվում է բարձրագույն գիտահետազոտական հիմնարկի՝ ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի (նախագահ՝ Մ. Աբեղյան): Ինստիտուտը ուներ իր գիտական պարբերականը՝ «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի»: Ինստիտուտի գիտական տեղեկագրում էր հրատարակվում 1920-30-ական թթ. ազգագրական, հնագիտական, բանահավաքչական աշխատությունների մի զգալի մասը: Ազգագրական և բանահյուսական նյութեր գրի առնելու

նպատակով ինստիտուտն իր աշխատակիցների միջոցով 1926-1928 թթ. հատուկ գիտարշավներ է կազմակերպում հանրապետության տարբեր շրջաններ: Այդ գիտարշավներից մեկը գլխավորում է Ե. Լալայանը: Մյուս գիտարշավը՝ երաժշտագետ Սպիրիդիոն Մելիքյանի գլխավորությամբ, նույն թվականին Հրազդանի (Ախտայի) և Կոտայքի գյուղերում ձայնագրում է 50 ժողովրդական երգ[116]: 1927 և 1928 թթ. Սպիրիդոն Մելիքյանի գլխավորությամբ գիտարշավը մեկնում է Արագածի շուրջն ընկած սասունցիների գյուղերը, Ապարանի, Ստեփանավանի, Փամբակի շրջանները, և գրի են առնվում շուրջ 360 ժողովրդական երգեր: Այդ գիտարշավները միտված էին հայրենի բառն ու բանը մոռացությունից փրկելու նպատակին, որին էլ նվիրված գիտաժողով է տեղի ունենում (1928)[117]:

Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի հիմքի վրա 1931 թ. կազմակերպվում է Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտը, որն իր առաջնահերթ խնդիրներից էր համարում կորստյան ենթակա ազգագրական և բանահյուսական նյութերի հայտնաբերումը, գրառումը և ուսումնասիրությունը:

Ազգագրության բնագավառում 1920-ական թթ. կեսերին կարևոր դեր խաղաց նաև ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտը, որը գտնվում էր Թիֆլիսում: Այստեղ աշխատում էին հայ ազգագրությամբ ու հնագիտությամբ զբաղվող մի շարք գիտնականներ, այդ թվում՝ Ստ. Լիսիցյանը, Լևոն Մելիքսեթ-Բեկը: Վերոհիշյալ հաստատությունները անհատական ուղևորությունների, գոր-

---

[116] Տե՛ս «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», 1927, № 2, էջ 220-225 (Ե. Լալայանի հաշվետվությունը):

[117] Տե՛ս «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», 1928, № 4:

ծուղումների ու խմբարշավների միջոցով հսկայական գործ կատարեցին թանգարանային արժեքների ձեռք բերման և ազգագրական նյութեր գրի առնելու տեսանկյունից։

Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտին (1935 թ.) փոխարինած Պատմության և գրականության ինստիտուտը 1934-1939 թթ. հաջողությամբ շարունակում ու զարգացնում է նախորդ ինստիտուտի աշխատանքները։ Ինստիտուտը հրատարակում էր «Տեղեկագիր ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի» գիտական պարբերականը։ Հայագիտության հետագա զարգացման տեսակետից կարևոր նվաճումներից է նաև 1935 թ. ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիմնումը, որոնց հիման վրա 1943 թ. հիմնվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան։

1939 թ. մայիսին Հայաստանի կառավարության հատուկ որոշումով՝ մեծ հանդիսավորությամբ նշվում է «Սասունցի Դավիթ» ժողովրդական դյուցազնավեպի հազարամյա հոբելյանը։ Դա ազգային իսկական մի տոն էր, հայոց հնադարյան մշակույթի յուրահատուկ ստուգատես։ Այդ նույն թվականին Հ. Օրբելու խմբագրությամբ և ծավալուն առաջաբանով լույս է տեսնում «Սասնա ծռերի» 50-ից ավելի պատումների համահավաք բնագրիրը՝ «Սասունցի Դավիթ» վերնագրով։

Ազգագրական գիտության զարգացման, մասնագետ կադրերի պատրաստման տեսանկյունից նշանակալից դեր է խաղացել Երևանի պետական համալսարանը։ Լինելով հայ ժողովրդի XX դարի ամենամեծ ձեռքբերումներից մեկը՝ ԵՊՀ-ն իր գոյության տարիներին զարգանալով ու հզորանալով՝ դարձել է հանրապետության ուսումնագիտական ու կրթամշակութային խոշոր կենտրոն, ակնառու նվաճումների է հասել Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ պատմաբան-ազգագրագետ բարձրորակ կադրերի

պատրաստման գործում: Դեռևս 1930-40-ական թթ. որոշ ընդ-միջումներով, «Ազգագրություն» առարկան դասավանդում էր պրոֆ. Ստ. Լիսիցյանը: Նրա մահից (1947) հետո երկար ժամանակ այդ առարկան ուսումնական պլաններից դուրս էր մնացել և վերականգնվեց միայն 1964-1965 ուս. տարում:

5.2.3. Երվանդ Լալայանի գործունեությունը 1920-1930 թթ.

Պատմաազգագրական շրջանացման և Ե. Լալայանի մշակած սկզբունքով հետազոտությունները շարունակվեցին նաև խորհրդային շրջանում:

1920-ական թթ. Ե. Լալայանը ազգագրորեն, տեղագրորեն և հնագիտորեն հետազոտել է Կոտայքի շրջանը, մշակել անցյալում իր կուտակած հարուստ ազգագրական նյութը: Հայաստանի գիտության և արվեստի ինտիտուտի միջոցներով նախ 1926 թ., ապա՝ 1928 թ. Ե. Լալայանը գործուղվում է Կոտայքի շրջան՝ տեղագրությունը, ազգագրությունն ու հնագիտությունն ուսումնասիրելու նպատակով: Ե. Լալայանն ուսումնասիրության մեջ է մտցնում նաև Երևան քաղաքը և նրա շրջակա գյուղերը: Ե. Լալայանը իր կնոջ և բանահավաք Շահեն Կուժիկյանի օգնությամբ գրի է առնում մեծ քանակությամբ բանահյուսական նյութեր: 1926-1928 թթ. Ե. Լալայանը գործուղվել է նաև Արարատյան հովտի գյուղերը և գրի առել նոր նյութեր. զուգահեռաբար նա երևանաբնակ արաբկիրցիներից և խարբերդցիներից հավաքել է համեմատական տվյալներ: 40 օր մնալով՝ գիտարշավը հայտնաբերեց և գրի առավ շուրջ 400 հին ու նոր ժողովրդական խաղիկներ, հինգ տասնյակ հեքիաթներ, զրույցներ ու առակներ (տե՛ս ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», 1927, № 2, էջ 220-225, Ե. Լալայանի հաշվետվությունը):

Ե. Լալայանի 1920-ական թթ. հնագիտական ու ազգագրական ուսումնասիրությունների արդյունքը հանդիսացան «Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից» (նույն տեղում, № 1, 1926), «Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ» (նույն տեղում, 1930-31, № 4-5), «Հուղարկավորությունը և գերեզմանների զարգացումը Հայաստանում» (նույն տեղում, 1928, № 3) ուշագրավ հոդվածները:

Հնագիտության գծով Ե. Լալայանը Կոտայքի Էլառ տեղամասում պեղումներ է կատարում մի շարք դամբարաններում, որոնց նկարագիրը տրվում է նրա «Դամբարանների պեղումները Հայաստանում» գրքում:

Ստ. Լիսիցյանի հավաստմամբ (տե՛ս Армянская этнография за 15 лет, СЭ, 1936, № 4-5, էջ 270-274)՝ Ե. Լալայանը ծիսական այս սովորությունների վերաբերյալ մի քանի հոդվածներ ևս գրել է, որոնք, սակայն, լույս տեսնելու բախտին չեն արժանացել և նրա մահից հետո անհետացել են: Նույն ճակատագրին է արժանացել նաև Ե. Լալայանի մենագրությունը՝ «Տնայնագործական արհեստները Հայաստանում» աշխատությունը:

Անգնահատելի են գիտնականի հետազոտական աշխատանքները բանահյուսության և հնագիտության ոլորտներում: Ե. Լալայանը բանահյուսությունը դիտում էր որպես ազգագրության մի անբաժանելի օղակ, ուստի, պատահական չէ, որ ազգագրական հետազոտությունների մեջ մեծ տեղ էր հատկացրել նաև բանահյուսական նյութերին: Ըստ նրա՝ բանահյուսական նյութերը լրացնում ու լուսաբանում են քննարկվող այս կամ այն պատմաազգագրական շրջանի ընտանեկան-հասարակական բարքերն ու հավատալիքները: Նույն կերպ՝ հնագիտությունը ոչ այլ ինչ է, քան նախապատմական ազգագրություն, որն իր բոլոր խնդիրների սկիզբը որոնում է հնագիտության մեջ:

«Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում» մենագրությունը (Երևան, 1931) աշխատության մեջ նկարագրել և արժևորել է իր պեղած բրոնզեդարյան փոխադրամիջոց սայլը, որ գտնվել էր Սևանա լճի ավազանում: Դրա կարևորությունը նկատի ունենալով է, որ այն պահվում է Հայաստանի պատմության թանգարանում:

Անգնահատելի է Ե. Լալայանի թանգարանաստեղծ գործունեությունը (մանրամասն տե՛ս «Հայաստանի պետական պատմական թանգարանը» բաժնում):

5.2.4. Խաչիկ Սամուելյանը՝ ազգագրագետ (1873-1940)[118]

Նշանակալից է Խաչիկ Սամուելյանի դերը հայ ազգագրական գիտության բնագավառում: Նա մեծ ներդրում ունեցավ նաև իրավագիտության, պատմության բնագավառներում՝ շուրջ 40 տարի: Նրա գիտական աշխատությունները իրավա-

[118] Ծնվել է 1873 թ. Կերչ քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Թեոդոսիայի գիմնազիայում: 1895-1900 թթ. սովորել և ավարտել է Պետերբուրգի իրավաբանական ֆակուլտետը, 1901-1903 թթ. ուսանել է Ենայի (Գերմանիա) համալսարանում, ապա բնակություն է հաստատել Թիֆլիսում: 1904-1907 թթ. եղել է «Кавказское сельское хозяйство» ամսագրի պատասխանատու քարտուղարը: 1907-1908 թթ. զբաղեցրել է Գևորգյան ճեմարանում դասախոսի, 1909-1921 թթ.՝ Նոր-Նախիջևանի, Թիֆլիսի, Շուշիի, Բաքվի, Ալեքսանդրապոլի դպրոցների տեսուչի պաշտոնները, 1921-1922 թթ. ընտրվել է Հայաստանի գիտական ինստիտուտի կոլեգիայի անդամ, այնուհետև վարել իրավաբանական տարբեր պաշտոններ, 1924-1934 թթ. նշանակվել է պետական կենտրոնական արխիվի վարիչ, ապա զբաղվել է դասախոսական գործունեությամբ՝ 1934 թվականից մինչև իր կյանքի վերջը դասավանդել է ԵՊՀ-ում, մանկավարժական համալսարանում, նյութական կուլտուրայի ինստիտուտում: Վախճանվել է 1940 թ. (տե՛ս **Մելիք-Փաշայան Կ., Սամուելյան Խ.,** ՊԲՀ, 1974, № 1, **Վարդումյան Դ.,** Խաչիկ Սամվելյան (Ծննդյան 130-ամյակի առթիվ) // Հայ ժողովրդական մշակույթ, XII, Երևան, 2004, էջ 168-171):

գիտության, պատմության և հատկապես ազգագրության ասպարեզներում դեռևս նախախորհրդային տարիներին ակնառու էին[119]:

Գիտնականը ակտիվ աշխատակցել է «Ազգագրական հանդեսին»՝ 1903 թվականից մինչև 1916 թվականը տպագրելով մի շարք ուսումնասիրություններ, եղել է նաև «Հայոց ազգագրական ընկերության» և խմբագրական հանձնաժողովի անդամ: Կրթությամբ լինելով իրավաբան և որպես այդպիսին մուտք գործելով ազգագրության բնագավառը՝ նա բեղմնավոր աշխատանք է կատարել հայ ժողովրդի սովորութական իրավունքի բազմակողմանի հետազոտության և դրան առնչվող պետական իրավունքի ակունքների հարցերը հետազոտելու բնագավառում:

Նրա գիտական տեսական ընդհանրացնող ուսումնասիրություններից են «Արյան վրեժ և փրկանք», «Հայոց հին իրավունքը և նրա հետազոտության մեթոդը», «Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն», «Հայոց ընտանեկան պաշտամունքը», «Հայոց ժառանգական իրավունքը», «Հայ նահապետական գեր-

---

[119] Գրական-գիտական գործունեությունը սկսել է 1897 թվականից: Բազմաթիվ հոդվածներով է հանդես եկել «Մշակ», «Տարազ» և ժամանակի այլ հեղինակավոր ամսագրերում: Նրա առաջին գիտական հոդվածն էր «Ակնարկներ ընտանեկան սովորութային իրավունքի վերաբերյալ» ռուսերեն լեզվով. «Очерки по обычному семейному праву» // "Кавказский вестник", 1902, «Արյան վրեժ և փրկանք» // ԱՀ, գ. 10, «Հայոց հին իրավունքը և նրա հետազոտության մեթոդը» // ԱՀ, գ. 11, «Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն», // ԱՀ, գ. 12, «Հայ ընտանեկան պաշտամունքը», // ԱՀ, գ. 13, գ. 14, 18, 19, «Հայոց ժառանգական իրավունքը», // ԱՀ, գ. 15, «Մայրական իրավունք» // ԱՀ, գ. 19, «Հայ սովորութական իրավունքը», «Հայոց հին իրավունքը և նրա հետազոտման մեթոդը», «Սիմբոլը հայ սովորույթներում»// Ահ., գ. 22, գ. 23, «Մ. Գոշի «Դատաստանագիրքը ու Հայոց քաղաքացիական իրավունքը» (Վիեննա, 1911), «Տոտեմիզմը հայոց մեջ» // «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գ. Ա և Բ, Վաղարշապատ, 1921–1922, էջ 15-34 և այլն):

դաստան», «Մայրական իրավունք», «Հայ սովորութային իրավունք», «Սիմբոլը հայ սովորույթներում», «Տոտեմիզմը հայոց մեջ»: Իսկ գիտնականի հիմնարար եռահատոր «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատությամբ, աղբյուրագիտական հարուստ ու բազմաբնույթ նյութերի հիման վրա վերականգնվեց հայոց հին մշակույթի հնարավոր ամբողջական պատկերը: Նրանում տրված է նյութական, հոգևոր և սոցիալական մշակույթի առանձին բաղադրիչների համալիր վերլուծությունը:

Իր եռահատոր՝ «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության մեջ Խ. Սամուելյանը դժվարին խնդիր է դնում իր առաջ՝ մեծ մասամբ վերապրուկային նյութերի հիման վրա վերականգնելու նախնադարյան տոհմային կարգերի պատկերը Հայաստանում: Աշխատության մեջ առաջին փորձն է կատարվում ներկայացնելու Հայաստանի նյութական, հոգևոր և սոցիալական մշակույթի զարգացման փուլերը՝ սկսած նախնադարյան համայնական կարգերից մինչև 20-րդ դարը:

Առաջին հատորում եղած նյութերի շրջանակներում ամփոփ ներկայացնում է հայ ազգագրական գիտության անցած ուղին, այնուհետև անդրադառնում նախապատմական և պատմական դարաշրջանի կառույցներին, աշխատանքնային գործիքներին, հնագիտական պեղումների արդյունքներին, կերամիկային, կարասային և դիակիզման ու այլ թաղումներին, հնագույն ժայռապատկերային արվեստին՝ այն բնութագրելով իբրև գաղափարագրեր, նաև հաղորդակցության միջոցներ: Դրանում մեծ տեղ են գրավում հավատալիքների համակարգը:

Ուշագրավ ուսումնասիրություններից են նաև «Տոտեմիզմը հայոց մեջ», «Քարի պաշտամունքը հայոց մեջ» հոդվածները, որոնցում ներկայացվում են կենդանիների, թռչունների, սողունների, եզան, օձի, անգղի, այծի, գայլի, խոյի պաշտա-

մունքը: Քարապաշտությունը, ըստ գիտնականի՝ ոգեպաշտություն է, աշխարհայացք և ոչ թե կրոն: Այս հարցերի զգալի մասը արծարծված է «Հին Հայաստանի կուլտուրան» գրքի առաջին հատորում (էջ 276-330): Գիտնականը ըստ էության, մշակել է հայ հոգևոր մշակույթի զարգացման հիմնական ուրվագծերը:

«Հին Հայաստանի կուլտուրան» հետազոտության երկրորդ հատորում անդրադարձել է տնտեսական, արտադրական և նյութական մշակույթի տարբեր կողմերին: Դրանց հարուստ և բազմազան մնացուկների ուսումնասիրության և ընդհանրացման հիման վրա առաջին անգամն է ցույց տալիս հին Հայաստանի նյութական մշակույթի համակարգված և ամփոփ պատմությունը և հենց այդ տեսակետից էլ գիտական խոշոր արժեք ունի:

Հին հայկական սովորութային իրավունքի, գերդաստանի, տոհմական կառույցների, ամուսնության ձևերի, օժիտի, գլխագնի, քավորի, ժողովրդական հավատալիքների ուսումնասիրությունը կենտրոնական տեղ են գրավում Խ. Սամուելյանի աշխատության երրորդ հատորում:

Նա տեսաբան ազգագրագետ է, լավատեղյակ եվրոպական և ռուսական առաջավոր գիտությանը: Տեսական բնույթի են հատկապես «Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն», «Հայ ընտանեկան պաշտամունքը» ազգագրական ուսումնասիրությունները: Հարուստ փաստական նյութերով հետազոտվում են առևանգմամբ և գնմամբ ամուսնությունը, նրա զարգացման շրջանները, ցույց է տրվում, որ առևանգմամբ ամուսնությունը աստիճանաբար վերանում է, իսկ գլխագինը տեղի է տալիս օժիտին: Ըստ Խ. Սամուելյանի՝ ընտանեկան պաշտամունքը խստորեն առնչվում է ոգիների պաշտամունքին, թաղման ծեսերին:

Խորհրդային կարգերի օրոք հայ ազգագրության նշանավոր տեսաբանը քննության առարկա դարձրեց հայկական ընտանեկան գերդաստանական հարաբերությունները, գյուղական համայնքը, ծիսական կարգերը: Առանձին հետաքրքրությամբ Խ. Սամուելյանը հետազոտեց հայկական ազգատոհմային կարգերը՝ ազգակցական հարաբերությունների հիման վրա, ազգապաշտպանական երևույթները, վրիժառության պարտականությունները, տոհմապետ-ազգապետերի, ծերակույտերի խաղացած դերը հին հայ հասարակական կյանքում: Վերոնշյալ հիմնախնդիրներին գիտնականը անդրադարձել է իր աշխատության երրորդ հատորում:

Խ. Սամուելյանը իր ուսումնասիրություններում առաջինն էր, որ հենվում է պատմահամեմատական, դաշտային ազգագրական հարցարանների մեթոդի վրա: Պատմահամեմատական մեթոդի կիրառումը նշանակում է՝ հետազոտությամբ բաղդատել արդի մշակութապես ցածր զարգացած ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու հասարակական ձևերը նախավանդ երևույթների հետ, բաղդատել, համեմատել, գտնել որոշ երևույթների համանման գծերը: Առանձնացնում է նաև սոցիոլոգիական մեթոդը: Հեղինակի որոշ մեկնությունները, ձևակերպումները և եզրահանգումները թեև հնացել են, սակայն մեծ է նրա հետազոտությունների գիտական արժեքը:

Խ. Սամուելյանը խորապես ուսումնասիրել է հայ ժողովրդի հին և միջին դարերի պատմությունը, ազգագրությունը, հնագիտությունը, դրամագիտությունը, վիմագրությունը և այդ ամենի հիման վրա համակարգել և ամբողջացրել հայ հին կուլտուրայի պատմությունը: Ե. Լալայանը և Խ. Սամուելյանը համատեղ կազմել են դեռևս չհրատարակված հայ ազգագրության առաջին ընդարձակ մատենագիտությունը (անտիպ նյու-

թերը պահվում են ՀՊԹ-ի արխիվում)։

Մեծ է Խ. Սամուելյանի դերը նաև հայ իրավագիտության պատմության ուսումնասիրության բնագավառում։ Հայ իրականության մեջ առաջինն էր, որ քննարկման նյութ դարձրեց սովորութային իրավունքի նորմերը և փորձեց տալ իրավունքի սահմանը, նրա տեղն ու դերը։ Նա խորացավ հատկապես հայ սովորութային իրավունքի ու պետական իրավունքի և այս երկուսի փոխառնչակցության կնճռոտ խնդիրների հետազոտման մեջ։ Սովորութային իրավունքին վերաբերող նյութի խոր իմացությունը և տեսական մասնագիտական լիակատար պատրաստականությունը հնարավորություն ընձեռեցին Խ. Սամուելյանին արմատական քննության ենթարկելու Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» (Վիեննա, 1911) որպես հայոց քաղաքացիական իրավունքի հուշարձան և ըստ ամենայնի լուծելու վերջինիս ակունքների խնդիրը։ Նրա «Հին հայ իրավունքի պատմություն» (Երևան, 1939) աշխատությունը գրված է գլխավորապես ազգագրական նյութերի հիման վրա՝ քաղված հայ մատենագրական և ազգագրական աղբյուրներից։

Խ. Սամուելյանը նաև բանահյուսական ուսումնասիրությունների հեղինակ է։ 1908 թ. «Գեղարվեստ» ամսագրում լույս է տեսնում «Աշխատանքը հայ ժողովրդական երգերում», 1911 թ.՝ «Քյոռ-օղլի» վիպական պատումը։

Նա նաև գրականագետ է, հրատարակել է «Գրական ուրվագծեր» շարքը՝ ռուս գրականության վերաբերյալ։ Միաժամանակ զբաղվել է թարգմանություններով։ Ռուսերենից հայերեն է թարգմանել «Բույսերի կյանքը», «Մայրական սեր» և այլ գործեր։

Խ. Սամուելյանը արխիվային գործի հմուտ կազմակերպիչ էր։ 1924-1934 թթ. եղել է պետական կենտրոնական արխիվի

վարիչը: Նրա օրոք կարճ ժամանակամիջոցում արխիվում կենտրոնացվեցին քաղաքական աննպաստ անցքերի բերումով աստ ու անդ սփռված վավերագրերի կորստից փրկված պատառիկները, համակարգվեցին գիտականորեն և դարձան հայ ժողովրդի պատմության անփոխարինելի սկզբնաղբյուրներ, ժամանակի ընթացքում համալրվելով բազմաթիվ ու բազմազան նորանոր փաստաթղթերով: Իրավամբ նա դարձավ Հայաստանի պետական կենտրոնական արխիվի հիմնադիրը: Խ. Սամուելյանը նշանավոր պատմաբան է: Գիտնականը «Նիմանդ» կեղծանվամբ հրատարակեց երեք տասնյակից ավելի հակակրոնական բնույթի, կնոջ անիրավահավասարության և նահապետական կյանքից եկող մյուս վնասակար երևույթների դեմ հոդվածներ և ակնարկներ: Նա հրատարակել է նաև մի քանի ստվարածավալ աշխատություն՝ «Նախնադարյան հասարակության պատմություն», «Հին Արևելքի պատմություն», «Խալդական հասարակություն» բուհական ձեռնարկները (1930-ական թթ.), շարադրել հայ ժողովրդի պատմության դասագրքի՝ այդ ժամանակ տակավին անմշակ հնագույն և վաղ ավատատիրության շրջանի բաժինը՝ նախնադարյան հասարակությունից մինչև Արշակունիների անկումը: Նրա արխիվում պահպանվում է «Անտիկ հասարակության պատմություն», «Ուսումնասիրություն Վրաստանի պատմության վերաբերյալ», «Ռուսաստանի պատմություն» և այլ ձեռագիր աշխատություններ: Նա իրավամբ դասվում է հայագիտության մեծ երախտավորների շարքը[120]:

---

[120] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Խաչիկ Սամուելյան//Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 247-252

5.2.5.Ստեփան Լիսիցյան (1865-1947)[121]

Մեծ է եղել Ստեփան Լիսիցյանի ներդրումը ազգագրական գիտության կազմակերպման և զարգացման գործում: Նա իրավամբ համարվում է խորհրդահայ ազգագրության հիմնադիրը: Ստ. Լիսիցյանը ազգագրությամբ սկսել է զբաղվել դեռևս XIX դ. վերջերից և XX դ. սկզբին, ամբողջովին նվիրվել այդ գործին: 1913 թ. Հ. Թումանյանի, Գ. Աղանյանի, Ս. Տեր-Ավետիսյանի և Ա. Շահնազարյանի հետ նա կազմակերպում է հայոց պատմության և հնագիտության ընկերություն, որի նպատակն էր ուսումնասիրել այդ ոլորտի բոլոր նյութերը:

Նրա համար օրախնդիր էր մոռացությունից փրկել ազգագրական նյութերը և կենցաղային իրերը: 1924 թ. Հայաստանի կառավարության հրավերով Թիֆլիսից տեղափոխվել է Երևան, և սկսվել է Ս. Լիսիցյանի գործունեության մի նոր, բեղմնավոր ժամանակաշրջան: Այդ ասպարեզում նրա մեջ զուգակցվել են անխոնջ հետազոտողը և գիտության հմուտ կազմակերպիչը: Հայ ազգաբանական գիտության բնագավա-

---

[121] Ծնվել է 1865 թ. Թիֆլիսում, ավարտել է տեղի առաջին գիմնազիան և 1894 թ. ընդունվել Օդեսայի համալսարանի պատմության ֆակուլտետը, այնուհետև տեղափոխվել ու հիմնարար բարձրագույն կրթություն ստացել Եվրոպայում: 1889 թ. ավարտել է Վարշավայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, անցել է մանկավարժական աշխատանքի Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, տիրապետել է 12 լեզուների: Նրա թարգմանությամբ ռուսերեն և անգլերեն լույս է տեսել Խ. Լինչի «Հայաստան» երկհատոր աշխատությունը, թարգմանել է նաև Հ. Սենկևիչի «Յո՞ երթաս» վեպը: Գիտամանկավարժական ասպարեզում ձեռքբերումների համար 1941 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի, իսկ 1945 թ.՝ ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում (տե՛ս **Варданян Л.,** С. Лисициан и истоки армянской этнографии, Ереван, 2005):

ռում Ստ. Լիսիցյանի ծավալած գործունեությունը ընթացել է երեք հիմնական ուղղություններով՝ ա) ազգագրական նյութերի հավաքչության, բ) գիտահետազոտական, գ) գիտակազմակերպչական։ Գիտնականի ազգաբանական գործունեության ժամանակաշրջանը հիմնականում 1920–1940-ական թթ. կեսերն են։ Այն սկսվում է ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտում աշխատելու տարիներից՝ 1924-1928 թթ.՝ հիմնական, և 1928-1936 թթ.՝ արտահաստիքային։ Այդ տարիներին ինստիտուտի հանձնարարությամբ ձեռնարկել և իրականացրել է մի շարք ազգագրական գիտարշավներ (Արցախ, Սյունիք, Մեղրի, Նախիջևան, Լոռի, Աշտարակ, Շիրակ, Սևանի ավազան, Ջավախք)՝ հարուստ դաշտային նյութեր հավաքելով ինչպես տեղաբնիկներից, այնպես էլ գաղթական հայերից։ Նյութերը գրի էին առնվում 1926 թ. ազգագրագետի կազմած «Գավառագիտություն» խորագրով, ապա դեռևս ձեռագիր «Ազգագրական հարցարանի» հարցաշարերով։

Այդ հետազոտությունների արդյունքը հոդվածների շարքն էր ԿՊՀԻ-ի «Լրաբերում» և «Բյուլետենում»՝ նվիրված մասնավորապես հայ գյուղական բնակարանին և դրա յուրահատկությանը Հայաստանի տարբեր պատմաազգագրական շրջաններում։ Նրա բացահայտումները վերաբերում են հայ գյուղական տան՝ «գլխատան» ճարտարապետական կառուցվածքի և հայոց պաշտամունքային կառույցների ծագումնաբանական ընդհանրություններին, որով հավաստվում է հայ ճարտարապետության տեղաբնիկ բնույթը։ Տալիս է նաև գլխատան նկարագրությունը, տարածման շրջանները, նրա աղերսը ժամատան, այլ կերպ ասած՝ հայ դասական եկեղեցական ճարտարապետության ակունքների կապը ժողովրդական բնակարանի հա-

մալիրի ճարտարապետության հետ և այլն: Դրանք վերաբերում են Ղարաբաղի (տե՛ս **Лисициан С.,** К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам) // ИКИАИ, т. III, Тифлис, 1925, էջ 97-108), Բարձր Հայքի (նույն տեղում, «Крестьянское жилище Высокой Армении» // ИКИАИ т. IV, 1926, էջ 55-70), Մեղրիի (նույն տեղում, Из материалов по изучении жилищ Армении. «Крестьянское жилище Мегринского района» // ИКИАИ т. V, Тифлис, 1927, էջ 119-133), Նոր-Բայազետի, Լոռի-Փամբակի, Վայոց ձորի (նույն տեղում, Из материалов по изучению жилищ Армении. «Нор-Баязетский азарашенк и заметки о крестьянских жилищах соседних районов Памбакского и Даралагязского» // ИКИАИ, Тифлис, 1927, т. VI, էջ 133-140) ժողովրդական բնակարանների տիպերին:

1927 թ. լույս է տեսնում գիտնականի «Շատախի պատմազգագրական ուրվագիծ (Историко-этнографические очерки Шатаха//ИКИАИ, т. V, էջ 71-82), «Սրբավայրերը լեռնանցքներում» («Святыни» у перевалов// СЭ, N4-5, 1936, էջ 200-2012) հոդվածները:

1928 թ. Ստեփան Լիսիցյանը նշանակվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի վարիչ և գլխավորում այն մինչև կյանքի վերջը (1947թ.): Նա գիտակազմակերպչական վիթխարի ջանքեր գործադրեց: Գրի է առնվում ոչ միայն վիթխարի ազգագրական նյութ, այլև թանգարանի համար հայթայթվել է 1000 ցուցանմուշ, այդ թվում՝ հազվագյուտ համալիրներ: Դրանցում հատկապես կարևորվում էին կորստյան մատնվող Արևմտյան Հայաստանի՝ Շատախին, Մոկսին, Սասունին վերաբերող արժեքավոր հավաքածուները: Գիտնականը շատ էր կարևորում և առաջնահերթ ու անհետաձգելի խնդիր էր համարում արագ վերափոխումնե-

րի պատճառով կորստյան մատնվող ավանդութային մշակույթի տարբեր երևույթներին վերաբերող ազգագրական նյութի գրառումը: Այդ ժամանակ ազգագրական միակ հաստատությունը թանգարանն էր, որի հնարավորությունները խիստ սահմանափակ էին, ուսումնասիրություններն անկազմակերպ և տարերային էին, չկային մասնագետներ ու նյութական միջոցներ: 1940-ական թթ. ազգագրագետների թվի և որակի վերաբերյալ Ստ. Լիսիցյանը գրում է, որ նրանք այնքան քիչ են և այնքան հեռու կենտրոնում ընթացող քննարկումներից, որ գավառագիտությունը սկսել է համարվել քաղաքականապես անընդունելի և նույնիսկ հակասովետական: Ինչ վերաբերում է ազգագրագետների թվին, ապա այն իսկապես հեռու էր բավարար լինելուց: Այսպես, օրինակ, 1940-ական թթ. սկզբին ՀԽՍՀ ղեկավարությանը ուղղված նամակում Ստ. Լիսիցյանը դժգոհում էր, որ ողջ Հայաստանում միայն ինքն է 78 տարեկան հասակում և իր մեկ կամ երկու երիտասարդ օգնականները, որ զբաղված են ազգագրությամբ, և՛ գործին իրենց ողջ նվիրվածությամբ հանդերձ, նրանք ի վիճակի չեն լուծելու Հայաստանի ազգագրագետների առջև ծառացած բոլոր խնդիրները (տե՛ս Варданян Л., 2005, էջ 407-409): Նույնիսկ այս պայմաններում Ստ. Լիսիցյանը, հաղթահարելով հսկայական դժվարություններ, իրականացնում էր ազգագրական տարբեր ծրագրեր, ինչպես նաև թանգարանային արժեքներ ժողովում տաբեր շրջաններում: Այդ նպատակով գիտարշավներին զուգընթաց նա տեղերում թղթակիցների լայն ցանց է ստեղծում:

Թանգարանային աշխատանքների ծավալման, ֆոնդերի հարստացման, ցուցադրությունների կազմակերպման բնագավառներում մեծ է եղել Ստեփան Լիսիցյանի երախտիքը, որին իրավամբ կարելի է համարել ազգագրական թանգարանային

գործի հիմնադիրն ու անխոնջ զարգացնողը Խորհրդային Հայաստանում: Թանգարանում նրա ջանքերով կենտրոնացվեցին թե՛ հավաքչական և թե՛ ցուցադրական ու գիտահետազոտական, ինչպես նաև թանգարանագիտական կազմակերպչական աշխատանքները, որոնց ոչ միայն ուղղություն տվողը, այլև հիմնական կատարողն ինքն էր:

1936 թ. լույս է տեսնում Լիսիցյանի «Հայ ազգագրությունը 15 տարիների ընթացքում» («Армянская этнография за 15 лет // СЭ, 1936, № 4-5, էջ 270-274) արժեքավոր հոդվածը: Այնուհետև գործուղումներն ու գիտարշավները դադարում են մինչև 1943 թվականը: Հայրենական պատերազմի ամբողջ շրջանում ազգագրական բաժինն զբաղվում էր նախկինում հավաքված նյութերի հետազոտական աշխատանքով:

1920-30-ական թթ. գիտական աշխատանքների հանրագումարը եղավ հայոց նախախորհրդային ազգագրությանը նվիրված՝ “Очерки этнографии дореволюционной Армении”//“Кавказский этнографический сборник” (М., 1955, с. 182-264) աշխատությունը, որը հայոց էթնոմշակութային ամբողջական պատկերը տալու առաջին փորձն էր:

Բացառիկ կարևոր է Ստ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի» դերը հայ ազգագրական գիտության զարգացման, բանահավաք կադրեր ներգրավելու գործում: Այն հսկայական տեսական ու գործնական նշանակության ունեցավ որպես մեթոդական կարևոր ձեռնարկ: Հարցարանը հրատարակվեց հեղինակի մահից երկու շաբաթ առաջ (1946 թ.) և «ասես կտակ հանդիսացավ ազգագրագետների նոր սերնդի համար»: Այդ ծրագրով է առաջնորդվում առ այսօր ազգագրագետների մի քանի սերունդ: Այն ընդգրկում է ժողովրդի մարդաբանությունը, տնտեսական զբաղմունքները, նյութական և հոգևոր մշա-

կույթը, հասարակական, ընտանեկան հարաբերությունները, ժողովրդական բանահյուսությանն ու արվեստին վերաբերող հնարավոր բոլոր հարցերը, ինչպես նաև՝ անհրաժեշտ ցուցումներ դաշտային նյութեր հավաքելու կարգի մասին: «Հարցարանի» արժեքը խիստ բարձր է այն առումով, որ նրա մեջ, ինչպես գրում է հեղինակը, հակառակ նախորդ ծրագրերի, տեղ են հատկացվել «Այժմեական պայմանները» (խորհրդային շրջանը – Ռ. Ն.) նկատի առնող բաժիններ՝ հայ կոլտնտեսային գյուղի նոր կենցաղի ու հարաբերությունների բազում հարցեր:

1930-1940-ական թթ. Ս. Լիսիցյանն ավարտում է հայ ազգագրությանը վերաբերող հիմնարար աշխատությունների շարադրումը, որոնք լույս տեսան հետմահու, տարբեր ժամանակներում:

Ազգագրական նյութի հավաքման ուղղությամբ կատարած բազմամյա աշխատանքի և Հայաստանի առանձին պատմաազգագրական շրջանների ուսումնասիրության արդյունքները շարադրվեցին «Զանգեզուրի հայերը» (Երևան, 1969) և «Լեռնային Ղարաբաղի հայերը» («Հայ ազգագրություն և բանահյուսություն», գ.XII, Երևան, 1981, էջ 7-84) աշխատություններում: Վերջինս 1992 թ. հրատարակվեց նաև ռուսերեն (Армяне Нагорного Карабаха (этнографический очерк)): Գիտնականը լուսաբանեց նշված շրջանների հայերի տնտեսական, հասարակական և հոգևոր կյանքի բոլոր կողմերը, բացահայտեց դրանց տեղական առանձնահատկությունները՝ միաժամանակ ցույց տալով պատմամշակութային ընդհանրությունը հայ էթնոսի հետ ամբողջությամբ վերցրած: Ստեփան Լիսիցյանի աշխատությունները զգալի չափով օգտագործվել են «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարի «Կովկասի ժողովուրդները» հատորի «Հայկական Սովետական սոցիալիստա-

կան հանրապետության ժողովուրդները» բաժնում («Хозяйство и материальная культура армян», Народы Кавказа, т.II, М., 1962, с. 463-523):

Այդ տարիներին քաղաքական անբարենպաստ մթնոլորտի, տնտեսական ծանր իրավիճակի և մասնագիտական կադրերի բացակայության պայմաններում մեծ գիտնականի հայրենանվեր գործունեությունը զարմանալիորեն բեղուն էր, թեև նա ներքին դժգոհություն ուներ ու դառնությամբ գրում է. «...Իմ կատարած աշխատանքների վրա ձգած այս հետադարձ հայացքը, խղճիս առաջ այս հաշվետվությունը համակում է ինձ միայն խորին վշտով, որ տարիքս ու արտաքին նյութական հանգամանքները թույլ չտվեցին ինձ ավելի խոշոր ներդրումով մասնակից լինել սովետական կուլտուրական շինարարությանը մեր երկրում»: Նա ցավով նշում է, որ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի համակարգում, անգամ պատմության ինստիտուտի որևէ բաժնում ազգագրության բաժանմունք չբացվեց: Դա ավելի քան անսպասելի էր, քանի որ անվիճելի ճշմարտություն է, որ առանց ազգագրական նյութերի հնագիտական նյութերը լուռ կմնան, ֆոլկլորը կլինի թերբովանդակ, պատմությունը անկարող կլինի լուսաբանելու նյութական և հոգևոր կուլտուրայի նախնական զարգացման փուլերին վերաբերող խնդիրները, անհասկանալի կմնան ազգային կուլտուրայի բնորոշ կողմերն ու հետագա զարգացման ուղիները (**Варданян Л.,** Степан Лисициан и истоки армянский этнографии, Ер., 2005, 417-418):

Այսպիսով՝ Ս. Լիսիցյանն իր ավելի քան կեսդարյա գործունեությունը նվիրաբերեց Հայաստանում պատմագիտության, մասնավորապես ազգագրության, թանգարանագիտության, հնագիտության, ինչպես նաև աշխարհագրության և

մանկավարժության զարգացմանը՝ հիմնարար աշխատություններով անգնահատելի ավանդ ներդնելով հայոց նյութական և հոգևոր մշակույթի զարգացման մեջ:

Անխոնջ գիտնականը մեծ ջանքեր է գործադրել նաև բուհերում ազգագրություն առարկան ուսումնական ծրագրերում, ընդգրկելու համար: Նրա ակտիվ քարոզչության շնորհիվ հետագայում իր նախապատրաստած ազգագրագետ կադրերի նոր սերունդը՝ Վ. Բդոյան, Կ. Մելիք-Փաշայան, Դ. Վարդումյան, Է. Կարապետյան, Ա. Օդաբաշյան և այլք դարձան 1959 թ. ՀԽՍՀ ԳԱ համակարգում հիմնված հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրագետ կադրերի հիմնական կորիզը:

5.3. Ժամանակի հայ ազգագրական գիտության նշանավոր երախտավորները շարքից

5.3.1. Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյան (1869-1923 թթ.)

Հ. Թումանյանը լուրջ ներդրում ունի ազգագրական գիտության մեջ: Նա հմուտ ազգագրագետ է, իսկ ազգագրագետների համար՝ արժանահավատ բանասաց: Թումանյանը հայ մշակույթի մի շարք բնագավառներ «նկարագրում է փորձված ազգագրագետի հմտությամբ» (տե՛ս Կ. Մելիք-Փաշայան, Թումանյանը և ազգագրությունը, ՊԲՀ, 1969, 3, էջ 78), Հ. Թումանյանն իր ստեղծագործություններում, այդ թվում նաև՝ նամակներում, հրապարակային ելույթներում, հոդվածներում հատուկ ուշադրության է արժանացրել ազգագրությանը՝ որպես գիտություն, ընդգծել նրա դերը ժողովուրդների (հատկապես հայ ժողովրդի) ինքնության պահպանման, ինչպես նաև էթնիկ մշակույթներն ընկալելու տեսնակյունից (տե՛ս օրինակ ԵԼԺ, հ. 7, Եր., 1995, էջ 333, հ. 9, Եր., 1997, էջ 212): Նա մասնավորապես այդ խնդիրներին անդրադարձել է 1910 թ.՝ «Ազգագրական գործը մեզանում» խոսուն վերնագրով հոդվածում (ԵԼԺ, հ. 6, Եր., 1994, էջ 249-251):

Թումանյանը մշտապես այն միտքն էր առաջ քաշում, որ իսկական գրողը նա է, ով կարողանում է բարձր արվեստով արտացոլել ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրները և նրա կյանքի կարևոր կողմերը: Թումանյանը հեգնում է այն գրողներին, որոնց Մասիսի գլխի ամպերն ավելի են հուզում, քան Մասիսի ստորոտում ապրող մարդկանց կյանքը՝ իր բազմազան կողմերով. «Մեր աշխարհքը, որ

մի լիքը թանգարան է ամեն տեսակի կենցաղագիտական, պատմական, կրոնական, բանահյուսական և այլ մեծարժեք նյութերի, տակավին մնում են խավարի մեջ, իրենց փառքերը ավերակների ու հողի տակ, իրենց պարծանքները մոռացության ու անհայտության մեջ: Իրար ետևից, անընդհատ կորչում կամ փչանում են այդ ամենը նոր կյանքի հոսանքների տակ ու նորանոր աղետների մեջ»: Եվ հիրավի, Թումանյանին հաջողվում է իր ստեղծագործություններում վեր հանել հային ու հայկականը:

Հովհաննես Թումանյանը իր գեղարվեստական երկերում հաղորդում է չափազանց արժեքավոր ազգագրական նյութեր, որոնք կարևոր նշանակություն ունեն մեր հոգևոր և նյութական մշակույթի ուսումնասիրության համար: Իր բանաստեղծություններում և լեգենդներում արտացոլել է գյուղացու նիստ ու կացը, սովորությունները, աշխատանքային առօրյան, կրոնական հավատալիքները: Այդ առումով ուշագրավ են «Գութանի երգը», «Ամառվա գիշերը գյուղում», «Արև և լուսին», «Հին օրհնություն», «Ճախարակ», «Կալի երգը», «Դժվար տարի», «Ողոս-Պետրոս», «Անիծած հարսը»: Նահապետական գյուղը հիանալի է պատկերվել «Մարոն», «Լոռեցի Սաքոն», «Հառաչանք», «Անուշ» պոեմներում, «Երկաթուղու շինությունը», «Իմ ընկեր Նեսոն», «Քեռի Խեչանը», «Գիքորը» պատմվածքներում: Զատկի տոնի համառոտ նկարագրությունը կա «Զատկի առթիվ» հոդվածում: Մի ուրիշ խումբ են ներկայացնում ազգային քաղաքական կյանքը՝ «Աղավնու վանքը», «Թագավորն ու չարչին», «Լուսավորչի կանթեղը», «Փարվանա», «Հայրենիքիս հետ» գործերը:

Բացի այդ, նա գրել է մեծ թվով ազգագրական բնույթի հոդվածներ, որոնք առանձնակի հետաքրքրություն են ներկա-

յացնում և նոր խոսք էին ժամանակի ազգագրական գիտության մեջ: Մեծ չափով նպաստել է նաև ազգագրության զարգացմանը՝ հրապարակային գրավոր և բանավոր ելույթներով պրոպագանդել այն, նպաստել ազգագրական գրականության հրատարակմանը, ֆինանսական միջոց հայթայթել «Ազգագրական հանդեսի» տպագրության համար և այլն:

Կատարել է դաշտային ակտիվ հետազոտություններ: Բանահյուսական նյութեր գրառելուն զուգընթաց՝ հավաքել է նաև ազգագրական նյութեր: Դաշտային ազգագրական նյութերի հիման վրա գրել է «Բորչալվում. ճանապարհորդական նկատողություններ» ակնարկը (ԵԼԺ, հ. 6, էջ 27-48), որն ազգագրական բացառիկ աղբյուր է լոռեցիների սոցիոնորմատիվ մշակույթի ուսումնասիրության համար: Ակնարկում արծարծած խնդիրներին Թումանյանն անդրադարձել է նաև «Խաբված աղջիկ» (ԵԼԺ, հ. 5, Եր., 1994, էջ 476-483), «Աղքատի պատիվը» (ԵԼԺ, հ. 5, էջ 27-37) և այլ գեղարվեստական ստեղծագործություններում: Լոռու գյուղերում նպատակաուղղված գործունեություն է ծավալել նաև հետագայում՝ 1908 թ.՝ ազգագրագետ Վ. Բոգորազ-Տանի հետ նյութեր գրառելիս (ԵԼԺ, հ. 9, էջ 520, հ. 10, Եր., 1999, էջ 469):

Ավանդական մշակույթին մշտական էջ հատկացնելու առաջարկով Թումանյանը մշտապես դիմում էր մտավորականությանը, շրջանային թերթերի խմբագիրներին, քանզի նա մտահոգված էր, որ «մեր հին կուլտուրայի ու կյանքի մնացորդները և այսօրվա եղածը...փչանում են նոր կյանքի հոսանքների տակ» (Մի երկու խորհուրդ մեր գավառական մամուլին, ԵԼԺ, հ. 6, էջ 181-183):

Թումանյանը կոնկրետ քայլեր է ձեռնարկել հայրենագիտական և այլ տիպի ժողովրդական խաղերի գրանցման,

ուսումնասիրության, կրթական գործում դրանց կիրառման ուղղությամբ՝ «Հայոց գետերը», «Սրամիտ նախրապանը» (ԵԼԺ, հ. 7, էջ 206-216):

Ընթերցող լայն հասարակայնությանը հայտնի է, որ Թումանյանի երկերում բացառիկ նյութեր կան հարսանեկան արարողությունների, հուղարկավորության և հիշատակի ծեսերի, ժողովրդական տոների, հավատալիքների վերաբերյալ: Նրա գեղարվեստական ստեղծագործություններում և հրապարակախոսական աշխատություններում դրսևորված են ժողովրդի պատկերացումները հմայության, գուշակության, Աստծո, սրբերի, ճակատագրի, դրախտի ու դժոխքի, հանդերձյալ կյանքի, հոգու, մեղքի, ոգիների, չար աչքի մասին:

Թումանյանի գրական ժառանգությունը լի է նաև արտադրական մշակույթի տարբեր բնագավառներին՝ երկրագործությանը, անասնապահությանը, այգեգործությանը, պատմաազգագրական տարբեր հատվածների միջև առևտրափոխանակային կապերին, մանրավաճառությանը, արհեստներին, մեղվապահությանը, շերամապահությանը, հավաքչությանը, ձկնորսությանը, որսորդությանը վերաբերող հրաշալի նյութերով: Ազգագրական տարբեր կողմերով ներկայացված է հատկապես սարի կյանքը: Որսի ու որսորդական հմտությունների մասին ժողովրդական գիտելիքների յուրահատուկ աղբյուր է «Եղջերուն» պատմվածքը (ԵԼԺ, հ. 5, էջ 84-90), «Խոսող ձուկը» (ԵԼԺ, հ. 5, էջ 186-190), «Քաջերի կյանքից» (էջ 16-26), «Փոքրիկ ձկնորսը» (էջ 263-266):

Թումանյանի գրական ժառանգության մեջ ազգագրական հարուստ նյութեր կան նաև հասարակության մեջ կնոջ տեղի ու դերի, աղջկա անվան, պատվի, ներընտանեկան, ներտոհմային, միջտոհմային հարաբերությունների, արյան վրեժի,

հյուրընկալության, ախպերացուի և սոցիոնորմատիվ մշակույթի բազում երևույթների մասին: Կնոջ հասարակական դիրքը գրողը պայմանավորել է հատկապես էթնիկ ավանդույթներով և կրոնով, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով: «Կինն ու մահմեդական պետությունների անկումը» հոդվածում առաջ է քաշում կնոջ ազատագրման հարցը, նշելով, որ հայը կամ վրացին իրենց կրոնի դարավոր ավանդներով՝ տղամարդուն ու կնոջը մի մարմին, մի բարոյական ամբողջություն են դիտում, մինչդեռ մահմեդականը կնոջը՝ իբրև կյանքի վայելքներից մեկը, փակում է հարեմում և պահակներ դնում նրանց հսկելու համար: Նրանց կրոնը թույլատրում է չորս օրինական կին պահել, իսկ հարճ՝ որքան թույլատրեն ֆինանսական միջոցները: Ըստ նրա՝ մահեմեդականը կին չունի, կին չունենալով՝ տուն չունի, ընտանիք չունի, բարոյական հարստություն, ամուր հիմք ու ապավեն չունի: Թումանյանը փորձել է կոտրել հայ կնոջ ճնշված, իրավազուրկ լինելու մասին կարծրատիպը: Նրա գրական ժառանգության մեջ կնոջ կերպարը վեր է հառնում իր բոլոր դրսևորումներով աղջիկ, հարս, մայր, խորթ մայր, ամուսին, այրի, հասարակության անդամ:

Ազգագրական նյութերն ուշագրավ են նաև հայերի և այլ ժողովուրդների երաժշտական ու պարային մշակույթի բնութագրման տեսանկյունից: Ազգագրորեն կարևոր է գրողի վկայությունը «սազ ածել» ժողովրդական այլաբանության վերաբերյալ («Նեսոյի քարաբաղնիսը», ԵԼԺ, հ. 5, էջ 613): Թումանյանի գրական ժառանգությունն ուշագրավ է նաև էթնոմանկավարժության տեսանկյունից: Բնությանը, կենդանիներին նվիրված բնագիտական համարվող առանձին պատմվածքները («Եղջերուն», «Շունը», «Գելը», ԵԼԺ, հ. 5, էջ 105-126, 133-141 և այլն),

որոնք գրել է հատկապես դաշտային՝ ժողովրդից իր գրառած նյութերի հիման վրա, լի են ժողովրդական իմաստնության ու փորձի արդյունքում կուտակված արժեքավոր գիտելիքներով, որոնք շրջանառության մեջ են դրվել, հանրայնացվել են գրողի շնորհիվ:

Թումանյանի գրական ժառանգության մեջ ուշագրավ նյութեր ենք գտնում նաև ավանդական բնակավայրի տիպերի, բնակարանային համալիրների, տարազի, զենքերի, ուտեստի, սպասքի, չափի միավորների, հիվանդությունների ու ժողովրդական բժշկության, տղաբերքի վերաբերյալ:

Ժողովրդի հատկանիշներից հատկապես կարևորել է լեզուն, համարելով այն էթնիկ ինքնագիտակցության և հոգեկերտվածքի հիմք. «Եվ շատ էլ չէին սխալվում հներում, եթե լեզու ասելով ազգ էին հասկանում»: Գիտականորեն է ներկայացրել պարտված ժողովրդի լեզվական ձուլման հնարավոր գործընթացը (Հայոց գրական լեզվի խնդիրը, ԵԼԺ, հ. 7): Թումանյանի լեզվաբանական բնույթի ուսումնասիրությունները լուրջ ներդրում են նաև ազգաբանական գիտության մեջ:

Թումանյանը գիտական սերտ կապերի մեջ է եղել հայ ազգագրության մտավորական ընտրախավի՝ Ստեփան Լիսիցյանի, Երվանդ Լալայանի, Բենսեի, Սմբատ Շահազիզի, հին հայ իրավունքի գիտակ Արսեն Ղլտճյանի հետ: Քաջածանոթ էր «Ազգագրական հանդես», «Էմինյան ազգագրական ժողովածու», «Էթնոգրաֆիչեսկոե օբոզրենիե» (ռուս.) և ազգագրական այլ պարբերականների հրապարակումներին, արևմտահայ ազգագրագետ Տիգրան Չիթունու աշխատություններին:

Հայտնի են գրողի գիտական կապերը ճանաչված ազգագրագետներ Վ. Բոգորազ-Տանի և Մ. Կովալևսկու հետ: Այս ամենը մեծապես նպաստել է ազգաբանական խնդիրների խորը

ընկալմանը, որը դրսևորվել է նրա ստեղծագործություններում, հրապարակախոսական ելույթներում, հոդվածներում, նամակներում:

Նա լուրջ հետազոտող էր ազգագրության բնագավառում, խորը տեսաբան ու վերլուծաբան և պատահական չէ, որ ընտրվել էր Թիֆլիսի հայոց ազգագրական ընկերության խմբագրական մասնաժողովի և գիտական գրադարանի անդամ: Նրա գործերն ազգագրական աղբյուր են, միանշանակորեն հավաստի են, քանի որ ունեն իրական հիմք, քաղվել են հենց ժողովրդի կյանքից, փորձից և դիտողություններից (Գիքորը, Մարոն, լոռեցի Սաքոն, քեռի Խեչանը, Նեսոն և մյուսները), ուստի հայ ազգագրական գրականության և հայ ազգագրական գիտության անքակտելի մասն են:

Իր ստեղծագործությունները կառուցելիս որպես հենք նախընտրել է սեփական դաշտային ազգագրական նյութը: Ըստ Թումանյանի, գրականությունը միայն կյանքի հայելի չէ, որն արտացոլում է դեպքերն ու դեմքերը, այլ նաև իր լույսն ու ջերմությունը կյանքին փոխանցող միջոց:

Թումանյանի մեջ գրեթե հավասարապես խոսել են գրողն ու ազգագրագետը. երբեք չիջնելով պարզ գյուղագրության մակարդակին՝ նա հնարավորինս փրկել է նաև ազգագրական նյութը: Պարզապես հանրագիտարան մարդ էր, նրա պայծառ անունը ոսկե տառերով է գրված նաև հայ ազգագրության պատմության մեջ[122]:

---

[122] Մանրամասն տե՛ս **Հարությունյան Հասմիկ,** Հովհաննես Թումանյանը ազգագրագետ: Հովհաննես Թումանյան-150 (Հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածու). Եր., «Գիտություն» հրատ., 2020, 607 էջ, էջ 97-110:

5.3.2. Մանուկ Աբեղյան (1865-1944)

Պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Աբեղյանը գիտական ասպարեզ իջավ XIX դ. վերջին տասնամյակներին և իր արդյունավետ գործունեությունը շարունակեց XX դ. առաջին կեսերին: «Հայ ժողովրդական հավատալիքը» ատենախոսության համար Ենայի համալսարանում ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան:

1921 թ. Հայաստանի լուսժողկոմի հանձնարարությամբ նախապատրաստում է հայոց լեզվի ուղղագրության ռեֆորմի նախագիծը, 1925 թ. նշանակվում Գիտության և արվեստի ինստիտուտի խորհրդի նախագահ, 1932 թ.՝ Սովետական Հայաստանի բնակավայրերի անունների ճշգրտման ու ձևավորման հանրապետական հանձնաժողովի նախագահ ու տերմինաբանական հանձնաժողովի անդամ: 1939 թ. ընտրվում է «Սասունցի Դավիթ» 1000-ամյակի հոբելյանական հանձնաժողովի անդամ, միաժամանակ դասավանդելով (1923-1935 թթ.) մայր բուհի պատմագրական ֆակուլտետում:

1899 թ. Մ. Աբեղյանը հրատարակել է երկու մենագրություն՝ «Հայ ժողովրդական հավատալիքները» և «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Այդ զույգ աշխատությամբ, փաստորեն, հիմք դրվեց հայ ժողովրդական հավատալիքների, հնագույն առասպելների (Հայկի, Վահագնի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Տորքի) և առասպելական վեպի (Տիգրանի և Արտաշեսի վիպական ցիկլեր) գիտական ուսումնքներին: 1936-1944 և 1951 թթ. Մ. Աբեղյանի խմբագրությամբ և Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ երեք մեծադիր հատորով լույս է տեսնում հայկական էպոսի՝ առկա տպագիր ու անտիպ 50 պատումնե-

րի գիտական հրատարակությունը՝ «Սասնա ծռեր»[123] ընդհանուր վերնագրով: 1939թ. Մ. Աբեղյանը ամենագործուն մասնակցությունն է ունենում «Սասունցի Դավթի» հազարամյակի տոնակատարությանը՝ լինելով վեպի համահավաք բնագրի առաջին ճյուղի («Սանասար և Բաղդասար»)[124] կազմողը:

Մ. Աբեղյանը նաև ժողովրդական առասպելների ամենահմուտ հետազոտողն է: Մեծարժեք են գիտնականի 1940 թ. հրատարակած «Ժողովրդական խաղիկներ» վերնագրով ստվար հատորը և նույն թվականին հրատարակած «Գուսանական ժողովրդական տաղեր» վերնագրով ժողովածուն: Հեղինակ է «Հայոց հին գրականություն» երկու հատորով (1944-1946 թթ.) և ««Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ Դերկետո դիցուհու արձաններ» աշխատությունների և այլն: Ինչպես Մ. Աբեղյանը, այնպես էլ հետագա բոլոր հետազոտողները վիշապաքարերն առնչել են ջրի պաշտամունքի և ջրաօգտագործման, ջրի պահպանման գաղափարի հետ: Բոլոր հեղինակները առնչել են անձրևաբեր ծեսերին, վիշապաքարերի հնարավոր կապը ջրին առնչվող Վարդավառի տոնին [125]: Միայն նրա «Հայ ժողովրդական հավատալիքները» ծավալուն ուսումնասիրությունը բավական է, որ նա գնահատվի որպես հայ ազգագրության ամենաերևելի դեմքերից մեկը: Հետազոտության մեջ քննարկվում են հնագույն հավատալիքների աղբյուրներն ու ընդհանուր բնույթը. հոգիների հավատք և ննջեց-

---

[123] Տե՛ս «Սասնա ծռեր», խմբագրեց պրոֆ. Մանուկ Աբեղյանը, աշխատակցությամբ Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Ա հատոր, Երևան, 1936, Բ հատոր, Ա մաս, Երևան, 1944, Բ հատոր, Բ մաս, Երևան, 1951:

[124] «Սասունցի Դավիթ», հայկական ժողովրդական էպոս, կազմեցին՝ Մ. Աբեղյան, Գ. Աբով և Ա. Ղանալանյան, խմբ.՝ ակադ. Հ. Օրբելու, Երևան, 1939:

[125] Տե՛ս **Աբեղյան Մ.,** Երկեր, Ա, Երևան, 1966, էջ 103-185:

յալների պաշտամունք, լույս և խավար, ճակատագրի, ջրի և բույսերի, կրակի, օձերի, ամպրոպային երևույթների, հողմի ոգու, անտառների և լեռների ոգիների, չար ոգիների և այլնի հետ աղերսվող հավատալիքների մեկնաբանությունները ընդգրկող հետազոտություն է:

5.3.3. Հովսեփ Օրբելի (1887-1961)

Հայ ազգագրության՝ իբրև ուրույն գիտության կայացման գործում նշանակալի ներդրում է ունեցել անվանի արևելագետ, հնագետ, վիմագրագետ, աղբյուրագետ, թանգարանագետ, արվեստաբան, պատմաբան, բանագետ, գիտության կազմակերպիչ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: Նա դասվում է նաև հայ ազգագրական գիտության նշանավոր անդաստանի շարքում: Ուշագրավ ազգագրական դիտարկումները վերաբերում են նրա գիտական գործունեության նախնական փուլին: Հակիրճ ներկայացնենք ազգագրական և նրա հետ սերտորեն շաղկապված հնագիտական, վիմագրական, թանգարանագիտական և բանագիտական գործունեությունը. 1906-1910 թթ.՝ Անիի պեղումների իրականացում[126] (1911 թ. հրատարակում է «Развалины Ани» գիրքը: Պեղված նյութերի մի մասը փրկվում և տեղ է գտնում Հայաստանի պատմության թանգարանում), Անիի, Լեռնային Ղարաբաղի և այլ հուշարձանների հայկական արձանագրությունների գրառում և հրատարակում[127], 1911-1912 թթ.՝ Մոկսի հայերի և քրդերի ազգագ-

---

[126] Հովսեփ Օրբելին Անիի հնադարանի տնօրենն էր: 1910 թ. հրատարակվեց նրա կազմած «Каталог Анийского музея древностей», СПб., 1910.

[127] Հ. Օրբելին ժամանակակից հայ վիմագրության առաջին հետազոտողը եղավ: Դեռևս 1914-1917 թթ. հիմնականում «Քրիստոնյա Արևելք» (ռուսերեն)

ության ու բարբառի հետազոտություն, 1914-1917 թթ.՝ Էրզրումի, Բայազետի, Վանի, Աղթամարի, Բագավանի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրություն և չափագրում, հնագիտական պեղումներ Թոփրակ-կալեում և Հայկաբերդում, 1916 թ.՝ Ն. Մառի հետ Վանում, եռանդուն կազմակերպչական ջանքեր թանգարանագիտության, թանգարանաստեղծման ասպարեզում, 1912 թ. ընտրվել է Ռուսաստանի հնագիտական ընկերության անդամ, պետական հնագիտական հանձնաժողովի խորհրդի անդամ:

Հովսեփ Օրբելին 1926 թ. հիմնադրել և գլխավորել է Էրմիտաժի «Արևելքի» բաժինը, իսկ 1934-1954 թթ. եղել է Էրմիտաժի տնօրենը, 1939, 1948, 1950 թթ. զեկուցումներ է կարդացել Աղթամար կղզու ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ, իսկ ավելի վաղ՝ 1929 թթ., իրականացրել է Գառնիի, Պտղնիի, Փարպիի պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությունը: Փաստորեն Հ. Օրբելին համարվում է հայկական պատմամշակութային հուշարձանների առաջին գիտական հետազոտողը: Եղել է ԽՍՀՄ ԳԱ հայկ. մասնաճյուղի, ապա՝ Հայաստանի ԳԱ պրեզիդենտը, ԽՍՀՄ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ղեկավարը (1943-1947) և այլն:

Օրբելին նշանավոր ազգագրագետ էր: Նա Պետերբուրգի պատմաբանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Կովկասի ազգագրությունը՝ ըստ դասական (հունական և հռոմեական) հեղինակների տեղեկությունների»: Հ. Օրբելու ազգագ-

---

հանդեսում տպագրել է Անիի արձանագրությունների իր ուսումնասիրությունները («Դիվան հայվիմագրության», պր. 1, Եր., 1966):

բական դիտարկումները հիմնականում վերաբերում են Արևմտյան Հայաստանի Մոկս գավառին: Մոկս այցելել է 1911-1912 թթ. և հավաքել է ազգագրական, բանահյուսական և բարբառագիտական եզակի նյութեր:

Օրբելու մեծ աշխատանքի արդյունքները նրա կենդանության օրոք լույս չտեսան: Միայն 1968 թ. լույս տեսավ Հ. Օրբելու ընտիր աշխատությունների առաջին հատորը[128]: 1982 թ. հրատարակվեց միայն մի փոքրիկ մասը[129], որն ընդգրկում է Մոկսի ազգագրական ակնարկը և գրի առնված բնագրերի ռուսերեն թարգմանությունները: 2002 թ. հրատարակվեց նրա «Ընտիր երկերի» երկրորդ հատորը[130], որտեղ առավել ընդլայնված տրված է Մոկսին վերաբերող ազգագրական ակնարկը: Այն կազմված է երկու հիմնական բաժնից՝ ազգագրություն (Մոկսը և բնակիչները) և բանահյուսություն՝ հայ բանահյուսական բնագրեր, թարգմանություններ: Հավելվածում տրված են բնակավայրերի անվանումները տեղի բարբառով, Մոկս քաղաքը իր հինգ թաղամասերով: Հաշվառված են 75 խոշոր բնակավայր, 5 ագարակ՝ իրենց տնտեսություններով, ազգային կազմով, 19 լուսանկար, որոնք պատկերել են բնական տեսարանները, կառույցները, տարազը, տապանաքարերը, մի խումբ հայուհիներ՝ մանուկների հետ, Մուրթուլա Բեկն իր վարչակազմով և այլն: Գրքում Մոկսի աշխարհագրական և բնաէկոլոգիական միջավայրը և էթնիկ կազմը ներկայացնելուց հետո տրված են տեղեկություններ հայ (նստակյաց-երկրագործ) և քուրդ (քոչվոր-անասնապահ) ժողովուրդների թվաքանակի,

---

[128] Տե՛ս **Орбели И. А.,** Избранные труды, в двух томах, т. I, Москва-Ленинград, 1968:

[129] Տե՛ս **Орбели И. А.,** Фольклор и быт Мокса, Москва, 1982:

[130] Տե՛ս **Орбели И. А.,** Избранные труды в двух томах, т. II, Ереван, 2002:

զբաղմունքների՝ երկրագործության, անասնապահության, տնայնագործության, արհեստների, փոխադրամիջոցների, առևտրի, փոխանակության, նյութական մշակույթի՝ բնակավայրերի ու բնակարանների դասավորվածության, ներսույթի, հատակագծի, ինչպես նաև հասարակական, հոգևոր կյանքի ու կենցաղի, սովորույթների ու ավանդույթների, քաղաքական ու ազգամիջյան փոխհարաբերությունների վերաբերյալ:

Ուշագրավ են հատկապես միջէթնիկ հարաբերությունները՝ հեղինակին հյուրընկալած Մուրթուլա բեկի բնութագիրը, երեկոյան հավաքույթները նրա տանը, ըստ ավագության բարձերին բազմելը, որը հիշեցնում է հին իրանական ու հայկական «Գահնամակի» կարգը[131]:

Օրբելու՝ Մոկսի հայության վերաբերյալ դիտարկումները մնացին որպես եզակի թանկարժեք հաղորդումներ: Հիշատակություններ կան նաև ամուսնության ու հարսանիքի, ժողովրդական տոների (Համբարձում, Վարդավառ, Տյառնընդառաջ) մասին և այլն:

1939 թ. «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարության միջոցառումները հանձնարարված էր գլխավորել Հ. Օրբելուն: Նա մեծ դեր ունեցավ «Սասունցի Դավիթ» համահավաք ժողովածուի (հայերեն և ռուսերեն) հրատարակման գործում (1939 թ.): Նրա ջանքերով էր, որ մեր դյուցազներգությունը դուրս գալով ազգային սահմաններից, դարձավ համամարդկային մշակույթի սեփականություն:

Ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին թողել է հարուստ գիտական ժառանգություն: Հայ մշակույթի ասպարեզում Հովսեփ Օրբե-

---

[131] Տե՛ս նաև **Վարդումյան Դ.,** Հովսեփ Օրբելու ազգագրական հետազոտությունները Մոկսում, «Նոր ազգագրական հանդես», Ա, Երևան, 2005, էջ 122-124:

լին գնահատված է եղել որպես ռահվիրա: Հովսեփ Օրբելու գիտակազմակերպչական, ազգագրական գործունեության ամփոփիչ բնութագրությունը տրված է մեր հրատարակած հոդվածներում[132]:

5.3.4. Երվանդ Շահազիզ (1856-1951)

1920-1940-ական թթ. նշանավոր հայագետներից էր նաև Երվանդ Շահազիզը՝ գրականագետ, պատմաբան, ազգագրագետ, բանահավաք, մանկավարժ, բանասիրական գիտությունների դոկտոր (1944), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1946): 1922 թ. հրավիրվել է Երևան՝ մասնակցելու Հայաստանի կենտրոնական կուլտուր-պատմական թանգարանի ստեղծման աշխատանքներին՝ նորաստեղծ թանգարանը Նոր Նախիջևանի հայկական համայնքին պատկանող ազգագրական և արխիվային հարուստ նյութերով հարստացնելու համար: Թանգարանում աշխատել է որպես պատմագրական բաժնի վարիչ: Պատմաբանասիրական բազմաթիվ աշխատությունների հեղինակ է, որոնցից ազգագրական առումով ուշագրավ են Նոր Նախիջևանի հայկական գաղթավայրի պատմությանը, ազգային սովորություններին և ավանդույթներին վերաբերող «Նոր Նախիջևանը և նորնախիջևանցիք» (ԱՀ, գ. 9, էջ 5-57) ուսումնասիրությունը, «Հին Երևանը» (Եր., 1931), «Աշտարակի պատմությունը» (Եր., 1987): Իր ծննդավայրի պատմությունը ոչ թե լոկ տարեթվեր ու անուններ են, այլ ներկայացվում են պատմական իրադարձությունները՝ ավան-

---

[132] **Նահապետյան Ռ.,** Ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գիտական և գիտակազմակերպչական գործունեության էջերից//Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 312-336:

դույթներով, ծիսակարգերով, տոհմածառերով, հայտնի մարդկանցով:

Ուշագրավ ուսումնասիրություններ է նվիրել հայոց մեծերի՝ Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Սմբատ Շահազիզի գործունեության մասին: Նրան ենք պարտական Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հիմնադրման համար: Նրա անձնվեր հայրենասիրական ջանքերի շնորհիվ է Նոր Նախիջևանից Հայաստան տեղափոխվել արխիվային և թանգարանային վիթխարի հարստություն: Նա խոշոր հետք է թողել հայագիտության բոլոր բնագավառներում՝ որպես պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ, գրականագետ: Ցավոք, անտիպ է դեռևս «Չերքեզիա կամ Չերքեզիստան և չերքեզահայք» աշխատությունը:

5.3.5. Գրիգոր Ղափանցյան (1887-1957)

Հայ ազգագրության բնագավառում անառարկելի է նշանավոր լեզվաբան Գ. Ղափանցյանի հետազոտությունների կարևորությունը, առանձնապես հեթանոսական հավատալիքների ուսումնասիրության խնդրում: Տիրապետելով փոքրասիական մի շարք մեռած լեզուների (խեթերեն, ուրարտերեն, խուռիերեն և այլն)՝ Ղափանցյանը սեպագիր արձանագրությունների խորազնին ուսումնասիրությամբ պարզել է հայերի էթնիկական կապերը հարևան ժողովուրդների հետ, լեզվական փոխառություններն ու փոխազդեցությունները: Այդ առումով ուշադրության արժանի է «Chetto-armeniaca» (Եր., 1931) մենագրությունը, որտեղ քննել է հայերենի ու խեթերենի շուրջ 200 բառեր ու ձևեր, լուսաբանել նաև փոքրասիական մի

շարք ժողովուրդների մշակույթի ու պատմության կնճռոտ հարցեր: Ղափանցյանի «Խեթական աստվածները հայոց մեջ»[133], «Արա Գեղեցիկի պաշտամունքը» (Եր., 1944) մենագրությունները, «Զրահարսի պաշտամունքը հայերի մեջ»[134], «Խեթական մի առասպելի մասին՝ կապված կռունկի և գարնան աստվածության հետ»[135] հոդվածները և «Հայասան հայերի բնօրրան»[136] աշխատությունը մինչև օրս գնահատվում են որպես լուրջ ներդրում հայ ազգաբանության, հնագույն հավատալիքների լուսաբանման գործում: Ուշագրավ է նրա «Ուրարտուի պատմություն», «Հայոց լեզվի պատմություն» գրքերը, որտեղ քննության են առնված հայ ժողովրդի կազմավորման հարցերը, հայոց լեզվի հնդեվրոպական նստվածքը:

5.3.6. Գ. Չուրսին (1874-1930)

Հայ ազգագրության վերաբերյալ ուշագրավ հետազոտություններ ունի կովկասագետ Գ. Չուրսինը: Նա Պետրոգրադի համալսարանի կովկասագիտության ամբիոնի վարիչն էր: Առաջինը նա հիմք դրեց Զանգեզուրի ազգագրական ուսումնասիրությանը՝ հետմահու 1931 թ. լույս ընծայվեց «Армяне Зангезура»[137] գիրքը: «Զանգեզուրի հայերը» գրքույկում նշվում

---

[133] Տե՛ս **Капанцян Г.А.,** Хетские боги у армян: в связи с генезисом армянского пантеона вообще // «Երևանի պետհամալսարանի գիտական աշխատություններ»,հ. 14, 1940, էջ 243-316:

[134] Տե՛ս «Խորհրդային գրականություն», 1940, թիվ 6, էջ 124-135:

[135] Տե՛ս «Մառի անվան կաբինետի աշխատություններ», № 1, 1945, էջ 173-186:

[136] Տե՛ս **Капанцян Г. А.,** Хайаса-колыбель армян. Этногенез армян и их начальнаяистория, Ереван, 1956:

[137] Տե՛ս **Чурсин Г.,** Армяне Зангезура, Отдельный оттиск из «Научных записок»,Тифлис, 1931, т. I, вып. 6:

է, որ ազգագրական երևույթներն այստեղ ըստ էության դեռևս փոփոխությունների չեն ենթարկվել: Նույնն են մնացել բնակարանները, հարսանեկան հանդեսները, ընտանեկան փոխհարաբերությունները, թաղման արարողությունները, տապանագրերը, կրակի երկրպագությունը, սուրբ աղբյուրների ու ծառերի պաշտամունքը, «Կաղնու խաչը»՝ Արծվանիկ գյուղի մոտ, սրբատեղիները, Տաթևի վանքը, Ծիծեռնակավանքը, Սպիտակ ջրի անտառի Կարմիր վանքը, Աղանց եկեղեցին, նույնն են մնացել բազմաթիվ հավատալիքները: Այս թվարկված ազգագրական երևույթները նա գրի է առել իր ճամփորդությունների ընթացքում:

Հրատարակել է նաև ավելի քան 50 գիտական հոդված և հաղորդում: Հիշատակենք մի քանիսը. «Մեռածների հավատքը Կովկասում», «Հարսանեկան հանդեսները և սովորությունները Կովկասում» (1902 թ.), «Սուգը կովկասյան ժողովուրդների մեջ» (1903 թ.), «Քրդերը Անդրկովկասում» (1909 թ.), «Թուրքերը Անդրկովկասում», «Ակնարկ Կովկասի ազգագրության» (1926 թ.): Խորհրդային շրջանում նրա ազգագրական գործունեությունը ավելի լայն ծավալ ստացավ: Նրա հետմահու աշխատություններից են նաև՝ «Աբխազները», «Տնտեսական մշակույթի և սովորությունների պատկերը 1920-ական թթ. (բոլորը՝ ռուսերեն)»:

Ուշագրավ են նաև Ն. Գրիգորովի, Ե. Մելիք-Շահնազարյանի, Ն. Շիրակունու և մյուսների հոդվածները, որոնք տպագրվեցին «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» մատենաշարում:

5.3.7. Լ. Մելիքսեթ-Բեկ (1890-1963 թթ.), Կ. Մելիք-Օհանջանյան (1893-1970 թթ.)

Նշանավոր հայագետ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ստ. Լիսիցյանի և Գ. Չուրսինի հետ միասին աշխատելով Կովկասի պատմահնագիտական ինստիտուտում, նույնպես կարևոր ներդրում ունեցավ հայ ազգագրության բնագավառում: Ուշագրավ են Լ. Մելիքսեթ-Բեկի «Հայ ազգագրագետ-հնագետ Ե. Լալայանը»[138], «Կովկասում կուվադայի սովորույթի հարցի մասին»[139] և այլ հոդվածներ[140]: Պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկը հայոց պատմության, մատենագրության ու մշակույթի հետազոտող էր: Բոլորովին վերջերս լույս է տեսել նրա «Պատմա-բանասիրական պրպտումներ» գիրքը: Այն բաժանվում է երեք մասի՝ մատենագրական և մատենագիտական պրպտումներ, պատմություն և բանահյուսություն, վիմագիր վկայություններ: Ուշագրավ է գիտնականի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» գիրքը: 2010 թ. Պարույր Մուրադյանի աշխատասիրությամբ և Մայր աթոռ Ս. Էջմիածնի

---

[138] Տե՛ս **Меликсет-Беков Л.,** Армянский этнограф-археолог Е. А. Лалаян (К пятилетию со времени его кончины) // СЭ, 1936, № 4-5, էջ 225-226:

[139] Տե՛ս **Меликсет-Беков Л.,** К вопросу об обычае кувады на Кавказе в связи с языковым пережитком матриархата // Сб. Академия наук СССР, XV, Москва-Ленинград, 1935, էջ 729-736:

[140] Տե՛ս **Меликсет-Беков Л.,** О необходимости сравнительного изучения крестьянских жилищ Армении и Грузии // «Изв. КИАИ», т. 3, 1925, էջ 109-110, **նույնի՝** К археологии и этнологии Туальской Осии // Сборник Юго-Осетий, Тифлис, 1925, էջ 252-279, **նույնի՝** Արտավազդի և Միհերի հետքերը Վրաստանում // «Բանբեր Հայաստանի գիտ. ինստիտուտի», էջ 93-104, **նույնի՝** Указатель литературы по истории государства и права, обычному праву и юридическим древностям Грузии, Армении и Азербайджана, Тбилиси, 1939, **նույնի՝** К истории удин (uticaarmeniaca), “Труды Тбил. Гос. Ун-та”, т. 23, 1942, էջ 25-55:

հրատարակությամբ Մելիքսեթ-Բեկի «Պատմաբանասիրական պրպտումներ» խորագրի ներքո լույս տեսան «Հայերը Վրաստանում», «Հայերը վրաց հին գրականության մեջ», «Հին Թբիլիսիի և հայ-վրացական մշակութային կապերի պատմությունից», «Մի քանի խոսք առլեզի պաշտամունքի մասին», «Վարդավառը վրաց մեջ» զեկուցումներն ու հաղորդումները, որոնք, անշուշտ, ունեն նաև ազգագրական արժեք:

Հայ հեթանոսական կրոնի ուսումնասիրության խնդրում ուշագրավ է նշանավոր բանագետ Կ. Մելիք-Օհանջանյանի «Միթրա-Միհրը «Սասնա ծռերի» մեջ» (Հայկ. ՍՍՌ ԳԱ «Գրական-բանասիրական հետախուզումներ», գ. Ա, Եր., 1946) ուսումնասիրությունը: Մ. Աբեղյանի հետ հաջողությամբ իրականացրել է «Սասնա ծռեր» էպոսի գիտական հրատարակությունը՝ երեք մեծադիր հատոր, որ հայ բանասիրության ծանրակշիռ հիմնաքարն է: Դեռ 1932 թ. Ալաշկերտցի բանասաց Մանուկ Թորոյանից գրի է առել էպոսի մի նոր տարբերակ: Ընդհանուր առմամբ՝ գրի է առել «Սասնա ծռերի» ութ նոր պատում:

Ուշադրության արժանի է նաև Թ. Ավդալբեգյանի (1885-1937 թթ.)՝ արևի ու կրակի աստված Միհրին նվիրված «Միհրը հայոց մեջ»[141] աշխատությունը:

* * *

Սփյուռքում էլ լույս տեսան պատմաազգագրական մի քանի շրջանների վերաբերող ուսումնասիրություններ, որոնք ավելի շատ տեղեկատվական, աղբյուրագիտական արժեքա-

---

[141] Տե՛ս **Ավդալբեգյան Թ.,** Միհրը հայոց մեջ // Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 13-79:

վոր ազգագրական գործեր են և արժանի են ուշադրության[142]:

Հայ ժողովրդի անցյալի ազգագրության վերաբերյալ հաճախ խիստ հազվագյուտ նյութեր են պարունակում հայ մատենագրության անսպառ գանձարանի՝ գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանի ձեռագրական ֆոնդերը, որոնք տակավին ուսումնասիրված չեն:

1920-1940-ական թվականներին ինչ-ինչ պատճառներով անտեսվել է ազգագրության կարևոր բնագավառներից մեկը՝ ժողովրդական բժշկությունը:

Հարկ է նշել նաև, որ խորհրդային կարգերի հաստատման առաջին տասնամյակներին յուրատեսակ քամահրական վերաբերմունք է եղել ազգագրական գիտության նկատմամբ, մասնագետներ գրեթե չեն պատրաստվել, և միայն անցյալից հարատևող վերը նշված «մի քանի նախանձախնդիրների, հատկապես Ս. Լիսիցյանի ջանքերով է, որ գոյատևել է ազգագրությունը՝ վախվորած ծվարելով ՀՊԹ-ում և ԵՊՀ-ի աշխարհագրության մասնաճյուղում (գավառագիտություն անվան տակ)»[143]: Այս տարիներին ազգագրական աշխատանքների ղեկավարությունը իրականացվում էր Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի և ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի կողմից, ապա՝ ավելի ուշ կազմավորված Կուլտուրայի պատմության ինստիտուտի, որտեղ էլ կենտրո-

---

[142] Տե՛ս **Երեմյան Ա.,** Սպահանի Չահարմահալ գավառը // «Բազմավէպ», 1923, № 7-12, 1924, № 1-3, 6-12, 1925, № 3: Ուշագրավ են նաև ազգագրական հարուստ նյութերի պարունակության առումով սփյուռքահայ այլ հեղինակներ ևս. **Համբարձումյան Վ.,** Գյուղաշխարհ, պատմական և ազգագրական ուսումնասիրություն, Փարիզ, 1927, **Բախտիկյան Ս. Ա.,** Արաբկիր և շրջակայքի գյուղերը, Պեյրութ, 1934, **Ազատյան Թ.,** Ակն և ակնեցիք, Իսթանպուլ, 1943 և այլն:

[143] Տե՛ս **Վարդումյան Դ.,** Հայ ազգագրությունը Ի դարում // «Բազմավէպ», 1-4, 2003,էջ 452:

նացվում է ազգագրական բոլոր աշխատանքների ղեկավարումը և միայն 1935 թ. այն լիովին հանձնվում է պետական պատմական թանգարանին, որտեղ և հետագա տարիներին ՀԽՍՀ Լուսժողկոմատի իրավասության ներքո: Այս շրջանում ազգագրության նկատմամբ աննպաստ վերաբերմունքի պատճառով չպատրաստվեցին հին սերնդին փոխարինող մասնագետ կադրեր:

Ազգագրական գիտության նկատմամբ վերաբերմունքը, պայմանավորված աշխարհաքաղաքական տեղաշարժերով, հետզհետե փոխվում է Երկրորդ աշխարհամարտին հաջորդած նոր պայմաններում: Ի մի բերելով վերը ասվածը՝ վստահորեն կարելի է պնդել, որ 1920-1940-ական թվականները այն շրջափուլն էին, երբ ազգագրության բնագավառում սկզբնավորվեց և զարգացում ապրեց թանգարանային գործը, իսկ Հայաստանի գիտության և արվեստի, Կովկասի պատմահնագիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի, Գիտությունների ակադեմիայի ստեղծմամբ նոր թափ ու ծավալ ստացավ ազգագրական նյութերի հավաքչական, գիտահետազոտական և գիտակազմակերպչական գործունեությունը: Նախախորհրդային շրջանում գործող վերոնշյալ ազգագրագետները, արդեն խորհրդային տարիներին հենվելով իրենց բազմամյա գիտելիքների և փորձառության վրա, ծավալեցին արդյունավետ հավաքչական և հետազոտական աշխատանք՝ որոշակի ներդրում ունենալով խորհրդահայ ազգագրության զարգացման գործում: Հայրենանվեր ազգագրագետներ-բանահավաքները խելամտորեն օգտագործեցին նաև նորագյուտ տեխնիկական միջոցները՝ լուսանկարում, ձայնագրում, չափագրում, քարտեզագրում, կինոնկարահանում և այլն, ինչի շնորհիվ գրանցված նյութերը ամբողջական տեսքով թողնվեցին հետագա ուսում-

նասիրողներին: Նրանց թողած ժառանգության հիման վրա արդեն XX դարի կեսերին սկսեց գործել ազգագրագետ-բանահավաքների հերթական սերունդը, որը ազգագրական նոր, ավելի համակողմանի հարցարանով առաջնորդվելով՝ հայ ազգագրությունը զարգացրեց ժամանակի պահանջներին համահունչ՝ ի մի բերելով ու հրատարակելով ինչպես թեմատիկ, այնպես էլ պատմաազգագրական շրջանների ամբողջական հետազոտություններ: Այս շրջանը բնորոշվում էր նաև ազգագրության և բանահյուսության՝ որպես գիտության ուրույն բնագավառների տարանջատման ու զարգացման ժամանակաշրջան:

Հայ ազգագրական գիտությունը ընդհանուր առմամբ խորհրդային շրջափուլ թևակոխեց իբրև պատմամշակութային գիտության լիովին կազմավորված բնագավառ: Խորհրդային կարգերի հաստատումով սկսվեց հայագիտության զարգացման նոր փուլ. Հայաստանում գիտության մյուս բնագավառների հետ բարենպաստ պայմաններ և զարգացման լայն հեռանկարներ ստեղծվեցին նաև ազգագրական գիտության համար: Նյութական հնարավորություններ ու հեռանկարներ բացվեցին ինչպես գիտահետազոտական, այնպես էլ դաշտային բանահավաքչական աշխատանքների ծավալման համար: Այն, ինչ նախկինում ինքնուրույն պետականության բացակայության պատճառով մեզանում կատարվում էր առանձին անհատների և ազգագրական, գավառագիտական ու նման ընկերությունների նախաձեռնությամբ ու ջանքերով, այս շրջափուլում սկսեց իրականացվել պետական հոգածությունը վայելող համապատասխան հիմնարկների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրված, հետևողական գործունեությամբ: Հարկ է նշել, որ այս շրջանում խորհրդային ազգագրության

խնդիրների ու հեռանկարների, սոցիալիստական գյուղի վերափոխումների անդրադարձների վերաբերյալ պահանջներ էին առաջ քաշվում միութենական ազգագրության կողմից: Գաղափարական այս պարտադրանքի պայմաններում հայագիտության, այդ թվում՝ նաև ազգագրական գիտության ապահով և անկաշկանդ զարգացումը, ըստ էության, դարձել էր անհնարին: Հայրենական մեծ պատերազմի շրջանում ազգագրական կադրերի խիստ սակավության պայմաններում ժամանակավորապես սահմանափակվում է ազգագրական աշխատանքների ծավալումը: Միայն 1944 թ. վերականգնվում են սահմանափակ կազմերով ազգագրական դաշտային ուղևորությունները: Ուշադրություն է դարձվում երիտասարդ մասնագետ կադրերի պատրաստմանը:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

Հետադարձ կապ

- **Առաջադրանքներ**

Բանավոր ներկայացնել թեմայի հիմնական դրույթները:

- **Թեմայի գնահատում /անդրադարձ/ Գնահատման թերթիկ**
- **Գրիր դասախոսության ամենակարևոր գաղափարը**
- **Ինքնաստուգման հարցեր**

1. Ի՞նչ գործունեություն ծավալեց Ե. Լալայանը 1920-ական թթ.՝ թանգարանաստեղծման ասպարեզում:

2. Նշել Ե. Լալայանի գիտահետազոտական գործունեության արդյունքները Խորհրդային իշխանության առաջին տասը տարիներին:

3. Որո՞նք էին Խորհրդային Հայաստանի գիտական և

կրթական հաստատությունները 1920-40-ական թթ.:

4. Ո՞վ էր Խաչիկ Սամուելյանը: Թվարկել նրա գիտական ուսումնասիրությունները, որոնք հրատարակված էին «Ազգագրական հանդեսում» և այն աշխատությունները, որ հրատարակվեցին 1930-40-ական թթ.:

5. Բնութագրեք Ստ. Լիսիցյանի «Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի» աշխատանքային տարիների գործունեությունը:

6. Ներկայացրեք Ստ. Լիսիցյանի գիտակազմակերպչական գործունեությունը՝ 1930-1940-ական թթ.:

7. Տվեք Ստ. Լիսիցյանի գիտական աշխատությունների համառոտ ցանկը և հակիրճ բովանդակությունը:

8. Ի՞նչ կարող եք ասել Հ. Թումանյանի, Մ. Աբեղյանի, Հ. Օրբելու, Ե. Շահազիզի, Գ. Ղափանցյանի, Գ. Չուրսինի, Լ. Մելիքսեթ-Բեկի, Կ. Մելիք-Օհանջանյանի ազգագրական գործունեության վերաբերյալ:

9. Հակիրճ բնութագրեք 1920-1940-ական թթ. Հայաստանում ազգագրության ձեռքբերումներն ու բացասական միտումները:

Հիմնական և լրացուցիչ գրականություն

Հիմնական

1. **Բդոյան Վ.,** Հայկական ՍՍՌ պետական պատմական թանգարանը // «Էջմիածին», 1947, № 7-8:

2. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974:

3. **Բդոյան Վ.,** Սովետահայ ազգագրության հիսնամյակը//«Հայագիտությունը 50 տարում», Երևան, 1971:

4. **Գարամանլեան Հ. Ա.,** Երուանդ Լալայեան//ՀԱ, 1931, 3-

5, էջ 294-303:

5. **Դուրգարյան Կ. Գ.,** Ալեքսանդր Մխիթարյան (Ծննդյան 125-ամյակի առթիվ)//ՊԲՀ, 1971, 3, էջ 183-188:

6. **Խալաթեան Գր.,** Նիւթեր հայ ազգագրութեան պատութեան//ԷԱԺ, հ. 7, էջ 37-58:

7. **Ղաֆադարյան Կ. Գ.,** Հնագիտական աշխատանքները Հայաստանում // «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի», 1948, № 1:

8. **Ղաֆադարյան Կ. Գ.,** Հայաստանի առաջին թանգարանը//Լրաբեր հաս. գիտ., 1974, էջ 37-47:

9. **Ղաֆադարյան Կ. Գ.,** Հայաստանի թանգարանների պատմությունից//Լրաբեր հաս. գիտ., 1972, 10, էջ 20-35:

10. **Հարությունյան Ս.,** Մեծ հայագետը (Մ. Աբեղյանի ծննդյան 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1965, 1, էջ 137-152:

11. **Ղանալանյան Ա.,** Մանուկ Աբեղյանի կյանքն ու գիտական գործունեությունը, Մանուկ Աբեղյան, Երկեր, Ա, Եր., 1966, էջ Է-ԻԴ:

12. **Ղանալանյան Ա.,** Օրբելու արխիվից. Ակնարկ Մոկսի տեղագրության և ազգագրության, ՊԲՀ, 1977, թիվ 2, էջ 251-272:

13. **Ղարիբջանյան Ա.,** Հայաստանի գիտահետազոտական առաջին ինստիտուտը (Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի հիմնադրման 90-ամյակի առթիվ), ՊԲՀ, 2011, թիվ 2, էջ 95105:

14. **Մելիք-Փաշայան Կ.,** Երվանդ Լալայանի կյանքն ու գիտական գործունեությունը // Ե. Լալայան, Երկեր, հ.1, Երևան, 1983, էջ 7-32:

15. **Մելիք-Փաշայան Կ.,** Խաչիկ Սամուելյան (ծննդյան 100-ամյակի առթիվ) // ՊԲՀ 1974, № 1, էջ 86-96:

16. **Մելիք-Փաշայան Կ.,** Ստեփան Լիսիցյան // ՊԲՀ, 1965, № 4:

17. **Յուզբաշյան Կ.,** Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի, Եր., 1971:

18. **Նահապետյան Ռ.,** Երվանդ Լալայանի և «Ազգագրական հանդեսի» դերը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում // «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ, պատմության ֆակ., 2016, էջ 373-386:

19. **Նահապետյան Ռ.,** Ե. Լալայանը հայ ազգագրության ուսումնասիրության պատմաազգագրական շրջանացման մեթոդի սկզբնավորող // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 214-235:

20. **Նահապետյան Ռ.,** Ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գիտական և գիտակազմակերպչական գործունեության էջերից// Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 312-336:

21. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրական գիտությունը խորհրդային շրջանում (1920-1940-ական թթ.)//Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Երևան, 2019, էջ 236-275:

22. **Պետրոսյան Յու.,** Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի (ծննդյան 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1987, № 1, էջ 3-10:

23. **Վարդումյան Դ.,** Ազգագրությունը Սովետական Հայաստանում 50 տարում // ՊԲՀ, 1970, № 4, էջ 135-144:

24. **Վարդումյան Դ.,** Հայ ազգագրությունը Ի դարում // Բազմավէպ, № 1-4, 2003, էջ 451-453:

25. **Վարդումյան Դ.,** Խաչիկ Սամվելյան // «Հայ ժողովրդական մշակույթ», XII, ՀԱԻ, 2004, էջ 168-181:

26. **Վարդանյան Լ.,** Ստեփան Դանիելի Լիսիցյան (Ծննդյան 125-ամյակի առթիվ) // «Լրաբեր հաս. գիտ.», 1991, № 1:

27. **Քացախյան Կ.,** ժողովրդագիտությունը հայ պարբերականներում (մատենագիտություն), Երևան, I, II, 1985, III, 1986:

28. **Օղաբաշյան Ա.,** Խ. Սամուելյանը ազգագրագետ, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, թիվ 11:

29. **Варданян Лиля,** Собирательско-полевая деятельность С. Д. Лисицина в 1920-е гг // «Հայ ժողովրդական մշակույթ», XII, Երևան, 2004, էջ 153-158:

30. **Варданян Л. М.,** Степан Лисициан и истоки армянской этнографии, Ереван, 2005.

31. **Карапетян Э.,** К 60-летию армянского этнографического издания "Азгагракан Андес", "Советская этнография", 1956, № 3:

32. **Мелик-Пашаян К. В.,** Жизнь и деятельность Ерванда Лалаяна // СЭ, 1965, № 2, с. 135-146.

33. **Мелик-Пашаян К. В.,** Основные направления этнографических исследований в Армянской ССР, СЭ, 1971, № 3, с. 16-24.

Լրացուցիչ

1. **Աբեղյան Մ.,** Հայ ժողովրդական հավատքը, Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 11-103:

2. **Լալայան Ե.,** Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Եր., 1931:

3. **Լալայան Ե.,** Ծրագիր հայոց ազգագրական թանգարանի համար նյութեր հավաքելու//ԱՀ, հավելված, գ. XVI, Թիֆլիս, 1907, էջ 1-26:

4. **Լալայան Ե.,** Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետով «Տեղեկագիր», ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի, № 1, Երևան, 1926, էջ 155-171:

5. **Լալայան Ե.,** Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, «Տեղեկագիր» ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի, Երևան, 1928, թիվ 3, էջ 82-118:

6. **Լալայան Ե.,** Տղաբերքի սովորությունների զարգացումը

հայոց մեջ, «Տեղեկագիր» ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի, Եր., 1930-31, № 4-5:

7. **Լալայան Ե.,** Կոտայք. Հաշվետվություն // «Տեղեկագիր ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի», 1928, № 3, էջ 82-117:

8. Երվանդ Լալայանի կյանքն ու գործունեությունը արտացոլող փաստաթղթեր (Առաջաբանը, ծանոթագրությունները և հրապարակումը Ա. Սարգսյանի) // ԲՀԱ, 1963, № 1, էջ 121-152:

9. **Լիսիցյան Ստ.,** Ազգագրական հարցարան, Եր., 1946:

10. **Լիսիցյան Ստ.,** Զանգեզուրի հայերը, Եր., 1969:

11. **Լիսիցյան Ստ.,** Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), ՀԱԲ, գ.12, Երևան, 1981, էջ 7-84:

12. **Նահապետյան Ռ.,** Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի (Երախտավոր հայորդու ծննդյան 130-ամյակի առթիվ)// Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 306-312:

13. **Սամվելյան Ա.,** Երվանդ Լալայան//Էջմիածին, 1964, 12, էջ 3-9:

14. **Սամուելյան Խ.,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան, 1931, հ. 2, հ. 3, Երևան, 1941:

15. **Орбели И.,** Фольклор и быт Мокса, М., 1982.

Թեմա 6. Ազգագրական գիտության զարգացման հիմնական ուղղությունները և ազգագրական գիտահետազոտական հաստատությունները ՀՀ-ում 1950-1980-ական թթ.

1950-ական թվականներից մինչև 1980-ական թթ. ասպարեզ եկավ ազգագրագետների նոր սերունդ, որը հենվելով ավանդույթի վրա, գիտության արդի պահանջներին համապատասխան, ծավալեց հավաքչական և հետազոտական լայն գործունեություն: Հայ ազգագրական գիտության կայացմանն ու միջազգային գիտական հանրության ճանաչմանը մեծապես նպաստել են միջին սերնդի ներկայացուցիչները՝ Վարդ Բդոյանը, Էմմա Կարապետյանը, Դերենիկ Վարդումյանը, Կարեն Մելիք-Փաշայանը, Ասյա Օդաբաշյանը, Կառլեն Սեղբոսյանը, Լևոն Պետրոսյանը և այլք:

1950-ական թվականներից Պատմության պետական թանգարանի, սկզբնապես Պատմության ինստիտուտի, ապա Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ամենամյա խմբարշավների (Դ. Վարդումյանի, Վ. Բդոյանի գլխավորությամբ) և անհատական շրջագայությունների միջոցով ազգագրական համատարած հետազոտության է ենթարկվել Խորհրդային Հայաստանի շրջանների մեծ մասը, ինչպես նաև Վրացական ԽՍՀ Ախալքալաքի, Ախալցխայի, Բաթումի, Բոլնիսի, Աբխազական ԻՍՍՀ-ի, Ռուսաստանի Ռոստովի մարզի, Կրասնոդարի երկրամասի հայաբնակ շրջանները և Լեռնային Ղարաբաղը:

Հիմնավորապես ուսումնասիրվել են հայոց տնտեսական զբաղմունքները, հասարակական-ընտանեկան կենցաղն ու սովորությունները, ժողովրդական հավատալիքները: Լույս են ընծայվել հայ ժողովրդի տնտեսական կենցաղին, նյութական և

հոգևոր մշակույթին, հասարակական հարաբերություններին, ժողովրդական փոխադրամիջոցներին, ծեսերին ու պաշտամունքին վերաբերող տասնյակ ուսումնասիրություններ: 1971 թվականից «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարում լույս է տեսել 25 հատոր, հրատարակվել են թեմատիկ ուսումնասիրություններ, ՀԱԻ արխիվում պահվող նյութեր: ՀԱԻ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման ու ուսումնասիրության շրջանակներում լույս է տեսել «Ազգագրական և բանահյուսական ժառանգություն» մատենաշարը, որտեղ ամփոփվել են ինստիտուտի արխիվում պահվող նյութեր:

Ինստիտուտի գիտական ուսումնասիրությունները հրատարակվել են գիտական հաշվետվությունների, մենագրությունների, ժողովածուների և հոդվածների միջոցով, որոնք հիմնականում ամփոփված են հետևյալ մատենաշարերում.

1. Հնագիտական պեղումները Հայաստանում,
2. Հայաստանի հնագիտական հուշարձանները,
3. Հայ ազգագրություն և բանահյուսություն,
4. Դիվան հայ վիմագրության,
5. Հայ ժողովրդական հեքիաթներ,
6. Հին Հայաստանի մշակույթը,
7. Հայաստանի հնագույն մշակույթը,
8. Հայ ժողովրդական մշակույթ,
9. Ազգագրական և բանահյուսական ժառանգություն,
10. Գիտական ժառանգություն:

2017 թվականից ինստիտուտը հրատարակում է «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ» պարբերականը:

6.1. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի կազմավորումը և գործունեությունը

1950-1980-ական թթ. հին սերնդին փոխարինելու եկած երիտասարդ մասնագետները ավելի սերտորեն են կապվում միության՝ առաջին հերթին ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի ազգագրության ինստիտուտի, ինչպես նաև հարևան հանրապետությունների ազգաբանական հաստատություններ-ի հետ: Ավանդույթ են դառնում ամենամյա գիտական նստաշրջանները Մոսկվայում, որին մասնակցում են նաև հայ ազգագրագետները: Այս շրջանում սկսվում է նկատելի դառնալ խորհրդային ազգագրության մի այլ տարբերակիչ կողմը նախախորհրդայինից. եթե անցյալում ժողովրդի առօրյա կյանքից վերապրուկային նյութեր էին հավաքվում հիմնականում նախնադարյան-տոհմային կարգերի բնույթը պարզաբանելու նկատառումով, ապա այժմ իրականացվում է նաև շրջադարձ դեպի ժողովրդի ժամանակակից կենցաղի ու մշակույթի ուսումնասիրությունը: Ազգագրագետի խնդիրն է դառնում պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ կենցաղում դրսևորվող նոր երևույթները լուսաբանել պատմական դինամիկ կապի մեջ, ցույց տալ, թե կենցաղային այս կամ այն երևույթն ինչպիսի փոփոխություններ է կրում, և ինչո՛վ են դրանք պայմանավորված[144]: Այս շրջանում ուշադրության կենտրոնում է եղել հայ ժողովրդի կենցաղում խորհրդային շրջանում

---

[144] Տե՛ս **Վարդումյան Դ.,** Ազգագրական գիտությունը Հայաստանում 1950-1955 թթ. // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1956, № 9, էջ 127-131: **Նույնի՝** Некоторые материалы по этнографии армян// «Краткие сообщения» института этнографии им. Н. Н. Миклухо-Маклая АН СССР, т. XXXIII, Москва, 1960, с. 31-38.

կատարված փոփոխությունների ուսումնասիրության հարցը, թեև շատ հաճախ այն ներկայացվել է նկատելի չափով իրականության գունազարդմամբ, շքահանդեսային երանգներով: Ոչ միշտ է ճիշտ լուսաբանվել ազգային մշակույթի լավագույն ավանդույթները զարգացնելու հարցը:

1953 թ. Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում կազմակերպվեց ազգագրության խումբ: 1953-1955 թթ. խմբի ղեկավար է նշանակվում պ.գ.թ. Է. Կարապետյանը, 1955-1959 թթ.՝ Դ. Վարդումյանը: Խմբի մյուս անդամներն էին պ.գ.թ. Ամինե Ավդալը, Վ. Թեմուրճյանը և Ա. Օդաբաշյանը: Պատմության ինստիտուտի, Պատմության պետական թանգարանի հնագետ ու ազգագրագետ կադրերի, նաև ԳԱ գրականության ու արվեստի ինստիտուտների բանահյուսության և պարարվեստի մասնագետների համախմբմամբ 1959 թ. հիմնվեց ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը (ՀԱԻ, հիմնադիր տնօրեն՝ Բ. Առաքելյան, 1912-2004): Ազգագրության բաժնի (վարիչ՝ Դ. Վարդումյան, 1923-2005) ստեղծումը նշանակալի դեր խաղաց հայ ազգագրության զարգացման, մասնավորապես մասնագետ կադրեր պատրաստելու, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու, հանրապետության և արտերկրի հարակից շրջաններում գիտարշավներ կազմակերպելու, ազգագրական ու բանահյուսական նյութեր հավաքելու գործում: Բավական է ասել, որ Ստ. Լիսիցյանի մահվանից հետո Հայաստանի բուհերում ազգագրություն առարկան գրեթե չի դասավանդվել, ասպիրանտներ չեն պատրաստվել: Ստեղծվեց գիտական մի կոլեկտիվ, որը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ Հայաստանի հնագիտության, ազգագրության, վիմագրության, բանահյուսության, երաժշտության և պարարվեստի ուսումնասիրությանը: Տասը տարում ինստի-

տուտի աշխատակիցների թիվը 22-ից հասավ 81-ի, որոնցից 56-ը գիտաշխատողներ էին, մեկը՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, 7-ը՝ գիտությունների դոկտոր, 30-ը՝ գիտությունների թեկնածու[145]:

Ազգագրության բնագավառում տարվող գիտահետազոտական աշխատանքները կենտրոնացան հիմնականում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, իսկ Հայաստանի պատմության պետական թանգարանը շարունակեց զբաղվել ֆոնդերի հարստացմամբ, դրանց գիտական մշակմամբ և ցուցադրումների կազմակերպմամբ:

Դաշտային ազգագրական նյութերի գրառման նպատակով գիտական արշավախմբերի կազմակերպման, մասնագետ կադրերի պատրաստման, ասպիրանտական նոր տեղերի ձեռք բերման, Մոսկվայի, Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ), Թբիլիսիի և այլ քաղաքների առաջատար ինստիտուտների հետ մասնագիտական կապերի ստեղծման ու այդ տարիներին հրատարակվող ազգագրական հետազոտությունների մեծ մասի խմբագրման ու հրատարակման գործում անուրանալի ներդրում ունեցավ Դերենիկ Վարդումյանը:

Եթե հետպատերազմյան մի ամբողջ տասնամյակ՝ 1945-1955 թթ., գիտական արշավախմբերը սակավաթիվ կազմ ունեին և կազմակերպվում էին դեպքից դեպք, ապա 1950-ական թվականների կեսերից սկսած՝ դրանք դառնում են բազմանդամ ու բազմապրոֆիլ, ընդլայնվում է նաև դաշտային հետազոտությունների աշխարհագրությունը: Հավաքված նյութերը օգտագործվում են ինչպես թեմատիկ պլանային, այնպես էլ

---

[145] Տե՛ս **Կ. Մելիք-Փաշայան,** Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 10տարին // ՊԲՀ, 1970, № 1, էջ 250-253:

ընդհանրացնող աշխատություններում, որոնք ընդգրկում են ժողովրդական կենցաղի, սովորությունների ու մշակույթի ամենատարբեր կողմերը: Արշավախմբերը գործուղվում են անհատական, փոքր ու մեծ խմբերով և որպես նորույթ՝ տեխնիկական նոր հնարավորություններով (լուսանկարիչ, ճարտարապետ, ձայնագրող՝ համապատասխան սարքավորումներով): Այս և հետագա տարիների դաշտային հետազոտությունների շնորհիվ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնում ստեղծվեց ազգագրական գրառված, պատկերազարդային (լուսանկարներ, կինոֆիլմեր, չափագրություններ) և այլ նյութերի հարուստ արխիվ: Ազգագրական դաշտային աշխատանքներն ամփոփվում են համամիութենական գիտական նստաշրջաններում հաշվետվությունների ձևով: Այս շրջանում ուրվագծվում է նաև հայ ազգագրագետների նախասիրությունների շրջանակը:

1970 թ. ինստիտուտի «Հայկական ՍՍՀ» պատմաազգագրական ատլասի կազմումը համարվեց կարևոր խնդիրներից մեկը: Ատլասի բոլոր թեմաների վերաբերյալ նյութերի հավաքումը, քարտեզագրումը և դասակարգումը օպերատիվ դարձնելու համար ստեղծվեց աշխատանքային թեմատիկ խումբ հետևյալ կազմով. Բդոյան Վ.՝ «Երկրագործական մշակույթ», Մկրտոմյան Յու.՝ «Անասնապահական մշակույթ», Վարդումյան Դ.՝ «Բնակավայր. բնակարան», Կարապետյան Է.՝ «Տարազ, զարդարանք»:

Ազգագրության և բանահյուսության զարգացման համար նշանակալի ձեռնարկում էր 1970 թ. «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (ՀԱԲ) մատենաշարի ստեղծումը Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Բացառիկ էր դրա նշանակությունը հատկապես պատմաազգագրական շրջան-

ների ու գաղթօջախների վերաբերյալ, ինչպես նաև թեմատիկ-մենագրական բնույթի հետազոտությունների հրապարակման առումով: Դրանով իսկ նորովի վերականգնվում են «Ազգագրական հանդեսի» (1896-1916) ընդհատված ավանդույթները: Հայ ազգագրագետների ջանքերով հրատարակվել են նաև «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարի՝ «Կովկասի ժողովուրդները» հատորի «Հայեր» բաժինը»[146], «Երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի «Հայաստան» բաժինը[147]:

Հարկ ենք համարում համառոտակի ներկայացնել ազգագրության բաժնի գիտաշխատողների գործունեությունը ևս՝ 1950-1980-ական թթ.:

* * *

Դերենիկ Սուրենի Վարդումյան (1923-2005), պատմական գիտությունների թեկնածու

Ծնվել է 1923 թ. Լոռու մարզի Վահագնի գյուղում: 1940 թ. ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվում է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ: 1946 թ. ընդունվում է ՀԽՍՀ ԳԱ ասպիրանտուրա՝ ազգագրություն մասնագիտությամբ: 1946-1949 թթ. ուսումնառությունն անցկացրել է Երևանում և Մոսկվայում՝ գիտական ղեկավարներ Ստ. Լիսիցյանի և Մ. Կոսվենի ղեկավարությամբ: 1949-1953 թթ. Դ. Վարդումյանը Հայաստանի պատմության պետական թանգարանի ավագ գիտաշխատող էր: 1953 թ. տեղափոխվում է ԳԱ պատմության ինստիտուտի ազգագրության խումբ՝ դառնալով դրա ղեկավար: 1953

---

[146] Տե՛ս Армяне // Народы Кавказа, т. II, серия «Народы мира. Этнографические очерки», Москва, 1962, էջ 435-602:

[147] Տե՛ս Армения // Страны и народы. Советский Союз (Республики Закавказья. Республики Средней Азии. Казахстан), Москва, 1984, էջ 101-141:

թ. պաշտպանում է «Լոռու գյուղացիության կոլտնտեսային կենցաղը» թեկնածուական ատենախոսությունը:

1959 թ. Գիտությունների ակադեմիայի համակարգում հիմնվում է հնագիտության և ազգագրության ինստիտուտը, որի ազգագրության բաժնի վարիչ է դառնում Դ. Վարդումյանը և պաշտոնավարում մինչև կյանքի վերջ: Մեծ եռանդով ձեռնամուխ է լինում ազգագրության բաժնի կազմավորմանը՝ հենց սկզբից կարևորելով ասպիրանտական նոր տեղերի ստեղծումը՝ ազգագրական գիտության զարգացման հիմնական գրավականը համարելով կադրերի պատրաստումը: Շարունակելով հայ ազգագրության երախտավորներ Ե. Լալայանի և Ստ. Լիսիցյանի գործը՝ նա ծրագրել էր ազգագրորեն ուսումնասիրել Հայաստանի բոլոր շրջաններն ու ազգագրական խմբերը, ազգային փոքրամասնություններին՝ ընդգրկելով նաև Անդրկովկասը, Ռուսաստանի Դաշնությունն ու Սփյուռքը: Գրավոր աղբյուրների, ազգագրական և բանահյուսական նյութերի համադրությամբ, հիմք ընդունելով «Աշխարհացույցը», ուրվագծել է Հայաստանի հիմնական պատմաազգագրական մարզերը՝ Փոքր Հայք, Ծոփք-Աղձնիք, Բարձր Հայք, Տուրուբերան, Վասպուրական, Գուգարք, Այրարատ, Պարսկահայք, Արցախ-Ուտիք, Սյունիք (տե՛ս Հայաստանի հիմնական պատմաազգագրական մարզերի ընդհանուր բնութագրությունը // ՊԲՀ, 2004, №2, էջ 48-64): Մեծ է գիտնականի ներդրումը խորհրդային պայմաններում հայկական գյուղում կատարված կենցաղամշակութային վիթխարի փոփոխությունների և նորույթների ուսումնասիրության ասպարեզում: Հեղինակ է «Լոռեցիների նոր կենցաղը», «Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը» (համահեղինակ Է. Կարապետյան), «Աշխարհի ժողովուրդները», մատենաշարի «Հայեր» բաժնի

մեծ մասի («Народы Ккавказа», т. 2, М., 1962) և շուրջ 80 տպագիր աշխատությունների: Բազմաքանակ են Դ. Վարդումյանի մասնագիտական ընտիր խմբագրությամբ հրատարակված աշխատությունները, գրախոսությունները, նրա ղեկավարությամբ անցկացված գիտաժողովները, գիտական զեկուցումների սեղմնագրերի ու հոդվածների խմբագրումները: Ժամանակի ազգագրագետները հարգանքով նրան մեծարում էին «տիար» տիտղոսով, քանզի պարտական էին նրա հոգածությանը:

Դ. Վարդումյանի գիտական հրատարակությունների ընդարձակ շարքը տրված է ՀԱԻ ազգագրության բաժնի էլեկտրոնային կայքում:

Վարդան Սողոմոնի Թեմուրճյան (1903-1960), պատմական գիտությունների թեկնածու

Ծնվել է Սեբաստիայի նահանգի Կամարակ գյուղաքաղաքում 1903 թ., վախճանվել է Երևանում 1960 թ.: 1947 թ. Ֆրանսիայից հայրենադարձել է հայրենիք, նույն թվականից աշխատանքի է անցել պատմության թանգարանում, իսկ 1953 թ. տեղափոխվել պատմության ինստիտուտ, 1953 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Գորգագործությունը Հայաստանում (պատմաազգագրական ուսումնասիրություն)» թեմայով, որն առանձին գրքով տպագրվել է 1955 թ.: Նրա «Գամիրքի հայերը» աշխատությամբ 1970 թ. հիմք դրվեց ՀԱԻ «Հայ ազգագրություն և բանահյուսություն (Նյութեր և ուսումնասիրություններ)» մատենաշարին[148]:

---

[148] Այս բաժնի մյուս աշխատողների վերաբերյալ նյութեր տրամադրելու համար խորին շնորհակալություն եմ հայտնում ՀԱԻ ազգագրության բաժնի վարիչ, պ.գ.թ. Ս. Հոբոսյանին:

Ամինե Ավդալ (1906-1964), բանասիրական գիտությունների թեկնածու

Ծնվել է Կարսի մարզի Յամանչաիր գյուղում, 1936 թ. ավարտել է ԵՊՀ պատմաբանասիրական ֆակուլտետը: 1933 թ. հրատարակվում է Ամինե Ավդալի համահեղինակությամբ «Հայ-քրդերեն» առաջին բառարանը:

1944 թ. «Եզդի կինը նահապետական ընտանիքում ըստ ազգագրական և ֆոլկլորային նյութերի» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1948 թ. Հայաստանի պատմության թանգարանի «Աշխատություններ» № 1-ում հրատարակվում է նրա «Եզդի կինը նահապետական ընտանիքում» ատենախոսական աշխատությունը:

1952 թ. հրատարակվում են Ամինե Ավդալի «Արյան վրիժառությունը քրդերի մեջ և նրա մնացուկների վերացումը սովետական պայմաններում» (անդ, 1952, № 2), «Курдская этнография и фольклор и их изучение в Советской Армении» // Вопроси этнографии Кавказа (Тб. 1952), 1953 թ.՝ «Սովետական քրդերի նոր կենցաղը», 1957 թ.՝ «Անդրկովկասի քրդերի կենցաղը», 2006 թ.՝ «Եզդի-քրդերի հավատալիքները» աշխատությունները:

Վարդ Հարությունի Բդոյան (1910-1986), պատմական գիտությունների դոկտոր, ավագ գիտաշխատող

Մեծանուն գիտնականն այն ազգագրագետներից է, որը թողել է գիտական ծանրակշիռ ժառանգություն, կուտակել է վիթխարի քանակությամբ կորստից փրկված ազգագրական գրավոր ու թանգարանային նյութ, որը ներկա և ապագա ազ-

գագրագետների համար կծառայի գիտական ուսումնասիրությունների անփոխարինելի աղբյուր: Գիտական երկարամյա աշխատանքի ընթացքում գրեթե բոլոր տարիներին եղել է գիտական ուղևորությունների մեջ՝ հայ ազգագրական և բանահյուսական նյութեր գրի առնելու նպատակով, որի արդյունքը եղել է ավելի քան 200 մամուլ նյութերի կուտակումը:

Ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտը՝ 1939 թ.: Ազգագրական գործունեությունը սկսել է 1938 թվականից՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի պատմության և գրականության ինստիտուտի բանահյուսության բաժնում որպես բանահավաք: 1939-1944 թ. աշխատել է Մատենադարանում որպես մատենագետ, իսկ 1944-1959 թթ.՝ Պատմության պետական թանգարանում, 1949 թվականից՝ որպես ազգագրության բաժնի վարիչ:

Կազմակերպել է ազգագրական նյութերի հավաքման գործը և անձամբ զբաղվել Արարատյան հովտի, Վասպուրականի ու Սասունի երկրագործական գործիքների համալիրների վերականգնման հարցերով, ղեկավարել է ազգագրական արշավախմբեր, որոնց գործունեության հետևանքով հարստացել են ոչ միայն թանգարանի ազգագրական ֆոնդերը, այլև գավառագիտական թանգարանների (Գյումրիի (Լենինական), Դիլիջանի, Վանաձորի, Ստեփանակերտի, Ախալքալաքի) ազգագրական հավաքածուները:

ՀԱԻ արխիվի տվյալներով, գիտնականը գրեթե ամեն տարի մեկնել է գիտական գործուղումների: Այսպես, Պետական պատմության թանգարանի և գրականության ինստիտուտի հանձնարարությամբ 1944 թ. դաշտային ազգագրական հետազոտություններ է անցկացրել Վրացական ՍՍՌ Բոգդանովկայի շրջանում, 1945 թ. ՀՍՍՌ Եղվարդի և Աշտարակի շրջաննե-

ռում, 1946 թ.՝ Նոր Արաբկիր, Ախալցխա, Ապարան, Թալին բնակավայրերում, 1948 թ.՝ Էջմիածին քաղաքում, Դողս, Ֆրանգանոց, Աղավնատուն, Արագած, Աղջաղալա (Գետավան), Արշալույս, Նորակերտ (Էջմիածնի շրջան), Հոկտեմբեր, Բամբակաշատ, Հայկավան, Արմավիր (Հոկտեմբերյանի շրջան), Անաստասավան, Վ. Արտաշատ (Արտաշատի շրջան) գյուղերում: 1949 թ. մեկնել է Կոտայքի շրջան՝ Արզնի, ապա Արտաշատի շրջան՝ ք. Արտաշատ, Մխչյան, 1950-1951 թթ.՝ կրկին Արտաշատի շրջան՝ Անաստասավան, Արտաշատավան, Շահումյան, 1951 թ.՝ Քանաքեռ, Հոկտեմբերյանի շրջան՝ Հոկտեմբեր, Բամբակաշատ, ք. Հոկտեմբերյան և Աբխազիայի հայկական գյուղերը, 1952 թ.՝ ք. Ղափան, Արծվանիկ, Գորիս, 1955 թ.՝ Ջավախք, 1956 թ.՝ Արարատյան դաշտի գյուղերը՝ Արտաշատավան, Դալար, Բերքանուշ, Գետաշեն, Շահումյան, Մխչյան, Բաղրամյան, Վ. Արտաշատ, Վեդի, Արարատավան, 1958 թ.՝ Արտաշատի, Էջմիածնի գյուղերը, 1959 թ.՝ Ախուրյանի, Արթիկի շրջանների գյուղերը, ք. Լենինական, Աբխազիայի հայկական բնակավայրերը, Ջավախքի՝ Բոգդանովկայի, Ախալքալաքի գյուղերը և այլն: 1961 թ. երեք ամսով հետազոտման է ենթարկել Զանգեզուրի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Կարմիրի, Սպիտակի, Ախալքալաքի, Ախալցխայի վարչատարածքային շրջանները:

Վ. Բդոյանի գիտահետազոտական ուսումնասիրությունների ոլորտը բազմաընդգրկուն է՝ տնտեսական զբաղմունքներ, հասարակական կյանք, նյութական և հոգևոր մշակույթ, հայ ազգագրության պատմություն, թանգարանագիտություն և այլն: Վ. Բդոյանի անդրանիկ գիտական աշխատանքը «Հայրենիքը Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի երկերում» հոդվածն է («Էջմիածին», 1944): 1946-ին լույս է տեսնում «Գ. Սրվանձտյանցը որպես ազգագրագետ», «Էջմիածին», № 1,

հոդվածը: 1948 թ. «Հողաբերքի և տղաբերքի պաշտամունքը հայոց մեջ» թեմայով ատենախոսության համար նա արժանացավ պ.գ.թ. գիտական աստիճանի: 1950 թ. հրատարակվում է ատենախոսության մի հատված՝ «Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայոց մեջ» աշխատությունը՝ «Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի» ժողովածուում (3, էջ 5-72):

1959 թվականից Վ. Բդոյանը տեղափոխվել է նորաստեղծ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժին՝ ավագ գիտաշխատողի պաշտոնով, որտեղ աշխատել է մինչև իր կյանքի ավարտը:

1955 թ. հրատարակում է «Հայկական կոլտնտեսային տունն ազգագրական տեսակետից» // «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ., Երևան, N 4, էջ 37-54, 1956 թ.՝ «Հարսանեկան ծեսերի ու սովորույթների նկարագիր, գրանցված XIV դարում // Բանբեր Մատենադարանի, էջ 53-56, 1972՝ «Տեղափոխման մոռացված ձևերը» // Լրաբեր, N 10, 1976՝ «Վանատուր և Ամանոր ծպտյալ պաշտամունքների հարցի շուրջ» // Լրաբեր, N 12, 1976՝ «Ընտրության և ամուսնության ձևերը «Սասունցի Դավիթ» էպոսում» // ԲԵՀ, N 1 և այլ աշխատություններ:

«Երկրագործական մշակույթը Հայաստանում» ծանրակշիռ աշխատության համար 1968 թ. նա Թբիլիսիում արժանացավ պ.գ.դ. գիտական աստիճանի: 1972 թ. լույս տեսավ «Երկրագործական մշակույթը Հայաստանում» մենագրությունը, ուր տարիների բանահավաքչական տքնաջան աշխատանքի արդյունքում հավաքած դաշտային ազգագրական նյութերի և գրավոր սկզբնաղբյուրների հիման վրա ազգագրորեն ամբողջացված է հայ ժողովրդի երկրագործական մշակույթի հետազոտությունը հնագույն շրջանից մինչև XX դ. սկզբները:

Վ. Բդոյանը հանգամանորեն ներկայացնում է հայկական երկրագործական տեխնիկան ու տեխնոլոգիան, աշխատանքի հասարակական կազմակերպման ձևերը, երկրագործական գործիքներն ու պաշտամունքը:

1964-1972 թթ. գիտական գործունեությունը համատեղել է դասախոսական-մանկավարժական աշխատանքի հետ՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության բաժնում՝ դասավանդելով «Հայ ազգագրություն» և «Ազգագրության հետազոտման մեթոդներ» առարկաները:

«Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ» ձեռնարկը (1974) առաջին բուհական դասագիրքն է մեզանում: Ձեռնարկում գիտնականը հակիրճ ներկայացրել է նաև հայ ազգագրության պատմությունը, գիտության աստիճանական ձևավորման խնդիրները:

1963, 1980 և 1983 թթ. լույս են տեսնում «Հայ ժողովրդական խաղեր» երեք հատորներով գրքերը: 1986 թ. հրատարակվեց Վ. Բդոյանի «Հայկական աղամաններ» պատկերազարդ գիրքը: Շուրջ երեք տասնամյակ անց, հետմահու, 2014 թ. հրատարակվեց նրա «Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը» ծավալուն ուսումնասիրությունը (754 էջ): Թեև գրքի առաջին բաժինը՝ Ջավախքի ազգագրությունը հրատարկվել է ոչ ամբողջությամբ, այդուհանդերձ շնորհակալ գործ է արվել հրատարակության նախաձեռնող Ռաֆայել Ղազարյանի կողմից: Ցավոք, գիտնականի բազմաթիվ աշխատությունները, մասնավորաբար «Արարատյան հովիտ», «Գոմասենյակները պատմական Հայաստանում» հույժ արժեքավոր ուսումնասիրությունները դեռևս հրատարկված չեն[149]:

---

[149] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Անխոնջ ազգագրագետն ու բանահավաքը // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 341-360:

Սրբուհի Ստեփանի Լիսիցյան (1893-1979), պատմական գիտությունների դոկտոր

Հնագիտության և ազգագրության ինստիտուտում աշխատել է 1960 թ., հայ ժողովրդական պարագիտության հիմնադիրն է, ստեղծել է ազգային պարային մշակույթը՝ շարժական, երաժշտական ու բանահյուսական տեքստերի ամբողջության մեջ գրանցվելու, վերլուծելու համակարգ, ապա՝ տարբեր ժողովուրդների մշակույթների համեմատական ուսումնասիրության վրա հիմնված գիտական մի լուրջ դպրոց[150]:

Ս. Ս. Լիսիցյանը մշակեց ծրագիր՝ ժողովրդական պարերի, թատրոնի և խաղերի հավաքումն ըստ ազգագրական շրջանների: Նրա գլխավորությամբ պարերի վերաբերյալ Ժ. Խաչատրյանի և Է. Պետրոսյանի մասնակցությամբ դաշտային ազգագրական նյութեր գրանցվեցին Ջավախքում և Խոյից ու Սալմաստից գաղթածների շրջանում: Այն կրեց շարունակական բնույթ Հայաստանի գրեթե բոլոր մարզերում: Կազմվել է պարի և թատրոնի տեսարանների և կերպարների մեծ արխիվ: Սրբուհի Լիսիցյանի անմիջական մասնագիտական խորհուրդներով կազմակերպվել են ավանդական պարերի համույթներ:

Գիտնականի հիմնարար աշխատություններից են. Лисициан С., Запись движения (Кинетография), Москва, 1940, 427 стр., Старинные пляски и театральные представления армянского народа (автореферат представленный на соискание ученой степени доктора исторических наук), Ер., 1956, 46 стр., Старинные пляски и театральные предствления армянского

---

[150] Տե՛ս **Խաչատրյան Ժ., Պետրոսյան Է.,** Սրբուհի Ստեփանի Լիսիցյան, կենսամատենագիտություն, Երևան, 2009, էջ 7:

народа, Ер., т. I, 1958, 613 стр., т. II, 1972, 501 стр., Народные танцы//Народы мира серия (Народы Кавказа), Армяне, М., 1962, т. 2, с. 559-564, Танцевальный и театральный фольклор армянского народа, М., 1964, Армянские старинные пляски, Ер., т. II, 1983, 244 стр.

Էմմա Տիգրանի Կարապետյան (1920-1997), պատմական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ մասնագետ Է. Կարապետյանը իր գիտաստեղծագործական կյանքն անմնացորդ նվիրեց հայ ավանդական և արդի ազգագրության կազմակերպմանն ու զարգացմանը:

Ծնվել է 1920 թ. ՀՀ Արմավիրի մարզի համանուն գյուղում: 1938 թ. ընդունվել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, բայց Հայրենական Մեծ պատերազմի սկսվելու պատճառով 1941 թ. ուսումն ընդհատվում է, միայն 1944-ին է ավարտում ԵՊՀ պատմության ֆակուլտետը:

1945 թ. ընդունվում է Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրան «Հայ ազգագրություն» մասնագիտությամբ և ուղարկվում Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտ՝ Մ. Օ. Կոսվենի ղեկավարության ներքո: 1949 թ. նա պաշտպանում է «Գլխագինը հայոց հարսանեական սովորույթներում և դրա սոցիալ-տնտեսական արմատները» թեմայով ատենախոսությունը:

Է. Կարապետյանը 1949-1953 թթ. եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի, 1953-1955 թթ.՝ ԳԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, 1959 թվականից մինչև իր կյանքի ավարտը աշխատել է ՀՀ ԳԱԱ Հնագիտու-

թյան և ազգագրության ինստիտուտում լինելով այդ հաստատության հիմնադիրներից մեկը:

Է. Կարապետյանի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են առավելապես հայոց ընտանիքի և ընտանեական հարաբերությունների շրջանակը պատմական ետադարձ կտրվածքով՝ ընդհուպ իր ապրած ժամանակները: Լուսաբանել է հայոց ամուսնության, ընտանիքի և ազգակցական հարաբերությունների ձևերն ու էությունը սոցիոնորմատիվ մշակույթի և ծիսական ավանդույթների ու արարողությունների բարդ համապատկերում[151]:

Նա ամենագործուն մասնակցություն է ունեցել «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարի «Կովկասի ժողովուրդները» հատորի (Մոսկվա, 1962) «Հայեր» բաժնի շարադրմանը (Ս. Տ. Երեմյանի, Ս. Դ. Լիսիցյանի, Դ. Ս. Վարդումյանի հետ միասին):

1967 թ. պաշտանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հայոց ընտանեկան հարաբերությունները և պատրոնիմիան» թեմայով:

Է. Կարապետյանի բազմաբնույթ գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում էթնոսոցիոլոգիական հետազոտությունների կազմակերպումը Հայաստանում: Հենց նրա ջանքերով էր, որ Հնագիտության և ազգաբանության ինստիտուտում ստեղծվեց նախ՝ արդիականության ազգագրության խումբը՝ 1974 թ., որը շուտով վերաճեց էթնոսոցիոլոգիայի խմբի՝ 1976 թ.՝ ժամանակի ընթացքում կազմավորվելով որպես էթնոսոցիոլոգիայի բաժին (1981), որը հենց ինքն էլ գլխավորեց շուրջ մեկուկես տասնամյակ: Իր և Յու. Հարությունյանի խմբագրու-

[151] Выкуп в свадебных обрядах армян и его социально экономические корни // Աշխատություններ Հայաստանի պետ. պատմ. թանգարանի, հ. 3, Երևան, 1950:

թյամբ լույս ընծայվեց «Երևանի բնակչությունը. էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ» կոլեկտիվ մենագրություն (ռուս.), որի կարևոր բաժիններից մեկի հեղինակը ինքն էր[152]: Հետագա տարիներին Է. Կարապետյանի անմիջական ղեկավարությամբ և եռանդուն գործակցությամբ, իրագործվեցին Հայաստանի զանազան պատմաազգագրական մարզերի քաղաքային և գյուղական բնակչության էթնոսոցիոլոգիական հարցումներն ու հետազոտությունը, ինչպես նաև Երևանի բնակչության կրկնակի հարցումը (1992), որի արդյունքը եղավ նրա «Հայոց ընտանիքը և ազգակցական հարաբերությունները» ձեռագիր աշխատանքը: Է. Կարապետյանի գիտական ժառանգությունը մեծ ներդրում է հայ ազգագրության բնագավառում[153]:

Է. Կարապետյանը որպես գիտնական, միշտ ունեցել է ակտիվ քաղաքացիական դիրքորոշում: Նա տարիներ ի վեր եղել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ընթացիկ գիտական խորհրդի անդամ, հնագիտություն և ազգագրություն մասնագիտացմամբ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության գիտական խորհրդի փոխնախագահ, ղեկավարել է բազմաթիվ ասպիրանտների ու հայցորդների, մասնակցել է մարդաբանների և ազգագրագետ-

---

[152] Տե՛ս Этнические особенности армянской семьи // Население Еревана, Этносоциологические исследования, Ер., 1986:

[153] Տե՛ս Армянская семейная община, Ереван, 1958, Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Երևան, 1963 (համահեղինակ Դ. Վարդումյան), Об одном персонаже армянской свадьбы // ՊԲՀ, 1965, N2, Кровнородственная группа «азг» у армян, Ереван, 1966, Семейные отношения и патронимия у армян. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Тбилиси, 1967, Օժիտը հայոց մեջ, Երևան, 1978:

ների միջազգային գիտաժողովներին: Է. Կարապետյանի գիտական վաստակին անդրադարձել են Լ. Վարդանյանն ու Դ. Վարդումյանը[154]:

Կարեն Վահանի Մելիք-Փաշայան (1919-1981), պատմական գիտությունների թեկնածու

1960 թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնում ընդունվել է աշխատանքի՝ կատարելով նաև ինստիտուտի գիտական քարտուղարի պարտականությունները: Գիտական թեման էր՝ «Հայ ազգագրության պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1920 թվականը»: Այս թեմայով հրատարակել է բազմաթիվ գիտական հոդվածներ[155]:

Հետագայում սկսեց զբաղվել հայոց հեթանոսական դիցարանի ուսումնասիրությամբ, ատենախոսական աշխատանքն էր՝ «Անահիտի պաշտամունքը նոր լուսաբանությամբ», որը 1963 թ. հրատարակվեց «Անահիտ դիցուհու պաշտամունքը» վերտառությամբ: Աշխատությունը նպատակ ունի պարզել հայ

---

[154] **Լ. Վարդանյան, Դ. Վարդումյան,** Է. Կարապետյանի կյանքն ու գործունեությունը // Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Հանրապետական գիտաժողովի նյութեր նվիրված Է. Կարապետյանի հիշատակին, Երևան, 2001, էջ 5-10:

[155] Երվանդ Լալայան (ծննդյան 100-ամյակի առթիվ)//ՊԲՀ, 1964, 3, էջ 29-42, Ստեփան Լիսիցյան (ծննդյան 100-ամյակի առթիվ)// ՊԲՀ, 1965, N4, էջ 31-42, Սահակ Մովսիսյան (Բենսե)//ՊԲՀ, 1968, 2, էջ 161-166, Սովետական ազգագրության անցած ուղին//Լրաբեր, ՀՍՍՀ ԳԱ, 1968, 11, էջ 54-68, Թումանյանը և ազգագրությունը//ՊԲՀ, 1969, 3, էջ 77-84, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 10 տարին//ՊԲՀ, 1970, 1, էջ 250-253, Ստեփան Լիսիցյան, Զանգեզուրի հայերը//ՊԲՀ, 1970, 3, էջ 261-263, Խաչիկ Սամուելյան (ծննդյան 100-ամյակի առթիվ)//ՊԲՀ, 1974, 1, էջ 86-96, Жизнь и деятелность Хачика Самуэляна//СЭ, 1975, 2, с. 51-56.

հեթանոսական մտածողության կնճռոտ հարցերից մեկը՝ մայրաստվածության պաշտամունքն իր ամբողջական համալիրով:

Անահիտ դիցուհու պաշտամունքի հետազոտությունը կարող է լույս սփռել հին Հայաստանի ցեղային կազմի, էթնոծագումնաբանության, բնիկ և օտարամուտ մշակույթների և գաղափարախոսության մութ մնացած շատ հարցերի վրա:

Ասյա Անուշավանի Օդաբաշյան (1924-1998), պատմական գիտությունների դոկտոր

Ծնվել է 1924 թ. Ղարաքիլիսայում, այժմ՝ Վանաձոր: 1946 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1956 թվականից աշխատել է ՀՍՍՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ազգագրության խմբում, 1959 թվականից մինչև իր կյանքի վերջը՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնում: 1967 թ. պաշտպանել է «Ամանորը հայ ժողովրդական երկրագործական տոնացույցում» թեկնածուական ատենախոսությունը: Գիտական թեման է եղել՝ «Բնության զարթոնքի պաշտամունքը հայերի մոտ ըստ ազգագրական նյութերի»:

Աշխատությունները վերաբերում են հայոց հոգևոր մշակույթին, մասնավորապես՝ ժողովրդական տոներին ու դրանց առնչվող հավատալիքներին, սովորույթներին ու ծեսերին[156]:

---

[156] «Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում» աշխատությունը// ՀԱԲ, 1974, պրակ 9, էջ 5-72, Խաչիկ Սամուելյանը ազգագրագետ//Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1958, 11, էջ 33-42, Հայ ժողովրդական հավատալիքների մի քանի վերապրուկների մասին//Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1962, 2, էջ 63-72, Նոր տարվա տոնակատարության ժամանակի հարցի շուրջ //

1995 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հայոց ժողովրդական հավատալիքները, կազմը և ծիսակարգը» թեմայով:

Լևոն Ներսեսի Պետրոսյան (1929-2010), ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու

1954 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը և նույն թվականից աշխատել է ՀՍՍՀ ԳԱ կենտրոնական գրադարանում: 1961 թ. ընդունվել է ՀԱԻ ազգագրության բաժնի ասպիրանտուրա (ղեկ. Մ. Կոսվեն), իսկ 1964 թ. աշխատել է կրտսեր գիտական աշխատողի հաստիքով նույն բաժնում: Գիտական թեման էր՝ «Հաղորդակցության և տրանսպորտի միջոցները հայերի մոտ ըստ ազգագրական և մատենագրական նյութերի»:

1974 թ. հրատարակվում է «Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ. Ա Հետիոտն և գրաստային փոխադրամիջոցներ» (ՊԱՌԻ)//ՀԱԲ, պրակ 6, էջ 91-156: Թեմայի վերաբերյալ նրա կողմից հրատարակվել են բազմաթիվ ուսումնասիրություններ[157]:

ՊԲՀ, 1963, 2, էջ 275-280, Քրիստոնեական ամանորի հետ կապված որոշ ծիսական վերապրուկներ // Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1965, 3, էջ 91-98, Նավասարդյան տոնախմբությունների վերապրուկները // ՊԲՀ, 1974, 3, էջ 113-126, Ամանորի ծիսական երգերից // Լրաբեր, 1974, 4, էջ 43-53, Տիեզերաստեղծման առասպելի վերապրուկային տարրերն ախտարքում // ՊԲՀ, 1986, 3, էջ 138-149, Տիեզերական ծառը հին հայոց դիցաբանական համակարգում // Լրաբեր, հաս. գիտ., ՀՍՍՀ ԳԱ, 1987, 10, էջ 61-71, Խոսքի հմայությունն ու ծեսն Ախտայում // Լրաբեր հաս. գիտ., ՀՍՍՀ ԳԱ, 2000, 1, էջ 42-53:

[157] Տե՛ս **Պետրոսյան Լ.**, Էջեր Հայաստանի փոխադրամիջոցների զարգացման պատմությունից // ՊԲՀ, 1966, էջ 203-214, Հաղորդակցության ազդանշանային կամ պայմանական միջոցները հայերի մեջ // ՊԲՀ, 1968, 3, էջ 191-198, Հայ ժողովրդական փոխադրամիջոցներն ըստ մատենագրության // Լրաբեր

Կառլեն Վարդանի Սեղբոսյան (1928-2009), պատմական գիտությունների թեկնածու, ազգագրագետ

1960 թվականից աշխատում էր ՀԱԻ ազգագրության բաժնում: Գիտական թեման էր՝ «Արհեստավորական տրադիցիաների վերափոխումը լենինականցիների արդի բանվորական կենցաղի պայմաններում»: Հեղինակ է բազմաթիվ գիտական աշխատությունների: 1969 թ. Կ. Սեղբոսյանը պաշտպանել է «Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում» թեկնածուական ատենախոսությունը: Այն նոր խոսք էր ոչ միայն հայ, այլև Անդրկովկասի ժողովուրդների մեջ: Կ. Սեղբոսյանը արհեստագործական մշակույթի տարբեր ճյուղերի վերաբերյալ կատարել է շատ այլ հետազոտություններ՝ դառնալով արհեստների ու տնայնագործությանը վերաբերող տեսական մի շարք մոտեցումների հեղինակ:

1974 թ. հրատարակվում է Կ. Սեղբոսյանի համանուն գիրքը՝ «Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում» (ՊԱՌԻ)// ՀԱԲ, պրակ 6, էջ 157-254:

Նա առաջիններից էր, որ զբաղվեց քաղաքի ազգագրությամբ: Այդ ուղղությամբ Սեղբոսյանի գիտական հրապարակումներից են նաև՝ «Լենինականցիների ժամանակակից հարսանիքը»[158], «Արհեստագործական ճյուղերի բնութագրման եզրաբառերի հստակեցման հարցի շուրջ»[159]: Անմնացորդ

հաս. գիտ., 1968, 9, էջ 36-48, Армянские народные сухопутные средства передвижения // КЭС, V, М., 1972, с. 98-118.

[158] Տե՛ս Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, 1963, 9, էջ 77-86:

[159] Տե՛ս Հայ ժողովրդական մշակույթ XIII, 2009, էջ 137-142, Промышленный Ленинакан как обьект этнографического изучения//Լրաբեր, 1966, 8, էջ 85-89:

նվիրվել է իր ժողովրդի նյութական և հոգևոր ժառանգության ուսումնասիրությանը, դաշտային ազգագրական նյութեր հավաքել ՀՀ բազմաթիվ բնակավայրերում և հարևան հայաշատ երկրներում:

Ժենյա Կամսարի Խաչատրյան (1930-2018), պատմական գիտությունների թեկնածու

1956 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, 1958 թ. անցել է աշխատանքի Արվեստի ինստիտուտում, իսկ 1959 թ. տեղափոխվել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ բանահյուսության բաժին, 1975 թ. հրատարակել է ուսումնասիրություն՝ «Ջավախքի հայ ժողովրդական պարերը (ազգագրական ուսումնասիրություն)» // ՀԱԲ, 7, էջ 5-124: Է. Պետրոսյանի հետ 1980 թ. հրատարակում է գիրք՝ «Армянский народный танец», Москва, Искусство, 135 с.: Մինչև 1990-ական թթ. սկզբները թեմայի շուրջ հրատարակել է բազմաթիվ գիտական ուշագրավ հոդվածներ[160]: Գիտնականի ուշագրավ գիտահետազոտական մանկավարժական գործունեությունը առավել ակտիվ ծավալվում է 1990-ական թվականներից հետո:

Էմմա Խաչատուրի Պետրոսյան, պատմական գիտությունների դոկտոր

Ծնվել է 1934 թ. Բաքվում: Նշանավոր ազգագրագետ, բանահավաք, հեղինակ է 150 մենագրությունների և հոդվածների: ՀԱԻ ազգագրության բաժնում աշխատում է 1961 թվականից:

---

[160] Համշենի մի քանի պարերը//Տեղեկագիր, 1964, 3, էջ 71-84, Ստ. Լիսիցյանի ծննդյան 100-ամյակը//Տեղեկագիր, 11, էջ 108-109, Հասակակիցների միությունները Ջավախքում//ՊԲՀ, 1968, 1, էջ 203-211, Ջավախքի պարերը և նրանց յուրահատկությունները//Լրաբեր, 1968, 3, էջ 70-83, Խաղլացավի (դիվահարության) «բուժումը» պարով//Լրաբեր, 1980, 10, էջ 89-96:

Ծավալել է ակտիվ պարուսույցի և փորձագետի գործունեություն հանրապետության տարբեր շրջաններում: Մինչև 1990 թվականը հրատարակել է բազմաթիվ հոդվածներ և մենագրություններ[161]: Առավել համալիր ուսումնասիրություններ Է. Պետրոսյանը հրատարակել է 1990-2020 թթ.:

Ռաֆիկ Հովակիմի Վարդանյան (1940-2021)

1964 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, 1965-1968 թթ. եղել է Հայաստանի ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտ: 1968 թ. աշխատանքի է ընդունվել ՀԱԻ ազգագրության բաժնում որպես կրտսեր գիտաշխատող: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Չափն ու կշռային ժողովրդական սիստեմը Հայաստանում» թեմայով:

1970-1988 թթ. Պաշտոնավարել է նույն ինստիտուտում իբրև գիտական քարտուղար և դարձել ավագ գիտ. աշխատող: 1988-1992 թթ. եղել է Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն՝ միաժամանակ համատեղելով աշխատանքը հնագիտության և ազգագրության ինստիտուտում:

1989 թ. լույս է տեսնում Ռ. Վարդանյանի «Հայաստանի չափերն ու կշիռները» մենագրությունը, 334 էջ[162]:

---

[161] 1965 թ. ՀՍԷ N1-ում բանագետ, պարագետ Ժ. Խաչատրյանի հետ հրատարակում է «Собрание произведений танцевального и театрального фольклора» հոդվածը: 1973 թ. հրատարակել է «Тотемические пляски Армении»//IX international Congress of Antropological and Ethnological Sciences, Москва, «Наука», 11с.: 1980 թ. Ժ. Խաչատրյանի հետ հրատարակում է «Армянский народный танец», Москва, Искусство, 135 с. մենագրությունը: 1985 թ. «Сюжеты и образы народного драматического творчества армян// Фольклорний театр народов СССР, М., 1985, с. 171-190:

[162] **Վարդանյան Ռ.**, Չափերն ու կշիռները Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1989:

Յուրի Իսրայելի Մկրտումյան (1939-2005), պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դոցենտ Յու. Մկրտումյանի գործունեության մասին ամբողջական տե՛ս հաջորդիվ՝ «Հայ ազգագրական գիտությունը ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնում» հատվածում:

Իրինա Վլադիմիրի Դոլժենկո (1945-2007), պատմական գիտությունների թեկնածու

Հայաստանի ռուսական բնակչության պատմաազգագրական համալիր ուսումնասիրությունը կապված է ազգագրագետ Ի. Վ. Դոլժենկոյի անվան հետ: 1976 թ. Մոսկվայում պաշտպանում է «Хозяйство и община русских крестьян Армении в пореформенный период» թեմայով ատենախոսությունը: 1979 թվականից մինչև իր կյանքի ավարտը աշխատել է ՀԱԻ ազգագրության և էթնոսոցիոլոգիայի բաժիններում: Նրա հատուկ ուսումնասիրության առանցքը ռուս աղանդավոր բնակչության (մալականների) էթնոմշակութային բնութագրությունն է եղել: Ազգագրագետ-հետազոտողը հանգամանորեն ուսումնասիրել է ռուս վերաբնակիչների համայնքի կազմավորման (1830-1850-ական թթ.), նրանց բնակեցման ռազմավարության էթնիկ մշակութային յուրահատուկ կողմերը: 1985 թ. արխիվային և սեփական դաշտային ազգագրական նյութերի հիման վրա հրատարակում է «Хозяйственный и общественный быт русских крестьян Восточной Армении» (Ереван, 1985) մենագրությունը: Նա ուսումնասիրել է նաև Հայաստանի ուկրաինացի, հրեա, ասորի բնակչության էթնոմշակութային պատկերը: Թողել է բավական հարուստ և գիտական մեծ հե-

տաքրքրություն ներկայացնող ժառանգություն[163]:

Հայ ազգագրությամբ ակտիվ զբաղվողներից էին նաև ԽՍՀՄ ԳԱ ազգաբանության և մարդաբանության ինստիտուտի Կովկասի ժողովուրդների ազգագրության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ս. Հարությունովն ու նույն ինստիտուտի գիտական քարտուղար, պատմական գիտությունների դոկտոր Ա. Տեր-Սարգսյանցը:

6.1.1. Էթնոսոցիոլոգիայի բաժնի հիմնադրման և գիտական ձեռքբերումների շուրջ

Էթնոսոցիոլոգիական գիտության զարգացման նախադրյալները նախկին Միությունում առաջին հերթին պայմանավորված էին բնակչություն բազմէթնիկ լինելու հանգամանքով: Լինելով բազմազգ երկիր՝ ԽՍՀՄ-ի համար կարևոր նշանակություն ուներ ազգային մշակույթների փոխազդեցության, ազգամիջյան հարաբերությունների հետ առնչվող խնդիրների ուսումնասիրությունը: Հայաստանում էթնոսոցիոլոգիական

---

[163] Տե՛ս Первые русские переселенцы в Армении (30-50-е годы) XIX в. // Вестник МГУ, 1974, N 3, с. 58-66, Семейная обрядность русского населения Армении // ВОН, АН Арм. ССР, 1974, N 7, с. 87-96, Скотоводческое хозяйство русского населения Армении (конец XIX начало XX вв.) // Проблемы истории СССР, IV, М., 1974, с. 145-154, Свадебный обряд славянского православного населения Армении (конец XIX начало XX вв.) // ИФЖ АН АРМ ССР, 1981, N1, с. 179-193, Структура и численность семей русских крестьян Восточной Армении (XIX начало XX вв.) // ИФЖ АН Арм. ССР, 1982, N3, с. 165-175, Календарные святочные обходы русских и украинских крестьян Восточной Армении (конец XIX – начало XX вв.) // ИФЖ, АН АРМ ССР, 1985, N4, с. 191-199, Сельский суд русских крестьян Эриванской губернии (конец XIX начало XX вв.) // Как источник по изучению некоторых сторон материальной культуры русских крестьян Эриванской губернии / ԲՀԱ, 1989, N3, էջ 194-212:

հետազոտություններ անցկացնելու գործում մեծ ներդում ունեցավ պ.գ.դ. Է. Տ. Կարապետյանը (1920-1997 թթ.): Ինչպես նշվեց վերը, նրա նախաձեռնությամբ ՀԱԻ ազգագրության բաժնում 1974 թ. ստեղծվեց արդիականության ազգագրության խումբը, որը 1976 թ. դարձավ էթնոսոցիոլոգիայի խումբ, իսկ 1981 թվականից ստացավ էթնոսոցիոլոգիայի բաժնի կարգավիճակ: Բաժինը Է. Տ. Կարապետյանի ղեկավարությամբ գործեց շուրջ մեկուկես տասնամյակ:

Բաժնի ձևավորման ակունքում էին Ռ. Կարապետյանը, Լ. Վարդանյանը, Մ. Հակոբյանը, Թ. Զաքարյանը, լաբորանտներ Ք. Խանաղյանը, Գ. Ենոքյանը, Պ. Քեշիշյանը: Էթնոսոցիոլոգիական հարցումների հիման վրա 1986 թ. նշանավոր էթնոսոցիոլոգ Յու. Վ. Հարությունյանի և Է. Տ. Կարապետյանի խմբագրությամբ տպագրվեց «Население Еревана. Этносоциологические исследования» (Ер., 1986, 250 с.) կոլեկտիվ աշխատությունը, որն արժեքավոր ներդրում է խորհրդային քաղաքի ազգագրական և սոցիոլոգիական ուսումնասիրության գործում:

Բաժինը մեծ առաջընթաց ունեցավ նաև մասնագետ կադրեր պատրաստելու կարևոր գործում: ԽՍՀՄ ԳԱ Միկլուխո-Մակլայի անվան ազգագրության ինստիտուտի սոցիոլոգիական հետազոտությունների բաժին (Յուրի Հարությունյանի ղեկավարությամբ) գործուղվեցին և ատենախոսական թեզեր պաշտպանեցին Ռ. Կարապետյանը (1979 թ.), Ռ. Օհանջանյանը (1985 թ.), Էմմա Կարապետյանի ղեկավարությամբ թեկնածուական թեզեր պաշտպանեցին Միհրան Գալստյանը (1990 թ.), Սամվել Մկրտչյանը (1997 թ.):

6.2.Հայաստանի թանգարանների ազգագրական գործունեությունը (1950-1980-ական թթ.)

6.2.1. Հայաստանի պատմության թանգարան

Բացառիկ էր Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի (վարիչ՝ Վ. Բդոյան (1949-1959), Վ. Աբրահամյան (1959-1979), Ն. Ավագյան (1979-1989)) դերը ազգագրական ու հնագիտական հավաքածուների ձեռքբերման ու ցուցադրությունների կազմակերպման, գիտական հետազոտությունների իրականացման գործում: Մինչև 1953 թ. հանրապետությունում ազգագրական գործը կենտրոնացված էր Հայաստանի պետական պատմական թանգարանում, որտեղ և տարիներ շարունակ համատեղ իրականացվում էին թե՛ թանգարանային-ցուցադրական և թե՛ գիտահետազոտական աշխատանքները: Հայաստանի պատմության թանգարանի ստեղծման ակունքներում կանգնած են եղել գիտության և մշակույթի նշանավոր ներկայացուցիչներ, որոնք ղեկավարել են ինչպես թանգարանը, այնպես էլ նրա առանձին բաժինները: 1950-1980-ական թթ. թանգարանը գլխավորեցին ականավոր պատմաբաններ, հնագետներ: Կ. Ղաֆադարյանը (1907-1976 թթ.)՝ հնագետ, վիմագրագետ, պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, թանգարանի տնօրենն էր՝ 1940-1964 թթ.: Նրա ղեկավարությամբ թանգարանը դարձավ առաջատար գիտահետազոտական և կրթամշակութային կենտրոն: Մ. Հասրաթյանը (1902-1979 թթ.) թանգարանը ղեկավարել է 1964-1975 թթ.: Նրա ղեկավարությամբ թանգարանը միջազգային ճանաչում ստացավ: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տ. Խաչատրյանը (1932-1989 թթ.) թան-

գարանի տնօրենն է եղել 1983-1987 թթ., պատմական գիտությունների դոկտոր Ռ. Վարդանյանը՝ 1988-1992 թթ.:

1947-1989 թ. ազգագրության բաժինն իրականացրեց շուրջ 30 հավաքչական գիտարշավներ Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի և Սև ծովի առափնա գրեթե բոլոր հայաբնակ բնակավայրերում: Հավաքածուները համալրվում էին հիմնականում Հայաստանի տարածքի հնավայրերից հայտնաբերված գտածոներով, գնումներով, նվիրատվություններով: Ներկայացվում է Հայաստանի մշակույթի և պատմության ամբողջական պատկերը նախապատմական ժամանակներից՝ մեկ միլիոն տարի առաջ, մինչև մեր օրերը: Հաստատվեցին և ամրապնդվեցին կապերը հայկական սփյուռքի հետ:

Ազգագրական հավաքածուն ներկայացվում է մշտական ցուցադրությունում, ինչպես նաև հայկական մշակույթին նվիրված արտասահմանյան ցուցահանդեսներում: Թանգարանը իրականացնում է նաև պահպանման և վերականգնման աշխատանքներ:

6.2.2. Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան

1978 թ. փետրվարի 16-ին Խորհրդային Հայաստանի կառավարության որոշմամբ Սարդարապատում հիմնվեց Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանը (հիմնադիր տնօրեն՝ Լավրենտի Բարսեղյան, 1937-2014)[164]: Նախ՝ 1968թ. հիմնա-

[164] ԵՊՀ պատմության ֆակուլտետն է ավարտել 1959 թ., նույն տարում աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտու-

դրվել է Հուշահամալիրը (ճարտարապետ՝ Ռաֆայել Իսրայելյան, քանդակագործներ՝ Արա Հարությունյան, Սամվել Մանասյան, Արշամ Շահինյան), խորհրդանշում է Սարդարապատի հերոսամարտի (1918թ.) պատմական նշանակությունը հայրենիքի փրկության և հայկական պետականության վերականգնման պայքարում: 1974-77 թվականներին կառուցվել է ՀԱԱՊՊԱԹ-ի շենքը: Բացառիկ է նաև այս թանգարանի դերը. այն շուտով վերածվում է գիտամշակութային ու կրթադաստիա-

---

տում: 1968-1972 թթ. ղեկավարել է Էրեբունի ամրոցի, Գառնիի տաճարի, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի (Դսեղ) վերականգնման աշխատանքները:

1973-1978 թթ. եղել է ՀԽՍՀ մշակույթի նախարարության մշակութա-լուսավորչական հիմնարկների վարչության պետ, իսկ 1978-1985 թթ.՝ Հայաստանի ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի տնօրեն: 1988-1991 թթ. ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության պետն էր, 1992-1995 թթ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահի ընդհանուր հարցերի գծով տեղակալ: Լավրենտի Բարսեղյանը մի շարք թանգարանների գիտական ցուցադրությունների հեղինակ էր: 1995-2006 թթ. եղել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հիմնադիր տնօրենը: Այնուհետև մինչև իր կյանքի վերջը՝ 2014 թվականը (2006-2014), Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄ համալսարանի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչն էր:

Նա թողել է նաև հարուստ գիտական ժառանգություն Հայոց ցեղասպանության, դրա ճանաչման ու դատապարտման, հայ ժողովրդի ծագման ու կազմավորման հարցերի մասին:

Պատմական գիտությունների դոկտոր (1998), պետական մրցանակների դափնեկիր Լավրենտի Բարսեղյանը բազմաթիվ գրքերի հեղինակ է. Հայոց ցեղասպանություն, Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (Նյութերի ժողովածու), Երևան, 2005, 602 էջ: Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրության կազմակերպման սկզբունքները, Երևան, 2006, 72 էջ: Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915-1918 թթ.) Օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, Երևան, 2011, հ. 1, 238 էջ, հ. 2, 406 էջ:

բակչական համալիրի, որտեղ պահպանվում, ցուցադրվում և ուսումնասիրվում են հայ ժողովրդի մշակութային ժառանգությանը վերաբերող պատմամշակութային արժեքներ՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Առաջին իսկ ամիսներից կազմակերպվեցին ազգագրական գիտարշավներ, որոնց նպատակը դաշտային ազգագրական նյութերի և թանգարանային արժեք ունեցող կենցաղամշակութային առարկաների հավաքումն էր: Այստեղ կենտրոնացվել են 70 հազարից ավելի մշակութային արժեքներ՝ հավաքածուների 5 թեմատիկ բաժիններով՝ 1. հնագիտական՝ հնագույն և միջնադարյան արվեստ, արհեստներ, կրոնա-պաշտամունքային առարկաներ, 2. ազգագրական՝ աշխատանքի գործիքներ, արհեստներ, ազգային խոհանոց, օժանդակ տնտեսաձևեր, գորգ ու կարպետ, ժանյակ, ասեղնագործություն, կահույք, ազգային տարազ ու զարդեր, ընտանիքին և ազգային տոնացույցին վերաբերող առարկաներ, 3. լուսանկարներ, նկարներ, փաստաթղթեր, արխիվային նյութեր, 4. ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ, 5. այլ ժողովուրդների էթնիկ մշակույթին առնչվող նմուշներ: Այս ցուցահամալիրը արդեն իսկ իր բնույթով նորություն էր հանրապետության թանգարանային կյանքում: Թանգարանը ծավալում է նաև գիտակազմակերպչական գործունեություն: Այստեղ պահվող հարուստ ու բազմաբնույթ հավաքածուները գիտացուցադրական և գիտահետազոտական լայն գործունեության հնարավորություն են ընձեռել:

6.3. Հայ ազգագրական գիտությունը ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնում (1969-1989)

Ազգագրագետ կադրերի պատրաստման, պատմաազգագրական հետազոտությունների իրականացման գործում նշանակալի դեր խաղաց ԵՊՀ պատմության ֆակուլտետում 1968-1969 թթ. հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության բաժնի ու հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնի ստեղծումը (1969), վարիչ՝ պրոֆ. Ա. Գ. Աբրահամյան (1903-1983): Դրանով հանրապետությունում նոր հեռանկարներ բացվեցին նաև ազգագրագետ կադրերի պատրաստման և առհասարակ ազգագրական գիտության ծավալման համար: Ամբիոնում դասախոսություններ կարդալու համար հրավիրվել են ականավոր մի շարք գիտնականներ՝ ՀՍՍՀ ակադեմիկոսներ՝ հնագետներ Բ. Առաքելյանը, Բ. Պիոտրովսկին, ազգագրագետներ պ.գ.դ. Վ. Բդոյանը, պ.գ.թ. Կ. Մելիք-Փաշայանը, պ.գ.թ. Դ. Վարդումյանը, Մոսկվայից նշանավոր ազգագրագետներ Ս. Տոկարևը, Ս. Հարությունովը, էթնոսոցիոլոգ Յու. Հարությունյանը, աղբյուրագետ-վիմագրագետներ՝ պատմ. գիտ. թեկնածուներ Պ. Մուրադյանը, Ս. Բարխուդարյանը, բանագետ Ս. Հարությունյանը, ազգագրագետ Յու. Մկրտումյանը և այլք:

1970-ական թթ. սկզբներին ազգագրության գծով ասպիրանտուրայում մասնագիտանում են Ռ. Նահապետյանը՝ Վ. Բդոյանի, Ա. Պետրոսյանը՝ Դ. Վարդումյանի ղեկավարությամբ: 1974 թ. հրատարակվեց Վ. Բդոյանի «Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ)» բուհական ուսումնական ձեռնարկը:

1970 թ. Յու. Մկրտումյանը «Ազգագրություն» դասընթացը դասավանդելու առաջարկով, հրավեր է ստանում ԵՊՀ պատ-

մության ֆակուլտետի հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնից: Կարճ ժամանակ անց նրա անմիջական ջանքերով ուսումնական ծրագրում տեղ գտան ազգագրական մի շարք առարկաներ, և ամբիոնը վերանվանվեց «Հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության»:

1975 թ. ամբիոնը վերանվանվում է Հնագիտության և ազգագրության ամբիոն, որը մինչև 1982 թ. ղեկավարում է հնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Տ. Խաչատրյանը: 1983 թ. ամբիոնը գլխավորեց պրոֆ. Ս. Եսայանը:

Յու. Մկրտումյանն ստանձնեց «ազգագրության ցիկլի» ղեկավարությունը, և այն աստիճանաբար դարձավ ազգագրական կադրերի պատրաստման հիմնական «դարբնոցը» հանրապետությունում: Տարիների նպատակասլաց աշխատանքը հանգեցրեց այն բանին, որ 1989 թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետում բացվեց Ազգագրության ամբիոն: Որպես նրա վաստակի գնահատական, նաև հետագա հաջողությունների ակնկալիքով՝ ԵՊՀ ղեկավարությունն ու գործընկերներն ամբիոնի ղեկավարությունը վստահեցին հիմնադրին՝ Յու. Մկրտումյանին[165]: Հայագիտական և կովկասագիտական գիտելիքը Յու. Մկրտումյանը հանրայնացնում էր ոչ միայն հայ ուսանողության և գիտական շրջանակում, այլև աշխարհի տարբեր

[165] Ազգագրագետ Յուրի Իսրայելի Մկրտումյանը ծնվել է 1939 թ. հունվարի 1-ին, Թբիլիսիում: 1957թ. ոսկե մեդալով ավարտելով Թբիլիսիի թիվ 86 տասնմեկամյա միջնակարգ դպրոցը՝ ընդունվում է Մոսկվայի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ, որն ավարտում է 1962 թ., գերազանցության դիպլոմով, պատմաբան-ազգագրագետի որակավորմամբ: Նույն թվականին աշխատանքի է անցնում ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ որպես ազգագրության սեկտորի լաբորանտ, ապա՝ կրտսեր գիտաշխատող: 1968 թ. Մոսկվայում պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն, 1974 թ. ստանում է դոցենտի կոչում:

համալսարաններում (Մոսկվայի պետական համալսարան, Ֆիլադելֆիայի Թեմփլ համալսարան և այլն) դասավանդելով:

Դասախոսության ժամանակ մատուցած նյութը մնայուն գիտելիքի վերածելու հաջողված մեթոդ էր կիրառում՝ էքսպրես հարցումներ. դասի սկզբում մի քանի ուսանողի հարցնում էր նախորդ դասախոսության նյութը և գնահատում էր: Դասախոսությունները համեմում էր տպավորիչ օրինակներով՝ նյութը մատուցում էր կենցաղային հետաքրքիր պատմություններով, որպեսզի դրանք հիշվեն ողջ կյանքում: Դասախոսություններում կար ներշնչանք, ոգեշնչում: Լինելով արտիստիկ կերպար՝ նրան հաջողվում էր դասախոսության որոշ հատվածներ ներկայացնել որպես փոքրիկ բեմադրություններ:

Ժողովրդի հետ ուսանողների անմիջական շփման, դաշտային նյութերի գրառման հմտությունների ձեռքբերման գործում վիթխարի է համալսարանի ազգագրական գիտարշավների (ՀԱԳ) դերը: ՀԱԳ-ը մի ուրույն մոդել էր հայկական գերդաստանական ընտանիքի, որտեղ կար նահապետ, և յուրաքանչյուր անդամ ուներ իր պարտականություններն ու իրավունքները: Որպես արշավախմբի պետ՝ Յու. Մկրտումյանը մեծագույն պատասխանատվություն ուներ գիտարշավի յուրաքանչյուր անդամի նկատմամբ, միաժամանակ չափազանց խիստ էր՝ ընդունված կարգուկանոնը խախտելու դեպքում: Հայաստանի համար նույնիսկ ամենածանր տարիներին համալսարանի ազգագրական գիտարշավները չդադարեցին, որովհետև, շնորհիվ անբասիր համբավի, միշտ հնարավորություն էր գտնում միջոցներ հայթայթելու:

Մանկավարժական աշխատանքին զուգընթաց՝ Յու. Մկրտումյանը ղեկավարում էր ԵՊՀ ազգագրական լաբորատորիան, ապա նաև էթնոմշակութային հետազոտությունների

«Ոստան» կենտրոնը, որտեղ ազգագրագետները, երբեմն դեռ ուսանողական տարիներից, զբաղվում էին Ադրբեջանից հայ փախստականների ադապտացիայի, ազգային փոքրամասնությունների և այլ հիմնախնդիրներով:

Յու. Մկրտումյանն ապահովում էր ազգագրագետ տարբեր սերունդների գիտական շփումը, ազգագրական թանգարան-ամբիոն սերտ կապը: 1980-ական թվականներից սկսած՝ ազգագրագետ շրջանավարտների մի ստվար խումբ, նրա անմիջական ղեկավարությամբ ու գիտական աջակցությամբ, պաշտպանեց թեկնածուական ատենախոսություններ:

Յու. Մկրտումյանը մեծ մանկավարժ էր և միաժամանակ մեծ գիտնական: Հեղինակ է շուրջ չորս տասնյակ գիտական աշխատությունների, որոշ դրույթներ նորամուծություն, զգալի ներդրում են գիտության, հատկապես մշակույթի տեսության մեջ[166]: Նա ոչ միայն հետազոտել է հայ գյուղացու անասնապա-

---

[166] Տե՛ս **Мкртумян Ю.** 1968, Формы скотоводства в Восточной Армении (по этнографическим материалам). Автореферат диссертации, М., Изд-во МГУ, 28 с. **Мкртумян Ю.** 1971, К изучению форм скотоводства у народов Закавказья, Гарданов В. К. (Отв. ред.), Хозяйство и материальная культура народов Кавказа (Материалы к Кавказскому историко-этнографическому атласу), вып. I, М., Наука, сс. 116-135. 1972, Картографирование элементов скотоводческой культуры народов Кавказа, СЭ, N 2, сс. 61-67. 1973, Соотношение земледелия и скотоводства и его роль в формировании современной культуры и быта сельского населения Кавказа, М., Наука, 23 с. 1974, Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX-начало XX в.): историко-этнографическое исследование, Վարդումյան Դ. Ս. (պատասխանատու խմբ.), Հայ ազգագրություն և բանահյուսություն, 6, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 7-90: 1978, Компоненты культуры этноса, Маркарян Э. С. (отв. ред.), Методологические проблемы исследования этнических культур. Материалы симпозиума, Ереван, Издательство АН Армянской ССР, сс. 42-47. Mkrtumyan Yu. 1978, Historical Dynamics of Stock-Breeding: Ecological and Socio-Cultural Factors (Baced on a Study of the Armenian Upland and the Caucasus), Arutyunov S.A. (edit), General Problems of Ethnography. Papers by Soviet Researchers, 1,

հական մշակույթը, կենսապահովման մշակույթը՝ հատկապես ուտեստը, բնակավայրը, բնակարանային համալիրը, այլև գրել է տեսական աշխատանքներ (Ս. Հարությունովի հետ համահեղինակությամբ) առհասարակ մշակույթի տարրերի դասդասման, կենսապահովման մշակույթի ուսումնասիրության, կենսապահովման մեխանիզմների տիպաբանական հետազոտության հիմնախնդիրների վերաբերյալ: Մշակույթի, այսպես կոչված, «քառամաս մոդելի» հեղինակը իրավամբ Յու. Մկրտումյանն է: Թեև իրեն երբեք ազգաբան չանվանեց, նրա հետաքրքրություններն ընդգրկում էին ազգաբանական լուրջ հիմնախնդիրներ, նա իսկապես խորը տեսաբան ու վերլուծաբան էր:

Moscow, USSR Academy of Sciences. N. N. Miklouchо-Maclay Institute of Ethnography, pp.139-150. Արտյունով Ս., Մկրտումյան Ю. 1981, Проблемы классификации элементов культуры (на примере армянской системы питания). СЭ, N 4, сс. 3-15. Արտյունով Ս., Մարկարյան Э., Մկրտումյան Ю. 1983, Проблемы исследования культуры жизнеобеспечения этноса. СЭ, N 2, сс. 22-31. Արտյունով Ս., Մկրտումյան Ю. 1984, Проблемы типологического исследования механизмов жизнеобеспечения в этнической культуре, Крюков М. В., Кузнецов А. И. (отв. редакторы), Типология основных элементов традиционной культуры, М., Наука, сс. 19-33. Արտյունով Ս., Մկրտումյան Ю. 1988, Армяне, Бромлей Ю. В. (гл. ред), Народы мира. Историко-этнографический справочник, М., Научное издательство «Советская энциклопедия», Արտյունով Ս., Մկրտումյան Ю. 1998, Армяне, Тишков В. А. (Главный ред.), Народы и религии мира, М., Научное издательство «Большая Российская энциклопедия», сс. 56-59. Մկրտումյան Յու. (խմբ. և հեղինակ) 2000, Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր, I, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 164 էջ, 2004, Հայաստանի Հանրապետության բնակչության ազգային կազմն ըստ 2001թ. մարդահամարի (ազգագրական, ժողովրդագրական, միջազգային-իրավական տեսանկյունները), Բանբեր Երևանի համալսարանի (Երևան), N 3, էջ 3-13: **Մկրտումյան Յու.** (խմբ. և հեղինակ) 2005, Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում, II, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 254 էջ:

Ազգագրության բնագավառում Յու. Մկրտումյանի հաջողության գրավականներից մեկը նրա էությունն էր, այդ գործի համար շահեկան բնավորությամբ ու խառնվածքով: Մանկավարժության, կրթական գործի կազմակերման մեջ նրա աննախադեպ ձեռքբերումներն առաջին հերթին պայմանավորված էին իր գործին անմնացորդ ու անշահախնդիր նվիրումով, գիտականորեն հիմնավորված մեթոդների ու անհատական հմտությունների կիրառմամբ, և վերջապես, նա ոչ միայն մեծ մտավորական էր, այլև բարոյական բարձր նկարագրով Մարդ:

Ազգագրագետի կոչմանը նա հավատարիմ մնաց նաև Հայաստանի Հանրապետության համար բախտորոշ տարիներին (1994-1997 թթ.) ստանձնելով ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի շատ պատասխանատու պաշտոնը Ռուսաստանի Դաշնությունում: Քաղաքական գործունեությանը զուգահեռ՝ նա շատ բան արեց երկու պետությունների մշակութային ու կրթական համագործակցության խորացման գործում:

Դիվանագիտական առաքելությունն ավարտելուց հետո վերադարձավ հարազատ ինստիտուտ, իսկ 2000 թ. կրկին ստանձնեց ամբիոնի ղեկավարությունը: Ելնելով առողջական վիճակից՝ 2004 թ. սեպտեմբերից փոխադրվեց դոցենտ-խորհրդատուի հաստիքի:

Յու. Մկրտումյանի գիտամանկավարժական գործունեության մեծագույն ձեռքբերումներից մեկն այն է, որ ստեղծեց ազգագրական դպրոց, որի ներկայացուցիչներն իրենց կարևոր տեղն ունեն ոչ միայն կրթության, գիտության ու մշակույթի ասպարեզում, այլև բազմաթիվ հետազոտական ծրագրերով իրենց նպաստն են բերում Հայաստանի Հանրապետության

առջև ծառացած բազում խնդիրների լուծմանը[167]:

Այդ տարիներին ամբիոնի դասախոսներից՝ Ա. Պետրոսյանը վարել է «Հայ ազգագրության պատմություն», «Հայ ժողովրդի տնտեսական կենցաղը», «Ազգագրական հետազոտությունների մեթոդներ» դասընթացները, իսկ Ռ. Նահապետյանը՝ «Հայ ազգագրություն», «Հայ ժողովրդի կենսապահովման մշակույթ», «Հայ ժողովրդի սոցիոնորմատիվ և հումանիտար մշակույթ» և այլ դասընթացներ: Նա միաժամանակ ընդհանուր ազգագրություն էր դասավանդում բանասիրական, աշխարհագրական և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների տարբեր բաժիններում: Ա. Պետրոսյանը և Ռ. Նահապետյանը նույնպես ներգրավված էին դաշտային ազգագրական հետազոտությունների աշխատանքներում: ՀԱԳ-ից բացի՝ գործել է նաև Գեղարքունիքի արշավախումբը՝ դոցենտ Ա. Պետրոսյանի ղեկավարությամբ: Անհատական գործողումներով Թալինի, Աշտարակի, Վեդու, Էջմիածնի, Մասիսի շրջաններում ազգագրական նյութերի հավաքչական աշխատանքներ է իրականացվել Ռ. Նահապետյանի կողմից:

Ամբիոնի դոցենտ Ա. Պետրոսյանը հրատարկեց հայոց շերամապահական մշակույթի վերաբերյալ իր թեկնածուական ատենախոսությունը՝ «Շերամապահական մշակույթը Հայաստանում» (1989 թ.):

---

[167] Մանրամասն Տե՛ս Հասմիկ Թելմանի Հարությունյան, Յուրի Մկրտումյանը՝ մանկավարժ և կրթական գործի կազմակերպիչ: Յուրի Մկրտումյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու. Եր., Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, 2020, 136 էջ, էջ 26-34:

6.4. Հայաստանի ազգագրական գիտության զարգացման հիմնական ուղղությունները և արդյունքները 1950-1980-ական թթ.

Այս շրջափուլում հայ ժողովրդի ազգագրական հետազոտությունը համապարփակ բնույթ է ստանում թե՛ դաշտային ազգագրական նյութեր ու թանգարանային ցուցանմուշներ հավաքելու, թե՛ թեմատիկ ուսումնասիրություններ կատարելու առումով: Օգտագործելով 1964 թ. Մոսկվայում կայացած Մարդաբանական ու ազգագրական գիտությունների միջազգային VII, 1973 թ. Չիկագոյի (ԱՄՆ) համաժողովների, 1987 թ. Երևանի համամիութենական գիտաժողովի մասնակիցների հետ սերտ շփումների հնարավորությունները և շարունակելով հայ ազգագրության ավանդույթները՝ հայ գիտնականները հրատարակեցին հայոց տնտեսական զբաղմունքներին, նյութական և հոգևոր մշակույթին, հասարակական-ընտանեկան հարաբերություններին, կենցաղին ու սովորույթներին, ինչպես նաև խորհրդային շրջանում դրանց վերափոխությանը նվիրված աշխատություններ:

1950-1980-ական թվականներին սկզբնապես Պատմության ինստիտուտի, ապա ՀԱԻ ամենամյա գիտարշավների ու անհատական գործուղումների, նաև ՀՊՊԹ և ՀԱԹ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի գիտարշավների միջոցով ազգագրական հետազոտության են ենթարկվել Խորհրդային Հայաստանի պատմաազգագրական շրջանները, իհարկե ոչ ամբողջությամբ, Արցախը և Ուտիքը, Ջավախքի, Բոլնիս-Դմանիսի, Աբխազիայի, Կրասնոդարի երկրամասի և Ռոստովի մարզի հայաբնակ շրջաննե-

ը[168]: Արժեքավոր նյութեր են հայթայթվել նաև սիրող բանահավաքների միջոցով, որոնց շնորհիվ համապատասխան հաստատություններում հարստացվել են արխիվային պահոցները: Այս շրջանում աշխուժանում է ժողովուրդների ժամանակակից կենցաղի ու մշակույթի ուսումնասիրությունը: Եթե մինչ այդ ազգագրագետն արդի կենցաղը դիտում էր միայն տոհմային կարգերի վերապրուկները հայտնաբերելու մղումով, ապա այժմ առաջին պլան է մղվում ժողովրդի կենցաղը հենց իր գործողության, հասարակական մյուս երևույթների հետ փոխադարձ կապի մեջ քննելու միտումը:

Եթե գնահատելու լինենք 1950-80-ական թվականների ազգագրական ձեռքբերումները՝ դաշտային նյութի, թանգարանային ցուցանմուշներ հավաքելու, թեմատիկ ուսումնասիրություններ կատարելու առումով, ապա այդ ժամանակահատվածը կարելի է համարել մեծ առաջընթացի շրջափուլ: Այժմ փորձենք դրանք արձանագրել ըստ հայ ազգագրության առանձին ոլորտների:

Հայ ազգագրագետները խնդրո առարկա ժամանակամիջոցում մեծապես կարևորել են զբաղմունքների՝ երկրագործական և անասնապահական մշակույթների ուսումնասիրությունը[169]: Առանձնապես նշելի է Վ. Բդոյանի՝ իբրև հայ ազգագրության անխոնջ մշակի գործունեությունը: Այսպես՝ 1950 թ. լույս

---

[168] Տե՛ս **Вардумян Д.,** Некоторые материалы по этнографии армян // «Краткие сообщения» института этнографии им. Н. Н. Миклухо-Маклая АН СССР, т. XXXIII, Москва, 1960, с. 31-38, **նույնի՝** Ռոստովի մարզի հայերի մշակույթի և կենցաղի մասին // ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1961, № 10, էջ 87-99:

[169] Տե՛ս **Բդոյան Վ.,** Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, **Мкртумян Ю.,** Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX-начало XX в.) (историко-этнографическое исследование) // ՀԱԲ, h. 6, Երևան, 1974, էջ 7-92:

է տեսել նրա «Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ»[170] թեկնածուական ատենախոսությունը, որում քննության են առնվել երկրագործական պաշտամունքին առնչվող հարցերը: Նրա «Երկրագործական մշակույթը Հայաստանում» ծավալուն մենագրությունը նախադեպը չունի ազգագրական գիտության մեջ: Դրա համառոտ տարբերակը 1972 թ. լույս է տեսել Հունգարիայում՝ գերմաներեն: Վարող տեխնիկայի մանրակրկիտ ուսումնասիրությունից Վ. Բդոյանին պարզ է դարձել, որ Հայաստանում գոյություն է ունեցել դաշտամշակության երկու գլխավոր համալիր՝ շաղացան, որը համընդհանուր էր ամբողջ երկրում, և շարքացան, որը կիրառված է եղել Վանա լճի ավազանում, որի հնամենիությունը փոխանցվել է ուրարտական շրջանից: Գրքում մանրամասն նաև ուսումնասիրված են վարող, փխրեցնող ու հարթող արտադրամիջոցները, լծասարքերը, բերքահավաքի գործիքները, կալսելու տեխնիկան, աշխատաեղանակները, աշխատանքը կազմակերպելու համայնքային ձևերը, երկրագործական պաշտամունքի դրսևորումները և այլն:

Հայոց անասնապահական մշակույթին նվիրված «Անասնապահության ձևերն Արևելյան Հայաստանում» իր աշխատության մեջ Յու. Մկրտումյանը ներկայացրել է հյուսիսարևելյան Հայաստանի անասնապահության պատմական զարգացման առանձնահատկությունները XIX դարավերջին և XX դարասկզբին, նստակյաց ու հեռագնա անասնապահությունը և տարածվածության շրջանակները, անասնապահական աշխատանքի կազմակերպման հնավանդ ձևերը, յուրահատկությունները: Հետազոտության մեջ առանձնապես գիտական հե-

[170] Տե՛ս Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի (այսուհետ՝ ԱՀՊՊԹ), հ. 3, Երևան, 1950, էջ 5-72:

տաքրքրություն են ներկայացնում անասուններն արածեցնելու համար ստեղծված ընկերակցությունները («Սարի համգյալ») ու անասնապահների անհատական և հասարակական վարձակալման ձևերի հարցը: Նա բացահայտել է ընկերակցությունների երեք ձև՝ կարողությամբ հավասար ազգականների, կարողությամբ հավասար հարևանների և կարողությամբ տարբեր հարևանների ու ազգականների: Դրանց ազգագրական ուսումնասիրությունը հնարավորություն է տվել բացահայտելու հասարակական կազմակերպությունների հնավանդ ձևերի այն մնացուկները, որոնք դեռևս XIX դարի երկրորդ կեսին և XX դարասկզբին պահպանվել էին հայկական իրականության մեջ: Գրքում հմտորեն բացահայտվել են անասնապահական մշակույթով պայմանավորված բնակավայրերի տիպերը, կաթնատնտեսական սպասքը, յուրահատուկ հագուստը, ուտեստը, ընտանիքների գերդաստանական կենսակերպը, հայ կնոջ ակտիվ դերը և բարձր հեղինակությունը. հարցեր, որոնք կարևոր են հայ ժողովրդի պատմության ու ազգագրության ուսումնասիրման տեսանկյունից: Նրա ուշագրավ հետազոտություններից մեկն էլ նվիրված է Անդրկովկասի ժողովուրդների անասնապահության ձևերի ուսումնասիրությանը[171]:

Հայոց օժանդակ տնտեսաձևերից շերամապահական ու մեղվապահական մշակույթներին են նվիրված Ա. Պետրոսյանի «Հայոց շերամապահական մշակույթը» (1987) և Ա. Գասպարյանի «Մեղվաբուծությունը Հայաստանում» (1982) մենագրությունները: Երկու աշխատություններն էլ գրվել են մատենագի-

---

[171] Տե՛ս **Мкртумян Ю. И.,** К изучению форм скотоводства у народов Закавказья // Хозяйство и материальная культура народов Кавказа в XIX-XX вв. Москва, 1971, с. 116-135:

տական, հնագիտական և հատկապես ազգագրական նյութերի համեմատական ուսումնասիրության հիման վրա, շարադրված են դրանց սկզբնավորման պատմությունը, տնտեսության այդ ճյուղերում դարերով կուտակված հավատալիքներն ու ծեսերը, դրանց կիրառական կարևոր նշանակությունը: Մեզանում, սակայն, մինչև 1980-ական թվականներն ուշադրություն չէր դարձվում տնտեսության այնպիսի օժանդակ ճյուղերի ուսումնասիրությանը, ինչպիսիք են՝ թռչնաբուծությունը, որսորդությունը, ձկնորսությունը և տնայնագործությունը:

Միջնադարյան Հայաստանի արհեստներն ուսումնասիրել են Վ. Աբրահամյանն ու Բ. Առաքելյանը: Վ. Աբրահամյանը հայ և օտար մատենագիրների, ճանապարհորդների տեղեկությունների հիման վրա գրել է «Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ.» (1956), նաև «Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբը)» (1971) աշխատությունները: Գրքերում հեղինակը մանրամասն անդրադարձել է միջնադարյան Հայաստանի տնտեսական-քաղաքական կյանքի, արհեստների ամենաբազմազան կողմերի և, վերջապես, արհեստավորական համքարային կազմակերպությունների, դրանց ներքին ու վարչական կառուցվածքի վերաբերյալ հարցերին:

«Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.» երկհատոր (հ. 1, 1958, էջ 133-353, հ. 2, 1964, էջ 124-205) աշխատության մեջ Բ. Առաքելյանը հանգամանորեն, առանձին գլուխներով, ըստ հայ և օտար աղբյուրների տվյալների, ներկայացրել է արհեստների բազմաթիվ տեսակներ՝ մետաղագործություն (դարբնություն, զինագործություն, պղնձագործություն, ոսկերչություն), նաև փայտի մշակում, փորագրում, քարակոփություն, շինարարական, կավագործության և ապակե-

գործության, գործվածքների, գորգերի ու կաշվեղենի արտադրության հետ կապված արհեստներ, գրչություն և կազմարարություն, դեղորայքի ու անուշահոտ յուղերի պատրաստում և բազմաթիվ այլ արհեստատեսակներ: Երկրորդ հատորում էլ անդրադարձել է IX-XIII դարերի արհեստավորական համքարությունների գործունեությանը:

Արհեստների ուսումնասիրությանն է նվիրված Կ. Սեղբոսյանի «Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում» (ՀԱԲ, պրակ 6, 1974) ուսումնասիրությունը, որը հիմնականում գրվել է տասնյակ տարիների ընթացքում հեղինակի գրառած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա: Սույն աշխատության մեջ պատմաազգագրական տեսանկյունից քննվում են Լենինական (Գյումրի) քաղաքի արհեստավորական հիմնական ավանդույթներն ու համքարությունների գործունեությունը, կենցաղային սովորույթները և դրանց վերափոխումը քաղաքային կյանքի պայմաններում:

Խեցեգործության, բրուտագործության արհեստներին է նվիրված Ե. Սարգսյանի ուսումնասիրությունը[172], որը խեցեգործության գծով ներկայացնում է XIX դարավերջի և XX դարի նյութերը, արտադրվող պարագաների տեսակները, աշխատանքի գործիքներն ու աշխատաեղանակները, խեցեգործական արվեստը:

Ժողովրդական փոխադրամիջոցների խնդրին հնագիտական պեղումների արդյունքներով այս կամ այն չափով անդրադարձել է Բ. Պիոտրովսկին[173]: 1950-1960-ական թթ. Սևանա լճի

---

[172] Տե՛ս **Саркисян Е.,** Гончарное искусство Армении, Ереван, 1978:

[173] Տե՛ս **Пиотровский Б.,** Ванское царство. Москва, 1959, с. 151-152: Հմմտ.

ավազանի Լճաշեն գյուղի մոտակայքում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել են տակավին ուշ բրոնզի դարաշրջանի (մ. թ. ա. XIV-XIII դդ.) մի քանի երկանիվ ու քառանիվ սայլեր, ծածկավոր քառանիվ շքասայլեր, որոնք էլ Լալայանի պեղած սայլի տարատեսակներն են: Այնտեղ գտնվել են նաև ճաղավոր անիվներով կառքեր, որոնք նման են ուրարտական ռազմակառքերին: Այս նյութերը հնագետ Հ. Մնացականյանը հրատարակել է առանձին հոդվածներով[174]: Հնագույն փոխադրամիջոցների տեսակներով ու դրանց զարգացման հարցերով է զբաղվել հնագետ Ս. Եսայանը[175]: Նա հատկապես անդրադարձել է Ք.ա. XV-XIII դարերի անիվավոր փոխադրամիջոցների պատմությանը: Հետազոտման նյութերը վերաբերում են պեղածո երկանիվ և քառանիվ բեռնատար սայլերին, երկանիվ կառքերին, ռազմակառքերին: Դրանց նախնական տիպերը բնութագրող պատկերներ են պարունակում Սյունիքի և Գեղարքունյաց ժայռապատկերները, որոնց ակունքները հասնում են մ.թ.ա.V-IV հազարամյակները[176]: Հնագիտական, մատենագրական, մասնավորապես ազգագրական նյութերի հիման վրա փոխադրամիջոցներին է նվիրված Լևոն Պետրո-

---

նույնի՝ Искусство Урарту. VIII-VI вв. до н. э., Л., 1962, с. 72-77, 107:

[174] Տե՛ս **Мнацаканян А.,** Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан. // «Советская археология», 1957, № 2, с. 146-154, 1960, № 2, с. 139-153, «Краткие сообщения института археологии», 1961, вып. 85, с. 66-73:

[175] Տե՛ս **Есаян С.,** Об одной неправильной реконструкции // ԱՀՊԹ, հ. V, Երևան, 1959, էջ 95-103, նույնի՝ Из истории колесного транспорта Древней Армении // ИФЖ, 1960, № 3, էջ 141-151, **նույնի՝** Оружие и военное дело Древней Армении (III-I тыс. до н. э.), Ереван, 1966:

[176] Տե՛ս **Կարախանյան Գ., Սաֆյան Պ.,** Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970, էջ 31-35, **Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ.,** Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971, էջ 13-14, 25-26:

սյանի[177] մենագրությունը: Նա առավել հանգամանորեն է անդրադաձել հայոց հաղորդակցության երթուղիներին, փոխադրամիջոցների տեսակներին, հարմարանքներին ու եղանակներին: Հեղինակն առանձին հոդվածներով նաև անդրադարձել է ազդանշանային հաղորդակցության միջոցներին, հատկապես հայ ժողովրդի կենցաղում ու ռազմական պայմաններում լայնորեն կիրառություն գտած ինչյունային և տեսողական ազդանշանային համակարգին[178]:

Ուսումնասիրվել են հայկական չափ ու կշիռների համակարգերը: Շատ արժեքավոր են կշիռների, երկարության և մակերեսների, չափական համակարգերի վերաբերյալ Ռ. Վարդանյանի հետազոտությունները[179]: Վերջինս այս բնագավառում թարմություն է հաղորդել Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի հնագույն ձեռագրերի շնորհիվ, որոնք պահպանում են ճշգրիտ ու չուսումնասիրված տվյալներ: Այս և իր գրառած տվյալների հիման վրա նա հետազոտել է չափման միավորները:

Հայկական բնակավայրի ու բնակարանի համալիրների ուսումնասիրությունը համառոտ գծերով տրված է «Народы мира» մատենաշարի «Народы Кавказа» II հատորում (էջ 504-513): XX դարի 60-80-ական թթ. հրատարակվեցին դրանց վերաբերյալ մի շարք ուսումնասիրություններ, որոնք, սակայն, հիմնականում ճարտարապետական ուղղվածության էին:

---

[177] Տե՛ս **Պետրոսյան Լ.,** Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ: Հետիոտն և գրաստային փոխադրամիջոցներ (պատմաազգագրական ուսումնասիրություն)// ՀԱԲ, հ. 6, էջ 93-158:

[178] Տե՛ս **Պետրոսյան Լ.**, Հաղորդակցության ազդանշանային կամ պայմանական միջոցները հայերի մեջ // ՊԲՀ, 1968, № 3, էջ 191-198:

[179] Տե՛ս **Վարդանյան Ռ.,** Երկարության և հողի մակերեսի չափական համակարգերը Հայաստանում, Երևան, 1969:

Առավել հիշատակելի է Ս. Մնացականյանի[180] աշխատությունը, որում տրված են խորհրդային շրջանում հայկական ավանդական բնակավայրերի վերափոխման օրինաչափությունները: Հեղինակը շեշտը դրել է կոլեկտիվացման տարիների գյուղական բնակավայրերի հատակագծման ու կառուցապատման, կոլտնտեսային արտադրական կառուցվածքների, գյուղական բնակելի տան և գյուղական բնակավայրերի, հասարակական կառուցվածքների վերափոխումների վրա:

Ազգագրական առումով փոխադարձ ազդեցություններով պայմանավորված՝ հայկական և վրացական տների համանման կողմերին է անդրադարձել Ռ. Աղաբաբյանը[181]: Ճարտարապետական, ինչ-որ չափով նաև ազգագրական առումով հանգամանալի հետազոտություն է կատարված Ս. Վարդանյանի կողմից[182]: Վերջինս ներկայացրել է ժողովրդական բնակելի տների աստիճանական զարգացման պատմությունը՝ սկսած պարզագույն օթևանից մինչև բարդ հատակագծային բնակելի տները: Հանգամանորեն շարադրված է բնակելի տների էվոլյուցիան՝ կապված հայ ժողովրդի նյութական ու մշակութային կյանքի զարգացման, երկրի աշխարհագրական առանձնահատուկ պայմանների, տեղական շինանյութերի առկայության հետ և այլն: Աշտարակի ժողովրդական տան կառուցման սկզբունքներին է նվիրված Է. Հակոբյանի[183], Սյու-

---

[180] Տե՛ս **Մնացականյան Ս.,** Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը, Երևան, 1956:

[181] Տե՛ս **Агабабян Р. А.**, Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950:

[182] Տե՛ս **Վարդանյան Ս.,** Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը, Երևան, 1959:

[183] Տե՛ս **Հակոբյան Է.,** Աշտարակի շրջանի ժողովրդական բնակարանի ճարտարապետությունը, Երևան, 1964:

նիքի ժողովրդական տան ճարտարապետությանը՝ Ն. Պապուխյանի[184], Գյումրիի ժողովրդական ճարտարապետությանը՝ Ս. Մաթևոսյանի[185] և մյուսների աշխատությունները: Դրանցում հեղինակները բնութագրել են տարածաշրջաններին բնորոշ ժողովրդական ինքնատիպ ճարտարապետական լուծումները: Հազարամյակների խորքից եկող այդ ժառանգության նյութական մնացորդները նրանց կողմից չափագրվել, լուսանկարվել և վերլուծության են ենթարկվել: Շոշափվել են հին քաղաքների, ավանների և գյուղերի կառուցապատման, տարբեր բնույթի շենքերի ու շինությունների կառուցվածքային, համադրվածքային և գեղարվեստական առանձնահատկությունները: Այդ նույն սկզբունքով Հայաստանի արտադրական կառույցների՝ ձիթհանների, ջրաղացների և հնձանների ուսումնասիրությանն է նվիրված Հ. Խալփախչյանի[186] մենագրությունը: Աշխատության մեջ շարադրվում են ինչպես անցյալում, այնպես էլ խորհրդային տարիներին լայնորեն տարածված արտադրական կառուցվածքների կոմպոզիցիոն ու կառուցողական առանձնահատկությունները, նաև դրանց ճարտարապետական ձևերի զարգացման պատմական փուլերի ընդհանրությունը: Նույն հեղինակը հանգամանալի ուսումնասիրություն է նվիրել նաև Հայաստանի քաղաքացիական ճարտարապետությանը[187]: Գիտնականն անդրադարձել է Հայաստանի

---

[184] Տե՛ս **Պապուխյան Ն.,** Սյունիքի ժողովրդական բնակարանի ճարտարապետություն, Երևան, 1972:

[185] Տե՛ս **Մաթևոսյան Ս.,** Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1965:

[186] Տե՛ս **Խալփախչյան Հ.,** Հայաստանի արտադրական կառուցվածքները, Երևան, 1961:

[187] Տե՛ս **Халпахчьян О.,** Гражданское зодчество Армении (жилые и общественные здания), Москва, 1971:

ժողովրդական վարպետների շինարարական ավանդույթներին, միջնադարյան Ռուսիայի ու Հայաստանի շինարարական մշակութային կապերին, Հայկական լեռնաշխարհի հնագույն շինարարական մշակույթին[188]:

Հայկական ժողովրդական կառույցների ուսումնասիրման որոշ հարցեր է շոշափում նաև վրացի ազգագրագետ Թ. Ա. Չիկովանին[189], որը հիմնականում անդրադարձել է հայոց ավանդական բնակարանի հիմնական տիպի՝ գլխատան, և վրաց «դարբազիների» ծագումնաբանական ու կառուցվածքային առնչակցության հարցերին:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժինը, մի կողմից, հայկական ժողովրդական շենքերին նվիրված ատլասը կազմելու, մյուս կողմից՝ հիմնախնդիրը ազգագրական համալիր ուսումնասիրության ենթարկելու անհրաժեշտությունից մղված՝ 1950-ական թվականներից հաջորդաբար կազմակերպել է գիտարշավներ Հայաստանում և նրանից դուրս գտնվող հայաշատ վայրերում՝ հնամենի կառույցների մնացորդներն ու նորերը նկարագրելու և չափագրություններ անելու նպատակով: Գիտարշավների միջոցով հարուստ նյութ կուտակվեց ապագա ուսումնասիրության համար: Դրանց մի մասի հիման վրա Դ. Վարդումյանը 1956 թ. հրատա-

---

188 Տե՛ս **Халпахчьян О.,** Строительные традиции народных мастеров Армении (Материалы к истории строительного искусства на примере памятников Санаина) // «Архитектурное наследство» (Москва), 1953, № 3, էջ 36-78, **նույնի՝** Культурные связи Владимиро-Суздальской Руси и Армении. Москва, 1977, **նույնի՝** Строительная культура Армянского нагорья с древнейших времен по VII в. до н.э. // «Архитектурное наслед-ство», 1983, № 31, էջ 98-132:

189 Տե՛ս **Чиковани Т. А.,** Классификация и генезис закавказского жилища со ступенчато венцеобразным перекрытием // Хозяйство и материальная культура народов Кавказа в XIX-XX вв., вып. I. Москва, 1971, էջ 33-37:

բակած աշխատության մեջ[190] ներկայացրել է Լոռու պատմաազգագրական շրջանի շենքերի ժամանակակից տեսակները, նաև հին շենքերի տիպերը: Գրեթե նույն ժամանակ Վ. Բդոյանն էլ հրատարակեց «Հայկական կոլտնտեսային տունն ազգագրական տեսակետից» հոդվածը[191]՝ անդրադառնալով 1950-ական թվականների բնակելի և տնտեսական շենքերին ու դրանց զարգացման ընթացքին:

Հայ կոլտնտեսականների բնակարաններին նվիրված բաժին ունի Դ. Վարդումյանի և Է. Կարապետյանի[192] համատեղ աշխատությունը: Հայկական տան առանձին բաժանմունքներին է անդրադարձել նաև ռուս ազգագրագետ Մ. Իլյինան[193]: Մեկ այլ խորհրդային հետազոտող՝ Վ. Վիտովը, առաջ քաշեց բնակավայրերի և բնակարանների դասակարգման չափանիշներ, որոնք հետագայում դարձան խորհրդային մյուս հետազոտողների համար մեթոդական ուղենիշներ[194]: Ռուսաստանցի մեկ այլ հետազոտող Վ. Պ. Կոբիչևը նյութերի բարեխիղճ ուսումնասիրությամբ կարողացել է ճշգրտորեն որոշել հայկական լեռնավայրային տիպի բնակարանի՝ «գլխատան» տարածման շրջանները Արևելյան Անդրկովկասում[195]:

---

[190] Տե՛ս **Վարդումյան Դ.,** Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956, էջ 100-146, **նույնի՝** Характеристика основных этнографических районов Армении в XIX веке, Москва, 1964:

[191] Տե՛ս **Բդոյան Վ.,** Հայկական կոլտնտեսային տունը ազգագրական տեսանկյունից // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 4, էջ 37-54, **նույնի՝** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 66-95:

[192] Տե՛ս **Վարդումյան Դ., Կարապետյան Է.,** Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Երևան, 1963, էջ 29-48:

[193] Տե՛ս **Ильина М.,** Древнейшие типы жилищ Закавказья. Москва, 1964:

[194] Տե՛ս **Витов В.,** О классификации поселений // «Советская этнография» (այսուհետև՝ СЭ), 1953, № 3, с. 27-38:

[195] Տե՛ս **Кобычев В. П.,** Жилище народов Восточного Закавказья в XIX веке //

Հիմնախնդրի ուսումնասիրության շրջանակներում հայ գիտական ազգաբանության մեջ նոր երևույթ էր Է. Մարգարյանի (ղեկավար), Ս. Հարությունովի, Ի. Բարսեղյանի, Ս. Ենգիբարյանի, Է. Մելքոնյանի, Յու. Մկրտումյանի, Կ. Սարինգուլյանի «Կենսապահովման մշակույթը և էթնոսը» խորագրով համատեղ էթնոմշակութաբանական հետազոտությունը [196]: Այստեղ բնակավայրերի ու բնակարանների էթնոմշակութաբանական հետազոտության ուշագրավ փորձ են կատարել Է. Մելքոնյանը և Յու. Մկրտումյանը: Է. Մելքոնյանը Հայաստանի լեռնային (Սյունիք), նախալեռնային (Շիրակ), հովտային (Արարատյան դաշտ) արեալների ավանդական և ժամանակակից բնակավայրերի համահայկական տիպերի բնութագրության փորձ է կատարել՝ կախված դրանց ձևավորման վրա ազդող բնաէկոլոգիական, սոցիալ-տնտեսական գործոններից ու ազգային ավանդույթներից[197]: Յու. Մկրտումյանը, ըստ Հայաստանի երեք խոշոր պատմաազգագրական շրջանների դաշտային ազգագրական առկա նյութերի համեմատման սկզբունքի, ներկայացրել է համահայկական բնակարանային տիպերի ձևավորման գործառութային գործունեության և զարգացման հիմնական առանձնահատկություններն ու ուղղությունները[198]: Այս հարցում հեղինակը շատ է կարևորել բնա-

---

ՀՍ,1957, № 3:

[196] Տե՛ս Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования (на материалах армянской сельской культуры). Ереван, 1983, Տե՛ս նաև **Арутюнов С. А., Мкртумян Ю. И.,** Сельские поселения Армении. Введение // Культура жизнеобеспечения и этнос, с. 110-117:

[197] Տե՛ս **Мелконян Э.,** Сельские поселения Армении // Культура жизнеобеспечения и этнос, с. 110-149:

[198] Տե՛ս **Мкртумян Ю.,** Сельское жилище армян // Культура жизнеобеспечения и этнос, с. 150-188:

կարանների տիպերի պայմանավորվածությունն ընտանիքների կազմով ու կառուցվածքով, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով:

1980-ական թթ. ազգագրագետներից Հ. Մարությանը կենցաղամշակութային առումով առավել հանգամանորեն է ուսումնասիրել հայ ժողովրդական բնակարանի ներսույթը[199]: Նա, հայկական ժողովրդական ավանդական բնակարանի գործառութային հակիրճ բնութագրությունը տալուց զատ, ներկայացրել է ժողովրդական բնակարանի ավանդական ջեռուցման և լուսավորության, կահկարասու կիրառական և տիպաբանական բնութագրությունը, ներսույթի դեկորատիվ կիրառական տարրերի գեղարվեստական, ճարտարապետական յուրահատկությունները: Այսուհանդերձ, թե՛ հայկական, թե՛ կովկասագիտական ու ընդհանուր ազգագրական գրականության մեջ դեռևս չմշակվեցին բնակարանի՝ որպես սոցիալական ֆենոմենի համալիրի հետազոտման համընդհանուր ճանաչման արժանացած սկզբունքներ: Դրանով հնարավորություն կընձեռվեր պատմահամեմատական խորը վերլուծության հիման վրա կատարելու կենսապահովման մշակույթի այդ բաղադրիչի լրիվ և հանգամանալի ուսումնասիրություն: Ցավոք, ինչպես բնակավայրի, այնպես էլ բնակարանի վերաբերյալ առ այսօր հայագիտության մեջ չկա համալիր, ամբողջական հետազոտություն: Եղածներն առանձին հրապարակումներ են ու հոդվածներ: Հայ ազգագրական գիտության խն-

---

[199] Տե՛ս **Մարության Հ.** Հայոց ավանդութային շտեմարանները (ըստ ազգագրական շրջանների) // ԼՀԳ, 1987, էջ 65-77, **նույնի՝** Интерьер армянского народного жилища (вторая половина XIXначало XX в.). Материалы к «Кавказскому историко-этнографическому атласу» // Армянская этнография и фольклор (материалы и исследования), т. 17, Ереван, 1989, էջ 63-142:

դիրն է ունենալ հիմնարար, հայկական ավանդական և ժամանակակից բնակավայրին ու բնակարանին նվիրված ամփոփ և ամբողջական մենագրական աշխատություններ:

Անհամեմատ լավ է ուսումնասիրված հայ ժողովրդական տարազն ու զարդարանքը: Հայաստանի պատմության պետական թանգարանի երկարամյա աշխատող Ա. Պատրիկը իր «Հայկական տարազ» գրքում տվել է հայկական տարազի բազմադարյան պատմության ուրվագիծը վաղնջական ժամանակներից մինչև XX դարի կեսերը՝ ներառելով հայկական ժողովրդական պատմաազգագրական շրջանների տարազաձևերի քարտեզը, նկարների հարուստ ալբոմը՝ 82 տախտակ, ինչպես նաև օտար փոխառված տարազանմուշները[200]: Այս գրքի գիտաճանաչողական արժեքը բացառիկ է, քանզի Վ. Հացունու ուսումնասիրությունն ընդգրկում է միայն մինչև XVI դարը, մինչդեռ Պատրիկը ոչ միայն հնի վրա ավելացրել է նորը, այլև շարունակել է այն մինչև իր ապրած ժամանակներն ու կարողացել է տալ հայ ժողովրդի տարազի ընդհանուր պատկերը: Եվ ամենակարևորը. հեղինակը ջանացել է կորստից փրկել բնաջնջման ենթարկված արևմտահայության զանազան գավառների հատուկ տարազաձևերը, նաև հայրենադարձներից հավաքել հին լուսանկարներ ու սփյուռքում լույս տեսած հայրենակցական և ազգագրական հրատարակություններից քաղել համապատասխան նյութեր:

1965 թ. Ֆ. Գրիգորյանը հրատարակեց «Հայկական տարազներ» ալբոմը: Հայկական տարազի, ագանելիքների, գլխի հարդարանքների հանգամանալի ուսումնասիրություն է կատարել իր գրառած դաշտային ազգագրական նյութերի հիման

---

[200] Տե՛ս **Պատրիկ Ա.**, Հայկական տարազ, Երևան, 1967:

վրա Ն. Ավագյանը[201]: Նա հանգամանորեն ներկայացրել է Հայաստանի պատմաազգագրական տարբեր շրջաններին բնորոշ տարազային համալիրների նկարագիրն ու բնութագրությունը: Ն. Ավագյանի գրքում ներկայացված են հայկական տարազի համալիրների բաղկացուցիչ մասերը, նրա տարածման շրջանակները: Տրված են ձևվածքը, օգտագործված կարերի տեսակները, նաև հագուստի զարդարման եղանակները[202]: Այս ուսումնասիրությունը յուրատեսակ, անփոխարինելի ձեռնարկ է և՛ ազգագրագետների, և՛ տարազի մասնագետների, և՛ թատերական, երգի ու պարի համույթների տարազը բեմականացնողների համար: Ուշագրավ է նաև Արցախի հայ բնակչության ժողովրդական հագուստի վերաբերյալ նրա մյուս հետազոտությունը[203]: Հայկական տարազի պատմագրությանն ու պատմաազգագրական շրջանների տարազային յուրահատկություններին է անդրադարձել նաև Վ. Բդոյանը[204]: Ուրարտական զգեստին են անդրադարձել Ս. Եսայանն ու Ս. Հմայակյանը[205], իսկ հելլենիստական դարաշրջանի հայկական տարազին՝ Գ. Տիրացյանը[206], Պոնտոսի հայության տարազի վերա-

---

201 Տե՛ս **Ավագյան Ն.,** Հայկական ժողովրդական տարազ (XIX դ.-XX դ. սկիզբ), Երևան, 1983:

202 Տե՛ս **Авакян Н.,** Способы орнаментации традиционной одежды армян в XIX-XX вв. // СЭ, 1972, № 4, с. 108-117, **նույնի՝** Об ареалах народного костюма армян (XIX-начало XX в.) // «Кавказский этнографический сборник» (այսուհետ՝ КЭС), т. VI, Москва, 1976, с. 188-200:

203 Տե՛ս **Авакян Н.,** Народная одежда армян Арцаха в XIX-начале XX в. // Хозяйство и материальная культура народов Кавказа в XIX-XX вв., вып. I, Москва, 1971, с. 209-223:

204 Տե՛ս **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, էջ 95-112:

205 Տե՛ս **Եսայան Ս., Հմայակյան Ս.,** Ուրարտական զգեստ // ՊԲՀ, 1980, № 3, էջ 203-215:

206 Տե՛ս **Տիրացյան Գ.,** Դիտողություններ հելլենիստական դարաշրջանի հայկական տարազի մասին // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1959, № 11-12, էջ 97-101:

բերյալ ուշագրավ է Ի. Կուզնեցովի աշխատությունը[207]: Պարագետ Սրբուհի Լիսիցյանը, պարարվեստի հետ ունեցած անմիջական առնչությունները նկատի ունենալով, իր «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները»[208] երկհատոր աշխատության մեջ զետեղել է տասնյակ տարազաձևեր:

Ցավոք, առ այսօր ուտեստի և ըմպելիքների համակարգը ազգագրական առումով անբավարար է ուսումնասիրված: 1960 թ. ռուսերեն, իսկ 1963 թ. հայերեն լույս է տեսել «Հայկական խոհանոց» գիրքը: Ուշագրավ են Լ. Հարությունյանի[209] և Ս. Երեմյանի[210]՝ վերոնշյալ գրքում զետեղած ուսումնասիրությունները: Ուտեստի վերաբերյալ առատ նյութ է զետեղված Վ. Բդոյանի «Երկրագործական մշակույթը Հայաստանում» աշխատության մեջ: Հայկական ուտեստի և հացկերույթների վերաբերյալ տեսական ընդհանրացնող ուսումնասիրություն է կատարված 1983 թ. Երևանում լույս տեսած «Культура жизнеобеспечения и этнос» գրքի երրորդ՝ «Система питания» գլխում Ս. Հարությունովի, Յ. Մկրտումյանի հեղինակությամբ (էջ 189-253): Ուշագրավ է ուտեստի համալիրի վերաբերյալ Ս. Հարությունովի ընդհանուր եզրահանգումների վերաբերյալ բաժինը[211]:

---

[207] Տե՛ս **Кузнецов И.,** Одежда народов Понта, Москва, 1955:

[208] Տե՛ս **Лисициан С. С.,** Старинные пляски и театральные представления армянского народа, т. I, Ереван, 1958, т. II, Ереван, 1972:

[209] Տե՛ս **Арутюнян Л.,** О некоторых особенностях питания армянского народа //Армянская кулинария, Москва, 1960, с. 29-36:

[210] Տե՛ս **Еремян С.,** Естественно-исторические основы питания армянского народа // Армянская кулинария, с. 21-28:

[211] Տե՛ս **Арутюнов С. А.,** Система питания. Общие выводы // Культура жизнеобеспечения и этнос, с. 254-270:

Հայկական գյուղական ընտանիքի ձևերի, դրանց կառուցվածքի, ներընտանեկան հարաբերությունների, նոր երևույթ դարձած սովորույթների, հայոց հարսանեկան ծեսերի և ազգարենակցական խմբերի վերաբերյալ ուշագրավ հոդվածներ հրատարակեց նաև Վ. Բդոյանը[212]: Հայաստանի պատմության պետական թանգարանի գիտաշխատող Է. Կարապետյանն էլ հրատարակեց «Գլխագինը հայոց հարսանեկան սովորույթների մեջ և նրա սոցիալ-տնտեսական արմատները» ռուսերեն թեկնածուական ատենախոսության սեղմագիրը[213]: Այդ տարիներին Դ. Վարդումյանն ի մի բերեց իր կատարած դաշտային հետազոտությունների արդյունքները և հրատարակեց շատ արժեքավոր, համընդգրկուն ուսումնասիրություն՝ «Լոռեցիների նոր կենցաղը»[214] վերնագրով: Այստեղ համառոտ ներկայացված են խորհրդային հասարակարգում լոռեցիների կենցաղում տեղի ունեցած արմատական փոփոխությունները: Ըստ էության, սա հայերի հին ու նոր կենցաղի հիմնական և բնորոշ կողմերի համեմատական ուսումնասիրության մի փորձ է:

1960-80-ական թթ. հայ ազգագրական գիտության մեջ կարևոր ուշադրություն է դարձվել ընտանեկան և ազգակցական հարաբերություններին ու համայնքային կազմակերպություններին: Հայերի գերդաստանին, ազգակցական համակար-

---

[212] Տե՛ս **Բդոյան Վ.**, Կոլտնտեսային ընտանեկան հարաբերություններ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1956, № 7, էջ 25-39, **նույնի՝** Հարսանեկան ծեսերի ու սովորույթների նկարագիր, գրանցված 14-րդ դարում //«Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 53-56, **նույնի՝** Кровнородственный «азг» и родственные отношения у армян // СЭ, 1952, № 1, էջ 189-192:

[213] Տե՛ս **Карапетян Э.**, Выкуп в свадебных обрядах армян и его социально-экономические корни // Труды государственного исторического музея Армении, т. 3, Ереван, 1950, էջ 73-146:

[214] Տե՛ս **Վարդումյան Դ.**, Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956:

գին է անդրադարձել Մ. Օ. Կոսվենն իր աշխատություններում[215]: Կովկասի ժողովուրդների ազգագրության տարբեր հարցերին նվիրված իր թեմատիկ ուսումնասիրություններում Կոսվենը խիստ ուշագրավ ընդհանրացումներ է կատարել՝ հմտորեն օգտագործելով նաև հայ ժողովրդի կենցաղին ու սովորույթներին վերաբերող նյութերը: Նրա ղեկավարությամբ առավել հանգամանորեն առանձին մենագրություններով հանդես է եկել Է. Կարապետյանը: Նա հրատարակել է երկու ուշագրավ աշխատություն, որոնք նոր խոսք էին հայ գիտական ազգագրության մեջ[216]: Գոյություն ունեցող գրավոր աղբյուրների և իր իսկ հավաքած դաշտային ազգագրական նյութերի համեմատական քննությամբ հեղինակը խոր ու մանրազնին վերլուծության է ենթարկել հայ նահապետական գերդաստանը:

«Հայերի ընտանեկան համայնքը» աշխատության մեջ դիտարկվել ու ըստ ամենայնի մեկնաբանվել են հայ ընտանեական համայնքի տնտեսական բազայի, կազմի ու կառուցվածքի, անդամների աշխատանքային և գույքային-իրավական փոխհարաբերությունների ուշագրավ բազում հարցեր: Հայտնի է, որ ընտանեկան համայնքի զարգացման ներքին օրինաչափությունների համակարգում, նահապետական-հայրիրավական սկզբունքների դրսևորման զանազան ձևերում կարևոր տեղ են զբաղեցնում նաև ազգակցական հարաբերությունները,

---

[215] Տե՛ս **Косвен О.,** Очерки по этнографии Кавказа // СЭ, 1946, № 2, **նույնի՝** Семейная община и патронимия. Москва, 1963, նույնի՝ История и этнография Кавказа (исследования и материалы). М., 1961, **նույնի՝** Կովկասի ժողովուրդների պատրոնոմիան // ՊԲՀ, 1963, № 1, էջ 93-107:

[216] Տե՛ս **Карапетян Э.,** Армянская семейная община. Ереван, 1958, **նույնի՝** Родственная группа «азг» у армян, Ереван, 1966:

որոնց ուսումնասիրությանն է նվիրված Է. Կարապետյանի «Ազգ-արենակցական խումբը հայերի մեջ» աշխատությունը: Դ. Վարդումյանը և Է. Կարապետյանը համատեղ հրատարակել են «Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը» աշխատությունը (1963): Գրքի հեղինակները խորհրդային ընտանիքի կենցաղը և ներընտանեկան հարաբերությունները առավել ամբողջական ներկայացնելու համար կիրառել են պատմահամեմատական մեթոդը թե՛ ժամանակագրական, թե՛ տարածական առումներով:

Առավել հանգամանալի հրատարակություններ հեղինակել է ԽՍՀՄ ԳԱ Կովկասի ժողովուրդների ազգագրության ինստիտուտի գիտքարտուղար Ա. Տեր-Սարգսյանցը (1937-2019): Նա համահայկական դաշտային ազգագրական հետազոտությունների շնորհիվ բազմաթիվ ուսումնասիրություններ կատարեց հայոց ընտանիքի, ներընտանեկան կյանքի, խուսափման սովորույթի, ամուսնահարսանեկան և այլ ծիսակարգերի վերաբերյալ, որոնք գիտնականը քննում է ԽՍՀՄ ժողովուրդների ազգային մշակույթների համատեքստում[217]: Այդ նույն մեթոդաբանությամբ հայկական ընտանիքի վերաբերյալ ուշագրավ ուսումնասիրություն է հրատարակել Զ. Խառատյա-

---

[217] Տե՛ս **Тер-Саркисянц А. Е.,** Обычай избегания у армян и его изживание за годы Советской власти (по материалам сельских районов Армянской ССР) // ИФЖ, 1968, № 2, էջ 211-218, **նույնի՝** Современная семья у армян (по материалам сельских районов Армянской ССР), Москва, 1972. **նույնի՝** Современные этнические процессы на Кавказе. М., 1978, էջ 62-117, **նույնի՝** Современная семья у армян Нагорного Карабаха // КЭС, т. VI, էջ 11-46, **նույնի՝** Основные тенденции развития современной сельской семьи у армян // КЭС, т. VII, 1980, էջ 162-192, **նույնի՝** Брак и свадебный цикл у армян (вторая половина XIX-начало XX в) // КЭС, т. IX, 1989, էջ 246-284, **նույնի՝** Армяне. Семейный быт народов СССР, М., 1990, էջ 402-420:

նը[218]: Հայոց ամուսնաընտանեկան հարաբերությունների զարգացման ու փոփոխման, դրանց սովորութային և իրավական հիմքերի վերհանման ու լուսաբանման բնագավառում պատշաճ տեղ ունի Ս. Հովհաննիսյանի հետազոտությունը[219], իսկ ազգակցական խմբի վերաբերյալ ուշագրավ աշխատություններ հրատարակեցին Ա. Ասմանգուլյանը[220] և Տ. Ավետիսյանը[221]: Առաջ քաշվեց հայկական կենցաղում լայն տարածում ունեցած հասակային դասերի ինստիտուտի վերապրուկների ուսումնասիրության հարցը: «Հայ ժողովրդական խաղեր» գրքում դրանց անդրադարձել է նաև Վ. Բդոյանը[222]: Նոր Նախիջևանի կտրիճների դասի համանման սովորությունների հետքեր է արձանագրել Խ. Փորքշեյանը[223], իսկ Ջավախքի տղամարդկանց ու կանանց միությունների մասին ուսումնասիրություն է կատարել Ժ. Խաչատրյանը[224]: Հայաստանի տարբեր շրջաններում և հայաշատ գաղութներում տղամարդկանց ու կանանց հասակակիցների միությունների գոյությունն է արձանագրել նաև Վ. Գրիգորյանը[225]: Առավել հանգամանորեն այս մասին գրել է Լ. Վարդանյանը: Նրա «Տղամարդկանց տա-

---

218 Տե՛ս **Харатян З. В.**, Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян // Армянская этнография и фольклор (материалы и исследования), т. 17, էջ 7-61:

219 Տե՛ս **Հովհաննիսյան Ս.**, Ամուսնաընտանեկան իրավունքը վաղ ավատականՀայաստանում, Երևան, 1976:

220 Տե՛ս **Асмангулян А.,** История армянских терминов родства. Ереван, 1983:

221 Տե՛ս **Ավետիսյան Տ.**, Հայկական ազգանուն, Երևան, 1987:

222 Տե՛ս **Բդոյան Վ.,** Հայ ժողովրդական խաղեր, հ. I, Երևան, 1963, էջ 23-42:

223 Տե՛ս **Փորքշեյան Խ.,** Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1965, **նույնի՝** Նոր Նախիջևանի հայ գյուղերի «Կտրիճների միությունների» մասին // ՊԲՀ, 1966, № 3, էջ 184-192:

224 Տե՛ս **Խաչատրյան Ժ.**, Հասակակիցների միությունները Ջավախքում // ՊԲՀ, 1968, № 1, էջ 203-212:

225 Տե՛ս **Գրիգորյան Վ.**, Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութների «Կտրիճվորաց եղբայրությունների» մասին // ՊԲՀ, 1963, № 2, էջ 115-127:

րիքային խմբերի ավանդույթները հայերի մեջ (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ)» աշխատությունն առաջին ամբողջական հետազոտությունն է նվիրագործական այս ծեսերի վերաբերյալ[226]:

Ազգագրության ավանդութային թեմաներից է նաև գյուղական համայնքը: Արևելահայ գյուղական համայնքին է նվիրված Մ. Հակոբյանի մենագրությունը[227]: Հայկական գյուղական կամ հարևանական համայնքին նվիրված ուշագրավ հոդվածներով են հանդես եկել անվանի պատմաբաններ Լ. Խաչիկյանը, Ս. Հակոբյանը, Ա. Հակոբյանը, Ա. Համբարյանը, Պ. Հովհաննիսյանը[228]: Այս հիմնախնդրին է անդրադարձել նաև տոդերիս հեղինակը[229]:

1980-ական թվականներից սկիզբ դրվեց նաև էթնոժողովրդագրությանն առնչվող հարցերի ուսումնասիրությանը[230]:

---

[226] Տե՛ս **Варданян Л.**, Традиции мужских возрастных групп у армян в конце XIX начале XX в. (историко-этнографическое исследование) // Армянская этнография и фольклор (материалы и исследования), т. 12. Ереван, 1981, с. 85-142:

[227] Տե՛ս **Акопян М.**, Сельская община в Восточной Армении во II пол. XIX нач. XXвв., Ереван, 1988:

[228] **Խաչիկյան Լ.,** XIV-XV դդ. հայկական գյուղական համայնքի մասին // ՊԲՀ, 1958, № 1, **Հակոբյան Ս.,** Գյուղական համայնքը Հայաստանում վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում // ՊԲՀ, 1965, №1, **նույնի՝** Գյուղական համայնքը Հայաստանում 15-18-րդ դդ. // ՊԲՀ, 1973, № 2**, Հակոբյան Ա.**, Գյուղական համայնքը Կարսի մարզում (XIX դարի վերջ XX դարի սկիզբ) // ՊԲՀ, 1987, № 1, **Համբարյան Ա.,** Ազգարարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (18561914), Երևան, 1965, **Հովհաննիսյան Պ.,** Գյուղական համայնքի պրոբլեմի ուսումնասիրությունը ակադ. **Հ. Մանանդյանի** աշխատություններում // ԲԵՀ, 1985, № 1:

[229] **Նահապետյան Ռ.,** Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ // ԲԵՀ, 1979, № 1, **նույնի՝** Նյութական փոխօգնության ձևերի մնացուկները աղձնիքահայության ազգակցական խմբերի մեջ XIX դ. և XX դ. սկզբին // «Երևանի համալսարան», գիտական լրատու, 1977, № 2:

[230] Տե՛ս Население Еревана (этносоциологическое исследование), ред. Ару-

1950-80-ական թվականներին լույս տեսան ազգագրական մեծարժեք հետազոտություններ Լ. Աբրահամյանի[231], Կ. Մելիք-Փաշայանի[232], Գ. Վարդումյանի[233], Ա. Օղաբաշյանի[234], Վ. Բդոյանի[235], Կ. Աթոյանի[236], Ս. Լիսիցյանի[237], Ժ. Խաչատրյանի[238], Է. Պետրոսյանի[239] կողմից: Հայ ժողովրդական մինչ այդ անտեսված խաղերին նվիրված եռահատոր ընդարձակածավալ աշխատության մեջ Վ. Բդոյանը հնարավոր բոլոր աղբյուրներից՝ դաշտային ազգագրական, մատենագրական, գեղարվեստական գրականության և այլն, բծախնդիր մանրակրկիտությամբ, գրեթե սպառիչ կերպով հավաքել է հայ ժողովրդական խաղերը՝ հնարավոր տարբերակներով, գիտակա-

---

тюновЮ., Карапетян Э., Ереван, 1986:

[231] Տե՛ս **Абрамян Л.,** Первобытный праздник и мифология. Ереван, 1983:

[232] Տե՛ս **Մելիք-Փաշայան Կ.,** Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963:

[233] Տե՛ս **Вардумян Г.**, Дохристианские культы армян // ՀԱԲ, հ. 18, Երևան, 1991, էջ 65-146:

[234] Տե՛ս **Օղաբաշյան Ա.,** Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում // ՀԱԲ, հ. 9, Երևան, 1978, էջ 7-72, **նույնի՝** Народные верования армян // КЭС, т. VI, с. 107-130:

[235] Տե՛ս **Բդոյան Վ.,** Հայ ժողովրդական խաղեր, հ. 1, Երևան, 1963, հ. 2, Երևան, 1980, հ. 3, Երևան, 1983:

[236] Տե՛ս **Աթոյան Կ.**, Ռազմասպորտային մենամարտերը Հայաստանում, Երևան, 1965:

[237] Տե՛ս **Лисицян С.**, Старинные пляски и театральные представления армянского народа, т. I. Ереван, 1958, т. II, 1972, **նույնի՝** Армянские старинные пляски, Ереван,1983:

[238] Տե՛ս **Խաչատրյան Ժ.**, Զավախքի հայ ժողովրդական պարերը // ՀԱԲ, հ. 7, Երևան, 1975, էջ 7-124: Տե՛ս նաև **Петросян Э., Хачатрян Ж.,** Армянский народныйтанец, Москва, 1980:

[239] Տե՛ս **Петросян Э.**, Театральные черты в средневековых армянских миниатюрах // ՀԱԲ, հ. 7, էջ 127-194, **նույնի՝** Сюжеты и образы народного драматического творчества армян // Фольклорный театр народов СССР, Москва, 1985, էջ 171-190:

նորեն մշակել դրանք՝ ենթարկելով անհրաժեշտ դասակարգումների և տվել որպես բնագրեր՝ կցելով նաև ծավալուն ուսումնասիրություն:

1950-1980-ական թթ. ազգագրական նշանակալի հետազոտություններ կատարվեցին հայոց կիրառական արվեստի ոլորտում: 1955 թ. լույս տեսավ Ա. Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» ծավալուն մենագրությունը, որն առ այսօր ունի աղբյուրագիտական կարևոր նշանակություն: Ուշագրավ են Վ. Թեմուրճյանի[240], Մ. Ղազարյանի[241] գորգագործության վերաբերյալ անչափ հետաքրքիր հետազոտությունները, որոնցում ընդարձակ ակնարկներ կան պատմական անցյալի և խորհրդային տարիներին կազմակերպված գորգերի արտադրության մասին: Վ. Բդոյանի «Հայկական աղամաններ»[242] աշխատության մեջ արծարծված են Անահիտ դիցուհուն խորհրդանշող հայկական կանացիակերպ աղամանների կիրառության, նրան աղերսվող աղի պաշտամունքի, քրիստոնեության շրջանում դիցուհու ծպտվելու հանգամանքներին առնչվող հարցեր: Ուշագրավ են նաև Ս. Դավթյանի՝ հայկական ժանյակի, ասեղնագործության, կարպետի, միջնադարյան կիրառական արվեստների պատմության վերաբերյալ ուսումնասիրությունները[243]: Դրանցում քննության են առնված ասեղնագործ արվեստների տեսակները, դրանց կատարման հնարները, աշ-

---

[240] Տե՛ս **Թեմուրճան Վ.**, Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1956:

[241] Տե՛ս **Ղազարյան Մ.,** Հայկական գորգ (պատկերազարդ), Լոս Անջելես, 1988:

[242] Տե՛ս **Բդոյան Վ.,** Հայկական աղամաններ: Անահիտ դիցուհուն խորհրդանշողկանացիակերպ աղամաններ, Երևան, 1986:

[243] Տե՛ս **Դավթյան Ս.,** Հայկական ժանյակ, Երևան, 1966, նույնի՝ Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972, **նույնի՝** Հայկական կարպետ, Երևան, 1975, **նույնի՝** Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստների պատմության, Երևան, 1982:

խարհագրական տարածման, ազգագրական ու գեղարվեստական առանձնահատկություններին վերաբերող բազմաթիվ և բազմազան հարցեր: Նրա գրքերը լույս են սփռում կիրառական արվեստի հանիրավի մոռացված մի քանի ասպարեզների վրա: Այս առումով դրանք բացառիկ արժեք են ներկայացնում հայագիտության մեջ: Նշելի են նաև Ա. Պատրիկի[244], Ա. Գևորգյանի[245] ուսումնասիրությունները:

Կիրառական արվեստի բնագավառում տեսական բնութի ուսումնասիրություն է կատարել ակադեմիկոս Բ. Առաքելյանը: Նա 1949 թ. հրատարակել է «Հայկական պատկերաքանդակները IV-VII դարերում» աշխատությունը, որում մանրամասնորեն ուսումնասիրել է աշխարհիկ և կրոնական բովանդակություն ունեցող քարե հուշարձանները: 1969 թ. հրատարակված նրա հոդվածը[246] գրվել է Ք. ա. VI դարից մինչև Ք. հ. III դարի նյութերի հիման վրա: 1976 թ. Բ. Առաքելյանը հրատարակեց հին Հայաստանի արվեստի վերաբերյալ ընդհանրացնող մի աշխատություն, որի գիտական նշանակությունը բացառիկ է[247]: Գրքում քննարկված են ինչպես մոնումենտալ, այնպես էլ կիրառական արվեստի հուշարձանները՝ քանդակները, խաչանկարը, գեղարվեստական ստեղծագործությունները՝ մետաղից, քարից, կավից, ապակուց, հայ թագավորների հատած դրամների, ինչպես նաև գեմմաների ու կնիքների պատկերագրությունը: Հեղինակը լուսաբանում է հին հայկական արվես-

---

[244] Տե՛ս **Պատրիկ Ա.**, Ուրֆայի ասեղնագործությունը, Երևան, 1985:

[245] Տե՛ս **Գևորգյան Ա.,** Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Երևան, «Հայաստան» հրատ., 1978:

[246] Տե՛ս **Առաքելյան Բ.**, Քանդակագործությունը Հին Հայաստանում // ՊԲՀ, 1969, №1, էջ 43-69:

[247] Տե՛ս **Առաքելյան Բ.**, Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության (մ.թ. ա. VI դ. մ. թ. III դ.), Երևան, 1976:

տի ձևավորումն ու նրա զարգացման փուլերը վաղ հայկական (Ք. ա. VI-IV դդ.), հելլենիստական (Ք. ա. III-I դդ.), ինչպես նաև I-III դարաշրջաններում, իսկ փայտի գեղարվեստական փորագրության արվեստին է անդրադարձել Հ. Ազատյանը՝ Վ. Բդոյանի ընդարձակ ներածական խոսքով[248]:

Թեմատիկ ուսումնասիրություններին զուգընթաց հրատարակվել են նաև պատմաազգագրական առանձին շրջանների վերաբերյալ ուսումնասիրություններ, որոնցից առավել կարևորներից են Դ. Վարդումյանի[249], Վ. Պետոյանի[250], Ե. Կարապետյանի[251], Վ. Թեմուրճյանի[252], Ե. Տեր-Մկրտչյանի[253], Գ. Հալաջյանի[254], Բ. Թոռլաքյանի[255], Հովսեփ Օրբելու[256], Ա. Պատրիկի[257], Ս. Ավագյանի[258], Ռ. Գրիգորյանի[259], Կ. Չերքեզյանի[260] մենագրությունները: Երկար սպասումից հետո հետ-

---

[248] Տե՛ս **Ազատյան Հ.**, Փայտի գեղարվեստական փորագրություն, ձեռնարկ, Երևան, 1961:

[249] **Վարդումյան Դ.,** Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956:

[250] Տե՛ս **Պետոյան Վ.**, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965:

[251] Տե՛ս **Կարապետյան Ե.**, Սասուն (ազգագրական նյութեր), Երևան, 1962:

[252] Տե՛ս **Թեմուրճյան Վ.**, Գամիրքի հայերը (պատմաազգագրական ուսումնասիրություն) // ՀԱԲ, հ. 1, Երևան, 1970, էջ 9-142:

[253] Տե՛ս **Տեր-Մկրտչյան Ե.,** Վանեցոց հարսանիքը (կենցաղագրական պատկերներ) // ՀԱԲ, հ. 1, Երևան, 1970, էջ 143-202:

[254] Տե՛ս **Հալաջյան Գ.,** Դերսիմի հայերի ազգագրությունը (նյութեր և ուսումնասիրություններ), մասն Ա // ՀԱԲ, հ. 5, Երևան, 1973, էջ 5-300:

[255] Տե՛ս **Թոռլաքյան Բ.**, Համշենահայերի ազգագրությունը // ՀԱԲ, հ. 13, Երևան,1981, էջ 5-154:

[256] Տե՛ս **Орбели И.**, Фольклор и быт Мокса, Москва, 1982.

[257] Տե՛ս **Պատրիկ Ա.**, Պատմագիրք հուշամատյան Սեբաստիո և գավառի հայության, հ. Ա, Պեյրութ, 1974, հ. Բ, Նյու Ճըրզի, 1983:

[258] Տե՛ս **Ավագյան Ս.,** Արճակ, // ՀԱԲ, հ.8, Երևան, 1978, էջ 5-186:

[259] Տե՛ս **Գրիգորյան Ռ.**, Գեղարքունիք (նյութեր և ուսումնասիրություններ) // ՀԱԲ,հ. 14, Երևան, 1983, էջ 5-263:

[260] Տե՛ս **Չերքեզյան Կ.**, Աֆիոն-Կարահիսարի գաղթօջախը, Երևան, 1986:

մահու հրատարակվեց նաև Վ. Բդոյանի ծավալուն ուսումնասիրությունը[261]: Սրանք մեծարժեք ներդրում են հայ ազգագրական գիտության համակարգում:

Առանձին հոդվածներ են նվիրվել հայ ազգագրության պատմությանը[262]: Ցավոք, մինչ օրս չկա հայ ազգագրության պատմության ամբողջական ուսումնասիրություն: Հրատարակվել են Գ. Սրվանձտյանցի երկերի երկհատորյակը (1978, 1982), Ե. Լալայանի երկերի հինգհատորյակից 1-4-ը (1983, 1988): Հայ ժողովրդի ազգագրությանը այլևայլ առիթներով անդրադարձել են նաև սփյուռքահայ գրասերները, ըստ որում՝ զբաղվելով բացառապես պատմական ազգագրությամբ: Սակայն սփյուռքահայերը, եթե նկատի չունենանք առանձին բացառությունները, մասնագիտորեն չեն զբաղվել ազգագրությամբ: Այդուհանդերձ, զգալի չափով եզակի տեղեկություններ են հաղորդում արևմտահայերի այս կամ այն հատվածի կենցաղի ու սովորությունների վերաբերյալ:

Ազգագրական հետազոտություններ են նաև կատարվել Հայաստանում ապրող քրդերի[263], ռուսների[264], հույների[265] ազ-

---

[261] **Բդոյան Վ.**, Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը,Երևան, 2014:

[262] Այս առումով թերևս կարելի է առանձնացնել հետևյալները. **Вардумян Д.**, Этнографическая работа в Армении 5-6 пятилетиях // СЭ, 1956, № 3, **նույնի՝** Армянская этнография за годы советской власти // СЭ, 1962, № 4-5, с. 111-116; **նույնի՝** Ազգագրություն // Գիտությունը Հայաստանում 50 տարում, Երևան, 1973, էջ 65-70, **նույնի՝** Ազգագրություն // ՊԲՀ, 1970, № 4, էջ 135-145, **Карапетян Э., Вардумян Д.,** О некоторых задачах армянской советской этнографии // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Երևան, 1952, № 1, էջ 67-79, **Բդոյան Վ.,** Ազգագրություն // Հայագիտությունը 50 տարում, Երևան, 1971, էջ 195-229, **Մելիք-Փաշայան Կ.**, Սովետահայ ազգագրության անցած ուղին // ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1968, № 11, էջ 5467:

[263] Տե՛ս **Ավդալ Ա.,** Քուրդ կինը նահապետական ընտանիքում ըստ ազգագրական և ֆոլկլորային նյութերի // Աշխատություններ, Հայաստանի պատ-

գագրության վերաբերյալ: Այս շրջափուլի ձեռքբերումներից մեկն էլ բանագիտության շոշափելի հաջողություններն են, որոնք առանձին հետազոտության նյութեր են:

Նկատենք, որ այս ձեռքբերումներին զուգահեռ՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանում կար գաղափարախոսական այն խոչընդոտը, որը կաշկանդում էր մի կողմից անցյալի ժառանգության ամբողջական օգտագործումն ու արտասահմանյան գործընկերների հետ մասնագիտական փոխառնչումները, մյուս կողմից՝ աշխարհասփյուռ հայերին որպես էթնիկ ամբողջություն դիտելը, և նրանց պատմաազգագրական ուսումնասիրությունը, խնդիր չէր դրվում դաշտային հետազոտություններ իրականացնելու համապարփակ ձևով՝ բոլոր թեմաների վերաբերյալ նյութերը գրի առնելու նպատակով: «Ազգագրական հանդեսում» և «Ազգագրություն և բանահյուսություն» (նյութեր և ուսումնասիրություններ) մատենաշարում վիթխարի նյութեր են գրառված, բայց Հայաստանի բոլոր տարածաշրջանները և բոլոր թեմաները չեն, որոնք հետազոտված են, ինչպես նաև շատ շրջաններ ու կենցաղի կարևոր բնագավառներ: Առ այսօր դեռևս չկան համալիր հետազոտություններ ոչ

մության թանգարանի, Երևան, 1948, № 1, **նույնի՝** Արյան վրիժառությունը քրդերի մեջ և նրա մնացուկների վերացումը սովետական պայմաններում // նույն տեղում, 1952, № 2, **նույնի՝** Курдская этнография и фольклор и их изучение в Советской Армении // Вопросы этнографии Кавказа, Тбилиси, 1952, **նույնի՝** Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957: Տե՛ս նաև **Дарвешян М.,** Скотоводческое хозяйство курдов Восточной Армении. Ереван, 1986:

[264] Տե՛ս **Долженко И.,** Хозяйственный и общественный быт русских крестьян Восточной Армении (кон. XIX-нач. XX вв.), Ереван, 1985:

[265] Տե՛ս **Харацидис Э.,** Хозяйственный быт и материальная культура греческого населения Восточной Армении во второй пол. XIX-нач. XX вв. (историко-этнографическое исследование), Ереван, 1990:

միայն Արևմտյան Հայաստանի, այլև Հայաստանի Հանրապետության շատ մարզերի, ինչպես, օրինակ, Տավուշի, Արագածոտնի, Շիրակի, Կոտայքի, Արարատի մասին:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

Հետադարձ կապ

- **Առաջադրանքներ**

Բանավոր ներկայացնել թեմայի հիմնական դրույթները Թեմայի գնահատում (անդրադարձ) – գնահատման թերթիկ

- **Ինքնաստուգման հարցեր**

1. Ե՞րբ և ի՞նչ նպատակով կազմավորվեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտը և ազգագրության բաժինը:
2. Ներկայացրեք ազգագրական գիտություն 1950-1980-ական թթ. երախտավորներին:
3. Հակիրճ բնութագրեք Դ. Վարդումյանի գիտակազմակերպչական գործունեությունը:
4. Բնութագրեք ՀԱԲ մատենաշարի դերն ու նշանակությունը:
5. Հակիրճ բնութագրեք Վ. Բդոյանի բանահավաքչական և ազգագրական գործունեությունը և հրատարակած հիմնարար աշխատությունները:
6. Ի՞նչ կասեք Սրբուհի Լիսիցյանի, Կարեն Մելիք-Փաշայանի, Ասյա Օդաբաշյանի ազգագրական գործունեության վերաբերյալ:
7. Ներկայացրեք ազգագրագետների ուսումնասիրության ոլորտները (Կ. Սեղբոսյան, Յու. Մկրտումյան, Լևոն Պետրոսյան):
8. Էթնոսոցիոլոգիայի բաժնի ստեղծման պատճառներ

(ե՞րբ և ի՞նչ նպատակով):

9. Բնութագրեք Հայաստանի պատմության պետական թանգարանի գործունեությունը:

10. Ե՞րբ և ի՞նչ նպատակով է հիմնադրվել Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի ազգային թանգարանը:

11. Ե՞րբ և ի՞նչ նպատակով է հիմնադրվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության մասնագիտացումը և համանուն ամբիոնը:

12. Բնութագրեք ազգագրական գիտության նվաճումները 1950-1980-ական թթ.՝ ըստ թեմատիկ ոլորտների:

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Սովետահայ ազգագրության հիսունամյակը//Հայագիտությունը 50 տարում, Երևան, 1971:

2. **Բդոյան Վ**., Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ, Եր., 1974:

3. **Հոբոսյան Ս.,** Դերենիկ Սուրենի Վարդումյան. մարդը և գիտնականը//Հայ ժողովրդական մշակույթ XVI, ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Դ. Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, 2014, էջ 13-18:

4. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրությունը խորհրդային շրջանում 1950-1980-ական թթ.//Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, Երևան, 2019, էջ 277-305:

5. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության և բանագիտության մեծ երախտավորը (Վ. Բդոյանի ծննդյան 100-ամյակի առթիվ) // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, էջ 341-360:

6. Հնագիտության և ազգագրության ամբիոն // ԵՊՀ պատ-

մության 90-ամյա ֆակուլտետը, Երևան, 2009, էջ 64-75:

7. **Մելիք-Փաշայան Կ.**, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 10 տարի // ՊԲՀ, 1970, № 1, էջ 250-253:

8. **Վարդումյան Դ.,** Ազգագրական գիտությունը Հայաստանում 1950-1955 թթ. // Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, 1956, 9, էջ 127-131:

9. **Վարդումյան Դ.,** Ազգագրություն // Գիտությունը Հայաստանում 50 տարում, ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1973, էջ 65-70:

10. **Վարդումյան Դ.,** Հայ ազգագրությունը Ի դարում // «Բազմավէպ», 1-4, 2003, էջ 451-465:

11. **Պողոսյան Աշ., Հովհաննիսյան Ա.**, Հայաստանի ազգագրության պետական թանգարանի քսանամյա գործունեությունը // Նոր ազգագրական հանդես, Ա, Երևան, 2005, էջ 89-93:

12. **Вардумян Д.,** Армянская этнография за годы советской власти//СЭ, 1962, № 4-5, с. 111-116.

13. **Вардумян Д.,** Некоторые материалы по этнографии армян // «Краткие сообщения» института этнографии им. Н. Н. Миклухо-Маклая АН СССР, т. XXXIII, Москва, 1960, с. 31-38.

14. **Вардумян Д.,** Этнографическая работа в Армении 5-6 пятилетиях // СЭ, 1956, № 3.

Թեմա 7. Ազգագրական գիտությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-2020 թթ.

Խորհրդային Միության փլուզումը, Հայաստանի անկախությունը և նոր տնտեսական ու սոցիալական հարաբերությունների հաստատումը, ապա նաև երկրաշարժի հետևանքների հաղթահարումը, Արցախյան գոյամարտը, ՀՀ շրջափակումը, Ադրբեջանի հետ լարված, թշնամական հարաբերությունները, բնականաբար, իրենց անդրադարձները ունեցան հանրապետությունում հումանիտար կրթության և գիտության տարբեր ոլորտների վրա: Էականորեն փոխվել է նաև ազգագրական հետազոտությունների ուղղվածությունը, սկսել են կիրառվել հետազոտման նոր մոտեցումներ ու մեթոդներ: Բացի ավանդական մշակութային համալիրների ուսումնասիրությունից՝ հայ ազգագրության ուշադրության կենտրոնում են հետազոտության նոր թեմաներ՝ արդիականության ազգաբանություն, հասարակական, մշակութային փոխակերպումների և դրանց դրսևորումների (աղքատություն, ունեցվածքային բևեռացում, արտագաղթ) մարդաբանություն, պատերազմի և էթնիկ հակամարտությունների մարդաբանություն, քաղաքական մարդաբանություն և այլն: Հայ ազգագրագետների ուշադրության կենտրոնում են նաև գիտության պատմության, տեսության ու մեթոդաբանության հարցերը:

Ազգագրագետների այս նոր սերնդի ներկայացուցիչներն են՝ Յուրի Մկրտումյան, Լիլյա Վարդանյան, Ռաֆիկ Վարդանյան, Էմմա Պետրոսյան, Ռաֆայել Նահապետյան, Արմեն Պետրոսյան, Լևոն Աբրահամյան, Համլետ Սարգսյան, Զավեն Խառատյան, Հրանուշ Խառատյան, Սուրեն Հոբոսյան, Անուշավան Պետրոսյան, Սվետլանա Պողոսյան, Արմենուհի Ստե-

փանյան, Հարություն Մարության, Արթուր Մկրտչյան, Սամվել Մկրտչյան, Աշխունջ Պողոսյան, Աստղիկ Իսրայելյան, Կարինե Բազեյան, Հասմիկ Հարությունյան, Աղասի Թադևոսյան, Նիկոլ Մարգարյան, Գայանե Շագոյան, Միհրան Գալստյան, Մխիթար Գաբրիելյան և այլք:

7.1. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժին (վարիչներ՝ պ.գ.թ., Դերենիկ Վարդումյան՝ 1959-2005, պ.գ.թ., Սուրեն Հոբոսյան՝ 2005 թ.-ից առ այսօր)

Ներկայումս ՀՀ անկախ պետականության պայմաններում հայ ազգագրագետները, նորովի մոտեցմամբ շարունակելով ավանդութային թեմանների հետազոտությունը, ձեռնամուխ են եղել նաև ներկա աշխարհաքաղաքական կացության հետևանքով ձևավորված էթնոմշակութային իրողությունների ուսումնասիրություններին:

Դերենիկ Վարդումյանի անունն անխզելիորեն կապված է XX դ. երկրորդ կեսի հայ ազգագրական մտքի առաջընթացի հետ: Մեծ է նրա վաստակը ազգագրական գիտության զարգացման, ազգագրական կադրերի պատրաստման, Հայաստանում և Խորհրդային Միության հայաշատ վայրերում ազգագրական գիտարշավներ կազմակերպելու, դրանց արդյունքում ձեռք բերված նյութերի ուսումնասիրության գործում: Նրա ջանքերով ինստիտուտում ստեղծվեց ազգագրական արխիվ: Այն համալրվեց նաև անհատներից ձեռք բերված նյութերով:

Մեծ է ավանդը հայ ազգագրության միջազգային հեղինակության բարձրացման գործում: Շուրջ 40 տարի մասնագիտական առարկաներ է դասավանդել ՀՀ տարբեր բուհերում, ղե-

կավարել է 30 ասպիրանտի ու հայցորդի, որոնցից 18-ը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ, մանկավարժական արդյունավետ աշխատանքի համար նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Դ. Ս. Վարդումյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է. տնտեսական զբաղմունքներ ու նյութական մշակույթ, սոցիոնորմատիվ մշակույթ, հայ ազգագրության պատմություն և տեսություն, Հայաստանի հիմնական պատմազգագրական մարզերի ընդհանուր բնութագրություն և այլն: Ուշագրավ են դրանց վերաբերյալ գիտական հետազոտությունները: Թվարկենք հիշյալ ժամանակաշրջանի նրա մի քանի հրապարակումներ[266]:

Սուրեն Հոբոսյանը ուսումնասիրում է հայ ժողովրդի ավանդական տնտեսությունն ու կենցաղը, գյուղատնտեսական մթերքների վերամշակման միջոցներն ու եղանակները:

---

[266] Տե՛ս Արցախ, տնտեսամշակութային բնութագրման փորձ // Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր, Եր., 1992, Հայ խորհրդային ազգագրության պատմության պարբերացման փորձ//Հայ ժողովրդական մշակույթ, Հանրապետական գիտական նստաշրջան IX, զեկուցումների հիմնադրույթներ, 1997, էջ 65-67, Հայաստանի պատմազգագրական մարզերի բնութագրման հարցի շուրջ, հիմնադրույթներ, 1998, էջ 46-47, Հայ արդի տեղանվանաբանության որոշ խնդիրներ//գիտական աշխատություններ, III, Գյումրի, 2000, էջ 149-154, ՀՀ գյուղական բնակավայրերը. «Ինքնաբուխ» մատենաշար//Հայ ժողովրդական մշակույթ XI, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2001, էջ 106-108, Հայոց ժողովրդական բնակարանը (գլխատուն) սրբարան//Հայոց սրբերը և սրբավայրերը. Ակունքները. տիպերը, պաշտամունքը, Երևան, 2001, էջ 357-360, Խաչիկ Սամվելյան//Հայ ժողովրդական մշակույթ. XII, Երևան, 2004, էջ 168-181, Հայաստանի հիմնական պատմազգագրական մարզերի բնութագրումը (XIX-XX դդ.)//ՊԲՀ, 2004, N2, էջ 48-64, Краткий очерк истирии армянской этнографии // Вопросы этнологии Кавказа, Ереван, 1999, с. 15-19:

Նրա գիտահետազոտական աշխատություններից է «Հայոց ձիթհանության մշակույթը» (ՊԱՌԻ // ՀԱԲ, գ. 23, Երևան, 2007): Ուսումնասիրությունը վերաբերում է հայ ժողովրդի տնտեսական գործունեության ավանդական ճյուղերից մեկին՝ ձիթհանությանը: Ազգագրորեն այս բնագավառը չի հետազոտվել: Տնտեսության այս ճյուղը զանազան պատճառներով անկում ապրեց և գրեթե վերացավ XX դ. 60-ական թթ.: Աշխատության հրապարակումը մի փորձ է մոռացությանից փրկելու հայոց տնական զբաղմունքի ու հմտության արդյունքում ձևավորված տնտեսական կենցաղի և նյութական մշակույթի մի ասպարեզ ևս: Դաշտային ազգագրական նյութերի և մատենագիր ու վիմագիր սկզբնաղբյուրների պարունակած տեղեկությունների հիման վրա հեղինակը ներկայացնում է հայոց երկրագործական մշակույթի համակարգում ձիթատու բույսերի տեսականին, դրանց մշակման, խնամքի, բերքահավաքի և վերամշակման հետ կապված ժողովրդական գործառույթները: Աշխատության կարևոր խնդիրներից մեկն էլ ձիթհանության տեխնոլոգիական գործընթացների, ձիթատու բուսահատիկների վերամշակման արտադրական կառույցների, դրանց առանձնահատկությունների լուսաբանումն է: Ս. Հոբոսյանի ուսումնասիրության շրջանակներն են նաև այգեգործության և գինեգործության հետազոտման հարցերը: Թվարկենք մի քանի աշխատություններ[267]:

---

[267] Գինեգործությունը Լոռու մարզում ըստ հնագիտական նյութերի//Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում // Հայ ժողովրդական մշակույթ XVI, Երևան, 2014, էջ 65-70, **նույնի՝** «Այգին» միջնադարյան հայերեն վիմագրերում//Հայ ժողովրդական մշակույթ XII, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2004, էջ 80-85, **նույնի՝** Խաղողի մշակությունը Վայոց ձորում//Հայ ժողովրդական մշակույթ XIII, նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 2006, էջ 143-147, 2007 թ., «Հայ ժողովրդական

2021 թ. հրատարակվել է Ս. Հոբոսյանի, Բ. Գասպարյանի, Հ. Հարությունյանի, Ա. Սարատիկյանի, Ա. Ամիրխանյանի հեղինակցությամբ «Խաղողի և գինու հայոց մշակույթը», 437 էջ ծավալով պատկերազարդ գիրքը: Աշխատությունը վերաբերում է Հայկական լեռնաշխարհում խաղողագործության և գինեգործության անցած երկարատև պատմությանը: Առանձին ենթահարցերի՝ խաղողագործական գոտիներ, այգի և այգեգործություն, ոռոգում, գինու պատրաստման եղանակով պահեստավորում և այլն, քննարկման միջոցով բացահայտվում է խաղողի ու գինու խաղացած պրակտիկ-տնտեսական և հոգևոր-ծիսական նշանակությունը հայկական կենցաղում և մշակույթում, դրանց արտացոլումները ժողովրդական բանահյուսության, ժողովրդական բժշկության մեջ, ինչպես նաև ուտեստի համակարգում: Մանրամասն քննարկվում են հայկական խաղողի տեսակները և գինու ժողովրդական որակումները, տրվում է համապատասխան տերմինների ընդարձակ բառարան:Մեծաքանակ փաստագրական նյութով և նկարներով համեմված այս հատորը մեծարժեք գործ է և օգտակար հումանիտար մասնագետների, մշակույթով ու արվեստով հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների համար:

2012 թ. «Народы и культуры» շարքի «Армяне» գրքում Մ. Գաբրիելյանի հետ համատեղ հեղինակել է «Земледелие и обработка зерновых культур» ուսումնասիրությունը և նույն տեղում նաև իր հետազոտությունը՝ «Виноградорство и виноделие» (էջ 124-132):

մշակույթ» XIV. Հանրապետական գիտական նստաշրջանի նյութերում հրատարակվում է «Խաղողագիտության ավանդական եղանակները Մեղրիում», էջ 160-166, **նույնի՝** Ա. Սարատիկյանի հետ համահեղինակությամբ՝ Գինեգործության նորահայտ կենտրոն Լոռիում // Լրաբեր հաս. գիտ., 2019, 3, էջ 256-267 և այլն:

Ներկայացնենք ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի գիտական գործունեությանը նպաստ բերած մյուս աշխատակիցներին:

Ալլա Տեր-Սարկիսյանց (1937-2019), պ.գ.դ.

Ա. Ե. Տեր-Սարկիսյանցը ԽՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող էր և գիտական սերտ համագործակցության մեջ է գտնվել ՀԱԻ ազգագրության բաժնի հետ: Նա 1990-ից մինչև իր կյանքի ավարտը հայ ազգագրության վերաբերյալ հրատարակել է բազմաթիվ ուսումնասիրություններ: Հարկ է նշել նշանավոր գիտնականի հետևյալ մենագրությունները.

1. Донские армяне и этнокультурная ситуация в Ростовской области. М., Институт этнографии АН СССР, 1990. 20 с. (Исследования по прикладной и неотложной этнологии. Серия А. Межнациональные отношения в СССР).

2. Современная этнополитическая ситуация в Краснодарском крае Российской Федерации. М., Институт этнологии и антропологии РАН, 1993. 23 с. (Исследования по прикладной и неотложной этнологии. Серия А. Межнациональные отношения в современном мире).

3. Армянская диаспора Юга России. Положение и перспективы. М., Engel, 1993. 56 с. (в соавторстве с В.Ц. Худавердяном).

4. Армяне, История и этнокультурные традиции, М., Восточная литература // РАН, 1998, 395с.

5. История и культура армянского народа с древнейших времен до начала XIX в., М., 2005, М., 2008.

6. Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции, Москва, 2015.

Յուրի Մկրտումյան (1939-2005), պ.գ.թ., ավագ գիտաշխատող

Յու. Մկրտումյանի գործունեությունը համալիր ներկայացված է ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի գործունեության մեջ:

Լևոն Պետրոսյան (1929-2010), պ.գ.թ., ավագ գիտաշխատող

Այս պատմաշրջանում հրատարկվում է Լ. Պետրոսյանի «Հայոց ավանդական փոխադրամիջոցների պատմամշակութային աղերսները» աշխատությունը // ՀԱԲ պրակ 22, Երևան, 2007, էջ 239-264: Ազգագրագետի կողմից հայոց ավանդական տրանսպորտի ու հաղորդակցության համակարգի պատմաազգաբանական ուսումնասիրությունը որոշակիորեն ակնառու է դարձնում այդ բնագավառում ձեռք բերած բազմադարյան փորձի ու հմտությունների շնորհիվ, ընդհուպ XXդ. շեմերը հայ ժողովուրդը կարողացել է գոյատևել ու անգամ ամենադժվարին պայմաններում վարել իր ավանդական և յուրօրինակ տնտեսությունն ու կենցաղը ու գործուն մասնակցություն ունենալ նաև տիրապետող օտար իշխանությունների պետական ու միջազգային առևտրատնտեսական կյանքին:

Կառլեն Մեղբոսյան (1928-2009), պ.գ.թ., ավագ գիտաշխատող

XX դ. 90-ական թթ. շարունակվել է գիտական եռանդուն գործունեությունը: Կարդացել է բազմաթիվ գիտական զեկուցումներ հանրապետական գիտաժողովներում [268] : Կառլեն

[268] Դրանցից են՝ «Արիեստների արդի վիճակն ու ընտանեկան կենցաղը Վա-

Սեղբոսյանը արհեստների և արհեստագործության ուսումնասիրությունը դրեց գիտական հիմունքների վրա, ցույց տվեց, որ դրանցով են էականորեն պայմանավորված եղել հայոց կենցաղամշակութային կյանքը, ներընտանեկան հարաբերությունների բնույթը:

Ժենյա Խաչատրյան (1930-2018), պ.գ.թ., ավագ գիտաշխատող

Առավել արդյունավետ է պարագետ Ժ. Խաչատրյանի գիտահետազոտական գործունեությունը 1990-2020 թթ.: Ունի էթնոպատմագիտության ասպարեզին վերաբերող տեսական և մեթոդաբանական ավելի քան 120 հոդվածներ, 5 մենագրություն: Աշխատանքային գործունեության ընթացքում վերականգնել ու ցուցադրել է տարբեր գավառներին բնորոշ ժողովրդական պարերը (Մուշ-Տարոն, Սասուն, Վասպուրական, Շատախ, Շիրակ, Համշեն, Կարին-Ջավախք և այլն): Աշխատանքային գործունեության ընթացքում գրանցել է հայ ազգագրությանը, էթնոպարագիտությանը, ժողովրդական թատրոնին, շարժական խաղերին, հավատալիքներին ու տոներին վերաբերող ծավալուն նյութ: Պարի տեսության ու մեթոդիկայի, տոների, ծեսերի ու սովորությունների վերաբերյալ դասընթացներ է վարել Կինոյի և թատրոնի պետական ինստիտուտում, Խ. Աբովյանի անվան մանկավարժական, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարաններում: 2002թ. «Ծիսա-

---

յոց ձորի մարզում // Հայ ժողովրդական մշակույթ XI, զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 2001, «Արհեստագործության ճյուղերի բնութագրման եզրաբառերի հստակեցման հարցի շուրջ // Հայ ժողովրդական մշակույթ XIII, Եր., 2006, էջ 226-334, «Ներընտանեկան հարաբերությունները Շիրակում հարցի շուրջ» // Հայ ժողովրդական մշակույթ XIV, Երևան, 2007, էջ 259-264:

կան պարը հայոց մեջ» գիտաժողովի նյութերի շարքում հրատարակվել է երկու հոդված՝ 1. Ծիսական պարը տիեզերաստեղծման արարողակարգում (էջ 7-15), 2. Գնդի և շրջանի սեմանտիկան հայ ծիսական պարերում (էջ 34-39): Ժ. Խաչատրյանի մյուս հրատարակությունների մասին ներկայացվում է ստորև[269]:

Էմմա Պետրոսյան (1934), պ.գ.դ., առաջատար գիտաշխատող

Պատմական գիտությունների դոկտոր, ազգաբան գիտնականը հեղինակ է շուրջ 150 գիտական հոդվածների և մենագրությունների, որոնցից նշված պարբերաշրջանին վերաբերող ուշագրավ հետազոտություններից են՝ «Боги и ритуалы древней Армении», Ер., 2004, «Праздники армян в контексте европейской культуры», Ереван, 2011, 246 с.: Սույն գրքում ժամանակագրական հետևողականությամբ մատուցվում են XIX-XX դդ. հայկական հիմնական տոները և դրանց հետ կապված առասպելաբանական պատկերացումները: Առաջին անգամ ցույց են տրվում հայկական ավանդական մշակույթի առանձնահատկությունները եվրոպական ժողովուրդների տոնացույցի շրջանակներում, ընդգծված են տոների ծիսական-խաղային ակունքները, ժողովրդական թատրոնը, դիմահանդեսային

[269] Էմմա Պետրոսյանի հետ հրատարակում է «Համշենցիների տարեկան տոներն ու խաղերը (ԺԹ դ. վերջ – Ի դ.) // Համշեն և համշենահայութիւն, Երևան-Պեյրութ, 2007, էջ 223-248, «Պարը հայոց մեջ» // Հոդվածների ժողովածու, Երևան, 2013, «Ծիսական պարը հայոց հավատալիքների համատեքստում», Երևան, 2014, 381 էջ, «Կարնոհայերի պարային մշակույթը Ջավախքում (XX-XXI դարեր), Երևան, 2014, 250 էջ, «Հայ ժողովրդական տոները և ծիսական տիկին-տիկնիկները (XX-XXI դարեր)», Երևան, 2017, 160 էջ մենագրությունները:

ավանդական դրսևորումները: Գիրքը բացառապես գրված է իր հավաքած դաշտային նյութերի հիման վրա:

«Театр в средневековых армянских миниатюрах» (Ереван, 2014, 280 с.) մենագրությունը նվիրված է XII-XVII դդ. Հայկական ձեռագրերի մանրանկարչության բեմական թատերականացված տեսությունների ազգագրական նյութերի հիման վրա կատարված մեկնություններին, որոնցում ներկայացված են բեմական պատկերներ և ժանրեր, քրիստոնեական ժամանակաշրջանը: Հրատարակել է նաև մի շարք ուշագրավ հոդվածներ[270]:

Ռաֆիկ Վարդանյան (1940-2021), պրոֆեսոր, պ.գ.դ.

ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում «Կրոնների պատմություն» ամբիոնի վարիչի պարտականությունները կատարելուն զուգահեռ՝ ուշագրավ գիտահետազոտական գործունեություն է ծավալել: 1993 թ. հրատարակել է «Հայոց տոմարական եղանակը. թարգմանական բնագրերի ժամանակը» (Երևան, 84 էջ), իսկ 1999 թ.՝ «Հայոց տոնացույցը (4-18-րդ դա-

---

[270] «Космическое дерево//Ծիսական պարը հայոց մեջ, գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 54-63, 1991 – Воинственные танцы древней Греции (опыт типологического сопоставления с армянскими), Studia Musicologica Academiae Scientiarum Hungaricae (Будапешт), N 33, с. 407 – 415, 2007 – Этнопсихологические особенности космогонии армян Арцаха, Дарбинян А. Р. (ред,), Годичная научная конференция, Сборник научных статей, Ереван, Изд-во Российско-армянского университета, с. 505 – 511, 2015 The Armenian term «span(d)» – spondeios and the its cultural and folklore approaches, Sergis M, Charatsidis E, Teodoridu G. (συ.), Apo to Ararat ston Olimpo, Temata armenikis laografias, Thessaloniki, K. & M. Ant Stamulis, p. 453 – 480, 2021 Ծիսական տիկնիկի Նարին/Նուրին մականունների ստուգաբանության փորձ // ԲԵՀ, № 2, էջ 59-71, https://doi.org/1046991/BYSUA/2021.12. 2.059, 2022 Ардандене – армянская богиня царства Коммагене, Լրաբեր հասարակական գիտությունների, № 1 (664), էջ 244-264:

ներ) ծավալուն մենագրությունը (645 էջ): Գրքում ընդգրկված են հայոց տոմարական տարվա զարգացման փուլերը սկսած IV դարից մինչև Սիմեոն Երևանցու «Տոնացոյց»-ի խմբագրությունը, ինչպես և ներկայումս գործող տոնացույցը՝ հավելումներով հանդերձ:

Համլետ Սարգսյան (1947-2020), պ.գ.թ., քարտեզագետ-ազգագրագետ

Ազգագրության բաժնում աշխատել է 1973 թվականից, 1994 թ.-ից ավագ գիտաշխատող էր: Գիտական հետազոտությունները վերաբերում են Հայաստանի և Անդրկովկասի XIX-XXI դդ. բնակչության էթնոժողովրդագրության, էթնոաշխարհագրության, էթնիկ և ազգագրական կազմերի ձևավորման և էթնոքարտեզագրության հարցերին: Հմուտ քարտեզագետ էր և էթնոժողովրդագետ:

Ուսումնասիրել է Հայաստանի բնակչության թվի ու կազմի շարժընթացը, բնական ու մեխանիկական աճի օրինաչափությունները, տեղաշարժերի բնույթը և ժողովրդագրական տարաբնույթ այլ հարցեր:

Ուսումնասիրություններ է իրականացրել Մեծ եղեռնից հետո արևմտահայերի դեպի Արևելյան Հայաստան զանգվածային գաղթի մասին, հետազոտել է Անդրկովկասի նահանգների բնակչության էթնիկ գործընթացները (XIX-XX դդ. սկիզբ), մասնավորապես հայ բնակչության ներքին տեղաշարժերը, ՀՀ ազգային փոքրամասնությունների էթնոժողովրդագրական զարգացումները, ՀՀ բնակչության արդի խնդիրները, էթնոժողովրդագրական գործընթացները 1946-1948 թթ., հայրենադարձության, սիրիահայերի ներգաղթի ու ինտեգրման հարցերը: Ուսումնասիրության կարևոր մասն են կազմում աշխար-

հագրական տարաբնակեցման օրինաչափություններն ու տեղաբաշխման առանձնահատկությունները: Նա փաստական տվյալներով հստակեցրեց, որ ադրբեջանցի էթնոս XIX դարում գոյություն չի ունեցել, այլ Հարավային Կովկասի տարածքում եղել են թյուրքալեզու տարբեր միավորներ՝ ցեղային, կրոնական առաջնային ինքնությամբ: Նրա աշխատությունների պսակը կարելի է համարել «Население Восточной Армении в XIX – начало XX в.» (2002) մենագրությունը, ինչը նրա տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն էր:

2012 թ. «Народы и культуры» մատենաշարում հրատարակվել է «Армяне» հատորը, որի պատասխանատու խմբագիրներից էր Հ. Սարգսյանը: Հատորը հայ ազգագրագետների տարիների աշխատանքի ու համագործակցության արդյունքն է, որը կարևոր նշանակություն ունի հայոց հարուստ պատմամշակութային ժառանգությունը ՌԴ-ում և ռուսալեզու միջավայրում հավուր պատշաճի ներկայացնելու գործում: Բացի խմբագրի բարդ ու ծանր աշխատանքը կատարելուց՝ Հ. Սարգսյանը հեղինակեց նաև հատորի՝ հայ բնակչության թվաքանակին և տեղաբաշխման պատկերին վերաբերող բաժինը: Ակտիվ մասնակցություն ունեցավ նաև առաջին անգամ իրականացված ազգային փոքրամասնությունների ուսումնասիրությանը, կազմեց ազգային փոքրամասնությունների տեղաբաշխման քարտեզը:

Նշված բնութագրումները արտացոլված են նրա տարբեր աշխատություններում[271]:

---

[271] К этнокультурной характеристике Арцаха//Вестник общественных наук, НАН РА, 1989, N 6. Этнический состав Армянской области (1882-1840)//Вестник Ереванского университета, 1986, N2: Երևանի նահանգի բնակչությունը 50 տարում (1850-1900 թթ.) // ԲԵՀ, 1990, N1, էջ 114-120: Արևմտահայերի վե-

Արմենուհի Արմենակի Ստեփանյան (1948-2018), պ.գ.թ., ավագ գիտաշխատող

1971 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, 1972 թվականից աշխատել է ՀԱԻ ազգագրության բաժնում: 1996 թ. պաշտպանել է «Հայ ժողովրդական տարազային զարդանախշերի խորհրդիմաստը» խորագրով թեկնածուական ատենախոսություն: 2004 թվականից ավագ գիտաշխատող էր:

1997 թվականից համատեղությամբ աշխատել է Երևանի գեղարվեստի ակադեմիայի արվեստի պատմության և տեսության ամբիոնում, 2012 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:

Հեղինակ է երկու մենագրության և շուրջ 50 հոդվածների: 2007 թ. ՀԱԲ-ի 22-րդ հատորում լույս է տեսել Ա. Ստեփանյանի «Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (ծիսական, գունային և նախշային համակարգերը)», 2010 թ.՝ «XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում» ուշագրավ մենագրությունները: 2012 թ. հրատարակված ռուսալեզու «Հայեր» գրքում զարդանախշերին նվիրված մասի հեղինակն է: 2009 թ. «Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ և ՀՀ Մշակույթի նախարարություն, Միջազգային չորրորդ գիտաժողովի հոդվածների ժողովածուում

բաբնակեցումը Արևելյան Հայաստանում 1915 թ. հետո//Հայոց ցեղասպանությունը. Ուսումնասիրություններ, Եր., 2001, էջ 128-167: Հայկական բնակչությունը Թիֆլիսի նահանգում, XIX դ. երկրորդ կեսին//Հայոց պատմության հարցեր. Գիտական ժողովածու, Երևան, 2005, էջ 95-108, Քարվանսարա-Իջևանի արդի բնակչության ձևավորումը // Տավուշ. Նյութական և հոգևոր ժառանգություն, Երևան, 2009, էջ 205-215, Վայոց ձորի բնակչության էթնոժողովրդագրական գործընթացները 1988-2001 թթ. // Ավանդական և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ XVI, Երևան, էջ 298-308:

հրատարակվում են նրա ժողովրդական տոների և հավատալիքների՝ ոչ նյութական մշակութային ժառանգության դասակարգման ու չափորոշիչների սահմանումները (էջ 55-65, 65-74, 224-232): Գիտական հետաքրքրությունների շրջանակը բավականին լայն էր՝ հավատալիքներ, տոներ, զարդարվեստ, ներէթնիկ և կրոնական խմբերի ազգաբանական դիտարկում ու ուսումնասիրում, հանդես էր գալիս խորը վերլուծություններով և առաջարկներով:

Զավեն Խառատյան (1952-1992), պ.գ. թ., ավագ գիտաշխատող

1970 թ. ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, պատմաբան ազգագրագետի որակավորմամբ այն ավարտում է 1975 թ.: 1975-1976 թթ. Ստեփանավանի շրջանի Ուռուտ գյուղի միջնակարգ դպրոցում պատմության ուսուցիչ աշխատելուց հետո ընդունվում է ԽՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրա, որտեղ էլ 1981 թ. պաշտպանում է «Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян» թեմայով թեկնածուական ատենախոսություն: 1980 թ. աշխատանքի է անցնում Հայոց ազգագրության թանգարանում որպես գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն, ապա ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ գիտաշխատողի, այնուհետև ավագ գիտաշխատողի պաշտոններում:

Զավեն Խառատյանը շուրջ 30 գիտական ուսումնասիրությունների հեղինակ է, հանդես է եկել միջազգային գիտաժողովներում բազմաթիվ զեկուցումներով:

Զ. Խառատյանի գիտական գործունեությունը նվիրված է եղել էթնոմշակութային բազմազան հիմնահարցերի, հատկապես հայ ժողովրդական հավատալիքների, ընտանեական ու

հասարակական ծիսակարգի, Հայաստանի առանձին պատմամշակութային շրջանների (Արցախ, Տավուշ) ուսումնասիրությանը: Նա առաջիններից էր, որ փախստականությունը դիտարկում էր որպես ազգագրական հետազոտության օբյեկտ՝ իր ներէթնիկ և սոցիալական բազմաթիվ առանձնահատկություններով, պահվածքի յուրօրինակ մեխանիզմով, հոգեբանական դիմագծով և այլն, ինչի իմացությունը միայն կարող է հնարավորություն տալ նորեկ բնակչության հարմարվելու գործընթացի որոշակի ծրագրերի մշակման ու իրագործման համար:

«Պաշտամունքային մոտիվները հայոց ընտանեկան ծիսակարգում» աշխատության մեջ[272] ի մի են բերված ժողովրդական հավատալիքների և ծեսերի վերաբերյալ եղած ու իր հավաքած դաշտային ազգագրական նյութերը, ընտանեկան ծիսակարգը ներկայացնում է որպես ինքնաբավ գործող մի համակարգ, փորձ է անում վերականգնել նաև այդ հավատալիքների զարգացման փուլերը, փոխակերպման մեխանիզմները,

---

[272] Տե՛ս Культовые мотивы семейных обычеев и обрядов у армян // ВОН. Материалы и исследования, 17, Ер., 1989, с. 65-143. **Z. V. Kharatian,** 1981, Traditional Demonological wotions of the Armenians (From Data on Family Life in the Wineteenth and Archeology, 1981, vol. XX, N2, էջ 28-54. «Ամուսնական զույգի ուղին հայոց հարսանիքում // ՀՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1989, N 11, «Եզ մորթելու սովորույթը և փեսան հայոց հարսանիքում // ՀՍՍՀ ԳԱ, Լրաբեր, 1991, N 3, «Берущие» и «дающие» армянские обозначения брачной пары в фольклорно-этнографическом контексте // Сборник статей памяти С. А. Токарева, М., Наука, 1994, էջ 256-267, Традиционные демонологические представления армян (по материалам семейного быта XIX начала XX вв. // СЭ, 1980, N2, Խոսքի փոխանակումը հայոց հարսանիքում // Հայ ազգագրության և հնագիտության խնդիրներ 10, Երիտասարդ գիտ. կոնֆերանս, նվիրված Զ. Խառատյանի 50-ամյակին, Երևան, 2002, Похоронно-поминальная обрядность у армян Тавуша // ՀՀ ԳԱԱ հնագիտ. և ազգ. ինստիտուտի գիտաժողովի նյութեր, Երևան, 2014:

դրանց կենցաղավարման համահայկական բնույթը և տեղական առանձնահատկությունները: Քանի որ ընտանեկան ծեսերի մի զգալի մասը կապված էր օջախի հետ, մանրամասն դիտարկումով ցույց է տվել, թե ինչպես է օջախի գաղափարը ներառվում ընտանիքի համակարգում՝ դառնալով ազգային աշխարհընկալման հիմքերից մեկը: Աշխատության մեջ մեծ տեղ է հատկացված հարսանիքի, ծնունդ-կնունքի և թաղման սովորությունների քննությանը:

Զ. Խառատյանը թողել է նաև գիտահրապարակախոսական մեծ ժառանգություն: Հանրապետության զանազան պարբերականներում հրատարակված նրա հոդվածների թիվն անցնում է երեք տասնյակից: Դրանք վերաբերում են ազգային կյանքի այժմեական տարբեր հարցերին՝ Արցախ, փախստականություն, Ղարաբաղյան շարժում, տոնածիսական կյանք, ազգային ինքնություն և հոգեբանություն:

Գիտնականը հիմնել էր նաև «Ազգապատում» հեռուստաշարը: Զ. Խառատյանի գիտագործնական կյանքի մասին տե՛ս նաև Լ. Աբրահամյանի Հ. Մարությանի, Հ. Լ. Պետրոսյանի համատեղ գրված մահախոսականը // Լրաբեր հաս. գիտ., 1992, N1:

Արթուր Մկրտչյան (1959-1992), պ.գ.թ.

Ծնվել է 19.02.1959 թ. ԼՂԻՄ, Ադրբեջանական ԽՍՀ Հադրութի շրջանի Ուխտաձոր (Էդիլու) գյուղում: 1976 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, նույն թվականին ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: Դեռ ուսանողական տարիներից ցուցաբերում էր գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու մեծ եռանդ, ակտիվ մասնակցում էր ֆակուլտետի հասարակական կյանքին: 1981 թ. գերազանցությամբ

ավարտում է այն և մասնագիտական աշխատանքի է անցնում Հայոց ազգագրության թանգարանում (Սարդարապատ) նախ որպես որպես կրտսեր գիտաշխատող, ապա կենսապահովման մշակույթի բաժնի վարիչ: 1982 թ. ընդունվում է ԽՍՀՄ ԳԱ Միկլուխո-Մակլայի անվան ազգագրության ինստիտուտի (Մոսկվա) ասպիրանտուրա Կովկասի ժողովուրդներ բաժնում, բաժնի վարիչ՝ նշանավոր ազգագրագետ Վ. Յ. Գարդանովի ղեկավարությամբ:

1985 թ. դեկտեմբերին ավարտում է այն և աշխատանքի անցնում ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: 1986 թ. անսպասելիորեն որոշում է վերադառնալ Հադրութ և ստանձնել Հադրութի պատմա-գավառագիտական թանգարանի տնօրենի պաշտոնը: 1986-1992 թթ. դրսևորում է բազմակողմանի գիտակազմակերպչական և հասարակական-քաղաքական, հայրենասիրական ակտիվ գործունեություն:

1982 թ. ԽՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտի «Կովկասի ժողովուրդներ» բաժնում առաջին անգամ Հայաստանի պատմաազգագրական հնագույն մարզերից մեկի՝ Արցախի մասին՝ «Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX – начала XX вв.)» ատենախոսական թեմա է հաստատվում, որն էլ գրվել է գիտնականի սեփական դաշտային ազգագրական նյութերի, մասնագիտական գրականության և արխիվային հարուստ նյութերի հիման վրա:

Ատենախոսությունը գրվել է 1983-1987 թթ. Մարտունու, Հադրութի, Ասկերանի և Մարտակերտի շրջանների բնակավայրերում կատարված դաշտային ազգագրական հետազոտությունների հիման վրա:

1988 թ. ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող խորհրդի նիս-

տում պաշտպանում է «Լեռնային Ղարաբաղի հայերի հասարակական կենցաղը, XIX դ. վերջ – XX դ. սկիզբ» թեմայով թեկնածուական ատենախոսություն:

1992 թ. հունվարի 8-ին ԼՂԻՄ-ի Գերագույն խորհրդի նախագահ է ընտրվում Ղարաբաղյան շարժման աչքի ընկնող առաջնորդներից 32-ամյա Արթուր Մկրտչյանը՝ պատգամավորների 44 կողմ, 4 դեմ ձայներով: 97-օրյա կառավարման ընթացքում կարողացավ իրագործել պետականաշինության, Արցախի հարցի միջազգային ասպարեզ առաջ քաշելու ուղղությամբ բազմաթիվ խնդիրներ: 1992 թ. ապրիլի 14-ին ողբերգական վախճան ունեցավ և հուղարկավորվեց Ստեփանակերտի Ազատամարտի հուշահամալիրում (տե՛ս Լ. Աբրահամյան, Հ. Մարության, «Արթուր Մկրտչյանը՝ գիտնական և քաղաքացի // Артур Мкртчян, Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX – начала XX вв.), Ереван, 2010, էջ 7-17):

Ատենախոսությունը հրատարակվեց հետմահու՝ 2010 թ.՝ ազգագրագետներ Լևոն Աբրահամյանի և Հարություն Մարությանի խմբագրությամբ: Գիրքը նշանակալի ներդրում է հայ ազգագրության պատմության համալիր հետազոտության համար:

Վարդիթեր Մաղաթյան, լաբորանտ

Աշխատում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնում 1997 թվականից:

Հետազոտական թեման է «Տավուշի հայերի XIX-XX դարերի ավանդական հասարակական մշակույթը»[273]:

---

[273] Տե՛ս **Մաղաթյան Վ.,** Գյուղական համայնքի տիպը Տավուշում (XIX դ. երկրոդ կես – XX դ. առաջին քառորդ) // Երիտասարդ գիտնականների հանրա-

Հասմիկ Հարությունյան, պ.գ.թ., գիտաշխատող

Աշխատում է 2008 թ.-ից համատեղությամբ: Ազգագրության բաժնում իրականացնում է դաշտային ազգագրական նյութերի և գրավոր աղբյուրների հիման վրա «Կաթի ու կաթնամթերքի մշակույթը հայոց մեջ» թեման: Հ. Հարությունյանի գիտական հրատարակությունները ներկայացվում են ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի գործունեության մեջ:

Արտակ Դաբաղյան, պ.գ.թ., ավագ գիտաշխատող

Ուսումնասիրում է հայոց զինանշանային համակարգի հասարակական և ծիսական առումները մ.թ.ա. II դ. մինչև XIX դ.: Իրականացնում է տարբեր դարերի հայ ազնվականության, առանձին անձանց զորամասերի, տարածքների, հաստատությունների ու կազմակերպությունների տարբերանշանների ու զինանշանների մասին գիտական ուսումնասիրություններ: Շարունակում է ուսումնասիրել հայոց ռազմի պատմությունն ու մշակույթը ըստ ժամանակաշրջանների, հարևան երկրների հետ առնչությունների և ռազմի մշակույթի հիմնական բաղադրիչների: Արտակ Դաբաղյանը նոր պատմության շրջանից հետազոտում է հայոց ինքնության խնդիրները, ազգային ազատագրական պայքարի վերելքի, Արցախի ինքնապաշտպանության առանձնահատկությունները և այլն:

2001 թ. «Հայոց զինանշանային համակարգի սոցիալական և ծիսական առումները մ.թ.ա. 2-րդ – մ.թ. 13-րդ դդ.» խորա-

---

պետական XX գիտաժողովի նյութեր, Երևան, 2006, էջ 131-146: **Նույնի՝** «Գյուղական համայնքը Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում» // Տավուշ. Նյութական և հոգևոր ժառանգություն, Երևան, 2009, էջ 142-148: **Նույնի՝** «Ազգ» հասկացությունը հանրային մարմինների շարքում. «ազգի», ազգակցական կապերի դրսևորումները Տավուշում (XIX-XX դդ.) // Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 4, Երևան, ՀԱԻ հրատ., 2021, էջ 241-256:

գրով ատենախոսության համար ստանում է պ.գ.թ. գիտական աստիճան: Հրատարակել է արդիական նշանակության բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնց համառոտ ցանկը ներկայացվում է ստորև[274]: Հրատարակել է նաև ավելի քան 30 գիտական ուշագրավ հոդվածներ, որոնք որոշակի ներդրում են հայ գիտական ազգագրության պատմության ուսումնասիրության համար[275]:

Ա. Դաբաղյանը բազմաթիվ ուսումնասիրությունների համահեղինակ է ազգագրագետներ՝ Մ. Գաբրիելյանի և Ա. Թադևոսյանի հետ:

Գրիգոր Աղանյան, գիտաշխատող

Հետազոտական աշխատանքները վերաբերում են Արևելյան Հայաստանի ավանդական և խորհրդային տարիներին ստեղծված քաղաքների և դրանց համայնքների ձևավորման ու կազմակերպման ազգաբանական ուսումնասիրությանը:

Բազմաթիվ ուսումնասիրություններ ունի արհեստների վերաբերյալ: Նշենք դրանցից մի քանիսը[276]: Գ. Աղանյանի գի-

---

274 «Տնտեսությունը, առևտուրը և էթնիկությունը սահմանամերձ գոտում», Երևան, հեղ. հրատ., 2008, 126 էջ՝ մենագրությունը: 2004 թ. Մ. Գաբրիելյանի հետ հրատարակում է «Շուշին 1992-2002 թթ. հայերի վերադարձը ազատագրված քաղաք (ազգագրական ակնարկ), Երևան, հեղ. հրատ., 2004, 96 էջ:

275 Դրանցից առանձնացնում ենք «Սահմանը» և «սահմանամերձը» Տավուշի մարզում // Տավուշ. Նյութական և հոգևոր ժառանգություն, Երևան, 2009, էջ 67-74 և այլն:

276 **Աղանյան Գ.,** Երկաթագործական արհեստները հայոց մեջ XIX դ. և XX դ. սկզբին//Գիտական աշխատություններ ՇՀՀԿ, հ. 2, Գյումրի, 1999, էջ 169-176, Երկաթագործական հավատալիքները հայ ժողովրդական հավատալիքներում// ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական աշխատություններ, 2004, VII, էջ 65-69, **Աղանյան Գ., Բազեյան Կ.,** Ալեքսանդրապոլ, Ազգագրական էսքիզներ (ՊԱՌԻ), Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ, հ. 2, Երևան-Գյումրի, 130 էջ, Հայկական զինագործությունը XIX դ. և XX դ. սկզբին (ըստ Կարնո և Ախալցխայի նյութերի)//ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական հետա-

տական գործունեության մասին տե՛ս ՇՀՀԿ բաժնում:

Աղասի Թադևոսյան, պ.գ.թ., ավագ գիտաշխատող

Աղասի Թադևոսյանի գիտական ոլորտները շատ լայն են: Նրա տարաբնույթ հետազոտություններում կարևորվել են հասարակական, քաղաքական կյանքին, ընտանիքի ու վերջինիս առանձին անդամների մասնակցության մշակութային, ազգաբանական ու արժեքային համակարգերին վերաբերող հարցերը[277]: Նրա թեկնածուական ատենախոսությունը նվիրված է դարբնության մշակույթին, որի վերաբերյալ հրատարակել է «Դարբինը հայոց ծիսակարգում (ՊԱՌԻ)»//ՀԱԲ, գ. 23, Երևան, 2007, էջ 101-183 աշխատությունը: Ուսումնասիրում է ավանդական արհեստները՝ դարբնություն, մետաղամշակություն և դրանց փոխակերպումները, քաղաքային առօրեականության և հասարակական համակեցության մշակույթը, խորհրդային ինդուստրալացման և մոդեռնիզացման մարդաբանությանը վերաբերող հիմնախնդիրները: 2009թ. Հրատարակել է Արհեստներ և տնայնագործություն. Ոչ նյութական մշակութային ժառանգություն. Դասակարգում ու չափորոշիչները, Երևան, 2009, էջ 103-104, Кузнечное ремесло//Армяне (Серия «Народы и культуры»), Москва, Наука, 2012, с. 169-174, Գյումրու դարբնոցային մշակութային ժառանգությունը, Երևան, ՀԱԻ, 2021, 71

զոտություններ, 2000, III, էջ 129-136, Տնային տնտեսությունները Շիրակի բնակչության արդի կենցաղում//նույն տեղում, 2002, էջ 71-77, **Аганян Г.,** Оружейное дело//Армяне, Серия «Народы и культуры», М., 2012, с. 174-177:

[277] Տե՛ս Անցումային շրջանի էթնոհոգեբանական փոփոխությունների առանձնահատկությունները Հայաստանում // Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ), Երևան, 2000, **նույնի՝** Գոյատևման ռազմավարությունը հասարակական համագործակցության համատեքստում // ՌԱՀՀԿ, Երևան, 1998 և այլն:

էջ (մենագրությունը):

Ներկայումս Ա. Թադևոսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայաստանի ուշխորհրդային ու հետխորհրդային շրջանի մարդաբանությունը: Հետխորհրդային շրջանի հետազոտությունները վերաբերում են անցումային շրջանի մարդաբանական փոխակերպումներին, մասնավորապես՝ միգրացիոն գործընթացներին և դրանց ազդեցությանը առօրյա մշակույթի վրա, հասարակական շերտավորման և աղքատության մարդաբանական տեսանկյուններին, արժեքային փոխակերպումներին և դրանց միտումներին, գյուղատնտեսության արդյունավետության վրա ազդող սոցիալ-մշակութային գործոններին: Այս ուղղությամբ հրատարակել է. Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Հայաստանում, Երևան, 2001 (գրքույկ, 41 էջ), Աղքատության հիմնախնդիրները պետականության տեսանկյունից, Երևան, 2003 (գրքույկ, 43 էջ), Աղքատության և գոյատևման պատկերը ՀՀ-ում, Երևան, 2003 (Մ. Գաբրիելյանի հետ համատեղ), գիրք 2, 167 էջ, Միգրացիա և առօրեականություն. Ճանապարհորդություն մշակույթների ու պրակտիկաների սահմանագծին, Երևան, 2014, գիրք, 152 էջ և այլն:

Մշակութային ժառանգության հարցերին են վերաբերում. «Նորավանք» (գիրք-ալբոմ), Երևան, 2004, 72 էջ, «Ախթալա», Երևան, 2007 (գիրք-ալբոմ), 72 էջ, «Ախթալա. Պատմությունը և ներկան, Երևան, 2010 (գիրք, 104 էջ):

Երևան քաղաքի մարդաբանության հարցերին են վերաբերում Ա. Թադևոսյանի ուշագրավ ուսումնասիրությունները. «Երևանի քաղաքային մշակույթ. մաս 1. Հասարակական մշակույթի փոխակերպումները Հայաստանում//ՎԵՄ համահայկական հանդես, 2010, թիվ 4, էջ 112-132, նույնը՝ մաս 2. Քաղա-

քային առօրեականությունն ու մշակութային փոխակերպումները անկախության տարիներին//ՎԵՄ, 2011, թիվ 1, էջ 78-98, մաս 3. Սոցիալական շերտավորման և մշակութային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրներն անցած 20-ամյակում//ՎԵՄ, 2011, թիվ 3, էջ 98-116 և ուշագրավ այլ ուսումնասիրություններ:

Ա. Թադևոսյանը զբաղվում է նաև մշակութային տուրիզմի և պատերազմի մարդաբանությանը վերաբերող հիմնախնդիրներով: Ուշագրավ հետազոտություններից են՝ «44-օրյա պատերազմը մասնակիցների պատմություններում. Մարդաբանական հետազոտություն, Երևան, 2022, 132 էջ, Քաղաքացիական բնակչությունը Լեռնային Ղարաբաղի պատերազմում. Կորստի ու տառապանքի մարդաբանություն, Եվրոպական քաղաքականության հետազոտությունների ինստիտուտ, Գդանսկ, 2022, գիրք, 160 (լեհերեն), համահեղ. հրատ. և այլն:

Միսիթար Գաբրիելյան, պ.գ.թ., դոցենտ, համատեղությամբ ավագ գիտաշխատող

Մ. Գաբրիելյանի գիտական հետազոտությունների շրջանակը բազմազան է ու բազմաբնույթ և խիստ արդիական: Դրանք են՝ անցումային հասարակությունների հետազոտությունը, ՀՀ բնակչության սոցիալ-մշակութային գործընթացները, պատերազմի և էթնիկ հակամարտությունների մարդաբանությունը, Կովկասի քաղաքական պատմության ու Կովկասի ժողովուրդների ազգագրության հիմնախնդիրները: Զբաղվում է նաև սփյուռքի, մասնավորաբար Հարավային Ռուսաստանի և Վրաստանի հայկական համայնքների ուսումնասիրությամբ: Ուսումնասիրում է խորհրդային շրջանի հայկական գյուղի առօրեականությունը և արդի բնակչության տնտեսական ակ-

տիվության վրա ազդող սոցիալ-մշակութային գործոններն ու գործընթացները: Մ. Գաբրիելյանի հրատարակությունների ցանկը տրված է Հնագիտության և ազգագրության ամբիոնի գործունեության մեջ:

Նիկոլ Մարգարյան, պ.գ.թ., ավագ գիտաշխատող

Հնագիտության և ազգագրության ինստիտուտում աշխատում է 2010 թվականից: Հետազոտությունների ոլորտները. Անվանական (օնոմաստիկական) մարդաբանություն՝ անձնանուններ, տեղանուններ, արդիական միտումները, հաղորդակցության մշակութային առումները, մշակույթի տեսական խնդիրները, կիրառական մարդաբանության, գլոբալացման մշակութային առումները և այլն: Դրանց շուրջ իրականացրել է մի շարք հետազոտական աշխատանքներ: Նիկոլ Մարգարյանի հրատարակությունների ամբողջ ցանկը ներկայացված է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի էլեկտրոնային կայքում: Ներկայացնում ենք միայն առավել կարևոր ուսումնասիրությունները[278]:

---

[278] Տե՛ս Աղքատության հիմնահարցը, էթնոհասարակական առանձնահատկությունները և դրա հաղթահարման ուղիները: Աղքատության հաղթահարման իմ/մեր տեսլականը // Հոդվածներ, քաղվածքներ, ՄԻԺԻ-ի կազմակերպած մրցույթից, Երևան, 2001, Փրինթ-Ինֆո, էջ 9-33: Հայոց անձնանունները ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման համատեքստում // Ոչ նյութական մշակութային ժառանգությունը և պետությունը. Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ, IV գիտաժողովի նյութեր, Երևան, 2009, էջ 36-45: Система личных имен у армян // Армяне, Серия «Народы и культуры», Москва, 2012, с. 347-352: Հայերի անձնանվանական համալիրի փոխակերպումները հետխորհրդային ժամանակահատվածում (նորածինների անձնանվանական համալիրի քննություն) // Ավանդականը և արդիականը Հայոց մշակույթում. Հայ ժողովրդական մշակույթ. XVI, Երևան, 2014, էջ 181-187: Եղեգնաձոր քաղաքի լեզվական լանդշաֆտը ըստ արդի էրգոնիմների գործառութային վերլուծության // Հավաքական մենագրություն, Երևան, 2021, ՀԱԻ հրատ., էջ 191-206:

Ն. Մարգարյանը հեղինակ է նաև բազմաթիվ գիտական զեկուցումների հիմնադրույթների:

Լիլիթ Սիմոնյան-Մելիքյան, պ.գ.թ., արխիվի վարիչ

Հնագիտության և ազգագրության ինստիտուտում է աշխատում 2009 թվականից:

Արդյունավետ գիտական գործունեություն է ծավալում երաժշտագետ, ազգագրագետ Լ. Սիմոնյան-Մելիքյանը: 1998 թ. հրատարակել է «Արխետիպ: Նոր հայացք հին տեսության վրա» (հոդվածների ժողովածու, Երևան, «Վան Արյան» 38 էջ): Նրա «Տոմարային ծիսաշար» մատենաշարի առաջին հատորում՝ «Նոր տարի և Սուրբ ծնունդ» գրքում (Եր., 2006, 292 էջ), ներկայացվում է ժողովրդական անգիր տոմարը որպես հայ ժողովրդի պատմական փորձի հիման վրա կայացած ժամանակագրական համակարգ: Երկրորդ հատորում՝ «Սուրբ Սարգիս, Տրնդեզ, Բարեկենդան» գրքում ներկայացվում են ձմեռային երկրորդ տոնաշրջանի և ձմեռվանից դեպի գարուն անցման շրջանի (Բարեկենդան) ծեսերը և բանահյուսությունը: 2011 թ. հրատարակվում է «Հավքն իր թևով, օձն իր պորտով» գիրքը, որտեղ պատմվում է հին և մասամբ մինչև մեր օրերը պահպանված առասպելական պատկերացումների մասին, որոնք վերաբերում են թռչուններին, օձերին, վիշապներին:

Լ. Սիմոնյանի գիտական հոդվածներից առանձնացնենք մի քանիսը. 2011 – Վահագն դիցոյթը որպէս կրակ տարերքի տիրակալ, Բազմավէպ, ՃԿԹ տ., թիւ 3-4, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 646-678, 2013 – Աստղիկ դիցուհու պաշտամունքը Վասպուրականում և Տարոնում // Հայաստանի մայրաքաղաքները, գ. 1, Վան, «Գիտություն», Եր., էջ 333-342, 2013 - Արևի քաղաքը // Հայաստանի մայրաքաղաքները, գ. 1, Վան, «Գիտություն», Եր.,

էջ 70-81 (համահեղինակ՝ Ս. Հմայակյան), 2013 - Безымянные языческие боги в армянских этнографических материалах // Свеча-2013, т. 25, Владимир, с. 167-186, 2013 - Ս. Գրիգոր Նարեկացու ժողովրդական պաշտամունքը // Հայ աստվածաբան, գ. Ե, ԵՊՀ հրատ., Եր., էջ 178-198, 2015 - Հեթանոսություն և շամանիզմ – երկու հակադիր հայացք դեպի հոգևորը (ոգեղենը) // Տարեգիրք Աստվածաբանական ֆակուլտետ, Ժ, էջ 179-207, 2015 – Blood and Oath. Rites concerning blood kinship // Բանբեր հայագիտության, Եր., № 2, էջ 119-163: Լ. Սիմոնյանի գիտական հրապարակումներն ամբողջությամբ տե՛ս ՀԱԻ էլեկտրոնային կայքում:

Նարինե Շամամյան, պ.գ.թ., գիտաշխատող

Ազգագրության բաժնում է աշխատում 2009 թվականից:

Ուսումնասիրում է հայոց պարային մշակույթը: 2021 թ. պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն «Պարը հայկական հարսանեկան արարողություններում (XX դար – XXI դարասկիզբ)» ատենախոսական թեմայով:

Պարի հետազոտությունը Ն. Շամամյանի մասնագիտական հետաքրքրությունների բնագավառն է:

Թեմայի վերաբերյալ հրատարակել է բազմաթիվ հոդվածներ (տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱԻ էլեկտրոնային կայքում): Նարինե Շամամյանը հեղինակ է նաև «Կյանք՝ նվիրած պարին. Արտաշես Կարապետյան», տպ. Ինֆոկոպ ՍՊԸ, Երևան, 2022, 115 էջ:

Ռուզաննա Ծատուրյան, գիտաշխատող

Գիտական հետաքրքրությունները ներառում են ոչ նյութական մշակութային ժառանգության, ուտեստի ազգագրության, հիշողության ազգագրության և կանանց հիմնախնդիր-

ների, կրթության հիմնախնդիրների շուրջ հետազոտությունները: Դրանց վերաբերյալ ուսումնասիրությունների համահեղինակ է Մ. Գաբրիելյանի հետ:

Ուսումնասիրում է հայոց ուտեստի և հացկերույթի ավանդական մշակույթը, դրա առանձնահատկություններն ու փոփոխությունները պատմաազգագրական տարբեր մարզերում՝ կարևորելով նաև դրանց գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Գիտական հրապարակումներից են՝ Հայոց ավանդական տոնական ուտեստը, Երևան, 2011: Հրատարակել է նաև ուշագրավ հոդվածներ և հիմնադրույթներ հանրապետական գիտական նստաշրջաններում: (Ռ. Ծատուրյանի գիտական հրապարակումները ամբողջությամբ տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱԻ էլեկտրոնային կայքում):

Նոնա Շահնազարյան, պ.գ.թ., ավագ գիտաշխատող

Աշխատում է ՀԱԻ-ում 2015 թվականից: Նրա գիտական ուսումնասիրության թեման է՝ «Շուշիի տրավմատիկ հիշողության համայնապատկերները (1920-2020 թթ.):

Գիտական հետազոտությունների ոլորտներն են՝ գենդերային հետազոտություններ, միգրացիա, հետխորհրդային անցման ժամանակաշրջան, տարածաշրջանային հետազոտություններ: (Նոնա Շահնազարյանի գիտական հրապարակումների ցանկը տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱԻ էլեկտրոնային կայքում):

Անժելա Ամիրխանյան, գիտաշխատող

Ուսումնասիրում է հայոց հավաքչական մշակույթը, վայրի բույսերի կիրառությունն ուտեստի համակարգում և ժողովրդական բժշկության մեջ: Հետազոտական աշխատանքները ներառում են նաև էթնոլեզվաբանական և էթնոբուսաբա-

նական խնդիրներ: Դրանց շուրջ Ա. Ամիրխանյանը հրատարակել է մի քանի հոդվածներ: (Տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱԻ էլեկտրոնային կայքում):

Քրիստինե Պապիկյան, կրտսեր գիտաշխատող

Զբաղվում է հայ ժողովրդի վերաբերյալ պատմիչների՝ Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Քանաքեռցու, Զաքարիա Ագուլեցու և այլոց երկերում առկա ազգագրական տեղեկությունների ուսումնասիրությամբ: (Գիտական հրապարակումները տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱԻ էլեկտրոնային կայքում):

Հռիփսիմե Ասատրյան, պ.գ.թ., գիտաշխատող

«Խաղերի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները հայոց մեջ (ավանդույթ և արդիականություն)» թեմայով 2018 թ. պ.գ.թ. Ս. Մկրտչյանի ղեկավարությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Զբաղվում է ժողովրդական խաղերի ուսումնասիրությամբ և դրանց սոցիալ մշակութային առանձնահատկություններով: Հրատարակել է շուրջ 10 գիտական հոդված և զեկուցման սեղմագրեր: (Հ. Ասատրյանի գիտական հրապարակումները տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱԻ էլեկտրոնային կայքում):

7.2. ՀԱԻ էթնոսոցիոլոգիայի բաժնի գործունեությունը 1990-2020 թթ.

Խորհրդային Միության փլուզումը, Հայաստանի անկախությունը և նոր տնտեսական ու հասարակական-քաղաքական հարաբերությունների հաստատումը, ապա նաև երկրաշարժի հետևանքների վերացումը, Արցախյան պատերազմը բռնագաղթածների հոսքերը, շրջափակումը, էներգետիկ ճգնաժամը և այլն պահանջում էին այդ գործընթացների ոչ միայն մանրակրկիտ և համակողմանի գիտական վերլուծություն, այլև խնդիրների լուսաբանման նոր մոտեցումներ:

1990-ական թթ. բաժնի գիտահետազոտական գործունեության առանցքը դարձավ Հայաստանի գյուղական բնակչության շրջանում սոցիալ-տնտեսական և էթնոմշակութային գործընթացները: Ելնելով նոր իրավիճակից՝ 1992-1995 թթ. հարցաթերթային հարցման միջոցով ձեռնամուխ եղավ նոր ուսումնասիրության, որում ներառվեցին նոր հարցեր, որոնք արձանագրում էին մեր կյանքում տեղի ունեցած փոփոխությունները և նոր մոտեցումները: Ուսումնասիրության գիտական ղեկավարը անվանի գիտնական Է. Կարապետյանն էր, իսկ դրա կազմակերպման և իրականացման գործում ակտիվ մասնակցություն ունեցան պատմական գիտությունների թեկնածուներ Ռ. Կարապետյանը, Լ. Վարդանյանը, Մ. Գալստյանը, Ս. Մկրտումյանը, Թ. Զաքարյանը: Դրանց ուսումնասիրության հիման վրա բաժնի աշխատակիցներ Միհրան Գալստյանը 1990 թ. «Ժամանակակից արտագնացությունը Հայկական ԽՍՀ-ում. էթնոսոցիոլոգիական հետազոտություն» և Ս. Մկրտչյանը 1997 թ. «Հայաստանի Հանրապետության բնակչության արդի տոնածիսական համակարգը (էթնոսոցիոլոգիական

հարցում)» թեմաներով պաշտպանեցին թեկնածուական ատենախոսություններ:

1998 թ. Մ. Գալստյանը հրատարակեց «Հայաստանի Հանրապետության բնակչության միջպետական տեղաշարժերը» (61 էջ) և 2000 թ. «Սոցիալական անհավասարություն-սոցիալական շարժունություն-սոցիալական կոնֆլիկտ: Համահարաբերակցություն և շարժընթացի խնդիրները Հայաստանում» (53 էջ) աշխատությունները:

Էթնոսոցիոլոգիայի բաժինը 1995-1997 թթ. ղեկավարել է պ.գ.թ. Ռ. Կարապետյանը, 1998-2015 թթ.՝ պատմական գիտությունների դոկտոր Լ. Վարդանյանը: Վերջինս մեծ ներդրում ունեցավ գիտության այս ճյուղի զարգացման գործում: Նա հրատարակեց «Степан Лисициан и истоки армянской этнографии (Ер., 2005, 424 с.) մենագրությունը: «Ստեփան Լիսիցյանի ներդրումը հայ պատմագրության զարգացման գործում» թեմայով 2005 թ. պաշտպանեց դոկտորական ատենախոսություն: Նրա անմիջական ջանքերով և խմբագրությամբ Մոսկվայում լույս տեսավ «Народы и культуры» շարքի Армяне հատորը (М., 2012, 648 с.):

Լ. Վարդանյանը «Հայ ժողովրդական մշակույթ» XII-ում (Երևան, 2004) հրատարակում է «Собирательско-полевая деятельность С. Д. Лисициана», «Ирина Долженко - исследователь русского иаселения Армении» // «Հայ ժողովրդական մշակույթ» XIV (Երևան, 2007), Ընտանիքի և ամուսնության հիմնախնդիրները Տավուշի մարզի աշխատանքային միգրանտների շրջանում (Միհրան Գալստյանի հետ համատեղ) // Տավուշ. Նյութական և հոգևոր ժառանգություն, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր (Երևան, 2009), Հայոց ամուսնա-հարսանեկան անվանդույթների արդի դրսևորումները սո-

ցիալ-մշակութային փոխակերպումների համատեքստում (ըստ 2008-2009 թթ. Տավուշի և Սյունիքի դաշտային նյութերի) // Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ, XV (Երևան, 2010), Լոռու ազգագրական ուսումնասիրությունը 1930-ական թթ. // Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ. XVI (Երևան, 2014, էջ 19-34) աշխատությունները և այլն:

2001 թ. հրատարկվեց «Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները (Եր., 2001, 116 էջ) գիտական հոդվածների ժողովածուն: 2002 թ.՝ «Ընտանեկան բռնությունները Հայաստանում. սոցիոլոգիական հետազոտություն» (Եր., 2002, 104 էջ) գիրքը:

Ուշագրավ է Մ. Գալստյանի գիտական հետազոտությունների շարքը, որ կարդացվել են հանրապետական գիտաժողովներում (տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱԻ էլեկտրոնային կայքում):

2009 թ. ՀԱԲ-ի 26-րդ պրակում հրատարակվում է Մ. Գալստյանի «Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես – XX դարի 80-ական թթ.) մենագրությունը: Գիտական հետաքրքրություն են ներկայացնում Մ. Գալստյանի հետազոտական հոդվածները, որ հրատարակվել են 2012-2013 թթ., ՀՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.» ամսագրում (տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱԻ էլեկտրոնային կայքում):

2014 թ. հրատարակվեց «Տավուշ. սոցիալ-մշակութային գործընթացներ» (Եր., 2014, 416 էջ) բաժնի կոլեկտիվ աշխատությունը:

2010 թ. Ս. Մկրտչյանը հրատարակել է «Տոներ. հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն)» (Եր., 2010, 191 էջ) և 2016 թ. «Հայոց տոնածիսական մշակույթ» (400 էջ) մենագրությունները: 2020 թ. լույս է տեսնում նրա «Տոներ» գրքի երկրորդ լրամշակ-

ված հրատարակությունը: Ցավոք նրա բեղուն գիտական և դասախոսական գործունեությունն ընթատվեց 2003 թ.:

2015 թ. Ռ. Կարապետյանը «Միգրացիան և էթնոսոցիալ գործընթացները Հայաստանի քաղաքներում», 2016 թ. Մ. Գալստյանը՝ «Աշխատանքային միգրացիայի սոցիալ-մշակութային հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմաներով պաշտպանել են դոկտորական ատենախոսություններ:

2012 թ. Լ. Վարդանյանի ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ պաշտպանեցին Ն. Գալստյանը՝ «Էթնոմշակութային գործոնի դերը Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորման հարցում», իսկ Ա. Մնացականյանը՝ «Մանկատան շրջանավարտների սոցիալականացման էթնոմշակութային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» թեմաներով: Պատմական գիտությունների թեկնածու Ա. Մնացականյանը 2014 թ. հրատարակում է «Հայաստանի մանկատները» (240 էջ) գիրքը: Այն վերաբերում է մանկատան երեխաների սոցիալականացման էթնոմշակութային հիմնախնդիրներին: 2012 թվականից նա Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի տնօրենն է:

2007 թ. Ռուբեն Օհանջանյանը հրատարակում է «Գեղարվեստական մշակույթի սպառման փոփոխությունները ՀՀ-ում (ըստ Տավուշի մարզի նյութերի) // Հայ ժողովրդական մշակույթ. XIV, Երևան (էջ 325-333):

2014 թ. պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Մկրտչյանի ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանում բաժնի գիտաշխատող Հ. Աբրահամյանը՝ «Վարդավառը հայոց մեջ (պատմաազգագրական

ուսումնասիրություն») թեմայով: 2012 թ. առ այսօր բաժնում գիտ. աշխատողի հաստիքով է աշխատում Հ. Աբրահամյանը: Նա հեղինակ է շուրջ մեկուկես տասնյակի հասնող գիտական հոդվածների և բազմաթիվ զեկուցումների թեզիսների, իրականացնում է նաև դրամաշնորհային ծրագիր՝ «Սյունիքի վայրի ուտելի բույսերին առնչվող էթնոբուսաբանական նյութեր» թեման: Ներկայումս նրա ուսումնասիրության շրջանակը վերաբերում է հայոց պահքի մշակույթին: 2018 թ. պ.գ.դ., պրոֆեսոր Ս. Մկրտչյանի ղեկավարությամբ Հ. Ասատրյանը պաշտպանել է «Խաղերի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները հայոց մեջ (ավանդույթ և արդիականություն)», իսկ Կ. Հովհաննիսյանը «Թուխ մանուկ սրբավայրերը (պատմաազգագրական ուսումնասիրություն)» թեկնածուական ատենախոսությունները:

2015 թվականից մինչև օրս բաժինը ղեկավարում է պատմական գիտությունների դոկտոր Մ. Գալստյանը:

2015 թ. նա հրատարակեց «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների միգրացիան (էթնոսոցիոլոգիական հետազոտություն)» թեմայով մենագրությունը (Եր., 2015, 208 էջ):

2017 թ. բաժնի գիտաշխատողներ՝ Թ. Զաքարյանի, Ռ. Օհանջանյանի, Գ. Հակոբյանի և բաժնի վարիչ՝ Մ. Գալստյանի համատեղ աշխատակցությամբ հրատարակվում է «Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում» (Եր., 2017, 328 էջ) աշխատությունը:

Մ. Գալստյանը գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ ղեկավարել է չորս գիտական ծրագիր, որից մեկը՝ միջազգային՝ Բելառուսի ԳԱԱ մշակույթի, լեզվի և գրականության ուսումնասիրությունների կենտրոնի հետ: Համատեղ հրատա-

բակվել է՝ Галстян М.В., Гурко А.В и другие. «Беларусская диаспора в Армении и армянская диаспора в Беларуси: Этническая идентичность у межкультурные взаимоотношения в современных условиях» (Бр., 2021, 200 с.):

2022-ին լույս է տեսել Գալստյան Մ. Վ., Հակոբյան Գ. Լ., Գալստյան Ն. Մ., «Հետխորհրդային Հայաստանի բնակչության արտագաղթի հիմնախնդիրը ցանցային միգրացիայի համատեքստում, աշխատությունը» (Երևան, ՀԱԻ հրատ., 178 էջ):

Բաժնի ղեկավար Մ. Գալստյանը 2008 թվականից նաև համատեղությամբ դասախոսում է ԵՊՀ-ի մշակութաբանության ամբիոնում: Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Գ. Հակոբյանը՝ «Սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով: Գ. Հակոբյանը բաժնում աշխատել է 2014 թվականից և երեք գրքերի համահեղինակ է:

2018 թվականից բաժնում գիտաշխատողի հաստիքով է աշխատում պ.գ.թ. Գ. Աթանեսյանը: Բաժնի ղեկավար Մ. Գալստյանը 2023 թ. հրատարակում է «Աշխատանքային միգրացիոն և սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում» (ՀԱԻ հրատ., 388 էջ) մենագրությունը, որտեղ հեղինակը բացահայտում է Հայաստանի բնակչության բոլոր ժամանակների աշխատանքային միգրացիայի էթնոմշակութային և սոցիալական հետևանքները, պատճառները և բազում այլ խնդիրներ:

Ամփոփման կարգով ասենք, որ էթնոսոցիոլոգիայի բաժնի ստեղծումից (1981 թ.) հետո գիտաշխատողները հրատարակել են 28 գիրք, 229 հոդված, 83 թեզիս և մասնակցել բազմաթիվ հանրապետական և միջազգային գիտաժողովների:

7.3. Մշակութային մարդաբանության բաժնի գործունեությունը[279]

Բաժնի հիմնադիր վարիչը ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Լևոն Աբրահամյանն է: 1978 թ. ավարտել է ԽՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրան: 1979 թ. պաշտպանել է պատմական գիտությունների թեկնածուական ատենախոսություն՝ Ավստրալիայի և Օվկիանիայի բնիկների մշակույթի վերաբերյալ: 1978 թ. աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, 2005 թվականից՝ արդիականության ազգաբանության բաժնի հիմնադիր վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): 1990 թ.-ից հրավիրվել է դասախոսություններ կարդալու ԵՊՀ-ում և ԱՄՆ-ի առաջատար բուհերում: Ներկայումս բազմաթիվ մասնագիտական դասընթացներ է կարդում ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնում: Հեղինակ է շուրջ 170 մենագրությունների և գիտական հոդվածների: Աշխատությունները վերաբերում են հայոց ավանդական և ժամանակակից ազգագրությանը, հայոց ինքնության խնդիրներին, հայոց և համեմատական առասպելաբանությանը, արվեստաբանության, արխաիկ մշակույթների և արդի ազգաբանության ասպարեզներին, նախնադարյան և ժամանակակից տոնածիսական համակարգին, Ավստրալիայի և Օվկիանիայի բնիկների մշակույթին, ազգաբանական մտքի պատմությանը: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

Բաժինը կազմվել է 2005 թ.՝ 1990-ական թթ. երկրորդ կեսին ստեղծված թեմատիկ խմբի հիման վրա: Բաժնի առաջա-

[279] Մինչև 2023 թ. կոչվում էր արդիականության ազգաբանության բաժին:

տար անդամներն են՝ Հ. Մարությանը, Հ. Խառատյանը, Գ. Շագոյանը, Ա. Հակոբյանը և ուրիշներ:

Բաժնի կառուցվածքում է նաև Հրանուշ Խառատյանի ղեկավարած Կիրառական ազգագրության խումբը:

Հարություն Մարության

Պատմական գիտությունների դոկտոր, 2018 թվականից Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ հիմնադրամի տնօրեն: ԵՊՀ պատմության ֆակուլտետը (1973-1978) ավարտելուց հետո՝ 1978-1979 թթ., աշխատանքի է անցել Հայաստանի ազգագրության թանգարանում (ՀԱԹ) որպես բաժնի վարիչ, 1980-1983 թ. ավարտել է ԽՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրան, 1984 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Интерьер армянского народного жилища (по материалам второй половины XIX – начало XX века» թեմայով, 2007 թ. «Կոլեկտիվ և պատմական հիշողությունը հայոց ինքնության համատեքստում (ըստ XX դարի պատմաազգագրական նյութերի)» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

1984 թվականից մինչև օրս աշխատում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, 2005 թվականից՝ արդիականության ազգաբանության բաժնում, 2008 թվականից առաջատար, 2017 թվականից՝ գլխավոր գիտաշխատողի պաշտոնում: Եղել է հրավիրյալ դասախոս ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնում (1991-2013),Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական ինստիտուտի Մշակութային մարդաբանության ամբիոնում (2010-2011), Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի (Բուդապեշտ) հայագիտության ամբիոնում (2017): Հ. Մարությանը Հնագիտության և ազգագրու-

թյան ինստիտուտի հնագիտության և ազգագրության մասնագիտացման գիտական աստիճաններ շնորհող խորհրդի նախագահի տեղակալն է:

Հ. Մարությանի մասնագիտական հետաքրքրությունների բնագավառներն են՝ Ցեղասպանության հիշողություն և ազգային ինքնություն, կոլեկտիվ և պատմական հիշողություն, պատկերագրություն, ժամանակակից ազգային շարժումներ և ազգային ինքնություն, բախումնաբանություն, աղքատության խնդիրներ, հայոց ենթաէթնիկ խմբեր, հայ ավանդական մշակույթ՝ բնակավայր, բնակարան, ներսույթ, արհեստներ, էթնիկ պատմության հարցեր:

Հրանուշ Խառատյան, կիրառական ազգագրության խմբի ղեկավար

Ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, 1979 թ.՝ ԽՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրան, 1982 թ. պաշտպանել է պատմագիտության թեկնածուի «Չերքեզահայեր. պատմաազգագրական ուսումնասիրություն» թեմայով ատենախոսություն: 1979-1989 թթ. որպես գիտաշխատող աշխատել է ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտում, 1989-1992 թթ.՝ ԵՊՀ ազգագրության ամբիոնում՝ գիտաշխատողի հաստիքով, 1992-1994 թթ. աշխատել է ՀՀ նախագահի աշխատակազմում՝ որպես գլխավոր մասնագետ, 1992 թ. եղել է Երևանի փոխքաղաքապետ, 1994-2000 թթ.՝ ԵՊՀ Ազգագրության ամբիոնի վարիչ, 2001-2003 թթ. հիմնել է «Հազարաշեն» հաս. կազմակերպությունը, 2004-2008 թթ. ղեկավարել է ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի վարչությունը, 2008 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, ղեկավարում է Արդիականության ազգաբանություն բաժնի կիրառական ազ-

գագրության խումբը: 2009-2011 թթ. համատեղությամբ եղել է Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի մշակութային մարդաբանության և երկրագիտության ամբիոնի վարիչ:

Հրանուշ Խառատյանի գիտական ուղղվածությունը ներառում է հայոց տոնական մշակույթը, հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերությունները, խորհրդային քաղաքական բռնությունները, սոցիալական հիշողության և էթնիկական ինքնության, Հայոց ցեղասպանության և այլ հարցերի ուսումնասիրությունը: Դաշտային հետազոտական աշխատանքներ է իրականացրել Թուրքիայի, Ադրբեջանի հանրապետություններում, Լեհաստանում: Գիտական հետազոտությունների առանցքում են եղել նաև ազգային փոքրամասնությունները:

Գայանե Շագոյան

Պատմական գիտությունների թեկնածու է, ավագ գիտաշխատող, ազգագրագետ, մշակութային մարդաբան:

1995 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ «Ազգագրություն» մասնագիտացմամբ: Աշխատում է ՀԱԻ-ում 1995 թվականից: Հետազոտությունների ոլորտներն են՝ ավանդական և ժամանակակից ծիսակարգը, քաղաքի մարդաբանությունը, խորհրդային շրջանի մարդաբանական ուսումնասիրությունը, Հայաստանի անկախության շրջանի արվեստում կիրառվող ֆեմինիստական ռազմավարությունները:

Արսեն Հակոբյան

Պատմական գիտությունների թեկնածու է, գիտաշխատող, ազգագրագետ, սոցիալական մարդաբան, հետազոտական ոլորտներն են՝ բռնության մարդաբանություն, փախստական-

ների ուսումնասիրություններ, հիշողություն և սփյուռքահայություն:

Ա. Հակոբյանը ուսումնասիրում է թաթալեզու հայերի խումբը, որոնք մի ժամանակ ապրում էին Ադրբեջանում, որտեղ փոխառել էին իրանալեզու թաթերից իրենց լեզուն: Ղարաբաղյան հակամարտությունից հետո անդրադարձավ բռնության և ժողովրդական դիվանագիտության մարդաբանությանը: Քննարկման առարկա է դարձրել նաև Ադրբեջանից փախստականների, սիրիահայ ներգաղթյալների խնդիրները:

Արդիական ազգաբանության բաժնի ընդհանուր թեման (2013 – 2022)՝ **Առօրեականությունը անցյալում և ներկայում. մարդաբանական ուսումնասիրություն**

Ընդհանուր թեման ներառում է հետևյալ խմբային թեմաները, որոնք հետազոտում են բաժնի աշխատակիցները: Արդիականության ազգաբանության բաժնի թեմատիկայի առանձնահատկությունն այն է, որ, կախված փոփոխվող իրավիճակից, կարող են ստեղծվել չնախատեսված հրատապ թեմաներ: Դրանք են՝

1. *Հիշողության մարդաբանություն*

Անցյալի մասին հիշողությունը հայոց առօրյայի դրսևորումներում (ցեղասպանության և Հոլոքոստի համեմատության օրինակով): Թեմայի կատարմանը ներգրավված են՝ **Հրանուշ Խառատյանը (ղեկավար), Գայանե Շագոյանը, Գոհար Ստեփանյանը**. Հայոց ցեղասպանության ընտանեկան հիշողությունը զոհերի երրորդ սերնդի միջավայրում:

Արգամ Երանոսյանը իրականացնում է՝ «Հայոց տոհմածառերի ազգագրական ուսումնասիրություն. հիշողություն և սերունդների դիսկուրս» թեման:

2. ***Հայաստանի սոցիալական շարժումների մարդաբանական ուսումնասիրություն: Թեմայի կատարմանը ներգրավված են՝***

Հարություն Մարության. Ղարաբաղյան շարժումը / Հայկական հեղափոխությունը (1988-1990) Արևելաեվրոպական հեղափոխությունների (1989) համատեքստում (պատմաազգաբանական հետազոտություն)։

Լևոն Աբրահամյան. Ղարաբաղյան շարժումը մարդաբանական տեսանկյունից։

Համլետ Մելքումյան. Հայաստանյան արդի քաղաքացիական շարժումները մարդաբանական տեսանկյունից։

Միլենա Բաղդասարյան. ա)Ազգային քաղաքականությունը, քաղաքացիների իրավունքներն ու ինքնությունը խորհրդային և հետխորհրդային շրջաններում։

բ)Իշխանության ձևավորումն ու իրագործումը, հիերարխիկ միջանձնային հարաբերություններն ու քաղաքացիական արժեքները թավշյա հեղափոխությունից առաջ և հետո։

գ)Բնապաշտպան շարժման մարդաբանությունը։

3. ***Խորհրդային և հետխորհրդային Հայաստանի ժողովրդական քրիստոնեության մարդաբանական ուսումնասիրություն:***

Գայանե Շագոյան. Անձնականը և հանրայինը ժողովրդական քրիստոնեության մեջ։

Լևոն Աբրահամյան. Երազն ու տեսիլքը հայ մշակույթում։

Արա Գույլյան. Ժողովրդա-քրիստոնեական բանավոր պատմությունները բանասացների կենսակերպի համատեքստում (Շիրակի մարզ)։

Գոհար Ստեփանյան. Կրոնական պրակտիկաների տարածաժամանակային կազմակերպումը ժողովրդական քրիստոնեության մեջ։

Հրանուշ Խառատյան (ղեկավար), Գայանե Շագոյան, Գոհար Ստեփանյան). Ժամանակակից կրոնական պրակտիկաները Հայաստանի հանրապետության գյուղական բնակչության միջավայրում: Ժողովրդական կրոնական վարքի դինամիկան:

4. ***Տոնի մարդաբանություն:***

Գոհար Ստեփանյան. Տոնական ներկան և հիշողությունը. մարդաբանական ուսումնասիրություն: Տոնական մշակույթի արդի զարգացումները. ավանդականի վերադարձ, արդիականի ներթափանցում և ներդրում:

Լևոն Աբրահամյան. Արխաիկ տոնը այսօրվա քաղաքական ելույթներում:

5. ***Հայաստանի քաղաքների մարդաբանական ուսումնասիրություն.***

Լևոն Աբրահամյան. Երևան քաղաքի մարդաբանական ուսումնասիրություն (1950-ականներից մինչև մեր օրերը):

Գայանե Շագոյան. Գյումրու խորհրդային և հետխորհրդային ուրբանիստական գործընթացներն ու քաղաքային առօրյան:

Գայանե Շագոյան. Աղետի մարդաբանություն (1988 թ. երկրաշարժի օրինակով):

Համլետ Մելքումյան. Ոչ ֆորմալ շուկաները արդի Հայաստանում. մարդաբանական ուսումնասիրություն:

Սմբատ Հակոբյան. Թաղման ծեսը արդի Երևանում. Մարդաբանական ուսումնասիրություն:

Հասմիկ Կնյազյան. (2021-ի փետրվարից). «Մասնավորը» և «հանրայինը» Երևանի բակային տարածքում (մարդաբանական ուսումնասիրություն):

6. ***Ենթաէթնիկ և սոցիալական խմբերի մարդաբանական ուսումնասիրություն***

Հրանուշ Խառատյան. Դերսիմ և դերսիմցիներ: Էթնիկություն, կրոն, ինքնություն. Ընտրության մղումներն ու տագնապները:

Վահե Բոյաջյան. Ֆորմալ և մշակութային սահմանը որպես սուբէթնոմշակութային ինքնությունների ձևավորման միջոց կամ նոր ինքնության առաջացում:

Տիգրան Սարգսյան. 1) Իրանական ընտանիքի և իրանահայ ընտանիքի փոփոխությունները Իրանական հեղափոխությունից հետո (Թեհրանի օրինակով): 2) Մեծ հայրենադարձության տարիներին Հայաստան ներգաղթած իրանահայերի մարդաբանական ուսումնասիրություն:

Գայանե Շագոյան. Բարդ (կոմպլեքս) ինքնությունների դրսևորումները ՀՀ բնակչության ներգաղթյալ խմբերի մեջ:

7. *Վիզուալ մարդաբանություն*

Գայանե Շագոյան. 1) 1988 թ. երկրաշարժի վիզուալ արձանագրումը: 2) Հայոց հարսանիքը լուսանկարներում և տեսաֆիլմերում. վիզուալ-մարդաբանական ուսումնասիրություն:

Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. Փաստաթղթեր, լուսանկարներ, տեսաֆիլմեր (Հրանուշ Խառատյան, Գայանե Շագոյան, Հարություն Մարության, Լևոն Աբրահամյան):

Ուխտագնացությունների և սրբավայրերի վիզուալ արձանագրում (Լևոն Աբրահամյան, Համլետ Մելքումյան, Գայանե Շագոյան):

Լևոն Աբրահամյան. Ազգագրական ֆիլմը և ազգագրությունը ֆիլմերում:

Ամալյա Դիլանյան. Գրաֆիտիի երևույթը արդի հայ մշակույթի համատեքստում:

8. ***Խորհրդային և հետխորհրդային առօրեականություն***

Նելլի Մանուչարյան. Խորհրդային ինքնության ձևավորման գործընթացները Հայաստանում 1920-1950 թթ.

Գայանե Շագոյան. Զբոսաշրջության մարդաբանություն. Կիրառական ազգագրությունից՝ ազգայնականության ուսումնասիրություն:

9. ***Բռնության մարդաբանություն***

Արսեն Հակոբյան. Էթնիկ կոնֆլիկտի և բռնության մարդաբանություն. Առօրեականություն ու հիշողություն:

Հասմիկ Գրիգորյան. 1. Զանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը: 2. Ոչ զինված դիմադրության ձևերը Հայոց ցեղասպանության տարիներին (ազգաբանական հետազոտություն ըստ ականատես-վերապրողների հուշագրությունների):

Գայանե Շագոյան. Ստալինյան բռնաճնշումների մարդաբանական ուսումնասիրություն. առօրյա և հիշողություն (1949 թ. սիբիրյան բռնաքսոր):

Նկատի ունենալով բաժնի գիտաշխատողների գիտական հրատարակությունների շատ հարուստ ցանկը, ձեռնարկը չծանրաբեռնելու նպատակով խորհուրդ է տրվում օգտվել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի էլեկտրոնային կայքից:

7.4. Սփյուռքի ուսումնասիրությունների բաժին

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմում հիմնադրվել է 2011 թ., բաժնի վարիչ՝ պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Կարապետյան: Ռ. Կարապետյանի գիտական հետաքրքրությունների ոլորտներն են՝ էթնոսոցիոլոգիան, քաղաքի սոցիոլոգիան, միգրացիան, էթնոէկոնոմիկային, էթնիկ կոնֆլիկտներին, էթնիկ փոքրամասնություններին վերաբերող հարցերը: Հեղինակ է շուրջ 200 հրապարակումների, այդ թվում՝ 14 մենագրությունների: Դրանց թվում վերջին տասնամյակում հրատարակվել են հետևյալ մենագրությունները. «Հայրենիք-սփյուռք առնչությունները հայկական մամուլում» (2012, Երևան, հայերեն), «Միգրացիան Հայաստանի քաղաքներում» (2013, Երևան, անգլերեն, ռուսերեն), «Հայկական սփյուռքը հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների համատեքստում» (2013, Մոսկվա, ռուսերեն), «Հայաստանի քաղաքների բնակչության ձևավորումը» (2014, Երևան, ռուսերեն), «Ցեղասպանության ականատեսների հուշերը» (2014, հայերեն, անգլերեն, ռուսերեն), «Հայերը սեփական և այլազգի միջավայրում. հետազոտական փորձ, խնդիրներ և հեռանկարներ» (2014, Երևան, անգլերեն և ռուսերեն), «Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները» (2015, Երևան), «Ռուսաստանի հայերը» (2016, Երևան, ռուսերեն), «Հայ համայնքներն այսօր» (2018, Երևան):

Բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու **Լուսինե Տանաջյանի** գիտական հետաքրքրությունների ոլորտը Հայկական սփյուռքում սոցիալական տեղաշարժերի, հայրենադարձության և միգրացիայի հարցերն են: 20-ից ավելի գիտական հրապարակումների հեղինակ է:

Սոնա Ներսիսյան. պ.գ.թ., ավագ գիտաշխատող, որի հետազոտական ուղղություններն են՝ սփյուռք, սոցիալական ցանցերը սփյուռքում, միգրացիոն երևույթները: Հեղինակ է ավելի քան 20 գիտական հրապարակումների:

Սյուզաննա Բարսեղյան, պ.գ.թ., ավագ գիտաշխատող, զբաղվում է մեդիայի և հաղորդակցության, էթնոսոցիոլոգիայի, քաղաքական սոցիոլոգիայի հարցերով, հեղինակ է շուրջ երկու տասնյակ հրապարակումների:

Նելլի Խաչատրյան. պ.գ.թ, գիտաշխատող, կրոնագետ, թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2013 թ., «Իսմայիլականությունը. ինքնության զարգացումը և կայացման դինամիկան» թեմայով:Սփյուռքի կրոնական գործընթացների, մշակութային ժառանգության հարցերով է զբաղվում և հեղինակ է մեկ տասնյակից ավելի հրապարակումների:

Սալվինե Մարկոսյան. կրտսեր գիտաշխատող, արևելագետ, բաժնում աշխատում է 2017 թվականից, գիտական հետաքրքրությունների ոլորտն է՝ Թուրքիայի ազգային փոքրամասնությունների իրավական խնդիրները, պոլսահայ համայնքի պատմությունը և մշակույթը, հեղինակ է 8 գիտական հրապարակումների:

Կարինե Նալբանդյան. գիտաշխատող, զբաղվում է սփյուռքում ժողովրդագրական և միգրացիոն գործընթաներով, 5 գիտական հրապարակումների հեղինակ է:

Աննա Չախմախչյան. 2021 թվականից աշխատում է ավագ լաբորանտի հաստիքով, զբաղվում է հայկական սփյուռքի մշակութային տրանսմիսիայի, ընտանիքի և ներընտանեկան փոխհարաբերությունների, առանձնահատկությունների, ազգայնականության խնդիրների ուսումնասիրությամբ: 3 գիտական հրապարակումների հեղինակ է:

Բաժնի կատարած ծրագրերը 21-ն են, որից 8-ը այլ երկրների համապատասխան մասնագետների հետ համատեղ: Բաժինը 2011-ից առ այսօր հրատարակել է 19 գիրք՝ մենագրություն և ժողովածու, որից երեքը հրատարակված է արտերկրում: Դրանց թվում են.

«Հայկական սփյուռքը դինամիկայում» (2022 թ., Պրահա, անգլերեն):

«Հայ էթնիկությունը սփյուռքում» (2021, Երևան):

«Էթնոմշակութային գործընթացները XX-XXI դդ.: Հայաստանի և Բելառուսի քաղաքների համեմատական ուսումնասիրություններ» (2021, Երևան, ռուսերեն):

«Հայաստանի և Ռուսաստանի ժամանակակից երիտասարդությունը. սոցիալ-ժողովրդագրական և էթնոմշակութային կողմնորոշումներ» (2020, Մոսկվա, ռուսերեն):

«Լիբանանահայերն այսօր» (2018, Երևան):

«Հայ ընտանիքն արդի մարտահրավերների համատեքստում» (2019, Երևան):

Բաժնի հետ համագործակցում է ՌԴ ԳԱԱ թղթ. անդամ Յու. Հարությունյանը (1929-2016): Վերջինս 2011 թ. հրատարկել է «Ռուսաստանի հայկական սփյուռքի մասին» (Երևան, ռուսերեն): Բաժնի թեմատիկ ծրագրերին ներգրավված են նաև՝ սփյուռքի տնտեսական ներուժի գնահատման խնդրով տ.գ.թ. Աշոտ Ավետիսյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Էրնեստ Գրիգորյանը, պ.գ.թ. Ռոման Ստարչենկոն (ՌԴ) և Ստեփան Զախարկևիչը:

Բաժնի հրատարակած հոդվածների թիվը 130 է, որից 30-ը հրատարակվել է արտերկրում: Հոդվածները ներառում, արծարծում և վերլուծում են հայկական սփյուռքին վերաբերող այնպիսի արդիական թեմաներ, ինչպիսիք են՝ միգրացիան,

էթնոտնտեսական, էթնոմշակութային, սոցիալ ժողովրդագրական գործընթացները, էթնիկ փոքրամասնություններին վերաբերող հիմնախնդիրները, բախումնաբանական, սոցիալական մոբիլության և հայրենադարձության հարցերը, սփյուռք-հայրենիք կապերը, սփյուռքում, սոցիալական ցանցերի ստեղծման և գործարկման, նաև մեդիադաշտի հիմնախնդիրները, կրոնական և էթնիկ ինքնության գաղափարախոսական հարցերը, ընտանիքի ժառանգությանը առնչվող թեմաները:

Բաժնում պաշտպանվել են 1 դոկտորական՝ «Միգրացիան և էթնոսոցիալական գործընթացները Հայաստանի քաղաքներում» թեմայով (Ռուբեն Կարապետյան), 4 թեկնածուական ատենախոսություններ՝ «Սոցիալական ցանցի դերը հայկական սփյուռքում» (Ս. Ներսիսյան), «Սոցիալական փոփոխությունները Հայկական Սփյուռքում» (Լ. Տանաջյան), «Էթնիկ մամուլի դերը Հայկական Սփյուռքում» (Ս. Բարսեղյան):

2021 թ. «Հայ առաքելական եկեղեցու Իրանի թեմերը» (պատմություն և արդիականություն) թեմայով ատենախոսություն է պաշտպանել Արման Անդրիկյանը:

Բաժնի գիտաշխատողները մասնակցել են 15 միջազգային և 10 հանրապետական կոնֆերանսների:

Բաժինը սերտ համագործակցություն ունի Ուկրաինայի, Ռուսաստանի, Բելառուսի, Ֆրանսիայի, Չեխիայի, Լիբանանի, Քուվեյթի, Լեհաստանի և Ղազախստանի ոլորտի գիտաշխատողների և բազմաթիվ գիտական կառույցների հետ: Բաժինը անցկացրել է 10 դաշտային հետազոտական աշխատանք արտասահմանում: Շահել է սփյուռքի նախարարության և գիտական կոմիտեի պատվերներով 20 մրցութային նախագիծ, որոնք հաջողությամբ իրականացվել են:

7.5. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ազգագրական գործունեությունը (1990-2020 թթ.)

Կենտրոնը հիմնադրվել է 1978 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմում՝ որպես մասնաճյուղ: 2003 թվականից կենտրոնը ստացավ ինքնուրույն գործելու կարգավիճակ՝ վերանվանվելով ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, որն առ այսօր ՀՀ ԳԱԱ համակարգի միակ ոչ մայրաքաղաքային հայագիտական հաստատությունն է (գիտական կազմը՝ 18 գիտաշխատող, գիտության 2 դոկտոր, գիտության 13թեկնածու): Գիտական ուղղությունները պատմական Շիրակ տարածաշրջանի ազգագրության, հին ու նոր պատմության, հնագիտության և բանահյուսության, էթնոհոգեբանության և սոցիոլոգիական հետազոտություններն են: Առ այսօր կատարված են արժեքավոր հնագիտական հետազոտություններ՝ նվիրված Բենիամինի անտիկ դամբարանադաշտին ու բնակավայրին, Անիի նորահայտ քարանձավային արվարձանին, Հայկաձորին և Մեծ Սեպասարի վաղ բրոնզեդարյան տաճարային համալիրին: Դրանցում քննարկված են Շիրակի և Ախուրյանի ավազանի հնագույն բնակչության էթնիկ կազմի, նրանց պաշտամունքի, առասպելական պատկերացումների, հավատալիքների, հնդեվրոպական հոգևոր ժառանգության, ցեղային երկրների տեղադրության խնդիրների շուրջ: Դրանք նաև հանգամանալից ուսումնասիրություններն են Ալեքսանդրապոլի գավառի նորագույն շրջանի՝ XIX-XX դդ. պատմաժողովրդագրական դրության, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, կրթամշակութային կյանքի վերաբերյալ: Դրանք ուշագրավ ու մանրակրկիտ ուսումնասիրություններ են Շիրակի ավանդական բա-

նահյուսության, ծիսատոնական համակարգի ու նորօրյա փոխակերպումների, աղետի հոգեբանության, արդիական խնդիրների, XIX-XX դդ. Շիրակի տնայնագործության, արհեստների, տնտեսական զբաղմունքների ու տնտեսության օժանդակ ձևերի մասին, Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրու պատմաազգագրական ուսումնասիրության համալիրում ազգագրական հարուստ նյութ ունեցող քաղաքի էթնիկ կազմի, կենցաղի, կենսապահովման, վերջին երկու հարյուրամյակի ընթացքում էթնոժողովրդագրական ու մշակութային զարգացումների, քաղաքային ավանդույթների ու զարգացման արդի միտումների վերաբերյալ: Կենտրոնը հրատարկել է շուրջ 30 հոդվածներ ու հրապարակումներ, ՇՀՀԿ գիտական հանդեսի 20 հատորներ:

Դրանցում մեծ վաստակ ունեն ազգագրագետներ Գ. Աղանյանը և Կ. Բազեյանը:

Գրիգոր Աղանյան[280]

1989-1993 թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ասպիրանտուրայում, աշխատանքի է անցել Լենինականի ժողովրդական ճարտարապետության ու քաղաքային կենցաղի և Ս. Մերկուրովի տուն թանգարաններում, դասավանդել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում, 1997-2012 թթ.՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի Հայագիտական հետազոտությունների կենտրոնում, 2012 թվականից մինչև օրս՝ ՀԱԻ ազգագրության բաժնում՝ որպես գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են՝ մետաղամշակության հետ կապված արհեստները,

[280] Գրիգոր Աղանյանի գործունեությունը տե՛ս Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնում:

հայոց ավանդական քաղաքների ազգաբանական ուսումնասիրության խնդիրները: Գ. Աղանյանի ուսումնասիրությունների զգալի մասը ներառում է Գյումրու քաղաքային մշակութային, կյանքին վերաբերող խնդիրները (տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ազգագրության բաժնի գործունեությունը):

Կարինե Բազեյան, պ.գ.թ., դոցենտ

1982 թ. ավարտել է ազգագրություն մասնագիտությամբ ԵՊՀ պատմության ֆակուլտետը, 1990 թ.՝ ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրան, 2002 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1982-1986 թթ. ավագ գիտաշխատողի հաստիքով աշխատել է Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, 1989-1996 թթ.՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, 1997 թ.-ից մինչև օրս՝ որպես ավագ գիտաշխատող Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում: Համատեղությամբ աշխատել է նաև Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնում դասախոս (2011-2013 թթ.)՝ Հովի. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնի գիտական գծով փոխտնօրեն: 2020-ից մինչև օրս որպես դոցենտ աշխատում է Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնում: 2014-2022 թթ. եղել է ԿԳՄՍ «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտահետազոտական բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ ազգաբանություն, ժողովրդական արվեստ:

Ներկայացվում է Կ. Բազեյանի 1997-2020 թթ. գիտական

ուսումնասիրությունների (2 մենագրություն, 90 գիտական հրապարակումներ) համառոտ ցանկը ըստ թեմատիկ հիմնախնդիրների:

Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթին վերաբերող (մենագրություններ). Բազեյան Կ., Աղանյան Գ., Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ (պատմազգագրական ուսումնասիրության), Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ, պրակ 2, Երևան-Գյումրի, 2014, 117 էջ: Գիրքը նվիրված է Ալեքսանդրապոլ քաղաքի ազգագրական պատկերի վերլուծությանը, որն ընդգրկում է XIX դ. 30-ական թթ. մինչև XX դ. առաջին քառորդը ընկած ժամանակաշրջանը:

Russo-Ottoman War of 1877-1878 and Armenia by Armenianhress, Lambert Academic Publishing, Beau Bassin, Mauritius, 2017. Համահեղինակներ Գ. Աղանյան, Տ. Մուրադյան: Կ. Բազեյանի աշխատությունների լրիվ ցանկը տե՛ս Կ. Բազեյանի էլեկտրոնային կայքում:

Թեմա 8. Ազգագրական գիտությունը Հայաստանի թանգարաններում (1990-2020 թթ.)

8.1. Հայաստանի պատմության թանգարան (1990-2020)

Պատմության թանգարանը իր ստեղծման օրից (1919 թ.) համարվել է Հայաստանի պատմություն և մշակույթի գիտահետազոտական նշանավոր կենտրոն: Այստեղ է կենտրոնացված ավելի քան 400.000 առարկաներից բաղկացած ազգային հավաքածու՝ հնագիտական, դրամագիտական և ազգագրական բացառիկ նմուշներ, այդ թվում՝ Հայաստանի պատմությանն ու մշակույթին վերաբերող՝ հին քարի դարից մինչև մեր օրերը: Դրանցից շատերը համաշխարհային ժառանգության գլուխգործոցներ են: Դրանց թվում են՝ Ք.ա. III-II հազ. բրոնզե նմուշների մեծաքանակ և բացառիկ հավաքածուն, Հին Արևելքի հայկական հզոր պետության՝ Ուրարտուի (Ք.ա. IX-VI դդ.) բացառիկ սեպագիր արձանագրություններ, բրոնզե արձանիկներ, որմնանկարներ, գունազարդ խեցեղեն, քանդակազարդ սպառազեն, ոսկյա, արծաթյա, ոսկրե եզակի նմուշներ՝ պեղված Կարմիր բլուրից, Արին Բերդից, Արգիշտիխինիլիից: Ուշագրավներից է Ուրարտուի Արգիշտի I արքայի՝ Երևան քաղաքի հիմնադրման մասին թողած սեպագիր արձանագրությունը (Ք.ա. 782 թ.), Լճաշենից պեղված փայտյա կառքերն ու դրանց բրոնզե մանրակերտերը՝ Ք.ա. XV-XIV դդ., հայկական դրամների հարուստ հավաքածուները: Ցուցադրվում են նաև Հայաստանում հելլենիստական մշակույթի ինքնատիպ փոխակերպման բարձրարժեք նմուշներ՝ քանդակ, ոսկերչական իրեր, խեցեղեն՝ պեղված Գառնիի, Արտաշատի, Օշականի և այլ հնավայրերից: Ներկայացվում է նաև Հայաստանի քրիս-

տոնեական մշակույթը՝ IV-XV դդ. ճարտարապետական, քանդակագործական, խեցեգործական եզակի գտածոներ՝ պեղված Դվին, Անի քաղաքներից, Ամբերդ ամրոցից և այլն:

Ոչ պակաս հարուստ է ներկայացված ազգագրական ֆոնդը: Ազգագրական N 1 ֆոնդում պահվում են XVII-XX դդ. թվագրվող տարազային համալիրներն ու զարդերը, ասեղնագործության նմուշները, եկեղեցական հանդերձանքը և սպասքը, սրբապատկերները և թանկարժեք մետաղներից պատրաստված կենցաղային սպասքը, երաժշտական գործիքները:

N 2 ֆոնդում՝ պղնձե հավաքածուն՝ XVII-XX դդ. բազմապիսի առարկաներն ու խոհանոցային սպասքը:

N 3 ֆոնդում՝ պահվում են XVIII-XX դդ. կավամաններ, հախճապակե սպասք, փայտե փորագրված նմուշներ, աշխատանքային գործիքներ:

N 4 ֆոնդում՝ գործվածքի հավաքածուում, պահվում են գորգահյուս և կարպետահյուս առարկաներ՝ գորգեր, կարպետներ, անկողնապարկեր, խուրջիներ, աղաքսակներ, ծածկոցներև կիրառական նշանակության այլ առարկաներ:

N 5 ֆոնդում՝ լուսանկարների հավաքածուում, պահվում է ազգագրական, վավերագրական լոսանկարների հարուստ հավաքածու՝ շուրջ 11.000 լուսանկար, ընդ որում՝ ինչպես տաղավարային, այնպես էլ վավերագրական լուսանկարներ, որոնցում պատկերված են մարդկանց կյանքն ու կենցաղը՝ հագուստ, հարդարանք, սոցիալական կարգավիճակ, սովորույթներ, ծեսեր և այլն լուսաբանող կարևոր սկզբաղբյուրներ:

N 6 ֆոնդում պահվում է Հայատանի պատմության թանգարանի XIX-XX դարի կեսով թվագրվող զենքի հարուստ հավաքածուն, որը բաժանվում է հիմնականում երկու խմբի՝ հրազեն՝ կայծքարե հրացաններ, ատրճանակներ, և սառը զենք՝

թրեր, սրեր, դաշույններ: Ուշագրավ է նաև, որ զենքը այդ ժամանակահատվածում տղամարդու տարազի անբաժան մասն էր և ըստ այդմ ուներ ոչ միայն կիրառական, այլև գեղագիտական նշանակություն: Այս տեսանկյունից ուշադրության են արժանի սրերի արծաթապատ-սևադազարդ դաստակներն ու պատյանները: Թանգարանն իրականացնում է նաև կոնսերվացման և վերականգման հետևողական աշխատանքներ:

Թանգարանը աչքի ընկնող գիտահետազոտական աշխատանքներ էլ է իրականացնում: Հրատարակել է 1948 թվականից ի վեր հայկական ճարտարապետությանը, հնագիտությանը, ազգագրությանը, հայոց պատմությանը նվիրված աշխատություններ, մատենաշարեր, հնագիտական պեղումների զեկույցներ: Թանգարանը միշտ գիտագործնական կապեր է ունեցել նշանավոր թանգարանային կենտրոնների հետ:

Արդյունավետ է թանգարանի ազգագրության բաժնի գիտահրատարակչական գործունեությունը: Ազգագրության բաժնի վարիչ Մարիետա Կիրակոսյանը (բաժնի վարիչն է եղել 1996 թվականից մինչև 2022 թվականը) 2021 թ. հրատարակել է «Հայերեն արձանագիր պղնձյա առարկաներ (XVI-XIX դարեր)» (Երևան, 2021, 280 էջ) պատկերազարդ ուշագրավ աշխատությունը: Հրատարակման գործընթացում է «Կ. Պոլսի գեղարվեստական մետաղը ըստ Հայաստանի պատմության թանգարանի նյութերի» պատկերազարդ աշխատությունը:

Լայն գիտահրատարակչական գործունեություն են ծավալում բաժնի գիտական երկարամյա աշխատողներ՝ պատմական գիտությունների թեկնածուներ՝ Աստղիկ Իսրայելյանը և Լիլյա Ավանեսյանը:

Աստղիկ Իսրայելյան, պ.գ.թ., ավագ գիտաշխատող

1972 թվականից աշխատում է Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնում: Մասնագիտական ուղղվածությունը վերաբերում է ժողովրդական հավատալիքներին, ինչպես նաև ավանդական դեկորատիվ կիրառական արվեստի ճյուղերից գորգագործությանը: «Հմայական պահպանակները հայոց հավատալիքների համակարգում» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Նրա գրքերից են՝ XVIII-XX դդ. հայկական հմայական պահպանակները Հայաստանի պատմության թանգարանում, «Ասողիկ» հրատ., Երևան, 2012, **նույնի՝** Հայկական գորգերն ու կարպետները, Հոդվածների ժողովածու, «Հայագիտակ» հրատ., Երևան, 2019, **նույնի՝** Հայուհիների զարդերը XVIII-XX դդ., Երևան, ԱՀՊԹ, 2021: Աստղիկ Իսրայելյանի գիտական աշխատությունների ցանկը ամբողջությամբ տե՛ս Հայաստանի Պատմության թանգարանի էլեկտրոնային կայքում:

Լիլյա Ավանեսյան, պ.գ. թ., ավագ գիտաշխատող

1999 թվականից Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի գիտաշխատող է: 2014 թ. պաշտպանել է «Հայկական գորգերի զարդաձևերի խորհրդաիմաստը» թեմայով ատենախոսություն:

Հրատարակված մենագրություններն են՝

1.Հայկական գորգերի զարդաձևերի ծագումնաբանությունն ու իմաստաբանությունը, Հայաստանի պատմության թանգարան, Երևան, 2020: 2.Ավանեսյան Լ., Իսրայելյան Ա., Հայկական ավանդական տարազը ըստ Նազիկ Ավագյանի, Երևան, 2022: Լ. Ավանեսյանի գիտական աշխատությունների ցանկը ամբողջությամբ տե՛ս Հայաստանի Պատմության թանգարանի էլեկտրոնային կայքում:

8.2. Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարան

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարանը միակ խոշոր մասնագիտացված թանգարանն է, հայոց ազգային մշակույթի մերօրյա տաճարն ու մշակույթի գանձարանը: Այստեղ պահպանվում, ցուցադրվում, ուսումնասիրվում և հանրահռչակվում են հայ էթնոսի մշակութային ժառանգությանը վերաբերող բարձրարժեք թանգարանային մասունքներ, պատմամշակութային արժեքներ՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Այն կայացած, գործուն և կենսունակ գիտացուցադրական, գիտահետազոտական, մշակութային օջախ է:

Թանգարանն այսօր ունի 75000-ից ավելի մշակութային արժեքներից բաղկացած հավաքածուներ: Թանգարանի 34000 քմ տարածքից 6500 քմ ցուցադրական մակերեսի վրա ներկայացված են հայոց ազգային մշակույթին և ազգային ազատագրական շարժմանը նվիրված հիմնական ցուցադրություններ: Թանգարանի հավաքածուները բաղկացած են հետևյալ բաժիններից.

1. Հնագիտական (հնագույն և միջնադարյան արվեստ, արհեստներ, կրոնապաշտամունքային առարկաներ):

2. Ազգագրական-աշխատանքային գործիքներ, արհեստներ, ազգային խոհանոց, օժանդակ տնտեսաձևեր, գորգ և կարպետ, կահույք, ժանյակ և ասեղնագործություն, ազգային տարազ և զարդեր, ընտանիքին և ազգային տոնացույցին վերաբերող առարկաներ:

3. Լուսանկարների, նկարների, փաստաթղթերի, արխիվային նյութերի հավաքածուներ:

4. Ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ (1960-1980 թթ.):

5. Այլէթնիկ հանրությունների մշակույթին վերաբերող թանգարանային առարկաներ:

6. Հայոց ազգագրության թանգարանը շարունակում է իր գիտահավաքչական աշխատանքները, վերջին տարիներին կատարվել են կարևոր գնումներ և ստացվել մեծարժեք նվիրատվություններ: Շարունակում են համալրվել թանգարանի 13 հազարից ավելի անուն գրականություն և վավերագրեր ունեցող գրադարանը, գրապահոցները:

Իրականացվում են թանգարանային արժեքների վերականգնման և պահանման աշխատանքներ: Այն ներկայացվում է երկու բաժնով. առաջին բաժնում առանձին թեմատիկ համալիրներով ներկայացվում է հայոց հնագույն մշակույթը մինչև XVIII դարը ներառյալ: Երկրորդ բաժինը ժամանակագրական առումով ընդգրկում է XIX-XX դդ. և ներկայացնում է հայոց կենցաղամշակութային հիմնական համալիրները:

Թանգարանում գործում է երեք գիտական բաժին.

1. Նյութական մշակույթ,
2. Ոչ նյութական մշակութային արժեքներ,
3. Ազատագրական պայքարի պատմության բաժին:

Գիտահետազոտական աշխատանքներ

Ուսումնասիրվող թեմաներ՝

Կենսապահովման մշակույթին (բնակարան, արհեստներ, տարազ, ուտեստ, սպասք), արտադրական մշակույթին (արհեստ), կենսափուլային ծեսերին, ավանդական և ժամանակակից տոներին, հայոց հավատալիքների համակարգին, ժողովրդական խաղերին, ժողովրդական բանահյուսությանը վե-

բաբերող հոդվածների, զեկուցումների, հաղորդումների և բացատրագրերի կազմում:

Պատմագիտական թեմաներ

«Առաջին աշխարհամարտը և կամավորական շարժումը 1914-1918 թթ.», «1915 թ. հերոսամարտերը», «1918 թ. մայիսյան հերոսամարտերը», «Հայաստանի Առաջին Հանրապետության պատմությունը» թեմաներով հոդվածների, զեկուցումների հաղորդումների և բացատրագրերի կազմում, գիտաժողովի կազմակերպում:

Գիտաֆոնդային գործունեություն

Թանգարանային առարկաների գիտական անձնագրավորման, վերավկայագրման և թվանշայնացման աշխատանքներ:

Խեցե, մետաղյա, փայտյա թանգարանային առարկաների վերականգնման աշխատանքներ:

Թանգարանային առարկաների թեմատիկ դասակարգման աշխատանքներ:

Թանգարանային առարկաների պահպանության բաժիններ:

Թանգարանի գիտաշխատողները մասնակցում են հայաստանյան և միջազգային գիտաժողովների: Այս ամենի շնորհիվ ՀԱԹ-ը հայտնի է թանգարանային աշխարհին: 2005 թ. հրատարակվել է «Նոր ազգագրական հանդեսի» անդրանիկ համարը: 2023 թ. նախատեսվում է հրատարակել հանդեսի 2-րդ և 3-րդ համարները: Թանգարանում 2014 թ. անցկացվեց միջոցառում նվիրված Ե. Լալայանի ազգագրական գործունեությունը: Նրա անունով անվանակոչվեց թանգարանի նիստերի դահլիճը:

2019 թ. հուլիսի 17-ին Հայոց ազգագրության թանգարանում կայացել է Յուրի Իսրայելի Մկրտումյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողով:

Թանգարանի հրատարակություններն են՝ «Սարդարապատ. հաղթանակների բնօրրան», «Հակոբ Ջելալյանի նվիրատվությունները», «1918 թ. հերոսամարտերը մասնակիցների հուշերում» (2018 թ.) Յու. Մկրտումյանի 80-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողովի նյութերը» (2019 թ.), «Թաղիքագործության, գորգագործության և ժանեկագործության մոռացվող ավանդույթների վերածնունդը» (2020), «Հայոց ազգագրության թանգարանի հրավիրատոմսերի կատալոգ» (2022) գրքերը: Տպագրվել են նաև «Ուղեցույցներ» և այլ տեղեկատվական նյութեր:

Շնորհիվ գիտական ներուժի՝ Հայոց ազգագրության թանգարանը քանիցս նշանակվել է «Ազգագրություն» մասնագիտական ատենախոսական աշխատանքների պաշտպանության առաջատար կազմակերպություն, ներկայացնելով մասնագիտական եզրակացություններ:

Նորավարտ ազգագրագետներով ու պատմաբաններով համալրված գիտահետազոտական բաժինները առաջին իսկ ամիսներից կազմակերպել են ազգագրական գիտարշավներ, որոնց նպատակը դաշտային ազգագրական նյութերի և թանգարանային արժեք ներկայացնող առարկաների հավաքումն էր: Գիտարշավների դաշտային ազգագրական հարուստ նյութերը հայոց մշակութային ժառանգության բազմաթիվ ոլորտների ուսումնասիրման կարևոր աղբյուր են: Ժամանակավոր ցուցահանդեսներ կազմակերպվել են ոչ միայն Հայաստանի տարբեր մարզերում, այլ նաև նախկին Խորհրդային Միության գրեթե բոլոր հանրապետություններում և մեկ տասնյակից ավելի այլ երկրներում:

Ցուցադրության հիմնական թեմաները նվիրված են եղել հայոց կիրառական արվեստի ավելի քան 2000 անուն հավաքածուներին, որոնք ձեռք են բերվել 1980-1990-ական թթ. Հայաստանի և Սփյուռքի ճանաչված վարպետներից: Ուրույն տեղ է գրավել ուտեստի ցուցադրությունը: «Հայաստանի արհեստները՝ Հայաստանի գանձերը» խորագրով ժամանակավոր ցուցահանդես է բացել Մարսել քաղաքի Արվեստի և արհեստների տանը, նույնը՝ Արգենտինայում և այլն[281]:

Թանգարանի գիտական գծով փոխտնօրենն է պ.գ.թ. Ս. Հ. Պողոսյանը: Նա ԵՊՀ պատմության ֆակուլտետը ավարտել է 1982 թ., 1994 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Շիրակ-Ջավախքի հայոց ավանդական տարազը» թեմայով: 1982-1998 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ազգագրության և արդիականության ազգաբանության բաժիններում, 1998 թվականից՝ Հայաստանի ազգագրության պետական թանգարանում գիտաշխատողի, գիտ. քարտուղարի, 2006 թվականից առայսօր գիտական գծով փոխտնօրենի պաշտոնում: Ս. Պողոսյանը հայ ազգագրության ներկա սերնդի հիմնական տարազագետներից է, որի վերաբերյալ է նրա գիտական հրապարակումների մեծ մասը:

Բազմաթիվ ու բազմազան է Ս. Պողոսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը, խմբագրել է նաև բազմաթիվ մենագրություններ, ՀԱԹ-ի գիտաշխատողների հանրապետական և միջազգային գիտաժողովների տասնյակների հասնող զեկուցումներ և այլն: Մի պատկառելի ցուցակ են կազմում առաջիկա հրատարակչական և ցուցադրության նախատեսված

---

[281] Թանգարանի գործունեության մասին տե՛ս **Պողոսյան Ս.**, Հայաստանի ազգագրության թանգարանը ազգային մշակույթի գանձարան // «Նայիրի» տարեգիրք, Թեհրան, 2010, էջ 398-410:

անելիքները (Ս. Պողոսյանի գիտական աշխատությունների ցանկը ամբողջությամբ տե՛ս Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարանի էլեկտրոնային կայքում):

Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարանի երկարամյա գիտաշխատողներից է եղել **Աշխունջ Պողոսյանը,** որն այժմ աշխատում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում:

1967-1972 թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1981-1983 թթ. եղել է ԵՊՀ ազգագրության գծով արտադրությունից չկտրված ասպիրանտ, 2003 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայոց գորգագործական մշակույթը» թեմայով: 1972-1978 թթ. աշխատել է Հայաստանի ազգագրության թանգարանի ազգագրության բաժնում գիտաշխատողի հաստիքով, 1979-1981 թթ.՝ կիրառական գեղազարդման արվեստի բաժնի վարիչ, 1981-1990 թթ.՝ գեղարվեստական գործվածքի բաժնի վարիչ, 1990-1996 թթ.՝ գիտական գծով փոխտնօրեն, 1996-2005 թթ.՝ գեղարվեստական գործվածքի բաժնի վարիչ: 1995-1997 թթ. եղել է Մշակութային արժեքների գնահատման փորձագիտական հանձնաժողովի նախագահ, 1997-2005 թթ.՝ Մշակութային արժեքների պահպանության գործակալության գիտատեղեկատվական բաժնում գլխավոր մասնագետ:

2008 թ. մինչև օրս աշխատում է Գավառի պետական համալսարանում դասախոս, նաև որպես փորձագետ «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում:

Հեղինակ է 5 գրքերի, շուրջ 100 գիտական հոդվածների և հաղորդումների:

Աշխունջ Պողոսյանի աշխատությունների լրիվ ցանկը տես նրա էլեկտրոնային կայքում:

Թանգարանի գիտաշխատողներից է եղել նաև **Սուսաննա Մելիքյանը**:

ԵՊՀ պատմության ֆակուլտետն է ավարտել 1984 թ. (1979-1984 թթ.): 1988 թվականից ՀՀ ԳԱԱ Հնագիտության ազգագրության ինստիտուտում ձևակերպվել է հայցորդ՝ «Մանկության ազգագրություն» ընդհանուր թեմայով:

1984 թ. կրտսեր գիտաշխատողի հաստիքով անցել է աշխատանքի ՀԱԹ-ում, 1986 թ. գիտաշխատողի, ապա՝ բաժնի վարիչի (1988-2012 թթ.) պաշտոններում: Այդ տարիներին իրականացրել է նաև հետազոտական և հավաքչական աշխատանք Շիրակի մարզում՝ Հայոց ավանդութային տոնածիսական համակարգը ծրագրով:

Հեղինակ է բազմաթիվ զեկուցումների հիմնադրույթների «Տղաբերք և մանկատածություն» և «Ազգային տոներ» թեմաներով (Ս. Մելիքյանի գիտական հոդվածները տե՛ս նրա էլեկտրոնային կայքում):

Գալյա Դավիդովա, ավագ գիտաշխատող[282]

1986 թվականից առ այսօր աշխատում է Հայոց ազգագրության թանգարանում: 2014-2021 թթ. «Ոչ նյութական մշակույթ» բաժնում որպես ավագ գիտաշխատող, բաժնի վարիչ:

Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ և ասորի էթնոսների «Կենսափուլային ծեսերը», «Տոներն ու ավանդույթները» թեմաները: Ունի տպագրված-

[282] 1986 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության բաժինը

հոդվածներ, հիմնադրույթներ (Գալյա Դավիդովայի գիտական աշխատությունների ցանկը տե՛ս Հայոց ազգագրության թանգարանի էլեկտրոնային կայքում):

Մերի Ավետիսյան, ավագ գիտաշխատող:

2019 թ. ԵՊՀ ազգաբանության մասնագիտացմամբ մագիստրատուրան ավարտելուց հետո աշխատանքի է անցել Հայոց ազգագրության թանգարանում գիտաշխատողի հաստիքով: 2021 թ. սեպտեմբերի 1-ից թանգարանի նյութական մշակույթի բաժնում՝ ավագ գիտաշխատող, 2021թ հոկտեմբերից մինչև 2022 թ. նոյեմբերը՝ նյութական մշակույթի բաժնի վարիչ, 2022 թ. նոյեմբերից՝ Երևան քաղաքի պատմության թանգարանի Նոր պատմություն բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրության շրջանակները՝ XIX-XX դդ. կենցաղային և արարողակարգային սպասքի պատմաազգագրական ուսումնասիրությունը թանգարանային հավաքածուների հիման վրա: Նաև՝ Երևան քաղաքի նյութական մշակույթը (XIX-XX դարերի առաջին կես):

Մերի Ավետիսյանի գիտական հրապարակումները տե՛ս Հայոց ազգագրության թանգարանի և Երևան քաղաքի պատմության թանգարանի էլեկտրոնային կայքերում:

Թանգարանի երիտասարդ գիտաշխատողներից է նաև **Վիկտորյա Մուրադյանը**՝ «Ոչ նյութական մշակույթ» բաժնում, որի գիտական թեման է «Ժողովրդական բանահյուսության ցուցադրության հիմնախնդիրները Հայոց ազգագրության թանգարանում»:

Նյութական մշակույթի բաժնի գիտական թեմանները և կատարողներն են՝

1. Կարինե Երիցյան. «Նյութական մշակույթ» բաժնում զբաղվում է «Ժողովրդական բնակարանի ցուցադրության հիմնախնդիրները Հայոց ազգագրության թանգարանում» թեմայով:

2. Կարեն Ասատրյան. Մետաղագործական արհեստները Հայաստանում ըստ Հայոց ազգագրության թանգարանի նյութերի:

Ազատագրական պայքարի պատմության բաժին, Գիտահետազոտական թեմաներն են՝

1. Կամավորական շարժումը 1914-1918 թթ.,
2. 1915 թ. ինքնապաշտպանական մարտերը,
3. Արևելյան լեգեոնի կազմավորումը,
4. Ավարայրի ճակատամարտը:
5. «Դավիթ Բեկ» կերպարի հուշարձանացումը,
6. Կովկասյան ռազմաճակատ (1914-1918 թթ.)
7. «1918 թ. մայիսյան հերոսամարտը».
8. Սարդարապատի ճակատամարտ,
9. Բաշ-Ապարանի ճակատամարտ,
10. Ղարաքիլիսայի ճակատամարտ,
11. Հայաստանի առաջին հանրապետությունը:

Թեմաների իրականացնողներ՝ **Արևիկ Մելիքյան** (բաժնի վարիչ), **Արմինե Շահբազյան** (գիտաշխատող): Արևիկ Մելիքյանի և Արմինե Շահբազյանի գիտական հրապարակումների ցանկը տե՛ս նրանց էլեկտրոնային կայքերում:

8.3. Երևան քաղաքի պատմության թանգարան

Երևան քաղաքի պատմության թանգարանը հիմնադրվել է 1931 թ.: 2006 թ. այն Կապույտ մզկիթից տեղափոխվել է Երևանի քաղաքապետարանի ընդհանուր համալիր կազմող նորակառույց շենք: Թանգարանի հավաքածուն այսօր ներառում է ավելի քան 98 հազար նմուշ, որի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ազգագրական հավաքածուն (գործվածք, մետաղ, զենք, կահույք և այլն): Գործվածք խումբն իր հերթին ունի հետևյալ ենթաբաժինները՝ գորգ, տարազ, ասեղնագործություն: Կարելի է առանձնացնել հարսանեկան բացառիկ զգեստը, քաղաքային կահույքը, երևանցի վարպետների պատրաստած և միջազգային մրցույթներում մեդալներ ստացած արծաթագործ առարկաները և այլն:

Թանգարանն իր տարբեր հրատարակություններով ու միջոցառումներով մշտապես հանրահռչակում է հավաքածուի առանձին խմբեր: Այսպես, 2011 թ. թանգարանի 80-ամյակի կապակցությամբ լույս ընծայվեցին գորգի, տարազի, կահույքի, զարդերի, զենքի գունավոր կատալոգները, որոնց շնորհիվ մասնագետներն ու հանրությունը կարող են ծանոթանալ դրանց, որոնք հետազոտողների համար կարող են սկզբնաղբյուրի դեր կատարել:

Թանգարանի եզակի հրատարակություններից է «Երևանի նշանավոր ընտանիքները» (Երևան, 2009) աշխատությունը, որը հեղինակել են թանգարանի գիտական բաժինների աշխատակիցները:

2007 թ. սկսած Երևանի պատմության հիմնահարցերի վերաբերյալ թանգարանը հրավիրել է մի քանի գիտական նստաշրջան, որոնց նյութերը հրատարակվել են հինգ գիտական ժո-

ղովածուով՝ Երևան 1 (2006 թ.), Երևան 2 (2009 թ.), Երևան 3 (2012 թ.), Երևան 4 (2016 թ.), Երևան 5 (2018): Այստեղ տեղ են գտել նաև թանգարանի ազգագրական հավաքածուն ներկայացնող ուսումնասիրությունները:

Ազգագրական թանգարանային առարկաները պարբերաբար իրենց տեղն են գտնում ժամանակավոր ցուցադրություններում թե՛ թանգարանի ներսում, թե՛ մայրաքաղաքի ու արտերկրի թանգարանների հետ կազմակերպված ցուցահանդեսներում: Այս առումով կարելի է նշել 2011 թ. Բելառուսի Հանրապետության Գոմել քաղաքում կայացած ցուցահանդեսը, որտեղ մեծ հետաքրքրություն առաջացրին տարազը, զարդերը, գորգերը:

Ազգագրական հավաքածուն մշտապես համալրվում է մեր քաղաքացիներից և արտերկրից ստացված նվիրատվությունների շնորհիվ, որոնցից կարելի է նշել ամերիկահայ Ռոստոմ Ոսկանյանի մետաղյա մեծաթիվ, այդ թվում արծաթյա առարկաները, ավստրալահայ Սոնա Գարամանյանի, իրանահայ Էլվիրա Ղազարյանի ասեղնագործ հավաքածուները, իրանահայ Ավո Հովհաննիսյանի նվիրած առարկաները և այլն[283]:

Երևանի պատմության թանգարանի տնօրենն է **Արմինե Սարգսյանը**՝ պ.գ.թ., դոցենտ: Ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը(1977-1982 թթ.): 2002 թ. «Կանանց վերաբերվող արգելանքները հայոց մեջ (19-րդ դ. վերջ – 20-րդ դ. սկիզբ)» թեմայով թեկնածուական թեզ է պաշտպանել: 2001 թ. նշանակվել է «Երևան քաղաքի պատմության թանգարանի տնօրեն:

Խմբագրել է թանգարանի հրատարակած կահույքի, զենքի,

---

[283] Խորին շնորհակալություն են հայտնում թանգարանի տնրեն Արմինե Սարգսյանին՝ սիրահոժար նյութեր տրամադրելու համար:

տարազի, գորգերի կատալոգները, հեղինակել է «Զարդերի հավաքածուն» կատալոգը: Հեղինակ է «Երևանի նշանավոր ընտանիքները» (Երևան, 2009 թ.), «Երևանի պատմությունը» (2018 թ.) աշխատությունների և մի շարք հոդվածների: 2021 թ. «Հայկազեան հայագիտական հանդէս»-ի 41-րդ հատորում տպագրվել են «Երևան քաղաքի պատմության թանգարանը» (Բեյրութ, 2021 թ.), «Հետահայաց անկախության ցուցապաստառները (ըստ ԵՔՊԹ հավաքածուի)» հոդվածները, խմբագրել է «Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի» (Երևան, 2021 թ.) ժողովածուն: Խմբագրել է նաև բազմաթիվ այլ աշխատություններ. «Երևանը հայ երգարվեստում» (Երևան, 2021 թ.), «Երևանը բանաստեղծություններում» (Երևան, 2019 թ.), «Երևան 1-5» ժողովածուները և այլն:

Թեմա 9. Ազգագրական գիտությունը Հայաստանի բուհերում (1990-2020)

9.1. Հնագիտության և ազգագրության ամբիոնի գործունեությունը 1990 թվականից մինչև օրս

ԵՊՀ պատմության ֆակուլտետի ազգագրության ամբիոնը հիմնադրվել է 1989 թ.: Հիմնադիր վարիչը նշանավոր ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Յուրի Մկրտումյանն էր (գործունեությունը հակիճ տրված է ամբիոնի 1970-1990 թթ. բնութագրության մեջ): 1968-1969 ուս. տարվանից, ինչպես ասվել է վերը, նրա ղեկավարությամբ ֆակուլտետում երկրորդ կուրսից հիմնվել էր «ազգագրություն» մասնագիտացումը: Դասավանդվում էր շուրջ երկու տասնյակ ազգագրական մասնագիտական առարկա:

Ամբիոնում իրենց դասախոսական և գիտահետազոտական աշխատանքը շարունակեցին պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Պետրոսյանը և 2008 թվականին դոկտորական ատենախոսություն պաշտպանած, 2010 թ.-ից պրոֆեսորի գիտական կոչում ստացած Ռ. Նահապետյանը:

Յու. Մկրտումյանի ջանքերով բարձր հիմքերի վրա դրվեց ամբիոնի ու հանրապետության և միության գիտական ու կրթական հաստատությունների միջև ուսումնական ու գիտական համագործակցությունը: Որպես հրավիրված մասնագետներ ամբիոնում դասավանդում էին Դ. Վարդումյանը, Հ. Մարությանը, Հ. Խառատյանը և բազմաթիվ այլ ազգագրագետներ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտից և գիտակրթական այլ հաստատություններից: Այդ տարիներին կարևոր ձեռքբերումներից էր ամբիոնի կողմից հրավիրված

ՌԴ ԳԱ թղթ. անդամ Ս. Ա. Հարությունովի, ՌԴ ԳԱ թղթ. անդամ, էթնոսոցիոլոգ Յու. Հարությունյանի, Լեհաստանից, Վրաստանից և այլ երկրներից մասնագետների դասախոսությունների կազմակերպումը:

Մեծ կարևորություն էր տրվում գիտական կադրերի պատրաստմանը: Ամբիոնի բազմաթիվ շրջանավարտներ ասպիրանտական կրթություն ստացան Մոսկվայի և Լենինգրադի ակադեմիական հաստատություններում, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Նրանցից էին՝ Գ. Արեշյանը, Մ. Հակոբյանը, Զ. Խառատյանը, Հ. Խառատյանը, Հ. Մարությանը, Ա. Մկրտչյանը, Ս. Պողոսյանը, Կ. Բազեյանը, Մ. Գաբրիելյանը, Ա. Թադևոսյանը, Մ. Գալստյանը և ուրիշներ: Նրանցից շատերն աշխատանքի անցան նաև Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, Հայոց ազգագրության թանգարանում, Գյումրու, Վանաձորի ու այլ քաղաքների ուսումնագիտական հաստատություններում:

1994 թ. ամբիոնի վարիչ է նշանակվում պատմական գիտությունների թեկնածու Հ. Խառատյանը: Նա այն ղեկավարեց մինչև 2000 թվականը: Նրա ղեկավարության տարիներին ամբիոնում շարունակվեցին ինչպես գիտակրթական, այնպես էլ հետազոտական աշխատանքները: 1994 թ. ամբիոնի դասախոսներն ու ասպիրանտներն առաջինը սկսեցին հանրապետությունում աղքատության որակական ուսումնասիրությունները (Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ): Մեծ ուշադրություն էր դարձվում փախստականների խնդիրների ազգաբանական ուսումնասիրությանը, ինչպես նաև ավանդական և ժամանակակից ազգագրության բազմաթիվ հիմնախնդիրների:

2000 թվականից մինչև 2004 թվականը ամբիոնի վարիչի

պաշտոնին կրկին անցավ Յու. Մկրտումյանը:

2005 թ.՝ նրա մահվանից հետո, վերամիավորվեցին հնագիտության և ազգագրության ամբիոնները:

Մինչև 2009 թ. Հնագիտության և ազգագրության ամբիոնը ղեկավարում էր պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Ի. Գ. Ղարիբյանը: 2009 թվականից մինչև օրս Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչն է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Գ. Ավետիսյանը:

Հնագիտության և ազգագրության ամբիոնների վերամիավորումից հետո ազգագրության հետ կապված աշխատանքները չթուլացան: Ամբիոնը ձեռնամուխ եղավ կրթական ծրագրերը ու ուսումնական գործընթացի կազմակերպումը նոր իրավիճակին համապատասխանեցնելուն: Մշակվեցին նոր դասընթացներ: Անցումը եռաստիճան համակարգին կարևորեց հատկապես «Ազգագրություն» մագիստրոսական ծրագրում նոր դասընթացների ներդրումը: Այսօր մագիստրոսական ծրագրում դասավանդվում է շուրջ երկու տասնյակ հատուկ մասնագիտական դասընթաց: Դրանցից կարելի է առանձնացնել՝ «Մշակութային մարդաբանություն», «Սոցիալական մարդաբանություն», «Էթնիկ կոնֆլիկտների և պատերազմի մարդաբանություն» ծրագրերը:

Շարունակվում է ռեգիոնալ ազգագրության առարկաների դասավանդումը: Մեծ ուշադրություն է դարձվում գիտության ու մեթոդաբանության խնդիրներին: Ամբիոնի դասախոսները ակտիվ մասնակցություն են ունեցել նաև տեղական ու միջազգային տարբեր ծրագրերի՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Համաշխարհային բանկի ծրագրեր, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծրագրեր և այլն: Շարունակվում են գիտահետազոտական աշխատանքները:

Ամբիոնում մեծ ուշադրություն է դարձվում մասնագիտական դասընթացների դասավանդման որակին:

Պրոֆ. **Ռ. Նահապետյանը** հրատարակել է բուհական ուսումնական մի շարք ձեռնարկներ՝ «Ազգագրություն» (2008 թ.), «Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը». մաս 1 (2009 թ., 180 էջ), «Հայ ազգագրության պատմություն». մաս 1 (ԿԳՆ երաշխավորմամբ՝ 2010 թ., 150 էջ), «Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները» ուսումնական ձեռնարկը (2022 թ., 294 էջ), նաև նույն դասընթացի ուսումնամեթոդական ուղեցույց-ձեռնարկը (2022 թ., 82 էջ): Նրա կողմից կարդացվող մյուս դասընթացների ձեռնարկները և ուսումնամեթոդական ուղեցույց-ծրագրերը ուսանողներին ներկայացված են էլեկտրոնային տարբերակով: Պրոֆ. Ռ. Նահապետյանը համատեղությամբ ավելի քան 20 տարի (1998-2019 թթ.) դասավանդել է նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, որտեղ 1999-2015 թթ. եղել է Պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար և 2000-2004 թթ.՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, նաև դասավանդել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական (2000-2017) և Վանաձորի Հ. Թումանյանի անվան մանկավարժական (2013-2015 թթ.) համալսարանների պատմության ֆակուլտետներում:

Ամբիոնում կարևորվել է նաև դասախոսների երիտասարդացման խնդիրը: Ամբիոնի հետ համագործակցել ու համագործակցում են բոլոր հայտնի ազգագրագետները:

Պ.գ.թ., դոցենտ **Մ. Գաբրիելյանը** կարդում է մի շարք մասնագիտական դասընթացներ. «Ազգագրության հիմունքներ», «Կովկասի տարածաշրջանի էթնոքաղաքականություն», «Կովկասի ժողովուրդների ազգագրություն», «Տարածաշրջանային

ազգագրություն», «Սոցիալ-քաղաքական մարդաբանություն»:

Դոցենտ Հ. Հարությունյանը կարդում է «Կովկասի ժողովուրդների ազգագրություն», «Էթնիկության և ազգայնության ժամանակակից հայեցակարգեր», «Ազգագրության հիմունքներ», «Հայ ազգագրություն» առարկաները:

Համատեղությամբ աշխատող դասախոսներից «Ազգաբանական մտքի պատմություն», «Ազգաբանական գիտության արդիականության հիմնախնդիրները», «Ավստրալիայի և Օվկիանիայի ժողովուրդների ազգագրություն», «Ժամանակակից ինքնություն» դասընթացները վարում է ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.թ. **Լ. Աբրահամյանը**:

Համատեղությամբ ամբիոնի դասախոս՝ պ.գ.թ., դոցենտ **Ա. Թադևոսյանը** վարում է «Սոցիալ-մշակութային մարդաբանություն», «Քաղաքականություն և մշակույթ», «Քաղաքի ազգագրություն», պ.գ.թ. **Գ. Շագոյանը**՝ «Ազգագրական դաշտային հետազոտության մեթոդներ», «Ազգաբանության տեսություն և մեթոդաբանություն», **Ռ. Ծատուրյանը**՝ «Ազգագրության հիմունքներ», «Անցումային շրջանի ազգաբանություն», «Սոցիոնորմատիվ և հումանիտար մշակույթ», ամբիոնի ավագ լաբորանտ **Ա. Ստեփանյանը**՝ «Եվրոպայի և Ամերիկայի ժողովուրդների ազգագրություն», պ.գ.թ. **Արտակ Դաբաղյանը**՝ «Էթնիկ հակամարտությունների և պատերազմի մարդաբանություն» առարկաները:

Ի դեպ, նշված դասընթացներից շատերը ամբիոնի դասախոսները կարդում են նաև պատմության ֆակուլտետի «Կովկասագիտության» և «Մշակութաբանության» գծով մասնագիտացող ուսանողների համար: Ազգագրութուն մասնագիտացման բոլոր դասախոսություններն էապես նպաստում են երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակությանը, ազգային էթ-

նիկ ինքնագիտակցության ձևավորմանը, ազգային հարուստ մշակութային արժեքների իմացությամբ կադրերի պատրաստմանը:

Ծանրակիռ ներդրում ունեն գիտահետազոտական աշխատանքների ոլորտում: Նշված տարիներին առանձին մենագրություններ ու բազմաթիվ հոդվածներ հրատարակեցին ամբիոնի բոլոր դասխոսները:

Ա. Պետրոսյանը հրատարակել է հայոց յուրացնող և օժանդակ տնտեսաձևերի, ժողովրդական հավատալիքների, հայ գյուղագրության վերաբերյալ մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ. 1. Հայոց շերամապահական մշակույթը (ՊԱՌԻ), ԵՊՀ հրատ., Երևան, 1987, 147 էջ և հավելված 16 էջ: 2. Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 301 էջ: 3. Ձկնորսական մշակույթը Հայաստանում (ՊԱՌԻ), ՀԳՏ հրատ., Երևան, 2016, 213 էջ:

Մեծ է նաև Ռ. Նահապետյանի ավանդը հայ ազգաբանական գիտության ասպարեզում: Բազմաբնույթ ու բազմաբովանդակ են նրա գիտական հետաքրքրությունների շրջանակները. դրանք ներառում են արևմտյահայոց՝ մասնավորապես պատմական Աղձնիքի հայ բնակչության էթնոմշակութային բնութագրություններից զատ, նաև հայոց սոցիոնորմատիվ և կենսապահովման մշակույթների, Հայ ազգագրության սկզբնաղբյուրների և պատմության ուսումնասիրությունը: Հեղինակ է շուրջ 200 գիտական հոդվածների, 10 մենագրությունների, 6 բուհական ուսումնական ձեռնարկների, մեկ տասնյակից ավելի ուսումնամեթոդական ձեռնարկների: Ստորև ներ-

կայացվում են միայն մենագրությունները[284]:

Գիտնականի ընդդիմախոսությամբ պաշտպանվել են թեկնածուական ու դոկտորական մեկուկես տասնյակից ավելի ատենախոսություններ, իր ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական ատենախոսություն: Բուհական բազմաթիվ գիտական խորհուրդների ու գիտական պարբերականների, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին առընթեր 007.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնորհող խորհրդի անդամ է:

Հասմիկ Հարությունյան, պ.գ.թ., դոցենտ

Գերազանցության դիպլոմով ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը 1990 թ.:

Դեռևս ուսանող՝ 1990 թվականից առ այսօր աշխատում է

---

[284] 2004 թ. – Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (ՊԱՈՒ), Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտ, Երևան, 260 էջ: 2007 թ. – Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը (ՊԱՈՒ), Երևան, Հեղ. հրատ., 306 էջ: 2011 թ. – Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը (ՊԱՈՒ), Երևան, ԵՊՀ հրատ., 220 էջ: 2012 թ. – Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ) (ՊԱՈՒ), Երևան, ԵՊՀ հրատ., 260 էջ: 2013 թ. – Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Հեղ. հրատ., Երևան, 148 էջ: 2018 թ. – Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան, ԵՊՀ հրատ., 240 էջ: 2019 թ. – Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1. Հայ ազգագրության սկզբնաղբյուրներ (Հնագույն շրջանից մինչև XVII դ.), Երևան, ԵՊՀ հրատ., 297 էջ: 2019 թ. – Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2. Հայ ազգագրության պատմություն (XVIII դ. երկրորդ կես – 1980-ական թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 402 էջ: 2020 թ. – Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, Տիր հրատ., 392 էջ: 2023 թ. – Պատրաստ է հրատարակության «Հայ ժողովրդական բնակարանը և բնակավայրը. Ազգաբանական դիտարկումներ» մենագրությունը: Հրատարակված աշխատանքների ամբողջ ցանկը տե՛ս ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի էլեկտրոնային կայքում:

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնում՝ ավագ լաբորանտ (1990-2003), դասախոս (2003-2015 թթ.), ասիստենտ (2015-2018 թթ.), դոցենտ (2018 թվականից մինչ օրս):

2008 թվականից համատեղությամբ աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնում՝ որպես գիտաշխատող, 2017-2021 թթ. Հայաստանի Գեղարվեստի պետական ակադեմիայի հրավիրյալ դասախոս է:

Ուսանողական տարիներին ընտրվել է ֆակուլտետի գիտխորհրդի անդամ, որի անդամ է նաև այժմ: 2019 թվականից նաև Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարանի գիտական խորհրդի անդամ է:

2010-2014 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ, «Հովհաննես Թումանյանը և հայ ազգագրությունը» ատենախոսության համար՝ 2014 թ. շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Դոցենտ Հ. Հարությունյանի հետաքրքրությունների շրջանակն է՝ ազգագրության տեսական հիմնախնդիրներ, Կովկասի ժողովուրդների ավանդական և արդի մշակույթ, կաթնատնտեսության էթնիկ ավանդույթները հայոց մեջ և այլն:

Համառոտ ներկայացվում է դոցենտ Հ. Հարությունյանի գիտական ուսումնասիրությունների ցանկը՝ 2014 թ. ատենախոսության պաշտպանությունից հետո[285]:

---

[285] Կովկասի ժողովուրդների ազգագրություն. Ուսումնական մեթոդաբանության ուղեցույց-ծրագիր, Հեղինակային հրատ., 2017, 40 էջ: Ներկայացվում է նաև դոց. Հ. Հարությունյանի հոդվածներից մի քանիսը. Յուրի Մկրտումյան՝ քաղաքացին, գիտնականը, մանկավարժը (ծննդ. 80-ամյակի առթիվ) // Լրաբեր հաս. գիտ., 2019, թիվ 3, էջ 298-303, Կաթը և կաթնամթերքը բանահյուսական նյութերում // «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, 2019, էջ 366-375, Заслуги Ю.И. Мкртумяна в популяризации арменоведческих

Միհիթար Գաբրիելյան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

1994 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1994-1997 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտուրայում: 1998 թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես գիտաշխատող, 2007 թվականից՝ ավագ գիտաշխատող: 2001 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Սոցիոմշակութային գործընթացները ՀՀ արդի գյուղում (ազգագրական ուսումնասիրություն)» թեմայով:

2001 թ.-ից աշխատում է ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնում: 2008 թ. նշանակվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալ, ապա ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարն էր, այժմ ընտրվել է դեկան:

Գիտական հետաքրրությունների շրջանակն է՝ անցումային հասարակությունների սոցիոմշակութային հիմնախնդիրները, տնտեսական, քաղաքական ու մշակութային փոխակերպումները, պատերազմի և էթնիկ կոնֆլիկտների մարդաբանությունը, Կովկասի ժողովուրդների ազգագրությունն ու կովկասյան տարածաշրջանի էթնիկ հակամարտությունները: Մասնակցել է շուրջ երկու տասնյակ միջազգային և հան-

---

и кавказоведческих знаний // Научная конференция Археология и этнография Кавказа и Крыма, посвященная 80-летию со дня рождения профессора А.В. Гадло (1937-2002), 2017, էջ 126-128, Կովկասի բնակչության էթնոլեզվադավանական բնութագիրը // «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, 2017, էջ 388-400, Աշխարհի բնակչության էթնոլեզվադավանական հակիրճ բնութագիրը // «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, 2016, էջ 398-424, Կինը Հովի. Թումանյանի գրական ժառանգության մեջ // Տարեգիրք, Աստվածաբանության ֆակուլտետ, 2016, ԺԱ, էջ 333-343, Հայ ժողովրդական հավատալիքները Հովի. Թումանյանի գրական ժառանգության մեջ // ՊԲՀ, 2015, թիվ 3, էջ 108-124 և այլն (տե՛ս ամբիոնի էլեկտրոնային կայքը):

բապետական գիտական նստաշրջանների:

Հեղինակ և համահեղինակ է 8 մենագրության և շուրջ 40 գիտական հոդվածների ու հրապարակումների:

Ներկայացվում է դոցենտ Մ. Գաբրիելյանի աշխատությունների համառոտ ցանկը[286]:

1. Շուշին 1992-2002 թթ., հայերի վերադարձը ազատագրված քաղաք // «Արցախի ժողովրդագիտությունը. Ազգագրություն», 2020, հ. 4, էջ 454-524:

2. Competing Political discoureses in Armenia before EAEU Accession // Шелковая дипломатия: научно-теоретический, социально-экономический журнал (համահեղինակներ՝ Ա. Դաբաղյան, Ա. Թադևոսյան, Վ. Զաքարյան), 2017, 1(54), стр. 91-116:

3. Rural Transcaiasion Trade before and after national borders. Acta Ethnographica Hungarica, 56(2), pp. 333-357 (211) (in English).

Ուշագրավ են «Հայաստանի ազգային փոքրամասնություններին վերաբերող I և II գրքերում Մ. Գաբրիելյանի հոդվածները: Դոցենտ Մ. Գաբրիելյանի գիտական հրապարակումների լրիվ ցանկը տե՛ս ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի էլեկտրոնային կայքում:

---

[286] Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Երևան, 2001: Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Երևան, 2001: Աղքատության ու գոյատևման պատկերը, հասարակության շերտավորման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, ՄԻԺԻ, Երևան, 2003: Հայկական ընտանիքն անցումային շրջանում (ազգաբանական ուսումնասիրություն), Երևան, 2005: **Դաբաղյան Ա. Ա., Գաբրիելյան Մ. Ռ.**, Տնտեսությունը, առևտուրը և էթնիկությունը սահմանամերձ գոտում, Երևան, 2008: Economy, Trade and Ethnicity in the Borderlands: Ethnodraիhical survey of tre Tavoush region, Yerevan, 2008, p. 132.Survey on «Family» as an institution. Yerevan, 2006, p. 56. **Gabrielyan M., Dabaghyan A.,** Shushi in 1992-2002: Armenians are back to released citu (Ethnogriphical sketeh), Yerevan, 2004, p. 100. The View of Poverty and Survival: Processes of Social Stratification in Armenia, Yerevan, 2003, p. 170.

9.2. Մշակութաբանության ամբիոն

ԵՊՀ պատմության ֆակուլտետի կազմում 2002 թ. հիմնվում է մշակութաբանության բաժինը և ապա համանուն ամբիոնը՝ պ.գ.դ., պրոֆեսոր **Հ. Պետրոսյանի** ղեկավարությամբ:

Ամբիոնի կազմում դասախոսում են նաև պ.գ.թ., դոցենտներ, ազգագրագետ-մշակութաբաններ Հռիփսիմե Պիկիչյանը, Յուլիա Անտոնյանը:

2006 թվականից առ այսօր Հռիփսիմե Պիկիչյանը աշխատում է ԵՊՀ մշակութաբանության ամբիոնում: Հայ ազգագրության երաժշտական մշակութաբանության գծով բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ է. 2006 թ. «Երաժշտությունը և երաժիշտը հայոց ավանդական առտնին և տոնածիսական կյանքում» ատենախոսության համար ստանում է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2009 թ.՝ դոցենտի կոչում: 1988 թվականից առ այսօր նաև ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության գծով ավագ գիտաշխատող է:

Լայն է Հ. Պիկիչյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ ավանդական տոնածիսական կյանքի արդի փոփոխությունները, ինքնության խնդիրները, ավանդական երաժշտական մշակույթ, քաղաքական երաժշտական մշակույթ և այլն: Մասնակցել է բազմաթիվ դրամաշնորհների:

Մշակութաբանության բաժնում կարդում է՝ Մշակույթի մարքեթինգ և մենեջմենթ, Հայ երաժշտական մշակույթ, Հայոց տոնածիսական մշակույթ, Թանգարանագիտություն, Տուրիզմի մշակույթ և մշակութային տուրիզմ առարկաները:

Նշենք Հ. Պիկիչյանի գիտական հրապարակումները ոչ լրիվ[287]:

Յուլիա Անտոնյան, պ.գ.թ.

Մշակութաբանության ամբիոնում է աշխատում 2008 թվականից:

2007 թ. «Մոգական հեքիմությունը և գուշակությունը Հայաստանում» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2017 թվականին ստացել է դոցենտի կոչում: Կարդում է «Մշակութային մարդաբանություն, Եվրոպայի մշակույթը Վերածննդի և նոր ժամանակներում, Արդի Հայաս-

---

[287] Երաժշտությունը հայոց ավանդական առտնին ու տոնածիսական կյանքում, Երևան, «Ամրոց գրուպ», 2012, 240 էջ: **Պիկիչյան Հ., Թագակչյան Զ.**, Վայոց ձորի ավանդական երգեր և նվագներ, մաս 1, Հայ ավանդական երաժշտություն, պրակ XI, Երևան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 2013, 200 էջ: **Պիկիչյան Հ., Թագակչյան Զ.,** Վայոց ձորի ավանդական երգեր և նվագներ, մաս 2, Ծիսական շարք, Հայ ավանդական երաժշտության մատենաշար, պրակ XII, Երևան, 2014, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 260 էջ: **Պիկիչյան Հ., Հարոյան Մ., Գրիգորյան Ա.,** Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ, Երևան, 2007, «Էդիթ Պրինտ», 198 էջ: Հիմն արևին (Լ. Երնջակյան) համահեղինակ. «Սահարին» հայ երաժշտական մշակույթում», Երևան, 1998, 115 էջ: Նշենք Հ. Պիկիչյանի գիտական հոդվածներից մի քանիսը. Մազմանովի լեգենդը հայ երաժշտական բանահյուսության մեջ // ՎԵՄ համահայկական հանդես, Հայաստան, թիւ 4(64), 2018, էջ 331-348: Նվագարաններն ու ձայնեղ գործիքները հայ մանուկների կենցաղում, ազգաբանական դիտարկումներ // Հնչյուն և լռություն. երաժիշտը և նվագարանը դարերի հոլովույթում, 2017, «Հայաստան» հրատ., էջ 94-117: Հոռովելի ժամանակակից կենցաղավարումը // Կոմիտասի թանգարանի տարեգիրք: Կոմիտասը և միջնադարյան երաժշտական մշակույթը, 2016, 1, էջ 154-168: Ժողովրդական երաժիշտների գործունեությունը կարգավորող ավանդական նորմերը // Ակադ. Լևոն Հախվերդյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի նյութեր, 2015, էջ 169-187: Ռուբիս պարը. Նախնական դիտարկումներ // Հայ ժողովրդական մշակույթ XVI, 2014, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, էջ 131-142 (լրիվ ցանկը տե՛ս ամբիոնի էլեկտրոնային կայքը):

տանի սոցիալական գործընթացների մարդաբանություն, Կրոնի մարդաբանություն, Մշակութաբանության հիմունքներ, Մշակույթի տեսություն, Ժամանակակից մշակութային գործընթացների հետազոտության մեթոդներ» առարկաները:

Յու. Անտոնյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն է. Կրոնի մարդաբանություն, ժամանակակից կրոնական գործընթացներ և շարժումներ, Սոցիալական կառուցվածք, վերնախավի մարդաբանություն, Պատմական մարդաբանություն, Խորհրդային և հետխորհրդային մարդաբանություն:

Մասնակցել է հետազոտական բազմաթիվ դրամաշնորհների: Մի շարք հետազոտությունների հեղինակ է. 2007 թ. հրատարակել է «Магическое целительство и гадание в Армении (диссертация на соискание уч. степ.), Ер., 181 էջ:

Հրատարակել է ուսումնական ձեռնարկներ և մենագրություններ[288]:

---

[288] Վերածննդի և նոր դարի Եվրոպայի մշակույթի պատմություն: Ուս. ձեռնարկ, ԵՊՀ հրատ., 2015, 40 էջ, **Антонян Ю., Исраелян А.,** Целительство, гадание и обереги // «Армяне» (серия Народы и культуры), М., Наука, 2012, с. 445-159): Յուլիա Անտոնյանը հեղինակ է նաև շուրջ 30 գիտական հոդվածների (լրիվ ցանկը տե՛ս ամբիոնի էլեկտրոնային կայքում):

9.3. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ

Լիաննա Բեգինյան, ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու

1998-2002 թթ. ավարտել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պատմության ֆակուլտետը, 2002-2004 թթ.՝ ԵՊՀ Ազգագրության ամբիոնի մագիստրատուրան, 2005-2013 թթ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ: 2004 թ. մինչև օրս աշխատում է ԵՊՀ ԻՄ տուրիզմի և կառավարման ամբիոնում, նախ՝ լաբորանտ, 2008 թվականից մինչև օրս՝ որպես դասախոս նույն ամբիոնում: 2014 թ. «Հուղարկավորության և հիշատակի ծեսերն ու սովորույթները Տավուշում արդի փուլում. ավանդույթներ և նորույթներ» թեմայով ատենախոսության համար նրան շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հրատարակել է ատենախոսական թեմային վերաբերող գիտական մի շարք հոդվածները (տե՛ս ԵՊՀ ԻՄ էլեկտրոնային կայքում):

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀ – Ազգագրական հանդէս
ԱՀՊՊԹ – Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի
ԱՀՊԹ – Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի
ԲՀԱ – Բանբեր Հայաստանի արխիվների
ԲՎՊ – Բազմավէպ
ԴԱՆ – Դաշտային ազգագրական նյութեր
ԷԱԺ – Էմինեան ազգագրական ժողովածու
ԿՊՀԻ – Կովկասի պատմահնագիտական ինստիտուտ
ՀԱ – Հանդէս ամսօրեայ,
ՀԱԱՊՊԹ – Հայաստանի ազգագրության, ազգային-ազգագրական պայքարի պետական թանգարան
ՀԱԲ – Հայ ազգագրություն և բանահյուսություն
ՀԱԻ – Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀԱՊԹ – Հայաստանի ազգագրության պետական թանգարան
ՀԱԹ – Հայոց ազգագրության թանգարան
ՀԳԱԻ – ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ – Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա
ԼՀԳ – Լրաբեր հասարակական գիտությունների
ՊԱՌԻ – Պատմաազգագրական ուսումնասիրություն
ՊԲՀ – Պատմաբանասիրական հանդես
АЭФ – Армянская этнография и фольклор. Материалы и исследования
ВОН – Вестник общественных наук
ИКИАИ – Известия Кавказского историко-археологоческого

института
ИФЖ – Историко-филологический журнал Академии наук Арм. ССР
КЭС – Кавказский этнографический сборник
ПИИЭ – Полевие исследования института этнографии
СМОМПК – Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис
СЭ – Советская этнография, Москва

Резюме

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ЭТНОГРАФИИ
(со второй половины XVIII века до наших дней)

РАФИК НААПЕТЯН

В этом пособии автор постарался всесторонне обратиться к источникам и истории нового и новейшего периода армянской этнографии. Сюда включены последующие этапы становления армянской этнографии как науки со второй половины XVIII в. до наших дней. Сделана попытка охарактеризовать становление армянской этнографической науки по периодам.

К первому периоду относится вторая половина XVIII века до 1850-х и 1860-х годов, когда начинается более эффективная регистрация этнографических материалов. В этом контексте представляются этнологическая и фольклористическая деятельность М. Тагиадяна, Х. Абовяна, членов Венецианской конгрегации мхитаристов Г. Инчичяна, М. Бжшкяна.

Второй период становления армянской этнографической науки составляют 1870-80-е годы, которые характеризуются деятельностью Г. Срвандзтянца и Гр. Халатянца и других, направленой на создание этнологических вопросников.

Третий период длится с 1890-х годов до начала XX века, когда армянская этнография окончательно утвердилась как самостоятельная область арменоведения. По достоинству были оценены усилия этнографа Е. Лалаяна, а также роль и значение основанного им «Этнографического журнала».

В качестве отдельного исторического периода представ-

лены 1920-1980-е годы, в частности, процесс развития армянской этнографической науки в советский период, достижения этнографических, исследовательских, учебных и научно-организационных, музейных учреждений, а также их недостатки.

В пособии также предпринята попытка кратко представить достижения этнографической науки с 1990-х годов до наших дней.

Summary

HISTORY OF ARMENIAN ETHNOGRAPHY
(from the second half of the 18th century to present day)

RAFIK NAHAPETYAN

In this manual, the author has made an attempt to comprehensively address the sources and history of the new and recent period of Armenian ethnography. This includes the subsequent stages of the formation of Armenian ethnography as a science from the second half of the 18th century up to our days. An attempt has been made to characterize the formation of Armenian ethnographic science by periods.

The first period covers the second half of the 18th century until the 1850s and 1860s, when more efficient recording of ethnographic materials began. In this context, the ethnological and folkloristic activities of M. Tagiadyan, Kh. Abovyan, members of the Venice Mkhitarist Congregation G. Inchichyan, M. Bzhshkyan are presented.

The second period of formation of Armenian ethnographic science is the 1870-80s, which are characterized by the activities of G. Srvandztyants and Gr. Khalatyants and others, aimed at making ethnological questionnaires.

The third period is from the 1890s up to the beginning of the 20th century, when Armenian ethnography finally established itself as an independent field of Armenian Studies. The efforts of the ethnographer E. Lalayan, as well as the role and significance of the "Ethnographic Journal" he founded, were highly appreciated.

The 1920-1980s are presented as a separate historical period, in particular, the process of development of Armenian ethnographic science during the Soviet period, the achievements of ethnographic, research, educational and scientific-organizational, museum institutions, as well as their shortcomings.

The manual also makes an attempt to briefly present the achievements of ethnographic science from the 1990s to the present day.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

Հեղինակի կողմից 3
Դասընթացի առարկան, խնդիրները 6
Թեմա 1. Մխիթարյան միաբանության խաղացած դերը հայ ազգագրական գիտության ձևավորման գործում 9
1.1. Հայ ազգագրության պատմագրության սկզբնավորման նախադրյալները XVIII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի 50-60-ական թթ. ժամանակաշրջանի բնութագրությունը 9
1.2. Մխիթարյան միաբանության ազգագրական գործունեությունը 16
1.2.1.Ղուկաս Ինճիճյան (1758-1833) 16
1.2.2.Մինաս Բժշկյանը (1777-1851) որպես բանահավաք և ազգագրագետ, հիմնական աշխատությունները 21
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 27
Թեմա 2. Մեսրոպ Թաղիադյանի, Խաչատուր Աբովյանի և Պերճ Պռոշյանի ազգագրական, բանահավաքչական գործունեությունը 30
2.1.Մեսրոպ Թաղիադյանի ազգագրական գործունեությունը 30
2.2. Խաչատուր Աբովյանը որպես հայ ազգագրական գիտության սկզբնավորող 34
2.3.Ազգագրական տեղեկությունները Պերճ Պռոշյանի երկերում 48
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 55
Թեմա 3. Հայ ազգագրությունը XIX դ. 70-80-ական թթ. (Հայ ազգագրական գիտության ձևավորման երկրորդ պարբերաշրջան) 58

3.1. Մ. Միանսարյանցի, Ալ. և Սրբ. Երիցյանների ուսումնասիրությունները հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարան դիտարկելու վերաբերյալ տեսակետները 58
3.2. Գարեգին Սրվանձտյանցի (1840-1892) ազգագրական և բանահավաքչական գործունեությունը 61
3.3. Գրիգոր Խալաթյանցը (1858-1912) որպես հայ գիտական ազգագրության հիմնադիր 78
3.4. «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի (1901–1913 թթ.) դերն ու նշանակությունը հայ ազգագրական գիտության պատմության մեջ 85
3.5. Ազգագրական գիտությունը XIX դ. վերջին տասնամյակներին և XX դ. սկզբներին 89
3.5.1.Մկրտիչ Խրիմյանի ազգագրական բանահավաքչական գործունեությունը (1820-1907) 90
3.5.2.Ղևոնդ Ալիշան (1820-1901) 95
3.5.3.Ստեփան Զելինսկի (1847-1904) 99
3.5.4.Նիկողայոս Ադոնց (1871-1942), Սողոմոն Եղիազարով (1852-1935) և Նիկողայոս Մառ (1864-1935) 100
3.5.5.Վարդան Հացունի (Սոմունճյան) (1870-1944) 101
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 107
Թեմա 4. Հայ ազգագրության՝ իբրև ուրույն գիտական ոլորտի վերջնական կայացման փուլ 111
4.1.Երվանդ Լալայանի և «Ազգագրական հանդեսի» դերը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում 111
4.2. Ե. Լալայանը հայ ազգագրության ուսումնասիրության պատմաազգագրական շրջանացման մեթոդի սկզբնավորող 131

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 147
Թեմա 5. Ազգագրական գիտությունը խորհրդային տարիներին (1920-1980-ական թթ.) 150
5.1. Խորհրդահայ ազգագրության հակիրճ բնութագրությունը 1920-1940-ական թթ..... 150
5.2. Խորհրդային Հայաստանի գիտական և մշակութային առաջին հաստատությունները 1920-1940-ական թթ. 154
5.2.1. Հայաստանի պետական պատմական թանգարան 154
5.2.2. Գիտական մյուս հաստատությունները Խորհրդային Հայաստանում 1920-1940-ական թթ. 158
5.2.3. Երվանդ Լալայանի գործունեությունը 1920-1930 թթ.... 161
5.2.4. Խաչիկ Սամուելյանը՝ ազգագրագետ (1873-1940) 163
5.2.5.Ստեփան Լիսիցյան (1865-1947) 170
5.3. Ժամանակի հայ ազգագրական գիտության նշանավոր երախտավորները շարքից 178
5.3.1. Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյան (1869-1923 թթ.) 178
5.3.2. Մանուկ Աբեղյան (1865-1944) 185
5.3.3. Հովսեփ Օրբելի (1887-1961) 187
5.3.4. Երվանդ Շահազիզ (1856-1951) 191
5.3.5. Գրիգոր Ղափանցյան (1887-1957)..... 192
5.3.6. Գ. Չուրսին (1874-1930) 193
5.3.7. Լ. Մելիքսեթ-Բեկ (1890-1963 թթ.), Կ. Մելիք-Օհանջանյան (1893-1970 թթ.) 195
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 200
Թեմա 6. Ազգագրական գիտության զարգացման հիմնական ուղղությունները և ազգագրական գիտահետազոտական հաստատությունները ՀՀ-ում 1950-1980-ական թթ. 206

6.1. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի կազմավորումը և գործունեությունը 208
6.1.1. Էթնոսոցիոլոգիայի բաժնի հիմնադրման և գիտական ձեռքբերումների շուրջ 231
6.2.Հայաստանի թանգարանների ազգագրական գործունեությունը (1950-1980-ական թթ.) 233
6.2.1. Հայաստանի պատմության թանգարան 233
6.2.2. Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան 234
6.3. Հայ ազգագրական գիտությունը ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնում (1969-1989) 237
6.4. Հայաստանի ազգագրական գիտության զարգացման հիմնական ուղղությունները և արդյունքները 1950-1980-ական թթ. 244
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 272
Թեմա 7. Ազգագրական գիտությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-2020 թթ. 275
7.1. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժին 276
7.2. ՀԱԻ էթնոսոցիոլոգիայի բաժնի գործունեությունը 1990-2020 թթ. 303
7.3. Մշակութային մարդաբանության բաժնի գործունեությունը 309
7.4. Սփյուռքի ուսումնասիրությունների բաժին 318
7.5. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ազգագրական գործունեությունը (1990-2020 թթ.) 322
Թեմա 8. Ազգագրական գիտությունը Հայաստանի թանգարաններում (1990-2020 թթ.) 326

8.1. Հայաստանի պատմության թանգարան (1990-2020) 326
8.2. Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարան 330
8.3. Երևան քաղաքի պատմության թանգարան 339
Թեմա 9. Ազգագրական գիտությունը Հայաստանի բուհերում (1990-2020) 342
9.1. Հնագիտության և ազգագրության ամբիոնի գործունեությունը 1990 թվականից մինչև օրս 342
9.2. Մշակութաբանության ամբիոն 352
9.3. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ 355
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 356
Резюме 358
Summary 360

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

Հրատ. պատ. խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Ա. Հովակիմյանի

Ստորագրված է տպագրության՝ 08.12.2023:
Չափսը՝ 70x100 1/16: Տպ. մամուլը՝ 22.625:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023
publishing.ysu.am